39.71s
4-692

ՖԻԼԻՊՊ ԿՆՅԱԶԵՎ

ՎԱԶՔԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ

1934

ՊԵՏՀՐԱՏ ★ ՅԵՐԵՎԱՆ

30 MAY 2011

891.71ա
Կ-62

Պ Ա Տ Ա Ն Ե Կ Ա Կ Ա Ն   Ս Ե Ր Ի Ա

891.7115
4-62
Կն

ՖԻԼԻՊՊ ԿՆՅԱԶԵՎ

ՎԱԶՔԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ

1026
28647
8858

Կոմյերիտական հարվածայինի
առօրյայի քրոնիկը մարտական պատրաստության
ֆրոնտում։

1002

Պ Ե Տ Ա Կ Ա Ն   Հ Ր Ա Տ Ա Ր Ա Կ Չ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն
Ե Ր Ե Վ Ա Ն   1934

22 MAY 2013
3717

Պատ. խմբագիր. Ա. Հայիր.
Թարգմ. Վ. Տեր Առաքելյան
Սրբագրեց Գար. Հակոբյան

Գլավլիտ № 8365, հրատ. № 2790, պատվեր № 2437, տիրաժ 3000
Պետհրատի տպարան, Երևան

ԱՌԱՋԱԲԱՆ

Այս գրքույկը, որ առաջարկում ենք ընթերցողի ուշադրությանը, մի փորձ է՝ ոչերկի ձևով տալ մի շարք միջադեպեր Կարմիր բանակի մարտական ուսուցումից, որտեղ գլխավոր գործող անձերը կարմիր բանակայիններն են և կրտսեր հրամանատարները՝ հարվածային կոմյերիտաները:

Կարմիր բանակը չի կարող համընթաց չընթանալ սոցիալիզմի հաղթական շինարարության հետ մեր երկրում: Խորհրդային երկրի միջազգային դրությունը, որ բնորոշվում է պատերազմի անմիջական սպառնալիքով, պահանջում է մարտական պատրաստության և, ամբողջական առմամբ, բանվորական պետության մարտունակության աճի նոր, արագացրած տեմպեր: Այդ խնդիրն սպառիչ լրությամբ դրեց կոմունիստական կուսակցության XVI համագումարը, և այդ խնդիրն հաջող կերպով վճռվում է Կարմիր բանակի մարտական քաղաքական պատրաստության սիստեմի մեջ:

Սոցմրցությունն ու հարվածայնությունն այսօր արդեն դարձել են մարտական ուսուցման բարձրացման հավելյալ միջոց, ամուր լծակ: Մենք հարվածային մարտիկներից, հարվածային ջոկերից անցել, հասել ենք հարվածային գնդերի: Կարմիր բանակի զորամասերը, ամենահարուստ փորձի հիման վրա, ընդհանուր, կոնկրետ պայմանագրերից ու պարտավորություններից անցել են պարզորոշ, կյանքում ստուգված նորմաների, անցել են հանդիպական պլանի, որն օգնում է կրճատված ժամկետներում կատարել հրամանատարության մարտական խնդիրները և նորմաները:

Տեմպերը բարձրացնելու գործում, հարվածայնության հարցում մեծ դեր է ընկնում Կարմիր բանակում Լենինյան

22 MAY 2013

3717

Պատ. խմբագիր. Ա. Հայկ.
Թարգմ. Վ. Տեր Առաքելյան
Սրբագրեց Գար. Հակոբյան

Գլավլիտ № 8365, հրատ. № 2790, պատվեր № 2437, տիրաժ 3000
Պետհրատի տպարան, Յերևան

ԱՌԱՋԱԲԱՆ

Այս գրքույկը, որ առաջարկում ենք ընթերցողի ուշադրությանը, մի փորձ է՝ ոչերկի ձևով տալ մի շարք միջադեպեր Կարմիր բանակի մարտական ուսուցումից, որտեղ գլխավոր գործող անձերը կարմիր բանակայիններն են և կրտսեր հրամանատարները՝ հարվածային կոմյերիտները:

Կարմիր բանակը չի կարող համընթաց չընթանալ սոցիալիզմի հաղթական շինարարության հետ մեր յերկրում: Խորհրդային յերկրի միջազգային դրությունը, որ բնորոշվում է պատերազմի անմիջական սպառնալիքով, պահանջում է մարտական պատրաստության և, ամբողջական առմամբ, բանվորական պետության մարտունակության աճի նոր, արագացրած տեմպեր: Այդ խնդիրն սպառիչ լրությամբ դրեց կոմունիստական կուսակցության XVI համագումարը, և այդ խնդիրն հաջող կերպով վճռվում է Կարմիր բանակի մարտական քաղաքական պատրաստության սիստեմի մեջ:

***Սոցմրցությունն ու հարվածայնությունն** այսօր արդեն դարձել են մարտական ուսուցման բարձրացման հավելյալ միջոց, ամուր լծակ: Մենք հարվածային մարտիկներից, հարվածային ջոկերից անցել, հասել ենք հարվածային գնդերի: Կարմիր բանակի զորամասերը, ամենահարուստ փորձի հիման վրա, ընդհանուր, կոնկրետ պայմանագրից ու պարտավորություններից անցել են պարզորոշ, կյանքում ստուգված նորմաների, անցել են հանդիպական պլանի, որն օգնում է կրճատված ժամկետներում կատարել հրամանատարության մարտական խնդիրները և նորմաները:*

***Տեմպերը** բարձրացնելու գործում, հարվածայնության հարցում մեծ դեր է ընկնում Կարմիր բանակում Լենինյան*

բազմահազար կոմյերիտմիության վրա, վորը բանակային կուսակցական կազմակերպությունների առաջին նեցուկն է։

Մենք պետք է մարտունակությունն ամրացնենք վոչ միայն Կարմիր բանակի սիստեմի մեջ, այլև մի ամբողջ շարք հոժարական կազմակերպություններում, և այս գրքույկը պետք է ժողովրդականացնի մարտական ուսուցումը յերիտասարդության լայն մասսաներում, մանավանդ վոր նրանք մոտիկ ապագայում կանչվելու յեն Կարմիր բանակի շարքերը։ Հեղինակը գրական լայն երուդիցիայի և փորձի հավակնություն չունի, այդ պատճառով, առաջուց խնդրում է ներողամիտ վերաբերվել գրքույկի բացերին ու թերություններին՝ հատկապես այդ մասում։

ՀԵՂԻՆԱԿ

I. «ՅԵՐԵՔ ԿՈՐԴԱԿՆԵՐԻՆ ԿՈՂՔԻՆ ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԱՅԻՆԻ ԱՍՏՂ»

Գնդում մեծ իրարանցում է, գնդում վաղ առավոտից աշխատանք է տարվում։ Հին դարբասից, վորի մոտ կանգնած է ուշադիր և լուռ ժամապահը, յերբեմն ներս են թափվում վո՛չ վայելչակազմ պարտիաներով մարդիկ՝ զանազան զգեստով։ Մերթ անցնում են տանը գործած մահուդե պիջակներով և գդակներով, վրաները անձրևի ու քամու հետքեր, ուսերին գցած լեցուն մախաղներ, չորս կողմը դիտող քննասեր հայացքներով,— մերթ միատեսակ կեպկաներ ու վերարկուներ հագած՝ վստահ քայլում են սովոր և ծանոթ փողոցով, միաբերան ձայնակցելով սկսված յերգին։

Դարբասից ներս է թափվում հազար ինն հարյուր յոթերորդ տարին։

Ցուցակներով ստուգումը շարունակվում է քանի րոպե. հետո պարտիան գնդի դպրոցում հենց նոր քննություն տված կրտսեր հրամանատարի հրամանատարությամբ գնում է բաղնիք։ Կրտսեր հրամանատարը քրտնել է տասնյակ մարդկանց վրա իր ունեցած անսովոր իշխանությունից և զայթուն, բայց հանդիսավորաբար հնչյուն ձայնով նշում, «տալիս է վոտը»։

— Քառյակներով հավասարում չկա, ամենքդ նայում եք գետին, մեկ, յերկու, յերեք... մեկ, յերկու, յերեք— ձա՛խ։

Այդ բանը շարունակվում է անընդհատ, բայց և այնպես նորակոչիկները շփոթում, խառնում են, թեև ջանում են իրենց բոլոր ուժով:

Բաղնիքում նորակոչիկները հանձնում են մթերապահին սեփական ամեն ինչ, փոխարենը ստանալով նոր, առանձնահատուկ հոտ ունեցող վարտիքներ և մարզաշապիկներ: Հանվարանում մթնաշաղ է առաստաղի մոտ լողացող թանձր շոգուց. շոգին կլանել էր էլեկտրական լույսը, չկարողանալով դուրս թռչել փողոց՝ անկյունում դըռընչացող հովհարի միջով: Մնացած հնչյունները խլացնելով, գնդալով ու տարբեր ձայնատիճանների վրա իրար խառնվելով, լսվում են ձայները: Յեվ միայն յելքի դռան մոտ կարելի յե գտնել չորացած կարմիր դեմքերը. նրանք հանկարծ դարձան նոր, նման չեն իրենց առաջվա դեմքերին և միատեսակ են կարմիր աստղանի կորդակների շրջանակի մեջ:

*

Հինգերորդ վաշտ են յեկել սիբիրացիներ: Վաշտի հրամանատարը դրա համար և՛ ուրախ էր, իմանալով, որ սիբիրացիք լավ դահուկավորներ են, և՛ մի փոքր վախենում էր. անգրագիտության տոկոսը յերկյուղ էր ազդում ուսուցման հաջող ընթացքի համար:

Ծայրեծայր լցվեց լենինյան անկյունը, որ մինչ այդ դատարկ էր. աթոռները հերիք չէին անում, և ով ուշանում էր, կանգնում էր ուղղակի պատի մոտ՝ աշխարհիս աշխարհագրական մեծ քարտեզի տակ:

— Ո՞նց է վաշտի հրամանատարի ազգանունը,— հարցնում է շուտասելուկով, դուրս ցցված այտոսկրերով մեկը, գորշ աչքերով, ոչ փոքր

հատկապես շեշտելով և խիստ հուպ տալով իր հարևանին, որ պոկ չգա աթոռի ծայրից:

Պատասխան չստանալով, նա սկսեց դիտել պատից քաշ արած կանաչ տախտակը, որտեղ մի զույգ հոգատար ձեռքեր ամրացրել էին ամեն տեսակ փոքրիկ շրջաններով ու սյուներով սևացած թերթերը, և հանկարծ ցնծագին բացականչեց.

— Կոլեսով է նրա ազգանունը և Կարմիր բանակում է համարվում տասնինին թվից...

— Այո՛, Վոկո՛ւեվ, յերբ յես ու դու տասնումեկ տարեկան էինք, և մեր արածն էն էր, որ դահուկներով սահում էինք սարից, իսկ նա դեռ էն ժամանակ, կարելի յե ասել, իր ձեռքով ճնշում էր սպիտակ հակահեղափոխությունը ,— շնորհարեց վերջապես ու դանդաղ խոսեց հուպ տված հարևանը:

— Միայն եդպես հուպ մի տա, հո տեսնում ես, թե ինչպիսի աթոռներ են. դա մեր տների նստարանը չի, որ ամբողջ ընտանիքը նստի և հյուրերի համար էլ տեղ մնա:

Նա էլ սկսեց դիտել ցուցակը, որտեղ գրված էր հրամանատարի անունը, և մի փոքր բարձրացավ տեղից:

— Իսկ ինչո՞ւ նրա անունին ավելացրել են ելի մի բան—«Վաշտի հրամանատար— քաղղեկ Կոլեսով Սերգեյ»:

Նա անվստահորեն մտով շոշափեց այն տեղը, որտեղ հաստ-հաստ տառերով գեղեցիկ գըրված էր «քաղղեկ», և սկսեց ուսումնասիրել գոտու թեթև հպումից խշխշացող իր դեղին մարզաշապիկի դիմացկունությունը:

— Անդրեյ, դու ինձ են ասա՛,— չէր հանդարտվում Մակուևը, թե տանը ո՛ւմ թողիր քո յերկփողանի հրացանը: Մինկայից բացի ուրիշ

վոչ վոքի, իսկ նա վորս անելու մասին չի ել մտածում: Գրագիտություն սովորեց և սկսեց քիթը ծանոթներից չուս տալ,— շշնջում եր նա վիրավորված, իսկ հարևան Անդրեյը ժպտում եր:

— Դու վո՞րտեղից գիտես, թե ինչի՛ մասին է մտածում նա. ի՞նքն է պատմել քեզ, թե դո՞ւ յես զոռով իմացել:

Վոկուևը չարանում է. քիչ հետո քաշվելով ու կիսով չափ կախվելով աթոռից, նա ձեռքը տանում է գրպանը, պրպտում է այդտեղ այնպես, վոր գրպանից դուրս են գալիս մանվածքի սպիտակ մանրաթելերը, և ավելցնում է.

— Ի՛նձ ինչ. ինձ համար միևնույն է, յես յերկու տարով յեկել եմ Կարմիր բանակ, պիտի ծառայեմ, այնպես վոր միմիայն ինձ համար հեչ է, միայն յեթե գրելու կլինես, գրիր դու նրան, վոր...

— Հրամանատարը գալիս է, հրամանատարը...— խաղաղ հովի պես մի շշուկ անցավ սենյակով, և ամենքը, մի մարդու նման, յարված ու սպասողական նայեցին հրամանատարին:

Նա անցավ անցքի մեջ դրված փոքրիկ սեղանի մոտով, այն տեղ, վոր վաշտի որապահի սովորական տեղն եր, կանգնեց Լենինանկյունի մեջտեղը, չնայելով վոչ վոքի վրա, կարծես ճնշվելով իր վրա հառած մեծ քանակությամբ աչքերից: Զգտնելով ազատ վո՛չ մի տեղ, այնուամենայնիվ՝ Կոլեսովը իբար խառնված կոշիկների և ծնկերի միջից ճեղքեց— անցավ դեպի սեղանը: Կարմիր բանակայիններից մեկը վախեցած այդքան մոտիկ հարևանությունից, կողքի վրա քաշվեց դեպի պատը և սկսեց համոզված տոնով ինչ վոր բան ապացուցել Վոկուևին:

— Առաջներում պետք եր վոտի կանգնել,—

ասում եր նա,— տեսնում ես հրամանատարը գալիս է դեպի քեզ, ուրեմն տեղ տուր նրան, ինչ էլ լինի: Հո զուր չե, վոր քեզ հագցրել են կոճկաներով դեղին մարդաշապիկ:

Կոլեսովը հազաց, ապա սկսեց խոսել:

Զահելներն ուշադրությամբ նայում եյին ուղղակի հրամանատարի բերնին, յերբեմն միայն շարժելով գլուխները, կարծես հեռու վանելով իրենցից ձանձրացուցիչ մտքերը:

— Ընկերներ, յես կարծում եմ, վոր մենք ձեզ հետ միասին միաբերան ձեռք կզարկենք ուսուցման գործին: Ամենագլխավորը սերտ, անքակտելի զոդումն է,— կամաց ասում եր հրամանատարը:— Վաշտում ինձնից զատ կան նաև դասակների հրամանատարներ, կան տասնհինգ կրտսեր հրամանատարներ, կան կուսակցական բջիջ և կոմյերիտական խմբակ, ու մենք ամենքս անում ենք միևնույն մեծ գործը: Զբաղմունքներից հետո ամեն ժամանակ ձեզանից յուրաքանչյուրը կարող է գալ ինձ մոտ, վորպես քաղղեկի մոտ, իրեն հետաքրքրող, իրեն հուզող բոլոր հարցերով:

— Թույլ տվեք մի հարց տալ,— ընդհատեց հրամանատարին մեկի ձայնը պատի մոտից, վորտեղ քաշ եր արած աշխարհագրական քարտեզը:— Դուք իսկապես ո՞վ եք, հրամանատա՞ր, թե՞ քաղղեկ,— վոչ մի կերպ չի հասկացվում: Ա՛յ, տեսեք, ես ցուցակում գրված է,— նա մատը տնկեց կանաչ տախտակի վրա,— «Վաշտի հրամանատար—քաղղեկ Կոլեսով Սերգեյ, Կարմիր բանակում է տասնիններորդ թվից»:

Շատերը ծիծաղեցին, թեև դեմքերից յերևում եր, վոր տրված հարցն ամենքի համար էլ անհասկանալի յեր: Հետևի շարքերից խոսեցին փոխա-

փոխ նայելով մեկ հրամանատարին, մեկ՝ կանաչ տախտակին։

— Յես հիմա կբացատրեմ, թե բանն ի՛նչ է,— ժպտալով սկսեց Կոլեսովը։— Ինչպե՞ս է ձեր ազգանունն, ընկե՛ր, նա, ով հարց տվեց ինձ։ Վոլկով Իվա՞ն։ Պետք է ասեմ, վոր դուք լավ հարց տվիք։ Յես բոլշեվիկների կուսակցության, կոմունիստական կուսակցության անդամ եմ, և շատ ավելի պատասխանատու յեմ իմ աշխատանքի համար, քան, ասենք, անկուսակցականը, ուստի կուսակցությունն ինձ հանձնարարում է ավելի մեծ աշխատանք՝ մեր վաշտի քաղաքական ղեկավարությունը։

Նա մտածեց մի քանի վայրկյան ու ավելացրեց.

— Անկուսակցական յուրաքանչյուր հրամանատարի ևս հանձնարարվում է քաղաքական աշխատանք, նրան նույնպես վստահում են, բայց, կրկնում եմ, կուսակցության յուրաքանչյուր անդամ պատասխանատու յե շատ ավելի մեծ չափով, պատասխանատու յե կրկնակի։

— Ասել կուզի, կուսակցության անդամի համար դժվար բան է վաշտի կառավարչությունը,— թարգմանեց իր լեզվով Վոլկովը հրամանատարի խոսքերը։

— Իսկ դրո՞ւստ է, վոր սեփական իրերը կվերցնեն ու էլ հետ չեն տա,— հանկարծ տեղից բարձրացավ իր յերկար հասակով մեկ ու դողդոջ ձայնով հարցրեց մինչ այդ լուռ մի կարմիր բանակային։ Մարզաշապիկը դժվարությամբ եր մտել նրա վրա և մի կերպ, հազիվ–հազ դիմանում եր լայն ուսերի ճնշումին։

Կոլեսովը նրա աչքերի մեջ նկատեց չար անբարյացակամություն։

— Ո՞վ ասաց ձեզ այդ բանն, ընկեր,— հարցրեց նա, աշխատելով չվրդովվել։

— Տղերքն եյին ասում, հո յես նրանց լեզվից չեմ քաշել։ Բաղանիքում խոսում եյին, մթերապահն էլ եդ մասին բացատրություն եր տվել,— սկսեց նա խառնել ու շփոթել։

Նրան նայում եյին հարցական և անվստահելի հայացքով, իսկ Կոլեսովը կես րոպե սպասելուց ու հարց տվողի ազգանուն հարցնելուց հետո խոսեց.

— Ընկեր Դեմինսկի, այդ բանը կամ դուք ինքներդ եք հնարել, կամ մեկը դատարկ բան է ասել ձեզ։ Սեփական իրերն այժմ կպահվեն գնդի պահեստում, իսկ վեց ամսից հետո կհանձնվեն ձեզ։ Դուք կարող եք դրանք առաքույթով ուղարկել տուն, կամ ինչ կուզեք՝ կանեք... ընկերնե՛ր, հասկանալի՞ յե ամենքիդ համար։

— Հասկանալի յե, ի՛նչ հիմար բան է հարցնում նա,— խոսեցին միաժամանակ մի քանի հոգի...

— Մի հարցնող լինի, թե ո՛ւմ– է պետք քո սյուրտուկը,— ծիծաղեց ուկրաինական բարբառով խոսող մի կարմիր բանակային, ցույց տալով ամուր ատամները. Նա ուղղում եր գոտին, պատրաստվելով դուրս գնալ։

— Ի՛նչ գիտես դու, գուցե յես կին ունեմ, վոր կհագնի,— աշխատելով կամաց խոսել, պատասխանեց Դեմինսկին և նստեց իր հին տեղը, անտարբեր դեպի շրջապատը։

Պատասխանելով ելի մի շարք հարցերի, Կոլեսովն արձակեց վաշտը։

★

Զնգում է գնդի շտաբի մոտ ինչ վոր տեղում փողհարի ազդանշանը և, ընդհարվելով զորանոցների պատերին ու անկյուններին, թռչում — անցնում է կոտորակ արձագանքով։ Ժամը յերեքն է, ճաշի ճամանակն է, արագ շարվածքի և յուրաքան-

չյուր սեղանի համար տասնյակներով համրանքի ժամանակն է:

Որապահը, ջոկի հրամանատար Իվանովը, վոր մինչ այդ հոտոտել է վաշտում բոլոր անկյուններն ու ծակուծուկը, ստուգում է վաշտի ժամացույցը: Ժամացույցի վրա նկարված է ավագ Միխայիլ Իվանովիչ Կալինինը և միշտ ժպտում է, բայց ժամացույցն իր ասածի չէ, գնում է իր բարեհաճությամբ և միշտ շտապում է. գուցե դա այն պատճառով, վոր ծանրակի հետ քաշ է արած մի կտոր յերկաթ, թեև առանց դրան ժամացույցը բոլորովին հրաժարվում է աշխատելուց:

Այժմ այդ ժամացույցով յերեքից անց է կես: Որապահը կշտամբանքով նայում է Կալինինին, ապա հանում է հուշատետրը և գրում է. «յերկրորդ անգամ զեկուցել վաշտի հրամանատարին, վոր ժամացույցը ճիշտ չի բանում, որվա մեջ յերկու ժամ առաջ վազելով:» Դրանից հետո նա հանկարծակի դղրդում է ամբողջ ձայնով.

— Պատրաստվել ճաշի: Իսկ մի րոպեյից հետո նրա ձայնը լսվում է լվացարանից, վորտեղ ծխողները ծլկվել, ծխում են հենց ճաշից առաջ:

— Ո՞ւր ես գցում ծխախոտի կրճոնը: Մի՞թե չես տեսնում թքամանները և լոզունգը, վոր չի կարելի հատակին գցել ու թքել:

Իվանովի յերկրորդ հրամանով վաշտը շարվում է պատի յերկարությամբ՝ մահիճների յերկար շարքերի առաջ: Անցքի մեջ նեղվածք է, ջահելները դեռ չեն վարժվել, և շարվածքը գայլանակի պես ծռվում է ուշացածների ճնշումից: Ուշացողները բոլորն էլ ջահելներ են, նրանք շարք են մտնում առանց թույլտվության, թեև առավոտյան ավագը յերկար ու բարակ բացատրում ու պատմում էր ներքին կարգ ու կանոնների մասին:

Շարվածքի մեջ աչքի յեն ընկնում հին ծառայողները ջահելների նոր, վառ-կանաչ մարզաշապիկների միջին: Սակայն նրանց կարելի յե ջոկել, ճանաչել վոչ միայն իրենց մաշված մարզաշապիկներից,—նրանք արագ ընդունում են հրամանը, քիչ են ուշանում և թվում են այնպես յելած-ընկած ու ամենիմաց, վոր ջահելներն սկզբում խուսափում են նրանցից: Հետո, սղմված ձախից հուպ տվող թեվով, ամենքն էլ տեղաշարժում են վոտները, հետ ու առաջ են ընկնում, աշխատելով «գտնել չորրորդ մարդու կուրծքը»:

Իվանովը նայում է ուշադիր ու սպառողական հայացքով: Նրան դուր չի գալիս շարվածքի անսովոր ուշացումը:

«Կարող են ուրիշները բռնել սեղանները»— և նա նորից փորձում է նայել այն կետին, վորտեղից նայում է Կալինինը, բարեսիրտ ժպիտով:

— Զգա՛ստ...— հրամայում է նա խիստ, գիտելով, թե ինչպե՛ս հարյուրավոր վոտներ աշխատում են վերջնականապես գտնել հարկավոր կետերը շարքի մեջ:

— Կարգով համ-րի՛ր...

Դեմքերը հերթով, մի վայրկյան թափրնդձեր շուռ են գալիս դեպի ձախ, ուղղակի կիպ, հարեվանի ականջի մեջ հնչում է.

— Առաջին... յերկրորդ... յերրորդ...

— Վաթսունյոթերորդ...— լսվում է հեռու անկյունից, ուր ծռվեց շարվածքը:

— Ցերկյա՛կ,— ծածկում է մյուսներին էլի մի ձայն:

— Հարյուր յերեսուն չորս,—գրում է հենց նույն հուշատետրում Իվանովը:

— Յուրաքանչյուր սեղանի համար հնգական

յերկյակներով համ-բէ՛ր...— նետում է նա նոր հրաման, համբանքը շարունակվում է:

«Ազատ» հրամանից հետո ավագ Մալովը հայտարարում է հին ծառայողներից կազմված ներքին վերակարգը: Զոհելների համար դեռ վաղ է, նրանից չի կարելի այդպես շուտ վստահել որավորակի պարտավորությունները: Դա կարելի յէ մի քանի շաբթից հետո, յերբ նրանք անցած կլինեն ուսուցման առաջին աստիճանը:

— Ով հայտարարելու բան ունի, հայտարարեք: Վաշտն այսոր դուք կտանեք, ընկեր Իվանով, դիմում է ավագն որավորակին և հեռանում է կրնկի յերկաթե պայտերով բացորոշ զրնգացնելով հատակին:

— Թույլ տվեք ինձ՝ հայտարարել:

Իվանովը նայում է այդ բանն ասողին—դա Յուդին Փադդեյն է, կոմյերիտական խմբակի պետկազմը: Նա շարքից դուրս է գալիս այնպես, վոր իրեն տեսնեն, և շուռ գալով դեպի յերկու թևը, հայտարարում է՝

— Ճաշից անմիջապես հետո բոլոր կոմյերիտները գան ինձ մոտ՝ ցուցակագրվելու՝ իմ ազգանունն է Յուդին, առաջին դասակից:

Համաձայն բոլոր կանոնների, նա նորից կանգնում է շարքի մեջ, ձախ ոտով շուռ է գալիս և արագ ուղղում է մարզաշապիկը:

— Ել ո՞վ հայտարարելու բան ունի...

Ամենքը լուռ են և կենտրոնացած նայում են որապահին: Իվանովն շտապել չի սիրում, թեև խոսքերով կրակոտ է, հաճախ խրատներ է տալիս մարտիկներին, և վաշտում նրան չեն սիրում: Սպասելով եյլի կես րոպե, նա դարձնում է շարքը, և յերկու փեղկերը լայն բացած դռներով, գավաթները զնգացնելով ու կոշիկներն ռիթմիկ դոփելով,

վաշտն իջնում է ներքև, այնտեղ, վորտեղ գտնըվում է սեղանատունը:

★

Յուդինը նստած է Լենանկյունում, առաջը՝ լրագիր: Նա ականջն է դնում ճաշից վերադարձած կարմիր բանակայինների աղմուկին և, յերբեմն նայելով «Պրավդայի» հեռագրական ամփոփումներին՝ մտածում է:

Յերեկ տանից նա ստացել է նամակ, գրված ոտարի ձեռքով: Նամակը կարճ է, դժվար է կարդացվում, նրա մեջ կան պառավ մոր մի ամբողջ շարք գանգատներ: Իսկ վերջում հակիրճ, վորպես հետ գրություն, ասված է.

— Իսկ քո ամուսինը հիվանդ է շատ, այն վոր նրա համար սաստիկ վախում ենք, չլինի թե դըժբախտության պատահի: Լավ կլիներ, յեթե դու գայիր, Փադդեյ, թեկուզ մի շաբթով և բացի դրանից կարող եյիր տնտեսության գործերով պարապել: Դրանք քայքայվում են ու անող չունենք»:

— Հիմա՞ կգրես, թե՞ մեռյալ ժամից հետո,— լսվեց ճիշտ նրա ականջի մեջ մի ձայն:

Յուդինն շտապ մի կողմ դրեց լրագիրը և վերցրեց բարակ կապույտ տետրակը, վորի շապկի վրա գրված եր՝ «Կոմյերիտական խմբակի հաշվառքի համար»:

Ներս յեկածը հանեց ծոցից ամեն գույներով ասեղնագործած մի քսակ, վորի մեջ սովորաբար մախորկա յեն պահում, և պետկազմի առաջ դրեց մաշված գորշ մի գրքույկ՝ ՈՒԿԼԵՑԵՄ տոմսերով:

Յուդինը բացեց տոմսը և կարդաց. «Սամոտոյ Անդրեյ Իվանովիչ: Ծնվել է 1907 թվին, ամուրի: Տվել է 1925 թվի հունիսի 25-ին՝ ՈՒԿԼԿՅԵՄ խոտանենի շրջկոմը»:

— Ի՞նչ եյիր անում բջիջում, ընկեր Սամոտոյ, Կարմիր բանակ կանչվելուց առաջ:

— Հենց ենպես, խակապես, առանձին ոչինչ. ի՞նչ ծանրաբեռնում կարող է լինել մեզ մոտ՝ գյուղում... Ճիշտ է, որ բջիջն ինձ ջոկեց հացամթերումների համար: Շրջգործկոմի նախագահի հետ գնացել եմ նաև Ցաստրեբրովի. մի կուլակ վառել եր գյուղթղթակցի խրճիթը, իսկ գյուղթղթակիցը կոմյերիտ եր: Նույնպես մենք Ցաստրեբրովոյի բջիջի հետ կապ եյինք հաստատում: Բացի դրանից, բջիջից առաջադրություն եյի ստացել՝ ագիտացիա անել, որ աղջկերքը մտնեն բջիջ:

Ցուդինը նայեց կոմյերիտին և տեսավ նրա ուշադիր խաժ աչքերն ու առնական դիմագծերը:

— Ցերեկի, նկատի ունենալով քո արտաքինը, բջիջը քեզ տվել է այդպիսի ծանրաբեռնում, որպեսզի լավ ազդես աղջիկների վրա, հա՞,—ծիծաղեց Ցուդինը:

— Ցես էլ եդպես եմ կարծում,—շարժեց նա գլուխը՝ դրական նշան անելով:

— Ինչպես յերեվում է, «խելոք» գլուխ է ունեցել ձեր քարտուղարը. իմացել է, թե ոդերքից ո՛ւմ ինչ ծանրաբեռնում պետք է տալ... Ցեվ ի՞նչ, ո՞նց կատարեցիր ծանրաբեռնումը, բջիջ շատերին ներգրավեցի՞ր:

—Ցես այն բոլորովին չկատարեցի, յեթե դատելու լինենք փաստորեն, փորձհետև ներգրավեցի յերկուսին, իսկ նրանք յերկուսն էլ ամուսնացան անկուսակցականների հետ և բջիջից մեխանիկորեն հեռացան, ժողովներին չհաճախելու պատճառով:

Լենանկյուն մտավ ելի մի խումբ և շրջապատեց Ցուդինին ու Սամոտոյին:

— Մե՞նք էլ ենք ուզում ցուցակագրվել,—ասաց

մեկն ամենքի կողմից: Ցուցակագրվածները չեյին հեռանում, սպասելով, թե արդյոք բան չի՞ ասի Ցուդինը:

Իսկ նա արդեն հաշվում եր ուժերը, ինչպես զորապետը հարձակումից առաջ:

«Տասներեք գյուղացի և չորս բանվոր,— սկզբի համար բավական է, իսկ հետո կաճենք»,— մտածեց ու հարցրեց.

— Ճիշտ չե՞ միթե, ընկերներ, որ կաճենք: Այժմ միայն տասն և յոթ հոգի յենք, և դա քիչ չե...

— Պետք է ուսումնասիրել կազմը, պարզել ակտիվը և պատրաստել քաղաքականապես,— ասաց բանվորներից մեկը՝ Գորելովը:

— Ճիշտ ես ասում, ընկեր,— հենց առաջին ժողովում այդ գործը կկարգավորենք, ինչպես պետքն է: Ցես կարծում եմ, հենց վաղը մենք կգումարենք փակ ժողով, վճռեց Ցուդինը:

Գորելովը զննեց գյուղական կոմյերիտներին և, սիրալիր ժպտալով, առաջարկեց հենց այժմ կարգին ծանոթանալ իրար հետ:

— Վաղը ժողովում մենք պետք է արդեն զոդված բջիջ լինենք, իսկ մենք նայում ենք իրար վրա և վախում ենք խոսել: Չեմ սիրում, յերբ կոմյերիտները հավաքվում են և լռում են, կարծես դավադիրներ լինեն:

— Դու, ընկեր, քաղաքում վարժվել ես խոսելու, դրա համար էլ զարկանի ասեղի յես նման. իսկ յես ո՛նց կարող եմ քեզ հետ խոսել, քանի որ մեզ մոտ յերկու տարի շարունակ բջիջում զեկուցումներ եր անում միայն քարտուղարը, իսկ յես մինչև անգամ վիճաբանություններին չեյի մասնակցում:

1006
18647
2858

Գորելովը շարունակելով ժպտալ, զարկեց խոտողի ծնկին, վորից նա նեղացավ, ու դեմքը թըթվեց:

— Տնաշեն, յես հո չեմ ասում, վոր դու այս րոպեյիս մեզ զեկուցում անես, բանը հո դա չի: Պետք ե մենք իրար հետ լավ ծանոթանանք: Նու, ա՛յ պատմիր ինձ, թե ի՞նչ ես կարդացել այս յերկու տարում, ինչո՞ւ մտար կոմյերիտմիության մեջ, յես ել իմը կասեմ,— ու պրծավ գնաց:

Նա բոլորովին մոռացավ վիրավորվածին:

— Դրուստ, ի՞նչ եմ կարդացել յես, հապա մեկ մտաբերեմ,— համաձայնեց նա վերջապես:

Նա տանջալից մտաբերում և աղերսանքով նայում եր մնացածներին, կարծես սպասելով, վոր նրանք ոգնեն կամ թելադրեն:

— Առաջինը կարդացել եմ «Լենինիզմի այբուբենը», ճիշտ ե, վո՛չ բոլորը, այլ միայն առաջին կեսը: Հետո Տուրգենեվից կարդացել եմ «Մումու» և «Գավառական Համլետը», բացի դրանից, «Կոմսոմոլսկայա Պրավդա»-ից բոլոր հոդվածները միջազգային թեմայի մասին: Համա «Կոմսոմոլսկայա Պրավդա»-ն տասն որով ուշ եր ստացվում բջիջում, վորովհետև փոստը ռայոնից բերում եյին շաբաթը մի անգամ. կարդում ես հաշտության հանձնաժողովի մասին, իսկ այնտեղ նա, եդ հանձնաժողովը գուցե արդեն պատերազմ ե հայտարարել Խորհրդային Միությանը:— Նա մի վայրկյան լռեց...— Կարծես թե թվեցի բոլորը: Հո չեմ պատմի քեզ, թե ի՛նչ եմ կարդացել դպրոցում, կամ այն ժամանակ, յերբ կիրակի որերը տղերքի հետ ձիերը տանում եյինք դաշտ՝ արածացնելու: Այնտեղ ամեն հիմար բան կարդում եյինք:

— Նու, իսկ ինչո՞ւ մտար կոմյերիտմիության մեջ: Ինքդ գնացի՞ր, թե՞ ներգրավեցին:

— Չե՛, ներգրավող չկար: Մեզանում բջիջը յերկամյա յե, յես ել նույնպես: Քաղաքից յեկավ քեզ պես մի տղա, միայն միքիչ ավելի լուրջ:— Ամենքը բարձր ծիծաղեցին:

— Ինչո՞վ եր նա «ավելի լուրջ»:

— Նա չսկսեց զոռով խոսք քաշել մեզանից և ծանոթանալ. նա ամենաչքավոր տղերքին կարդաց ինչվոր մի կարմիր գրքից, հետո իմացա, վոր դա կոմյերիտմիության ծրագիրն ու կանոնադրությունն եր...

— Բանից դուրս ե գալիս, վոր դու ծրագիրն ու կանոնադրությունն ել գիտես, և վո՛չ թե միայն «Մումու»-ն:

— Վո՞նց կլինի առանց ծրագրի: Դա ամեն մեկը գիտի: Եղպես ուրեմն, կարդաց յեկվոր տղան ու ասում ե. «ընկերներ, պետք ե բջիջ կազմակերպել, ո՞վ ե ուզում լինել կոմյերիտ»:— «Գրիր, ասում եմ, Կանեվին»: Եսպես, ուրիշ չորս տղայի հետ մենք դարձանք բջիջի առաջին անդամները: Հետո տանը հորս հետ կռվեցի, բայց գնում եյի բջիջի բոլոր ժողովները:

Գորելովը հավանության հայացքով նայում ե Կանեվին և աչքով ե անում մնացածներին:

— Տեսեք, ե՛, ինչ կոմյերիտ ե,— Ալչու յե, ալչո՛ւ:

Մյուսներն ել քիչ-միչ բան պատմեցին: Իսկ հետո նայում եյին պատկազմի վրա, թե արդյոք նա վոչինչ չի՞ պատմի իր մասին: Յուդինը հիշեց տանից ստացած իր դառն նամակը, և նորից նրա կոկորդին մոտեցավ ներս քշած կարոտը:

«Յեվ ի՛նչ կարիք կա մտածելու, ի՛նչ կարիք կա մտածելու, այստեղ տղերքը գալիս-լցվում են, իսկ յես սկսում եմ քրթմնջել: Կհաղթահարես դըժ–

բախտությունը, կհաղթահարես», բղավում էր
ներում ինչ վոր ձայն: Ցուդինը գործարար մար-
դու պես վերցրեց հենց նոր գրած ցուցակը և յե-
ղունգով նշան անելով կարդացած ազգանունների
դիմաց, մի անգամ էլ հայտարարեց.

— Ընկերներ, վաղը կրտսեր հրամանատարների
սենյակում, ճաշից անմիջապես հետո, կգումարվի
փակ ժողով: Կխոսենք առաջիկա աշխատանքի
մասին և կբաշխենք ծանրաբեռնումը:

Ասելով, թե գործ ունի, նա առաջինը դուրս
գնաց Լենանկյունից, և նրա հետևից ցրվեցին նաև
մնացածները: Գորելովն էր միայն, վոր մատիտը
խնամքով սրելուց հետո յերկար ժամանակ ինչ-վոր
բան էր գրում իր հուշատետրում:

★

Վաշտում լռություն է: Կարմիր բանակայիննե-
րը կոշիկները հանած, պառկել են վերմակների
վրա: Քնելու ցանկություն չկա, բայց անողոք Իվա-
նովն ամենքին քշեց իրենց մահիճները, «մեռյալ
ժամը» պահելու, իսկ ինքը գնում գալիս է,
աշխատելով չդիպել, և գրի յե առնում դատարկ
մահճակալները: Որավորակը խորհուրդ չեր տալիս,
— միևնույն է, այսօր հնարավոր չե վոչինչ իմա-
նալ, քանի վոր բաշխում չի յեղել ըստ դասակների
և կրտսեր հրամանատարներից վոչ վոք չգիտե իր
ստորադրյալներին. բայց Իվանովն ուզում է մինչև
վերջ ճշտապահ լինել և այդ օրվա ընթացքում յե-
րեսուներորդ անգամ գրում է իր հուշատետրում.
«Զեկուցել վաշտի հրամանատարին—առաջին դասա-
կի մարդիկ թրև եյին գալիս, դասհրամոդ Լուշնիկո-
վը հրամայեց մեռյալ ժամին մաքրել «Դեկտյարյո-
վին», Ցուդինը հավաքեց բոլոր կոմյերիտներին
և ժողով կազմեց, վորտեղ ամենքը բարձր ծիծա-
ղում եյին, խանգարելով մյուսների քունը»:

— Պետք է հրամանատարի հետ լուրջ խոսել մե-
ռյալ ժամի մասին. դու պառկեցնում ես նրանց, իսկ
նրանք ծիծաղում են, մանավանդ կրտսեր հրամանա-
տարությունը: Վո՛չ մի ուշադրություն դեպի որա-
պահը,— դանդատվում էր նա որավորակին, իսկ
վերջինս կարեկցաբար համաձայնում էր իր պետի
հետ, միաժամանակ աշխատելով աննկատելի կեր-
պով կարգի բերել սեղանը, վորտեղ անկանոն,
խառնիխուռն ձգել եյին՝ պատյանով սվինը հեր-
թական փոխի համար, պահակայինների փամ-
փուշտների յերկու ծրար, վորի համար հրամանա-
տարը միշտ խիստ պատժում էր, հիվանդներին գը-
րանցելու տետրակը, վորոնց մեռյալ ժամից հետո
ուղարկում եյին տկարանոց, և ուրիշ ամեն տեսակ
անպետք բաներ, վոր իրենց սեղանիկներից բերել
թափել եյին այդտեղ որավորակների յերեք փոխե-
րը:

Անցնելով առանձնոցից, Իվանովի ականջին հա-
սավ սղոցի հազիվ լսելի աղմուկ, վոր գալիս էր
ներքևից՝ վաշտի մթերանոցից:

«Ի՞նչ բան է դա, մի՞թե մեկն ու մեկը աշխա-
տում է այնտեղ»:

Նա սանդուղքներով վճռական շարժվեց դեպի
ներքև ու հանցավորներին խիստ պատժելու հաս-
տատ դիտավորությամբ վճռականապես բացեց
դուռը:

Մթերանոցը նման չե մթերանոցի: Դա ավելի
շուտ ատաղձագործական արհեստանոց է: «Մաք-
սիմի» տուփերի վրա, զենքի պատկանելիքների
արկղների վրա, վարժական հրացանների վրա դըր-
ված են քառակուսի չորսուներ ու տախտակներ՝
չեֆի— փայտագործական ֆաբրիկայի նվերներն են

դրանք: Հանցավոր յերեվույթ— որ ցերեկով վառվում ե վառարանը, իսկ այնտեղից գալիս ե մարդու քիթը ծակող ատաղձագործական սոսնձի հոտ: Ցեխին ծառայող՝ կարմիր բանակայիններ Ֆադեյեվն ու Սիրինը, հազիվ նայելով որապահի վրա, խարաբուղով հանդիստ ռանդայում են լայն տախտակը: Ցեվ ուղղակի Իվանովի վոտների տակ ե թափվում կամաց շրջյունով փուրը՝ կեղտոտ-սպիտակ խոպոպիկներով:

Ֆադեյեվը կանգ առավ, կոշտացած մեծ մատով խնամքով շոշափեց խարաբուղի բերանը, և քրտինքի խոշոր կաթիլները սրբելով յերեսից, մտերմաբար խոսեց:

— Ա՛յ, լավ կլիներ, ընկեր հրամանատար, յեթե գործիքներն ավելացնեյին վաշտում: Աշխատանք շատ կա— պետք ե շինել հենց միայն տաբուրետներ յոթանասուն հինգ հատ, հետո՝ կախարաններ, հրացանների համար բուրգեր, իսկ գործիքներ չկան ու չկան: Գուցե կարելի յե փայտանյութերի հետ միասին դրա մասին ել նեղություն տալ շեֆին. գուցե ջառմա քաշի յենթաշեֆականների համար:

— Այդ բոլորը շատ գեղեցիկ,— պահում ե իր վերցրած տոնը Իվանովը,— բայց ինչո՞ւ դուք խախտում եք մեռյալ ժամը, թանկագին մասնագետներ: Հո յես չե՞մ կարող ամենքի յետևից վազ տալ և համոզել, թե պառկեք, ընկեր մարտիկներ,— բարձրացնում ե նա ձայնը:— Դուք դեռ գիտակից մարտիկներ եք, կոմյերիտներ:

— Յես կոմյերիտ չեմ,— արտասանում ե Սիրինը:

Ֆադեյեվը հետաքրքրությամբ նայում ե որապահին և պաշտոնական տոնով զեկուցում.

— Ընկեր որապահ, թույլ տվեք զեկուցել, վոր

վաշտի հրամանատարը հանձնարարել ե մեզ մի շաբթում պատրաստել յոթանասուն հինգ տաբուրետ և խնդրեց աշխատել նույնիսկ հանգստի ժամերին: Դուք զեկուցեք նրան, իսկ մենք կաշխատենք, յեթե դուք չեք հրամայի դադարեցնել աշխատանքը:

— Կզեկուցեմ, կզեկուցեմ, միամիտ յեղեք:

Նա հանեց հուշատետրը, վոր գրի առնի ներքին ծառայության խախտելու հերթական դեպքը. «Ֆադեյեվը և Սիրինը մեռյալ ժամին աշխատում եյին մթերանոցում: Զեկուցել վաշտի հրամանատարին, վոր նրանք աշխատում եյին նրա թույլտվությամբ»:

Հետո նա կարդաց նախընթաց գրանցումը, վորտեղ ասված եր. «Հրամանատարի հետ լուրջ խոսել մեռյալ ժամի մասին», բարկացած ջնջեց այս յերկու գրանցումը և ատաղձագործներին թույլ տալով, վոր աշխատեն, հետ դարձավ վաշտը:

— Չեմ սիրում յես Իվանովին, և պատճառն այն չե, վոր խիստ ե ու պահանջկոտ,— խոսեց Սիրինը,— ինձ միշտ թվում ե, վոր նա անկեղծ մարդ չի: Խոսում ե, խոսում, իսկ հետո ինքը բոլորովին չի անում այնպես, ինչպես ասում եր:

Ֆադեյեվը դանդաղ խառնում եր սոսինձը և լուռ եր:

— Ի՞նչ կասես, դրո՞ւստ բան եմ ասում, թե՞ սխալ: Գուցե, յես սխալվում եմ: Ճիշտ ե, ծառայությունը նա հասկանում ե և կանոնագրքերը լավ գիտի, բայց ի՞նչ ոգուտ հրամանատարի այդպիսի գիտությունից, յերբ հրամանատարներին չեն սիրում կարմիր բանակայինները:

— Դու ճիշտ ես ասում, Սիրին. իսկապես՝ ի՛նչ ոգուտ հրամանատարի լավ գիտելիքներից, յերբ նա չգիտի մոտենալ մասսաներին:

— Չի կարելի ասել, որ Իվանովը վատ հրամանատար է: Երևի նրա բնավորությունն է այդպես: Ես կարծում եմ, մենք ամեն կերպ պետք է նրա հեղինակությունը բարձր պահենք ջահելների առաջ, թե չէ՝ այսօրվա մեռյալ ժամից հետո նրանցից շատերը կսկսեն քրքջալ: Դա լավ բան չի:

Նորից թեթև շրշյունով թափվում է հատակին սպիտակ փուրը: Սիրինը վերցնում է նեղ ձեռնասղոցը, և հղկած տախտակը կտրվում է կտորների՝ տաբուրետների յերեսի համար: Ձեռքը սահում է վեր ու վար, մարզաշապիկը հանված է, և ծալած թևքի ողակների մոտ թրթռում են առաձգական մկանները, հուպ տալով շապիկը:

— Ֆադեյեվ, դու Իվանովին նրա համար քո պաշտպանության տակ առար, որովհետև նա կոմյերիտ է ու բանվոր, իսկ ինքդ յերևի ուրիշ բան ես մտածում, այնպես չի՞:

— Ես յերբեք խղճիս հակառակ բան չեմ անում և միշտ ասում եմ այն, ինչ մտածում եմ: Եվ ամեն մարդ էլ պետք է այդպես անի: Իվանովին յես էլ չեմ սիրում, բայց դա դեռ չի նշանակում, որ նա բոլորովին վատ հրամանատար է... Ահա, թե ինչ, Սիրին. ասա ինձ, դու այդպես լավ տղա յես, ինչո՞ւ չես մտնում կոմյերիտմիության կամ կուսակցության մեջ:

— Սիրինին այդ հարցը հանկարծակիի բերեց: Նա չպատասխանեց այդ հարցին, մինչև նրանք չռանդայեցին ելի մի ամբողջ տախտակ: Հետո կարծես հիշելով, նորից վերսկսեց խոսակցությունը:

— Ես ինքս էլ հաճախ մտածում եմ, թե ինչո՛ւ չմտնեմ կուսակցության մեջ,— կոմյերիտմիության համար յես արդեն մեծ եմ, և վճռեցի, որ ամենքի համար պարտադիր չէ կուսակցության

մեջ մտնելը: Ա՛յ, դու կոմյերիտ ես, իսկ յես ոչ: Եվ ի՛նչ, մի՞թե յես քեզնից վատն եմ: Հրաձգության կողմից յես ամբողջ գնդում յերկրորդն եմ, կարգապահական ոչ մի պատիժ չեմ ստացել ամբողջ ծառայության ընթացքում, ել ի՞նչ ես ուզում: Իսկ մի՞թե քիչ են մեզանում այն կոմյերիտները, որոնց պահանոց են դնում կեղտոտ հրացանի և արձակուրդից ուշ վերադառնալու, նույնիսկ ինքնագլուխ հեռանալու պատճառով: Դե ասա, քի՞չ են, հա՞: Ո՛չ, ավելի լավ է, յես լավը լինեմ, այն էլ առանց կոմյերիտմիության:

Նա սկսեց ռանդայել այնպես, որ տաբուրետները դողում եյին նրա ձեռների տակ, իսկ մկանները թրթռում, խաղում եյին ավելի ուժեղ ու խիստ:

Ֆադեյեվը ծիծաղեց:

— Դե լա՛վ, յեթե ամենքը քեզ պես մտածելու լինեյին, մենք կոմունիստական կուսակցություն չեյինք ունենա. այն ժամանակ քո կարծիքով՝ բուրժուազիայի հետ կռվելը լա՞վ է, թե՞ վատ է: Եթե կուսակցություն չկա, ուրեմն, բուրժուազիայի հետ կռվել չի կարելի: Բանվորները չեն կարող կռվել առանց իրենց դասակարգային կուսակցության:

Նա մեկնեց ընկերոջը սոսնձի տաք ամանը և թեև ձեռքերն այրվում եյին, բայց գլխի չեր ընկնում, որ դնի հատակին, մինչև նա վերցրեց ու դրեց գետնին:

— Ուրեմն, դու կարծում ես, որ պատերազմի մեջ կարելի յե հարձակվել և գրոհի գնալ առանց հրամանատարի՞,— նորից հարց տվեց Ֆադեյեվը:

—Իհարկե, չի կարելի:

— Բուրժուազիայի հետ կռվելը չէ՞ որ շատ ավելի դժվար է, քան հարձակում գնալը: Այստեղ հարկավոր է ոչ միայն հերոսություն, այլև

խելք: Տե՛ս, Լենինն ինչքա՜ն է աշխատել, որ մեր կուսակցությունն ամուր դառնի: Ա՛յ, դու ծառայում ես, կարողանում ես ռանդայել, իսկ ռանդա շինելու համար հարկավոր է մեքենա, խելք, բանիմաց մեքենա, ուղեղի տեր մեքենա:

— Է՛, մինչև ո՞ւր հասար. յես յե՞րբ ասացի, թե կուսակցություն հարկավոր չէ, յես ասում եմ, ամեն մարդու համար պարտադիր չէ կուսակցության մեջ մտնելը:

— Նորից «պարտադիր չէ՛». յեթե դու ուզում ես ասել, որ ամեն մարդ չի կարող, նույնիսկ բանվորը կամ չքավորը, մտնել կուսակցության մեջ, այդ ճիշտ է: Բայց կուսակցությանը նվիրված և ազնիվ յուրաքանչյուր բանվոր ու չքավոր պետք է ձգտի դեպի կուսակցություն, իսկ դու լավ տղա յես և չքավոր:

— Լա՛վ, Ֆադեյեվ, յես դրա մասին դեռ կըմտածեմ: Ի՞նչ ես կարծում դու, Իվանովը մեր մասին կզեկուցի՞ վաշտի հրամանատարին, թե՞ չի զեկուցի:

—Յես կարծում եմ, որ չի զեկուցի: Նա միայն կբղավի և կխոստանա, բայց չի անի: Նու, ընկեր ջան, մենք այսոր մի տաբուրետ պակաս շինեցինք: Դա բանի նման բան չի:

Սիրինը ծիծաղեց:

— Ա՛յ, տեսնում ես, մեղավորը քաղաքականությունն է, մի ամբողջ տաբուրետ շինելու ժամանակը կերավ:

— Ոչի՛նչ, Սիրին, քաղաքականությունն ավելի արժե, քան տաբուրետը: Մենք յերեկոյան նորից պակասը կլրացնենք:

— Ինչո՞ւ չենք լրացնի, կլրացնենք,— համաձայնեց նա:

Նրանք սկսեցին կարգի բերել արհեստանոցը:

***

Կոլեսովը դասակների հրամանատարների, կուսակցության բջիջի քարտուղարի և Ցուդինի հետ նստած է, ձեռքերին դեռընտիրների ցուցակը: Բաշխումն ըստ դասակների պետք է անպայման վերջացնել այսոր: Վաղն առավոտյան վաշտն ստանում է հրացանները և սկսում է պարապմունքները:

Ցուդինը ոչ միայն կոմյերիտմիության պատկազմ է, այլև վաշտի գրագիր, թեև շատ անգամ եր խնդրել հրամանատարին, որ ազատի իրեն, բայց փոխարինող չկա:

— Ա՛յ, ջահելներից կընտրենք մի լավ տղա, իսկ ձեզ կհրաժարեցնենք,— ծիծաղեց Կոլեսովը:

— Գրասենյակ է մտնում որապահ Իվանովը: Նա մռայլված է և աշխատում է չնայել հրամանատարի վրա՝ զեկույցի ժամանակ: Կոլեսովն արդեն սովոր է նրա յերկար խոսակցություններին, ուստի, լսելով նրա ասածները, միաժամանակ գրում է առանձին ցուցակում նրանց, վորոնց կարելի յե առաջին աստիճանից հետո ուղարկել գնդի դպրոցը:

— Ընկեր հրամանատար,— խիստ շեշտելով «է» տառը, զեկուցում է Իվանովը:— Ընկեր Ֆադեյեվը ինքնագլուխ բաներ է անում պահանոցում և ամեն ինչ տակն ու վրա յե արել այնտեղ, իսկ իմ նըկատողությանը հանդուգն պատասխաններ է տալիս:

— Յես եմ թույլ տվել Ֆադեյեվին աշխատել պահանոցում, իսկ հանդգնության համար կպատժեմ: Նա ի՞նչ ասաց ձեզ:

— Իսկապես, առանձին վոչինչ, բայց Նրա տոնը, ընկեր հրամանատար, անտանելի բան է:

Կոլեսովը ծիծաղում է:

— Գիտեք ի՞նչ, ընկեր Իվանով, տոն ասածդ առաձգական բան է, վո՞նց հասկանանք այդ:

Իվանովը շարժում է գլուխը և դեմքը թթվեցնում է:

— Ավելի լավ է, ընկեր Իվանով, շարեք վաշտը, առանց գլխարկների, բայց վորքան կարող եք՝ շուտ:

— Կա, ընկեր հրամանատար — շարել վաշտը:

Նա շուռ է գալիս առանց շտապելու և գնում է կատարելու հրամանը:

Վաշտի մեջ դեռ ճրագ չկա, և կարմիր բանակայինները մեկ-մեկ կամ խմբերով նստած մահիճների վրա, պատմում են որվա իրենց տպավորությունները: Հետևի, այսինքն՝ հաշվով յերրորդ շենքում, վորտեղ սովորաբար զետեղվում են գնդացրորդները, լսվում է ամեն րոպե ծիծաղ: Դասակի հրամոդ Զերկեսովը, դասական գնդացրորդ «մաքսիմխոսը,» առանձին ընդունակություն ունի յերկու ժամվա ընթացքում ծանոթանալու հարյուրից ավելի մարդու հետ: Յեվ այժմ Նրա շուրջը, հրացանները մաքրելու սեղանների հետևի անկյունում, հավաքվել են մի խումբ դեռընտիր բանակայիններ: Զերկեսովը տանում է, ինչպես ինքն է ասում, «համարյա արտդպրոցական» աշխատանք: Նրա սիրած զբաղմունքն է՝ կուտակել իր հիշողության մեջ որվա ուրախ դեպքերը, վորպեսզի առաջին ազատ րոպեյին պատմի մասսային բոլորը, անցկացնելով իր՝ չերկեսովյան առանձնահատուկ քննադատության միջով: Նրան շատ սիրում են հին ծառայող գնդացրորդները «խստու-

թյան համար» — ինչպես յեզրակացնում եր Սերինը: Դասակում դեռ հիշում են, թե ի՛նչպես անցած ամառ, գնդի մրցությունների ժամանակ, նա իր ուսերի վրա դրած՝ դուրս բերեց «մաքսիմի» «մարմինը» անանցանելի ճահճի միջով, վոր յերեք կիլոմետրանոց աղիքի պես փակել եր կայազորի հրաձգարանի մատուցղին: Իսկ հետո յերեկոյան, մրցություններից հետո, ծիծաղում ու պատմում եր, թե ի՛նչպես «առաջին համարին» տվեց արտահերթ վերակարգ Նրա համար, վոր Նա դրպանում պահել եր գնդացրի փականքը և մոռացել եր դրա մասին, վորի պատճառով տասնհինգ վայրկյան ուշացավ հրաձգությունը:

Այժմ Զերկեսովը գնդակոծում եր դեռընտիրներին: Նա պատմում է, կանգ առնելով, յերբ ունկնդիրները նվաղում են ծիծաղից, և դեմքին պահելով անվրդով խաղաղություն...

— Այսպես ահա, ընկեր Սելեզնյովը վեր է կենում գիշերը և գնում է վոտաբոբիկ, ինքն ել չգիտի, թե ո՛ւր է գնում, յերեկոյան մոռացել եր տղերքից հարցնել, ուր գնալ բնական կարիքի համար, իսկ գիշերը չկա մեկը, վորին հարցնի: Բացի դրանից, չգիտեր թե ինչպես պետք է վառել ելեկտրական լույսը: Մթության մեջ դես ու դեն է ընկնում այնքան ժամանակ, վոր ել դիմանալ չի կարողանում:

Ունկնդրողները քրքջում են: Սելեզնյովը նստած է այնտեղ և ուշադրությամբ լսում է դասակի հրամոդին:

— Իսկ ո՞վ կարող է մթության մեջ գտնել ելեկտրականի կոճակը: Բոլոր լուցկիները վառում է, բայց կոճակը գտնել չի կարողանում:

— Ա՛խ, դու անիրավ կոճակ, — կատակում են հարևանները, ուրախանալով, վոր այդ դեպքը

— Իսկապես, առանձին ոչինչ, բայց նրա առնը, ընկեր հրամանատար, անտանելի բան է:

Կոլեսովը ծիծաղում է:

— Գիտեք ի՞նչ, ընկեր Իվանով, տոն ասածդ առաձգական բան է, վո՞նց հասկանանք այդ:

Իվանովը շարժում է գլուխը և դեմքը թթվեցնում է:

— Ավելի լավ է, ընկեր Իվանով, շարեք վաշտը, առանց գլխարկների, բայց որքան կարող եք՝ շուտ:

— Կա, ընկեր հրամանատար — շարել վաշտը:

Նա շուռ է գալիս առանց շտապելու և գնում է կատարելու հրամանը:

Վաշտի մեջ դեռ ճրագ չկա, և կարմիր բանակայինները մեկ-մեկ կամ խմբերով նստած մահիճների վրա, պատմում են օրվա իրենց տպավորությունները: Հետևի, այսինքն՝ հաշվով յերրորդ շենքում, որտեղ սովորաբար զետեղվում են գընդացրորդները, լսվում է ամեն րոպե ծիծաղ: Դասակի հրամոդ Զերկեսովը, դասական գնդացրորդ-«մաքսիմիստը,» առանձին ընդունակություն ունի յերկու ժամվա ընթացքում ծանոթանալու հարյուրից ավելի մարդու հետ: Ցեվ այժմ նրա շուրջը, հրացանները մաքրելու սեղանների հետևի անկյունում, հավաքվել են մի խումբ դեռընտիր բանակայիններ: Զերկեսովը տանում է, ինչպես ինքն է ասում, «համարյա արտդպրոցական» աշխատանք: Նրա սիրած զբաղմունքն է՝ կուտակել իր հիշողության մեջ օրվա ուրախ դեպքերը, որպեսզի առաջին ազատ րոպեյին պատմի մասսային բոլորը, անցկացնելով իր՝ չերկեսովյան առանձնահատուկ քննադատության միջով: Նրան շատ սիրում են հին ծառայող գնդացրորդները «խատու-

թյան համար» — ինչպես յեզրակացնում եր Սերինը: Դասակում դեռ հիշում են, թե ի՛նչպես անցած ամառ, գնդի մրցությունների ժամանակ, նա իր ուսերի վրա դրած՝ դուրս բերեց «մաքսիմի» «մարմինը» անանցանելի ճահճի միջով, որ յերեք կիլոմետրանոց աղիքի պես փակել եր կայազորի հրաձգարանի մատուցողին: Իսկ հետո յերեկոյան, մրցություններից հետո, ծիծաղում ու պատմում եր, թե ի՛նչպես «առաջին համարին» ավեց արտահերթ վերակարգ նրա համար, որ նա գրպանում պահել եր գնդացրի փականքը և մոռացել եր դրա մասին, որի պատճառով տասնհինգ վայրկյան ուշացավ հրաձգությունը:

Այժմ Զերկեսովը գնդակոծում եր դեռընտիրներին: Նա պատմում է, կանգ առնելով, յերբ ունկնդիրները նվաղում են ծիծաղից, և դեմքին պահելով անվրդով խաղաղություն...

— Այսպես ահա, ընկեր Սելեզնյովը վեր է կենում գիշերը և գնում է վոտաբոբիկ, ինքն էլ չգիտի, թե ո՛ւր է գնում, յերեկոյան մոռացել եր ավերքից հարցնել, ուր գնալ բնական կարիքի համար, իսկ գիշերը չկա մեկը, որին հարցնի: Բացի դրանից, չգիտեր թե ինչպես պետքե վառել ելեկտրական լույսը: Մթության մեջ դես ու դեն է ընկնում այնքան ժամանակ, որ էլ դիմանալ չի կարողանում:

Ունկնդրողները քրքջում են: Սելեզնյովը նստած է այնտեղ և ուշադրությամբ լսում է դասակի հրամոդին:

— Իսկ ո՞վ կարող է մթության մեջ գտնել ելեկտրականի կոճակը: Բոլոր լույսերը վառում է, բայց կոճակը գտնել չի կարողանում:

— Ա՛խ, դու անիրավ կոճակ,— կատակում են հարևանները, ուրախանալով, որ այդ դեպքը

պատահել է վոչ թե իրենց հետ։— Տո՛, կերթայիր որավորակի մոտ ու կհարցնեյիր, ելի՛։

— Այսպես ահա, ել դիմանալ չի կարողանում։ Իսկ չուրջը մութ է, ինչպես յերևում է, ճրագի մեջ նավթը վառվել, վերջացել եր։ Անկյունում նա դիպչում է ինչ վոր յերկաթե իրի․․․

— Թ․քամանին, հա՞․․․

— Հա, իհարկե, թ․քամանին․ ձեռքով շոշափում, տեսնում է վոր ծակ ունի, իսկ միջին ել ջուր։ Յեվ վճռում է մեր ընկերը յերեկոյան խմած իր թեյը լցնել այնտեղ։ «Գործը» վերջացնում է և հետո հանգիստ քնում է մինչև առավոտյան վեր կենալը։

Պատմածը նորից ընդհատվում է ծիծաղով։ Չեն ծիծաղում միայն յերկու հոգի՝ ինքը Ջերկեսովը և Սելեզնյովը։

— Իսկ ամենագլխավորը պատահեց առավոտյան, ընկերներ, վեր կենալուց հետո,— հանկարծ ավելացրեց Ջերկեսովը։

Ամենքը լռում են, չհասկանալով, թե ի՛նչ կարող եր պատահել Սելեզնյովի հետ առավոտյան։ Ջերկեսովը պաուզա յե անում, նայում է չուրջը, և մյուսների մեջ գտնելով Սելեզնյովի յերեսը, կանգ է առնում նրա վրա իր քաջալերիչ հայացքով։

— Առավոտյան պատահեց այն, ինչից յուրաքանչյուրը պետքե որինակ վերցնի․ ընկեր Սելեզնյովը հագնվեց, գտավ վաշտի որապահին և մանրամասնորեն պատմեց ամեն բանի մասին։ Յես կարծում եմ, վոր նա հրաշալի մարտիկ կլինի մեր վաշտում։ Ճիշտ չե՞մ ասում, ընկեր Սելեզնյով։

— Ինչո՞ւ չե․ յես Կարմիր բանակ մտա, կարելի յե ասել՝ կամովին։ Հանձնաժողովը ուզում եր ինչ վոր ջղայնություն գտնել, իսկ յես ասացի,

«թե առողջ եմ, ընկերներ, և ուզում եմ գնամ ծառայեմ»։

Նա առաջ մեկնեց յերկու ձեռքը, կարծես՝ կամենալով մի անգամ ևս ցույց տալ, վոր վոչ մի ջղայնություն չունի, բայց մթնշաղի մեջ ամենափորձված բժիշկն անգամ չի կարող նկատել, թե ինչպես դողում եյին այդ ձեռքերը։

Ջերկեսովը լռեց, սպասելով, թե արդյոք վոչինչ չե՞ն հարցնի իրեն, սակայն, կարմիր բանակայինները հանդրատվեցին «ջղայնության» մասին Սելեզնյովի ասած խոսքերից հետո։ Նրանց դեմքերը հազիվ եյին նշմարվում թանձր մթության մեջ։ Միքանիսի վրա ընկնում եր փողոցի լույսի անդրադարձումը․ բայց նրանք ել աշխատում եյին քաշվել դեպի մթությունը։ Լսվում եր տրամվայների հեռավոր և խուլ աղմուկը․ ինչ վոր տեղ խփում եր մեծ քաղաքի վառ կյանքը։

— Ահա թե ելի ի՛նչ կասեմ յես,— անակնկալ ասաց Ջերկեսովը․ այստեղ մեկը Սելեզնյովին անվանեց կոճակ։ Յեթե այդ բանը մեկ ել պատահի, յես այդ ընկերոջ հետ կխոսեմ առանձին։ Բայց կարծում եմ, վոր խոսելու կարիք չի լինի։

Մեկը մթության մեջ մատներով թմբկահարեց սեղանին և սրտապնդվելով, հարցրեց․

— Իսկ դու, ընկեր հրամանատար, քաղաքի՞ց ես, թե՞ մերն ես, գյուղացի։

— «Մերն ես, գյուղացի,»— կրկնեց Ջերկեսովը, աշխատելով տեսնել, թե ո՛վ այդ հարցը տվեց, սակայն, ապարդյուն։— Այո՛, յես ձերն եմ՝ գյուղացի յեմ և միաժամանակ ձերն եմ՝ քաղաքացի յեմ։ Վորովհետև յերեք տարի յե, ինչ գյուղից գնացի քաղաք, մտա գործարան։ Գործարանից ել՝ գունդ։ Այսպես ահա, հիմա յես

հարցնում եմ ձեզ ամենքիդ. ո՞ւմն եմ յես — «ձեր գյուղացի՞ն եմ, թե՞ ձեր քաղաքացին:

Մահճակալի վրա յեռեռացին, մեկը թըրխկացրեց գիշերային սեղանիկի դուռը: Հետո մի ուրիշ կարմիր բանակային, վոր նստած եր Զերկեսովի կողքին, բառերը յերկարացնելով ասաց.

— Մազալու բան ե դուրս գալիս, ընկեր հրամանատար. դու քաղաքացի-գյուղացի յես կամ վոչ վոքինը չես:

— Վոնց թե վոչ վոքինը չի, չի կարող պատահել, վոր վոչ վոքինը չլինի,— բողոքեցին զանազան ձայներ,— այն դեպքում՝ ավելի լավ ե ուղղակի ասել՝ մերն ե ու վերջացավ, և այն ժամանակ դուրս կգա՝ համ քաղաքացի, համ գյուղացի:

Զերկեսովն սպասեց, մինչև ձայները հանդարտվեցին և յեզրափակեց.

— Գյուղում մանուկ հասակից յես բատրակություն եյի անում: Իմացա տերերի տված կերակրի համը, իսկ լավի համը բոլորովին մոռացա: Քաղաքում՝ մեքենայի մոտ վերջնականապես սովորեցի հասկանալ կյանքը, ինչպես նա կա իսկապես: Քաղաքում ել կոմյերիտ դարձա, իսկ հիմա,— արտասանեց նա պարծանքով,— հեղափոխության տասներկուերորդ տարեդարձին մտնում եմ կուսակցության մեջ: Այ, հիմա ինքներդ դատեք, թե ո՛ւմն եմ յես. գյուղացի՞ յեմ թե՞ քաղաքացի:

Փայլեց ելեկտրական լույսը և լուսավորեց դեռընտիրների ու դասակի հրամոդ Զերկեսովի յերեսները. Զերկեսովը կանգնած եր սեղանի մոտ, բրեզենտե շապկով ծածկված «մաքսիմ» գնդացրի կողքին: Լույսը տալուց հետո ամենքին հայտնի

որապահ Իվանովը հրամայեց վաշտին՝ արագ շարվել:

Նայելով հին ծառայողներին, դեռընտիր բանակայինները, մտնելով շարքի մեջ, խնամքով կարգի եյին բերում իրենց. ավելի ձգում եյին ճրճռացող գոտիկները և շոշափելով փորձում եյին՝ արդյոք կոճակվա՞ծ եյին մարզաշապկի կոճակները: Ըստ դասակների բաշխումը հուզում եր ամենքին. յուրաքանչյուրն ուզում եր իմանալ, թե ո՛վ ե ջոկի հրամանատարը, դասակի հրամանատարը և վերջնականապես տեղ ստանալ: Կրտսեր հրամանատարները կանգնեցին ընդհանուր շարքի մեջ, միայն դասակի հրամոդները, ձեռքերին թուղթ ու մատիտ, առաջ անցան, պատրաստվելով գրի առնել դասակի կազմը:

Իվանովը տվեց «զգաստ» հրամանը, դուրս յեկավ կանգնեց մեջտեղը և աչքերը շեղակի ձգելով դռանը, սպասում եր վաշտի հրամանատարի յերևալուն: Դուռը ճռնչաց, որապահը ոդ ներս քաշեց թոքերը, պատրաստվելով ոդը դուրս նետել հրամանի հետ, և... սրտնեղությամբ խորապես հառաչեց: Վաշտի մեջ մտավ ավագ Մալովը:

Ի՛նչ անտեղի յեկավ. իսկ հիմա, հասկանալի յե, վոր հրամանը նա կտա ըստ ավագության»:

Նա բարկացկոտ նայեց ավագի վրա և հեռու գնաց դեպի ձախ թևը:

Կոլեսովը յեկավ յերկու դասակի հրամանատարների հետ և հրամայելով «զգաստ», սկսեց շրջագայել շարվածքը: Մի ամիս եր, ինչ նա նշանակվել եր վաշտի հրամանատար, և նրա մարզաշապկի կոճկաների վրա, պոկած յերկու քառակուսիների կողքին, կարմրին եյին տալիս նորերը, վորոնք դեռ չեյին հնացել ու մաշվել և ասում եյին, վոր նա նորերս բարձրացել ե իր պաշտոնի մեջ: Նա

դեռ մի քիչ ճնշվում էր այդքան մեծ թվով մարդկանցից, վորոնք վաշտ էյին յեկել՝ նրա հրամանատարության տակ և ուշադրությամբ հետևում էյին իրենց հրամանատարի յուրաքանչյուր խոսքին: Դանդաղ, առանց կանգ առնելու, Կոլեսովը գնում է վաշտի առաջով, ուշադիր նայելով մարդկանց դեմքերին, աշխատելով չմոռանալ այդ դեմքերի և աչքերի արտահայտությունը: Նրանցից վոմանք, յերեխաների պես, հետաքրքրությամբ նայում էյին ուղղակի նրա աչքերի մեջ, մյուսները կարծես հետաքրքրվում էյին հրամանատարի քթարմատով, ուրիշները նայում էյին ինչվոր կետի, ինչպես լուսանկարվելիս՝ լուսանկարչի ցուցմունքով:

«Ի՛նչպես ամենքն էլ տարբեր են, բայց և այնպես վորքան դժվար է հիշել նրանց մի անդամից», —անցավ նրա գլխով այդ միտքը: «Թվում է, թե յերբեք չեն տպավորվի», — մտրակում էր մի այլ միտք: Յերբ հերթը հասավ Յուդինին, վոր նույնպես կանգնած էր շարքում, Կոլեսովը հարևանցի ժպտաց նրան: Ձյունի թանձր, խոշոր փաթիլները ծեծում էյին լուսամուտի ապակիները: Այդ հանգամանքը մի րոպե ուրիշ բանի վրա կենտրոնացրեց հրամանատարի մտքերը:

«Վաշտում զիրիացիները շատ են, նրանք լավ դահկավորներ են: Կվարժվենք իրար ու լավ կաշխատենք անպայման կվարժվենք իրար ու լավ կաշխատենք,—տասնութ հոգի միմիայն կոմյերիտներ են, իսկ բջիջը», — մտածում էր նա, արագացնելով քայլերը ձախ թևում:

Ձախ թևի ամենավերջին մարդը Ֆադեյեվն էր, վոր կանգնել էր պատին սղմված: Նրա մազերի մեջ ծիծաղելի տնկված էր մի փոքրիկ փուր:

«Ամբողջ ժամանակ զբաղված է տարբերանքներ չինելով, լավ տղա յե»:

Իսկ Ֆադեյեվը, կարծես զգալով, թե ինչի՛ մասին է մտածում հրամանատարը, չհամբերեց ու ասաց.

— Այսօր տասներկու հատ ենք չինել, ընկեր հրամանատար, միայն գործիքը...

Իսկ Կոլեսովը, հպարտ և ուրախ, արդեն մոտենում էր շարքի մեջտեղին, խճճված մահճակալների ու սեղանների նեղվածքի մեջ, և բացեց Յուդինի հավասար ձեռագրով գրված ցուցակը:

— Առաջին հրաձիգ դասակ. դասակի հրամանատար Զինայեվ, ոգնական Կոնստանտինով...

Ամենքը, ում անունը կարդում էր, դուրս էյին գալիս Լենինյան անկյունը, վորտեղ դասակի հրամանատարը վերջնականապես կազմում էր իր դասակը:

Տասնհինգ րոպեյից վերջացավ ըստ դասակների բաշխումը, և վաշտը նորից կանգնած էր ընդհանուր շարքով, թևերով սղմված պատերին:

— Ընկերներ, ով ինձ հարցնելու բան ունի, հարցրեք:

— Յես ունեմ, յես ունեմ,—լսվեց շարքի զանազան տեղերից:

— Նու, ասեք,—նշան արավ Կոլեսովը մեկին, վորին նկատեց ինքը:

— Յես, ընկեր հրամանատար,— սկսեց նա,— ավելի ցանկանում եմ սովորել «մաքսիմի» վրա: Ենպես վոր չի՞ կարելի, վոր ինձ գնդացրային դասակը նշանակեք:

Պարզվեց, վոր մյուսների հարցերն էլ դրա նման հարցեր են:

«Զերկեսինը արդեն ցույց է տվել իրեն», — վճռեց մեկեն Յուդինը, լսելով տրված հարցերը:

«Վոչի՛նչ, մյուսներն էլ վատ չեն անի», —հանգստացավ նա, յերբ Կոլեսովը հայտարարեց,

վոր առանց հրամանատարների հայեցողության վո՛չ մի տեղափոխություն չի լինի դասակից-դասակ:

Բաշխումը վերջացնելուց հետո Կոլեսովը հայտարարեց, վոր տաս րոպեյից վաշտերը կերթան դիտելու «Յերկիրը գերության մեջ» կինո-ժապավենը, և վոր կարող են գնալ ամենքը, ովքեր ուզում են: Պարզվեց, վոր ուզում է ամբողջ վաշտը: Այդ բանը մեծ տարակուսանք պատճառեց որապահին: Կես ժամ առաջ նա ստորագրեց գնդի ծանուցումների գրքույկը, վորտեղ պարզ ասված էր—յուրաքանչյուր վաշտից ուղարկել 75 մարդ:

«Միևնույն է, բոլորը չեն գնա,—վճռեց Իվանովը, և այդ բանն առիթ տվեց նրան՝ անել անզգույշ հայտարարություն:

«Միևնույն է, այնտեղ չեն հաշվի»,—վճռեց նա նորից:

Դուրս գնացին միայն մարզաշապիկներ հագած: Ձյունը թափվում էր այնպես արագ, ասես ուզում էր վարձատրել իրեն՝ առաջներս կորցրած ժամանակի համար: Գումարտակի շենքի մուտքի առաջ արդեն կազմվել է բավական տարօրինակ ձնակույտ, վորը սպիտակին է տալիս լապտերի ելեկտրական լույսի շերտի մեջ:

—Կանգ ա՛ռ,—հրամայեց որապահը: Նա մի վորոշ ժամանակ տատանվում էր. մինչև ակումբը պետք էր գնալ յերեք հարյուր մետր՝ գնդի բակով: —«Կարող են մրսել, և այն ժամանակ խմբերով պիտի ուղարկել տկարանոց»: Հե՛տ դառնալ: Հագնել գրատնե՛րը: Յե՛տ դարձ:

Առաջինները յետ դարձան, հետինները չլսեցին, թե բանն ինչ է, և յերես առ յերես ընդհարվեցին առաջինների հետ: Սանդուղքների վրա տեղի ունեցավ ուրախ իրարանցում: Հետո խախտելով

շարվածքը, ամենքն առաջ նետվեցին՝ վերցնելու գրատները, իրար դեմ ընկնելով: Իվանովը մտքում հանրագումարելով օրվա դեպքերը, շտապ նորից շարեց վաշտը:

Ակումբի ճանապարհին մեկը փորձեց յերգել «Կարմիր Հեծելազորը», բայց բան դուրս չեկավ: Արդյո՞ք խանգարում եյին ուժեղ քամին և ձյունը, վոր հանդգնաբար մտնում եյին բացված բերնի մեջ, թե՞ խանգարում էր այն հանգամանքը, վոր ընդամենը տասնհինգ րոպե դրանից առաջ կազմած վաշտը դեռ միաբան յերգել չգիտեր, բայց յերգը մարում էր մերթ բարձր, մերթ ցածր ձայնանիշների վրա:

★

Վաղ առավոտյան, մեկեն նախաճաշից ու թեյից հետո վաշտն ստացավ հրացաններ և հանդերձանք: Գնդի պահեստի մուտքի մոտ ձգվեց կարմիր բանակայինների յերկար ժապավենը: Հրացանների վրա կա յուղի թանձր շերտ: Նա ցրտից սառել է, կպչում է ձեռներին, և ցուրտը հեշտությամբ հաղթահարում է աղտոտված մատները:

Անփոփոխելի Յուդինը հենց այստեղ, ավագ Մալովի հետ միասին նշանակում է ստացածը:

— Առաջին դասակն ամբողջովին, ընկեր ավագ:

— Ամբողջովի՞ն: Ուրեմն, տարեք ու սկսեք մաքրել:

Կարմիր բանակայինները տանում են հրացանները, մարմնից հեռու պահած, վախենալով, չլինի թե կեղտոտեն նոր մարզաշապիկները: Դասակը նման է մի խումբ ֆիզկուլտուրնիկների, վորոնք մշակում են մկաններն ամրացնելու առաջադրությունը:

Տասնհինգ րոպեից հետո, երբ հրացանների վրայից «դուրս գնաց ամբողջ պաղը» և նրանք ծածկվեցին յուղի հետ խառնված թանձր ցողով, սկսվեց մաքրելու գործողությունը: Երրորդ ջոկի հրամանատար Ակինչինը տարավ իր ջոկը հրաձգային դասարանը, որտեղ չորս շարքով դրված էին սեղաններ քաղպարապմունքների համար, պատերից քաշ էին արված տակտիկական պլակատներ, իսկ անկյունում դրված էր կիսակոտրած մի մեծ արկղ, միջին ավազ: Ամեն որ Ֆադեյեվն անցնելով այդ դասարանից, հառաչում է, կարծես՝ արկղը նրա համար կիսատ մնացած աշխատանքի կենդանի հանդիմանություն է:

«Ա՛յ, մեկ վերջացնեմ տարուբերումները, յես քեզ ընկեր, կարգի կբերեմ, ինչպես պետքն է»,—հանգստացնում էր նա՛ ինքն իրեն, և արկղը կանգնած է, սպասելով իր հերթին:

— Նու, ուրեմն, սկսենք մաքրել,—բազմանշանակալից ու ծանրակշիռ արտասանում է Ակինչինը: —Ամենքդ հրացանները դրեք սեղաններին: Կա՛ց կաց: Պետք չէ դնել սեղաններին. դրեք ուղիղ առաջներդ և ձեռքով բռնեք: Նա ցույց է տալիս, թե ինչպես պետք է անել:— Ո՞վ գիտե հրացանը: Գիտեմ, որ դուք գիտեք, ասում է նա հին ծառայողին, որը բարձրացրեց ձեռքը:— Դեռընտիրներից ո՞վ գիտի: Ոչ ո՞ք: Դա լավ է,— հանգստացնում է նա,— յետ մնացող չի լինի:

Ակինչինը մտածում է, ինչի՛ց սկսել. Նա չէր պատրաստվել այդ մաքրման համար, իսկ մաքրելը դուրս յեկավ իսկական դաս՝ թե՛ կարմիր բանակայինների համար, թե՛ հրամանատարի համար:

— Ամենից առաջ հանում ենք սվինը:—Նա վարժ շարժումով շուռ է տալիս դեպի ձախ սվինի անրիկը: —Դա կոչվում է անրիկ. Նրան ուղիղ դիր նշանառու-

թյան հատիկի դիմաց: Իսկ մեջտեղը դատարկություն է—դա հենց անրիկի անցքն է, որ քննության ժամանակ դառնում է շատերի կտրվելու պատճառը:

Կարմիր բանակայինները չեղակի նայելով հրամանատարին, աշխատում են ճշտությամբ ընդօրինակել նրա շարժումները: Մեկը վոչ մի կերպ չի կարողանում հանել սվինը, իսկ հրամանատարին չի ուզում ասել, մինչև նկատում է այդ բանը ինքը՝ հրամանատարը:

— Այստեղ հարկավոր է ունակություն, ընկեր Նիկոլայեվ: Թե չէ, այն ույժը, որ դուք ունեք, կարող է ծռել անրիկի վիզը:

Նիկոլայեվը կարմրում է և հրացանը չկամությամբ տալիս է հրամանատարին: Հանում են փակաղակները: Կարմիր բանակայինները շոշափելով փորձում են փակաղակները, պտտեցնում են ձեռքերի մեջ, սպասելով հրամանատարի հետագա ցուցմունքներին:

— Փակաղակը նույն բանն է, ինչպես ուղեղը՝ մարդու համար, առանց փակաղակի հրացանը դեն գցելու բան է, կոպեկի արժողություն չունի:

— Ընկեր հրամանատար,—խորամանկորեն քըմծիծաղ է տալիս Նիկոլայեվը, որ արդեն ուշքի յեր եկել իր կրած անաջողությունից.—փակաղակը, խոսք չկա, որ կարեվոր է, իսկ յեթե, ասենք որինակ՝ այս խողովակը չլինի, Նա մատները քսելով տանում է հրացանի փողի սկզբից մինչև հատիկը,—ու ասելով դուրս է գալիս, որ կարելի՞ յե հրացանից կրակել:

Ամենքը նայում են Ակինչինին, իսկ նա, մի քանի վայրկյան մտածելուց և հրացանը յերկու ձեռքով բռնելուց հետո, հաստատում է.

— Չէ՞ վոր յես ասացի վոր փակաղակն ուղեղն է, իսկ փողը, հրացանի փողն ինչպես մարդուս ստամոքսը: Ա՛յ, Նիկոլայևը մտածում է ուղեղով, համա կերակուրն ուղարկում է փորը: Առանց ստամոքսի ուղեղը կդադարի մտածելուց: Ինչ էլ լինի, ուղեղն ավելի կարևոր է, վորովհետև նրանով պետք է մտածել: Այդպես էլ հրացանը. փողը կարևոր է, իսկ փակաղակն ավելի կարևոր է:

Ակինչինը դեռ գնդի դպրոցում սովորելիս՝ յուրացրել եր, վոր դեռընտիրներին սովորեցնելու ժամանակ հարկավոր է սովորեցնել կենդանի որինակներով և կարծում է, վոր այսոր ինքը ստամոքսի ու գլխի ուղեղի որինակով աջողությամբ կիրառեց այդ մեթոդը:

Նիկոլայևն այլևս չի առարկում: Նա աշխատում է չարունակել խոսակցությունը հրամանատարի հետ, հարցնում է, այսոր կոմյերիտական ժողով կա՞, թե վոչ և ստանալով դրական պատասխան, սկսում է զգուշությամբ ու խնամքով փաթաթել նեղ սպիտակ ժապավենը ձողիկի վրա, վորը հրամանատարի ասելով՝ կոչվում է մաքրիչ:

Ակինչինի ջոկում կա ընդամենը յոթ դեռընտիր, չորս գյուղացիներ, մեկ ուկրայինացի և յերկու ռուս: Ակինչինն զգում է, վոր տղերքը դեռ անտղու են իրար, գյուղացիք խմբվում են իրար մոտ, ավելի շատ խոսում են իրենց բարբառով. նույնիսկ կոմյերիտ Զուբարյովը քիչ դեպքերում է անջատվում իրայիններից:

Այդ մտքերը նրան ավելի պակաս չեն զբաղեցնում, քան զենքի առաջին մաքրելը, և նա հենց այստեղ էլ կազմում է առաջիկա մասսայական աշխատանքի պլանները:

Կամաց մտնում է փողի մեջ դեղին մաքրիչը: Ջոկի հրամանատարի ձեռքը թեթև դողում է ու

ցնցվում, հուպ տալով պողպատե ձողիկը: Սանտիմետր սանտիմետրի յետևից մտնում է փողի մեջ հրացանի շամփուրը. հրացանի կոթը սեղանի վոտի մոտ այնպես է, ինչպես հենակետի մոտ: Տասնչորս ուշադիր աչքեր հառած են մի կետի—այնտեղ, ուր կորչում է շամփուրի փայլուն պողպատը: Ահա նրա վերջին սանտիմետրը կորչում է փողի մութ խորության մեջ: Վերևից այն ծածկում է խուփի պես պայծառ, դեռ հրացանի յուղով չպատած փողաբերանի պահապանակը—լսվում է հազիվ լսողությանը հասնող մի թեթև թրխկոց:

Նույն ձեռքը նույնպիսի արագությամբ քաշում է ձողիկը դեպի վեր՝ քիչ թեք դիրքով: Նորից փայլում է շամփուրը, կարծես ուրախացած, վոր ազատվում է խավարի թագավորությունից: Յեվ յերբ վերջապես կրկին յերևում է մաքրիչը, ապա նկատելի յե, վոր նրա վրայի սպիտակ փաթեթը պատած է լայն սև շերտերով՝ ակոսիկների ու մընացած կեղտոտ յուղի հետքերով:

— Յեվ ա՜հա այսպիսի մի խողովակից կսկսեն կրակել քեզ վրա հարձակման ժամանակ վորևէ կետում, և իղ ու թողդ կկորչի,— փիլիսոփայորեն ասաց մեկը, մի աչքով նայելով հրացանի փողը:

— Իսկ դու աշխատիր կրակել այնպես, վոր թշնամու այդպիսի խողովակը շուտով անպետքացնես,— պատասխանում է նույն տոնով բարձրահասակ յերիտասարդը, նա, վորը վախենում եր թե չեն վերադարձնի սեփական իրերը:

— Այո՛, ընկերներ,— վրա յե ընկնում այդ նույն մտքին Ակինչինը,— ամենից առաջ մեր ջոկը պետք է աշխատի լավ կրակել:

— Դա, ընկեր հրամանատար, ամենից առաջ ձեզնից է կախված,— միաբերան պատասխանեցին

նրան կարմիր բանակայինները,— վոնց կսովորեցնեք, ենպես էլ կկրակենք:

— Ինձ համար միամիտ յեղեք, յես սովերես չեմ մնա,— պարծենկոտ պատասխանում է հրամանատարը և աչքը ձգում է իր կրծքին, վորտեղ մեկը մյուսից բարձր ամրացվածեն մետաղյա յերկու նշան՝ ալ-կարմիր հնգաթեվ աստղերով և «գերազանց հրաձգության համար» մակագրությամբ:

Հրաձգային դասարանի միջով, այն համակելով կոտորատուն թխկոցով ու աղմուկով, գնդացրային ջոկատը քաշելով տարավ յերկու «մաքսիմ»: Նրանք վերևից ծածկված են շապիկներով, շապիկները քաշ են գալիս հատակին և յեզրակալի ծայրերը հատակի վրա թողնում են ջրի հետքեր: Հետևից՝ թուխ ու վարդերես, քայլերը դրոշմելով, գնում է դասակի հրամոդ Չերկեսովը: Նա և Ակինչինը փոխադարձաբար ժպտում են իրար:

— Զենքի արհեստանոցից ենք բերում, նորոգում եյին,— գլխով է անում նա, ցույց տալով գնդացիրները:— Ասում են, վոր վաղը դուք էլ կստանաք թեթև գնդացիրներ:

Չերկեսովը սովորություն ունի բոլոր առարկաները կոչել փափկացրած, փաղաքշական անուններով, նույնիսկ այն րոպեներին, յերբ նա բարկանում է: Նրան այդ պատճառով դեռ անցյալ տարի մկրտեցին «դասակի փոքրիկ հրամոդ», և նա այդ փուտ անվան համար չի նեղանում: Գնդացրային դասակի հրամանատարը գնացել է արձակուրդ, և Չերկեսովը ժամանակավորապես դասակի հրամանատար է:

— Կանգ ա՛ռ,— հրամայում է նա «համարներին»:

Համարները կիրառվում են գնդացրային համ բանքի մեջ. Նրանք դեռ չեն վարժվել «համարներ» կոչումին, իսկ Չերկեսովն ամեն րոպե այդպես է կանչում նրանց:

Գնդացիրները դադարեցրին իրենց դղդխկոցը և հանդարտվեցին շապիկների տակ:

— Հանի՛ր շապիկները. վո՛չ ամենքը, վո՛չ ամեքնը: Հանում են միայն առաջին ու յերկրորդ «համարները», Շատ եք մլուլ տալիս, ընկերներ յերկրորդ ջոկ, տեսեք՝ առաջինն արդեն վերջացրել է: Չի կարելի յետ մնալ:

— Մենք դեռ սովոր չենք, ընկեր հրամոդ:

— Սովոր չե՞ք կապերի հանգույցներն արձակել: Տանը հարցնեյիք աղջկերքին, նրանք կսովորցնեյին ձեզ: Հապա տանը վո՞նց եք ցորենով լեցուն տոպրակներն արձակում: Թե՞ ձեր՝ փոքրիկներիդ փոխարեն ամեն բան հայրիկն է անում:

Կարմիր բանակայիններն ուրախ ժպտում են, նայելով գնդացիրներին:

— Մենք այսոր չենք ուսումնասիրի, այսոր միայն կսրբենք ցողը: Յեվ առանց ինձ կամ առանց ջոկերի հրամանատարների շապիկները չհանեք, գնդացիրներին ձեռք չտաք: Հետո կասեմ, թե յե՛րբ կարելի յե: Գնդացիրը չի սիրում, վոր զուր տեղը ձեռք տան իրեն. մեկ-յերկու անգամ չիմանալով ձեռք կտաս, իսկ յերրորդ անգամ նա էլ չի բացվի, կհրաժարվի կրակելուց:

Ջոկերի հրամանատարներից մեկը բերում է լուբեր, դասակը նստում է, շրջան կազմած, և նայում է, թե ինչպես կրտսեր հրամատարներն իրենք խնամքով ու հոգատարությամբ սրբում են «մաքսիմի» դրսի քրտնած մասերը:

— Կոմյերիտներ, մի՛ մոռանաք, վոր ճաշից հետո ժողով կա կրտսեր հրամանատարների սե-

նյակում,— հիշեցնում է Ջերկեսովը, արձակելով դասակը։

★

Քսան և չորս ժամն է։ Փաթաթված վարդագույն թղթի մեջ, հազիվ լույս է տալիս հերթապահ էլեքտրական լամպը։ Առաջվա պես խըռկան էլեքտրական լամպը։ Առաջվա պես խըռխըռում է պատի վրա ժամացույցը՝ Կալինինի դիմանկարով։

Յեթե մարդ ականջ դնի. «լռությանը», ապա այն տպավորությունը կստանա, վոր լռությունը լցված է հնչյունների քաոսային սիմֆոնիայով։ Իրար հալածելով և իրար խլացնելով, լսվում են քնածների հառաչներն ու ռիթմիկ շնչառությունը։ Որապահն առանց շտապելու հերթով լույս է վառում բոլոր շենքերում, ստուգում է վաշտի կացությունը՝ գնդի որապահի մոտ գիշերային զեկուցել գնալուց առաջ։

Բուրդերը, վորոնք առաջ համարյա դատարկ էյին, այժմ ծայրեծայր լիքն են, և թվում է, վոր նրանք մի թեթև կռացել են իրենց վրա դրված զենքի ծանրությունից։ Որապահը գնում է զեկուցելու։ Որավորակը ճանճրանում է։ Նա վորոշում է կարդալ, բայց բառերը թվում են անսովոր ծանր ու անհասկանալի։

«Հա՛մա գրում են, հա՛։ Ասես, նրա համար մայրենի բառերը քիչ են, մեջ է գցում օտար բառերը»,— մտածում է նա հեղինակի մասին, նետելով գրքույկը սեղանին, և պարապությունից ըսկսում է ուսումնասիրել իրեն շրջապատող իրերը։

Գիշերային լամպի ճիշտ տակին, կանաչ շըրջանակի մեջ գտնվում է վաշտի տախտակը։ Նրա վրա խոշոր տառերով, առանց ավելորդ պոչերի, գրված է. «ընկեր, վաղն սկսում ենք ուսուցումը», իսկ յերկրորդ տողում՝ «Կարդա, ի՛նչ է անելու մեր վաշտը»։

«Նու, վաղը յես պարապմունքի չեմ գնա, ոթավորականության մեջ եմ»,— ակամա անցավ նրա մտքով։ Որավորակը յերկար նայում է վաշտի հրամանատարի ստորագրությանը՝ պարապմունքների ցուցակի տակ։ Ճիշտ է ստորագրում, հենց միանգամից կարելի յե կարդալ— Կոլեսով— թե չէ յերբեմն գրում են ենպիսի...

Որավորակի աչքերը կպչում են իրար։ Նրա քունը սաստիկ տանում է, և նա ույժ գործ դնելով իր վրա, շարունակում է ուսումնասիրել շրջապատը. առաջին դասակի բուրգը տարօրինակ ստվեր է ձգում հակադիր պատի վրա։ Հրացանների սվիններից ձգվել են համարյա մինչև առաստաղը սուր, խիտ ցցերի պես, սիլուետներ։ Իսկ ե՛լ ավելի բարձըր, կարծես՝ հենվելով այդ սվինների վրա, աղոտ յերեվում է պատի ամբողջ լայնությամբ գըրված լոզունգը.

«Մենք պատրաստվում ենք վո՛չ թե պատերազմի համար, այլ պաշտպանելու պրոլետարական հեղափոխությունն ու աշխատանքը ամբողջ աշխարհում»։

Վաշտը քնած է։ Նա պատրաստ է վաղն առավոտվանից սկսել մարտական դժվար ուսուցումը։

II. ՏԵՄՊԵՐԻ ՀԱՄԱՐ

Սև գետակից փչում է սուր քամի: Նա շատ համառ է և աննկատելի մտնում է գրատի ու մաշ- գաշապիկի տակ, գնում է ավելի հեռուն, կաշու վրա ազդում է այնպես, վոր նա փչաքաղվում է, ծածկվում է փափուկ բշտիկներով, ինչպես փետրած սագի մարմին:

Յուրաքանչյուր որ քաղպարապմունքներից հետո գնդի վարժությունների հրապարակը ծայրեծայր լցվում է մարդկանցով: Այստեղ, ինչպես հայելու մեջ, արտացոլում է ամենօրյա ուսուցման արտաքին կողմը: Զոկերն ու դասակները զանազան ուղղությամբ շարժվում են քայլի բացորոշ ռիթմով: Նրանք երբեմն, ժամանակին չորված հրամանի պատճառով, ընդհարվում են իրար, թրև են գալիս միևնույն տեղում, չդադարեցնելով վոտների աշխատանքը. առաջանում է ուրախ խառնափնթորություն և անկարգություն: Մյուսները պատրաստվում են պառկած կամ ծնկի վրա դիրքերով հրաձգության: Այս տարի գնդի ուսուցման մեջ երևան են եկել մեծ քանակությամբ մանր կալիբրով հրացաններ. դա նորություն է: Ցանկապատի երկարությամբ ձգվում են դարսած փայտերի բարձր կույտեր և ծղթենու կլոր ծղանների վրա փակցված են փոքրիկ, հազիվ նկատելի նշավակներ: Կարմիր բանակայինները, շատերն իրենց կյանքում առաջին անգամ, փակելով իրենց ձախ աչքը, արձակում են դեպի այդ նշավակները փոքրիկ

գնդակիկներ: Գնդակիկները շրմփալով դիպչում են թղթին և կիսով չափ մտնում են փայտի մեջ:

Հրազարկերի*) յուրաքանչյուր սերիայից հետո հրաձիգները սայթաքելով, արագ վազում են դեպի նշվակները և նայում են. վոմանք աշխույժ գըր-գըռված և ուրախացած բղավում են իրենց հրամատարին. մյուսներն անվստահորեն ու երկար ժամանակ վորոնում են և ծակոտներ չգտնելով, լռում են մինչև հրամանատարը կմոտենա իրենց՝ մատիտով ու հուշատետրով:

Յուրաքանչյուր հիսուն րոպեյից հետո գնդի շտաբի կողմից լսվում են «ազդանշանի» հնչյուններ— հայտարարվում է դադար: Ընդմիջումին կարմիր բանակայինները հավաքվում են խումբ-խումբ, կոշիկներով դոփում են գետինը, տաքացնելով վոտները, կամ իրար հետ ձեռնամարտ են սկսում: Լսվում է լարված ֆռնչոց, երբեմն պատռվում են գրատների թևքերը, ապա շատ հաճախ երկու վոսոխներն էլ թավալվում են ձյունի մեջ և այնտեղ են վերջացնում իրենց գուպարը: Վարժության հրապարակի վրա բարձրանում են մախորկայի ծխի ամբողջ ամպեր: Հետո, երբ նրանք մի թեթև ցրվում են, նրանց փոխարինում է Բուդյոննիի ընդհանուր վորևէ երգ:

Ուղղակի գետի մոտ, դարափուլի գլխին շինված են նոր հեղակներ՝ կապի շների համար: Այնտեղ փոքրիկ մենավոր բներում ցրտից ու քամուց պատսպարված են «փոչխարների շները»: Երբեմն, երբ նրանց առանձնապես ձանձրացնում են վարժության հրապարակում տեղի ունեցող անընդհատ շարժումն ու իրարանցումը, նրանք բարձրաց-

*) Выстрел բառը մենք թարգմանում ենք հրազարկ բառով: Թարգմ.

նում են այնպիսի հաչոց, վորն ընդունակ է մեռածին անգամ զարթեցնելու: Գնդի ձիանոցից տավլաները հեծյալ դասակը դուրս է բերում ձիաները, վորոնք սկսում են պտտվել էլիպսաձև շրջանի մեջ, ամբակներով դես ու դեն շպրտելով ձյունի կոշտերը, իսկ ջահել հեծյալները ասպանդակները թողած, ծիծաղելի ու անշնորհք թրև են տալիս լայն բացած իրենց վոտները ձիու կողքերին:

Այստեղ մանյովրներ է անում նաև հրետանին: Թնդանոթների փողերի վրա նստած է բաց կապտավուն ցող, վորին տեղ-տեղ կպել է մարդկային ձեռքը: Անակնկալ շրջադարձերում, ամբողջ թափով վոստոստելիս, թնդանոթների անիվները չեյին հասնում հրետանու քարշակների անիվներին և, սլալով կողքի վրա, քանդում— հանում եյին տափակած ձյունը պաղած հողի հետ:

Ժամը տասնհինգի մոտ հրապարակը դատարկվում է, և այն ժամանակ նա թվում է մեծ ու ընդարձակ: Ձյունի վրա շաղ են տված ծխախոտի կրճոններ, ձյունը կոխկրտել են հարյուրավոր վոտներ, և ինչքան էլ վոր ձյուն է յեկած լինում նախորեյին, միևնույն է, հետևյալ օրվա ճաշին հետք անգամ չի մնում փափուկ ու փամփլիկ մակերևույթից:

Հրապարակում մշտական իրարանցումը, յուրաքանչյուր հինգ տասը րոպեյից հետո լսվող ազդանշանների կյանքի արտաքին հատկանիշներն են. ներքին հատկանիշներն այնտեղ են, յուրաքանչյուր վաշտում, Լենանկյունում, դասակի և ջոկի մեջ են: Յերբեմն այդ հատկանիշները շատ ցայտուն կերպով իրենց մասին զգալ են տալիս փողոցում, «Ինտերնացիոնալ» նվագող դղրդահնչյուն նվագախմբի աղմուկի մեջ, Բուդյոննիի մարշերի

հնչեղ յերգեցողության մեջ, վորին մասնակցում են հազարավոր կոկորդներ, «հաստիքային» յերգասացների յերգասկիզբը լսելուց հետո: Դա լինում է այն օրերին, յերբ ամբողջ գունդը դուրս է գալիս ձյունապատ դաշտերը, կամ գունդը գնում է մասնակցելու քաղաքային խորհրդի ընտրություններին: Ներքին կյանքն զգացվում է նաև վատ գրըված՝ դժվար կարդացվող նամակներում, հասցեագրված դեպի մեր յերկրի բոլոր անկյունները, դեպի շեֆերը կատարվող մեծ ու փոքր այցումների մեջ, մեր մեծ յերկիրը հուզող դեպքերի առթիվ կազմակերպվող մեծ ու փոքր ցույցերի մեջ:

Այսպես շպպացնելով՝ բաղխում է ներքին կյանքը գնդի դռները, իսկ վաշտերում ու մարդկոցներում փոքրիկ կտորներով հղկվում է նա յուրաքանչյուր հրամանատարի, կարմիր բանակայինի ներսում, ծծելով իր մեջ մարտական վարժանքը, ծծելով իր մեջ «ՏԱՍՍ»-ի*) յուրաքանչյուր հեռագիրը և լրագրային յուրաքանչյուր տողը:

Տախտակների վրա և ցանկերի մեջ յերևան են գալիս սև դիագրամների առաջին սյունիկներն ու տարբեր գույներով կոր գծերի հիմքեր, վորոնք պատրաստ են վեր բարձրանալ, ցած իջնել, իրար հյուսվել և աճել, նայած թե ո՛ւր կմղի նրանց մեծ կոլեկտիվի կամքն ու լարվածությունը:

★

Յերրորդ դասակի առաջին ջոկի նշանառու Գորելովը նստած է մահճի վրա և կարդում է. Ֆադեյեվի պատրաստած տաբուրետները վաշտում ստացվում են հաջորդական կարգով, և հերթը դեռ

*) Խորհրդային Միության հեռագրական գործակալություն:
Ծանոթ. թարգմ.

չի հասել յերրորդ դասակին: Հարևան մահիճների վրա տեղավորվել է ջոկը: Լսում են:

Առաջին օրերը Գորելովին չեր հաջողվում հավաքել տղաներին. ամենքն էլ ինչ վոր անհետաձգելի գործեր ունեյին, իսկ հետո, յերբ նրանք իմացան, վոր նա կարող է ամեն տեղեկանք տալ ամեն հարցի առթիվ, վոր նա կարող է դիմումներ գրել կապի հանձնաժողովին, իսկ արձակուրդի օրերին քաղաքում նրանց ցույց տալ ամեն տեսակ հետաքրքրական բաներ,— սկսեցին սիրով հավաքվել մեռյալ ժամից հետո: Մահճակալի մոտ վառարանն է: Այնտեղից դուրս են թռչում ուրախ կայծեր և ազդու ճաքճքում են փայտերը: Կրակի արտացոլքն ընկնում է Գորելովի մի թշին, իսկ մյուսը մնում է խավարի մեջ, վորից այն տպավորությունն է ստացվում, իբր նրա դեմքը բաղկացած է միայն մի այտից:

Նրա կողքին մահճի վրա նստել են յերկու հոգի. Կոստրոմցովը և Ցելինը: Ջոկի մեջ նրանք անբաժան են իրարից, վորի համար նրանց կանչում են յերկվորյակներ: Նրանք իրար կարդում են տանից ստացված և տուն ուղարկվող նամակները, թեև առաջինը Ռյազանից է, իսկ յերկրորդը յեկել է ցուրտ ու աղմկոտ Իժմայից, հեռու հյուսիսից: Գորելովը հիշում եր, վոր իրենց բարեկամությունը սկսվեց այն մոմենտից, յերբ գերանակույտերի մոտ փայտ սղոցելիս՝ հանկարծ դուրս պրծած գերանը սաստիկ սղմեց իր կուրծքն ու վոտները: Ցեվ Կոստրոմցովը, փոքրիկ ու կուգլիկ մի տղա, չալակած համարյա անշունչ իր ընկերոջը, տարավ հասցրեց նրան վաչոր: Մնացածների դեմքերը թույլ նշմարվում են հարևան մահճակալների վրայից:

— Այսպես ահա, ընկերնե՛ր,— կրկնում է Գորելովը, այսօր մենք կկարդանք ընկեր Ստալինի

հոդվածը՝ «Մեծ բեկման տարին»: Ասեք ինձ, ընկեր Որեշին, ո՞վ է Ստալինը,— դիմում է նա մեկին, վոր բոլորովին չի յերևում մթության մեջ:

Այնտեղ բավական յերկար ժամանակ լռություն է տիրում: Յերկու կարմիր բանակայիններ նրանց մոտով տանում են յեփված ջրով մի դավաթ: Նստողներից մեկը վեր է կենում, գնում է ջուր խմելու:

— Ստալի՞նը,— հարցնում է վերջապես Որեշինը:— Մեզ մոտ գյուղում ասում եյին, վոր Մոսկվայում նստել է Լենինի տեղը:

— Նու, լա՛վ,— համաձայնում է Գորելովը,— իսկ ի՞նչ պաշտոն ունի նա:

Որեշինը նորից լռում է:

— Բանն այստեղ պաշտոնը չե,— լրջմտորեն արտասանում է Կոստրոմցովը:— Ասած է, փոխարինում է Լենինին, և ամեն բան հասկանալի յե: Իսկ պաշտո՞նը: Բանը հո դա չի: Մոտ օրերս յես կարդացի լրագրում, վորտեղ գրված եր. գլխքարտ*) ընկեր Ստալին: Ի՞նչ է նշանակում, չեմ հասկանում,— սրտնեղությամբ ու տարակուսանքով կրկնում է նա:

Գորելովը բացատրում է ու առաջ է անցնում: Նա քիչ դեպքերում է կարդում հոդվածից առանձին կտորներ, նրանցով հաստատելով իր ասածները: Կարդում է թվեր, մի ամբողջ շարք միլիոնավոր թվեր:

— Դու, ընկեր Գորելով, ա՛յ թե ինչ բացատրիր մեզ. կարմիր բանակայինները բոլորովին չեն հասկանում այդ թվերը, դու ասա, թե ինչո՛ւ համար քիչ ապրանք է ուղարկվում գյուղը:

— Քիչ չի ուղարկվում, ընկերներ, չե՛. Ներ-

*) Գլխավոր քարտուղար: Ծան. թարգմ.

կայումս տաս անգամ ավելի շատ ապրանք է հար-
կավոր, գյուղին: Իսկ հապա հումքը վո՞րտեղից
պիտի վերցնենք, հապա ֆաբրիկների համար նոր
մեքենաներ վո՞րտեղից պետք է ձեռք բերենք: Ցե-
րեվի կասեք, թե արտասահմանից, այնպես չէ՞:
Բայց այդ նզովված արտասահմանը բուրժուական
է: Նա անհամբեր սպասում է, թե ե՞րբ արդյոք
մեր գործերը փուլ կգան, և եթե մի բան էլ տա-
լիս է մեզ, դիմացը պահանջում է դեղին ոսկի,
զնգան մայլուտա:

Գորելովը տարվում է իր ատածներով, հեռա-
նում է վառարանից, ուստի, նրա դեմքի երկրորդ
կեսն էլ մթնում է:

Ա՛յո, մենք ձեզ հետ միասին շատ ժամանակ
չէ, որ կարմիր բանակում ենք, բայց մենք գի-
տե՞նք արդյոք, թե երբ պատերազմ կլինի,—
հարցնում է Գորելովը:

— Գուցե հենց վաղը,— հանդիստ պատաս-
խանում է Ցելինը:

— Այո՛, գուցե հենց վաղը, սատանան գլուխ
չի հանի նրանցից: Նրանք են գիտեն, որ որ ու
դիշեր սպառազինվում են: Իսկ պե՞տք է, որ մենք
էլ սպառազինվենք:

— Պետք է,— արձագանքի պես կրկնում են
զանազան ձայներ:

— Սպառազինվել անհնարին է առանց սե-
փական գործարանների և տեխնիկայի վերջին խոս-
քի համեմատ շինված մեքենաների: Ա՛յ, դրա հա-
մար մենք ստեղծում ենք մեր ինդուստրիան, որ-
պեսզի արտասահմանն այլևս հավես չունենա մտա-
ծելու պատերազմի մասին:

— Եդ դրուստ է, բայց...,— համառոտաբար
կրկնում է հեռևի մահճի վրա նստողներից մեկը և

երկար ժամանակ ճմռտում է մարմինն ու քորում է
ծնկների տակ:

— Ի՞նչ է պատահել քեզ, Ցալով, դու երեկ
բաղնիս չե՞ս գնացել, որ այդպես քորում ես
քեզ... ճանաչում է նրան ձայնից Գորելովը:

— Ձե, դա գյուղից մնացած սովորություն է,
որ դեռ չեմ մոռացել: Գյուղում յես ամիսներով
շապիկ չեյի փոխում, շապիկ չկար:

— Նու, ասա, եթե ձեր գյուղը ապրանք բե-
րեյին, դու շա՞տ բան կարող եյիր գնել:

— Վո՞նց չէ: Շատ-շատ, մի շապիկ, մի հատ
էլ վոտաշոր, ուրիշ ի՞նչ կկարողանայի գնել:

— Հարկավոր են շապիկներ, հարկավոր են
նաև տրակտորներ,— խիստ ու համառ պատասխա-
նեց Գորելովը:— Իսկ հիմա, ընկերներ, բանը վը-
ճռվում է այսպես. ի՞նչն է ավելի կարևոր, շա-
պի՞կը, թե՞ տրակտորը:

— Ինչ էլ լինի, տրակտորն ավելի կարևոր
է:— Գորելովը կանգնում է և շարունակում է կանգ-
նած:.

— Ընկերներ, ամբողջ խնդիրը տեմպերի մեջ
է: Ցեթե այսօր մենք մեզ մոտ չշինենք մեքենաներ,
մեծ ու ծանր մեքենաներ,— վաղը գուցե արդեն
ուշ կլինի: Ա՛յ, հենց այստեղ մեզ մոտ էլ,— շա-
րունակում է նա հանդարտված,— նույնպես տեմ-
պեր են հարկավոր ուսուցման մեջ: Մարտական
պատրաստությունն անցնել վոչ սովորականի
պես, այլ ավելի արագ ու հարվածային կարգով:

Նրանց մոտենում է ջոկի հրամանատար Պին-
կինը: Կարմիր բանակայինները մահճի վրա տեղ են
տալիս նրան, ավելի սղմվելով իրար: Նա լսեց Գո-
րելովի վերջին խոսքերը, բայց լուռ է, կարծես
սպասում է, թե ե՛րբ կշարունակի նա: Հետո ա-
սում է ցածր ձայնով.

— Մենք թեև հարվածայիններ չենք, բայց տեսեք, մեր ջոկը պոչից քաշ չի գալիս:

— Նու, կներես,— հիշեցնում է Գորելովը, Ակինչինի ջոկի մեջ բանը մի քիչ ավելի լավ է: Նա իր մոտ այս օրերս մրցություն է սարքել հրացանը լավագույն կերպով քանդելու և հավաքելու համար: Մենք պետք է աշխատենք հասնել Ակինչինի ջոկին:

— Յեվ կհասնենք: Յես էլ կարող եմ նրանց ցույց տալ, թե ի՛նչպես պետք է արագ քանդել ու հավաքել հրացանը— վրա յե բերում Կոստրոմցովը:—Ա՛յ, հրամանատարը գիտե,— գլխով նշում է նա Պինկինին,— թեկուզ հենց ես րոպեյիս քննության կանչեն, վախեցողը չեմ: Յերեկ յերեկոյան յերեք հրացան մաքրեցի —իմը և յերկու յել պահունի: Յեվ ես բոլորը կես ժամում:

— Ավելի լավ է ենքան չշտապես: Եդպես կարող ես հրացանը չփչացնել,— նկատում է Ցելինը և բարեկամաբար խփում և ընկերոջ ծնկին:

Գորելովի մեջ հանկարծ մի միտք է ծագում. նա հարցական նայում է հրամանատարին, հետո ուսումնասիրում է ջոկի իր ընկերների դեմքը և առաջարկում է.

— Յերկար մտածելու բան չկա եստեղ, յեկեք նրանց հրավիրենք սոցմրցության: Իսկ յես,— հանդիսավոր ու հանդարտ արտասանում է նա,— ինձ հայտարարում եմ հարվածային: Այո՛,— ժպտում է նա, զարմանք տեսնելով ընկերների դեմքերին,— ճիշտ այնպես, ինչպես արտադրության մեջ, ցեխի մեջ է լինում: Յես ինձ հայտարարում եմ հարվածային՝ հրաձգության ու կարգապահության կողմից: Պարտավորվում եմ հրաձգության բոլոր վարժությունները կատարել,

առանց կրկնելու նույն վարժությունը և չստանալ կարգապահության վո՛չ մի պատիժ:

Պինկինը ժպտում է. նա մի քիչ նախանձում է, վոր Գորելովը ջոկի մեջ հեղինակություն է վայելում. նա նրան համարում է ճարպիկ և «դուրս ընկած», բայց դրա մասին բացերաց յերբեք չի խոսում:

— Նու, հարվածայի՛ր, իսկ մենք կնայենք, գուցե մենք էլ հարվածենք,— ծիծաղելով, թե հեգնանքով, արտասանում է Ցալովը:— Իսկ ինչ վերաբերում է Ակինչինին ու իրա ջոկին, յես համաձայն եմ, կարելի յե նրանց մրցման հրավիրել:

Այնտեղ կան այնպիսի տիպեր,—շարունակում է նա համոզեցուցիչ տոնով, թեև վոչ վոք նրան չի առարկում,— վորոնց հետ կարելի յե մրցել: Ի՛նչ ասես, վոր չարժե հենց մենակ Սվիրիդովը. արդեն յերկու անգամ զրկվել է արձակուրդից և ստացել է հերթից դուրս վերակարգում, վորպես պատիժ:

«Ահա թե ո՛ւր է ծռում»,— մտածում է գորելովը:

— Ցալովը սխալ բան է ասում,—վճռում է նա բարձրաձայն:— Մենք նրանց հետ մրցության կըմտնենք վո՛չ թե այն պատճառով, վոր այնտեղ կան վատ տղերք, այլ այն պատճառով, վոր այնտեղ մեծամասնություն են կազմում լավ տղերքը և ելի այն պատճառով, վոր մրցությունը մեծ օգուտ կբերի՝ թե՛ մեզ, թե՛ նրանց:

Վճռեցին մրցության մեջ մտնել հրաձգության ու դահուկներով սահելու տեսակետից, իսկ պայմանագիր կնքելը հանձնեցին Գորելովին և ջոկի հրամանատարին: Դրանից հետո ցրվեցին:

★

Արտադպրոցային ժամանակի մեծ մասը Ակինչինն անց էր կացնում հրաձգային դասարանում:

Նրա ջանքերով դասարանում տիրում ե օրինակելի կարգ ու կանոն: Ինքն Ակինչինը գունավոր թղթերից պատրաստել եր փոքրիկ նշավակներ և փակցրել եր ամեն տեղ— պատուհանների ապակիներին, ուստի խորթարանները սոխպված եյին լուսամուտների վրա նստած ցողի կոթիլները սրբելիս վարպետորեն մանյովր կատարել,— պատերին, ավազով լեցուն արկղին: Այդ արկղն այժմ, շնորհիվ Ֆադեյեվի, հաստատուն կանգնած եր իր չորս ոտի վրա և ասաը տարով ջահելացել եր, ներկված պայծառ կանաչ գույնով: Արկղի մեջ շինված են ամբողջ գյուղեր, տնկված են պուրակներ և կառուցված են բարձրություններ. գյուղերն այնքան փոքր են, վոր հեշտությամբ կարելի յե ծածկել մի ափով, պուրակները նման են չածկված մազերի, իսկ գետի մեջ յեթե մարդ դնի իր ճկույթը, իրար կմիանան նրա յերկու ափերը՝ հուսալի կամրջի միջոցով: Դասարանում դրված են վարժական հրացաններ և նշանուղղիչ դազգյահներ:

Ակինչինի հետևից մեկ-մեկ ձգվում են նրա ստորադրյալները: Ոմանք քսքսում են վարժական հրացանների հետ, մյուսները դժվարությամբ խփելով ձախ աչքը, նշան են բռնում թղթի կանաչ փոքրիկ նշավակներին:

Դեռ գնդի դպրոցում սովորելիս, Ակինչինը խոսք եր տվել իրեն՝ իր ապագա ջոկը դարձնել լավագույնը հրաձգության կողմից: Ակինչինը մտաբերում ե. այդ բանին նրան դրդեց ռոմանտիկական մի պատմություն: Գնդի դպրոցի կողքին շինված եր նոր տիրը, վորի կողերն ուռչել եյին խոնավ ավազից: Ակինչինը մի թույլ կողմ ունի. նա անտարբեր չե դեպի կանայք: Յեվ յերբ հրաձգության ժամանակ նա յերկու անգամ վրիպեց ու հղփպավ բռունցքի մեծությամբ նշավակին, չե-

Ֆուհրներից մեկը՝ նուրբ ու գեղեցիկ մի աղջիկ, կրծքին «ԿԻՄ»-ի նշան, և նրանից առաջ գնդակներով ծածկել եր նշավակը, ասաց, չեշտակի նայելով Ակինչինին.

Յերբեք չեյի սիրի այդպիսի վողորմելի հրաձիգ հրամանատարին:

Յերևի այդ բանն ասաց վո՛չ լուրջ. ասենք՝ դրանից առաջ Ակինչինն էլ վատ հրաձիգ չեր, բայց այդ չար խոսքերը քարի պես ընկան նրա գլխին: Նա համարյա լաց լինելով գնաց մըտավ դասակը, յերկար ու մոլեգին մաքրում եր հրացանը, իսկ աշնան զորախաղերի ժամանակ նա իր կրծքին, ձախ գրպանից ներքև, արդեն կրում եր գերազանց հրաձգության համար ստացված նշանը: Յեվ գնդի տոնի օրը գնդի հրամանատարի ձեռքից ընդունելով աստղանիշ այդ նշանը՝ կարմիր ժապավենով, նա հաղթողի տեսքով նայեց չեֆերի գլխի վրայից այն աղջկան, վոր յերեք ամիս առաջ նրա յերեսին նետել եր կշտամբանք, և ասաց.

— Հրամանատարի համար քիչ ե հրացանից լավ կրակելը. թեև վոմանք կարծում են,— նա առանձնապես շեշտեց վոմանք խոսքը,— թե հերիք ե, յեթե հրամանատարը լավ ե կրակում, բայց դա դեռ քիչ ե: Յես խոստանում եմ ապագա ջոկը նույնպես դարձնել օրինակելի հրաձիգ ջոկ:

Յերկար ժամանակ ու հիացմունքով նրան ծափահարում եյին: Հիշում ե Ակինչինը նույնպես, թե ինչպես ժողովից հետո նա՝ Նադեժդա Խովայնկոն առաջինը մոտեցավ նրան և նայելով նրա վրա ուրախալի ու փաղաքշական հայացքով, ասում եր.

Ընկեր Ակինչին, չե՞ վոր յես հիշում եմ, թե ի՛նչպես մի անգամ վիրավորեցի ձեզ տիրում: Լավ ե, վոր յես սխալվեցի:

— Վոչի՛նչ,— պատասխանեց Ակինշինը, աշխատելով անտարբեր յերևալ և չնայելով նրա վրա:— Դա ինձ այն ժամանակ մեծ օգուտ տվեց: Ցես այնպես տարվեցի հրաձգությամբ, վոր պետկազմը ինձ հանդիմանեց լխաբեռնումս թույլ կատարելու համար:

Հետո նրանք թափառում էյին ճամբարում, Ակինշինը նրան պատմում եր գյուղի մասին, նրա մասին, թե ինքն ուզում է մտնել զինվորական դպրոցը: Աղջիկը շուտ շուտ ծիծաղում եր նրա վրա վարից վեր ու կողքից, իսկ Ակինշինի համար դա նրա կյանքի ամենաբախտավոր օրն եր:

Այսոր Ակինիշինը զբաղված եր կարմիր բանակային Գրոմովի հետ: Գրոմովը կոմյերիտ է, աշխատում է բոլոր ուժով, բայց վճռականապես հետ է մնում, վորովհետև բավական ուշ եր յեկել գունդ:

— Թույդ այդպես պինդ մի՛ հուպ տուր հրացանի կոթին, Գրոմով. նշանառած գիծը կխախտես: Թեթև կպիր կոթին և աչքդ մի ծամռիր:

Նա Գրոմովին դեն է անում, մոտենում է դազգյահին,և մաս – մաս ցույց է տալիս, թե ի՛նչ պետք է անել:

— Դու Յուդինից ծանրաբեռնում ստացե՞լ ես արդեն,— հարցնում է նա, աննկատելի ուղղելով ու նշանառման հատիկը դնելով ապակուն փակցրած փոքրիկ յեռանկյունու տակ:

— Նա ինձ ասաց, թե դու անհատապես կօգնես հրամանատար Ակինշինին:

— Դա լավ է, ջոկի տղերքը հրաշալի յեն: Նիկոլայեվն արդեն դիմում է տվել՝ կընդունվի կոմյերիտմիության մեջ: Բայց դժբախտաբար Կովալը բանի պետք չե: Նա արդեն յերկու անգամ պատժվել է. մի պատիժ ինձնից է ստացել մահճակալի վրա չարունակ կոշիկներով պառկելու համար և մյուսը դասակի հրամանատարից՝ յերկու անգամ հրացանը չմաքրելու պատճառով: Ա՛յ, թե ո՛ւմ վրա պետք է յերկար աշխատանք թափել:

Գրոմովը նայում է, թե իր հրամանատարն ինչպես է հրացանն ուղղել նշանին, ինքն էլ է փորձում, բայց նրա նշանառության հատիկը միշտ դուրս է գալիս մի կողքի վրա թեքված:

— Տե՛ս, բանդ վատ կլինի, յեթե այդքան աշխատանքներս ջուրն ընկնեն. քո կոմյերիտական ներքին աշխարհը յես տակն ու վրա կանեմ: Մեր ջոկը պետք է հրաշալի կրակի, և դու՝ առաջին հերթին:

Գրոմովն անվստահորեն նայում է ավազով արկղի մեջ յեղած ինչ վոր պուրակի: Նրան թվում է, վոր ինքը յերբեք լավ հրաձիգ չի լինի: Հրամանատարը անողոքաբար ստիպում է նրան մինչև տասն անգամ նշանի բռնել հրացանը, վորից հետո յերկուսն էլ գնում են ծխելու:

Հրաձգային դասարան է գալիս Նիկոլայեվը: Նա ինքնավստահ տեսք ունի, և գործարար մարդու զգեստի պես կեղտոտվել է նրա մարզաշապիկը: Նա վերցնում է վարժական հրացանը և ինքն իրեն հաշվելով, զբաղվում է ռիթմիկ նշանառությամբ: Նրա ճակատին յերևում են քրտինքի փոքրիկ կաթիլներ, իսկ աջ թուշը կեղտոտվել եր հրացանի կոթի յուղից: Առանձնոցի կողմից լսվեցին արագ քայլեր. դա Ակինշինն եր, վոր տեսնելով Նիկոլայեվին, ձեռքով է անում, կանչում է նրան իր մոտ:

— Ընկեր Նիկոլայեվ, շտապ հավաքեք ու այստեղ բերեք ջոկը, կարևոր գործ կա:

Հինգ րոպեյից յերրորդ ջոկն այստեղ է: Չկա միայն մի հոգի, վորը գնացել է ոկարանոց:

— Ընկերներ,— հուզվում է հրամանատարը,— դուք գիտեք, որ յերրորդ դասակի առաջին ջոկը մեզ հրավիրել է մրցության։

— Ի՞նչ է փչել նրանց խելքին— մե՞ծ բան են արել,— քրթմնջում է Կովալը. պատուհանի վրա մնացել է նրա քանդած հրացանը, և նա վախում է, չլինի թե մի բան կորչի։— Ի՞նչ սոցմրցության ժամանակ է, յերբ պետք է մաքրել վերջացնել— հրացանը. էտ բանը հետո կքննենք, ընկեր հրամանատար։

— Վո՛չ, այժմ, հենց այս րոպեյիս։ Այստեղ յերկար բան չկա,— և ազերսող մի հնչյուն կա հրամանատարի ձայնի մեջ։

— Ե՛, ի՛նչ անենք, որ հրավիրել են,— ասում են կարմիր բանակայինները,— բայց Ակինշինի ձեռքում տեսնելով ինչ որ թուղթ, առաջարկում են,— կարդա՛, ընկեր հրամանատար, տեսնենք թե ի՛նչ է գրած այնտեղ։

Առաջին դասակի յերկրորդ ջոկին—մրցահրավեր.

Մենք ձեզ սոցմրցության ենք հրավիրում հրաձգության և կարգապահության կողմից։ Խոստանում ենք տալ հրացանից կրակելու յոթանասունուհինգ տոկոս և, հետո, որ պեսզի կարգապահական վո՛չ մի պատիժ չունենանք։

Պայմանագրի ժամկետն է մինչև 1930 թվի մարտի 15-ը, այսինքն՝ մինչև առաջին աստիճանի վերջը։

Ջոկի հրամանատար ՊԻՆԻԿԻՆ։

Կարմիր բանակայինների կողմից՝ ԳՈՐԵԼՈՎ

15 դեկտեմբերի 1929 թ.

Մի րոպե հրաձգային դասարանում տիրեց լռություն. լսվում է միայն, թե ինչպես դնդացրային հարևան դասակում Ձերկեսովը կամաց հրահանգչում է կրտսեր հրամանատարներին վաղվա համար, և որապահի սեղանի մոտ հավաքվում է

վաշտի որական վերակարգումը՝ պահակատեսի գնալու համար։

Ակինշինն սպասում է։ Նա սրտնեղում է։ Նա գիտե, որ մրցահրավերի նախաձեռնողը դարձավ Գորելովը, նա գիտե, որ Պինկինը ծանրաշարժ մարդ է և չի սիրում զբաղվել նորություններով, մինչև նրան չդրդեն, զարկ չտան։ Ցեվ նրա ջիգրը գալիս է, որ իրեն են հրավիրել, և վո՛չ թե ինքն է հրավիրել։

— Հը՛, ընդունենք, չէ՞,— ասում է վերջապես կարմիր բանակային Մինայեվը, նստելով աթոռին։ Մեր հրամանատարը մեզ չի դավաճանի, մենք ինքներս էլ կաշխատենք ։

Նա նայում է ընկերների վրա, և նրանք գլխով դրական շարժում են անում։ Կովալն է միայն, որ յերրորդ անգամ խնդրում է բաց թողնել իրեն, վորպեսզի գնա ու մաքրի հրացանը։

— Գնացեք, ընկեր Կովալ, գնացեք յեթե դա չի հետաքրքրում ձեզ,— ասում է Ակինշինը,— ձեր հրացանի հետ վոչինչ չի պատահի,— չոր ավելացնում է նա՝ հեռացող Կովալի հետևից։

— Ընկերներ, այստեղ պետք է միայն ավելացնել,— դիմում է նա մնացածներին. դուցե մեկն ու մեկը առաջարկ ունի։

— Տոկոսների համար կասեյի,— ձեռքը թափահարում է Նիկոլայեվը,— յեկեք հինգ տոկոս ավելացնենք, այսինքն խոստանում ենք տալ ութսուն տոկոս՝ յոթանասուն և հնգի փոխարեն։

— Իսկ արդյոք կարո՞ղ ենք տալ, ընկերներ,— մտածմունքի մեջ է ընկնում Ակինշինը։ Նա ինքը շատ է ուզում կոտրել առաջին ջոկի քիթը, բայց նա շատ պարզ հիշում է կուսբջիջի յերեկվա ժողովը, վորտեղ վաշտի հրամանատար

Կոլեսովը զեկուցելով մարտական պատրաստության մասին, զգուշացնում էր փքուն, բացահայտորեն անիրագործելի նորմաներից և յերկար խոսում էր հրաձգության նոր կուրսի դժվարությունների մասին:

— Փորձենք տալ ութսուն տոկոս,— քմծիծաղում է հրամանատարը:— Պետք է միայն շատ ավելի, քան մինչև այժմ, զբաղվել հրաձգության գործով:

— Իսկ հրաձգության համար, ընկերներ, յես առաջարկում եմ այդ կետը կազմել այսպես և ասել. պարտավորվում ենք թույլ չտալ վոչ մի բաց, վոր կարող է անմիջականորեն ազդել մարտական պատրաստության վրա, այսինքն զոհանողից ինքնագլուխ չհեռանալ, չհարբել, հրամանները կատարել և այլն: Իսկ մնացած թերությունները հասցնել մինիմումի: Չի կարելի ընդունել բացահայտ անիրագործելի պայմանագիրը: Գիտցեք, վոր յես առաջինը պատիժներ կտամ ձեզ՝ ներքին կարգ ու կանոնը խախտելու համար, իսկ այդպիսի բան միշտ կարող է «անզգուշաբար» պատահել: Այդպես չէ՞ միթե:

— Դրուստ է,— ծիծաղում է մեծամասնությունը բարձիդ տակ կմոռանաս վոտի փաթաթանը, և պատիժը պատրաստ է:

— Դա վոչի՛նչ, ոգտակար կլինի, մյուս անգամ չես մոռանա:

— Նու, ուրեմն ընդունո՞ւմ ենք ուղումներով:

— Ընդունում ենք: Դե՛, քեզ տեսնեմ յերրորդ դասակի առաջին ջոկ:

★

Վաշտի լենինյան անկյունում ավելացավ ելի մի վահան-տախտակ, ներկված կանաչ գույնով:

Ֆադեյևը և նրա ոգնական Սիրինը դրա վրա գործ են դրել իրենց ամբողջ վարպետությունը, և վահանից ստացվել է շատ հավասար, փոքրիկ ու նուրբ հղկած շրջանակ: Շրջանակը Ֆադեյևը զարդարել է փորագրած մուրճ-մանգաղով: Վահանի վրա, ձյունից ավելի ցայտուն, սպիտակներկով արված է հավասար, հանդիսավոր մակագրություն. «Սոցիալիստական մրցությունը և հարվածայնությունը վաշտում»:

Ցածում կնոպկաներով ամրացրել են Ակինշինի ու Պինկինի ջոկերի առաջին պայմանագրերի նմուշները և յերկու ջոկերի ընդունած պայմանագրերը: Այստեղ, դրանց կողքին փակցրած են հինգերորդ ու վեցերորդ վաշտերի կնքած պայմանագրերը: Դրանց մոտ կարմիր մատիտով գրված է «ալեքսանդրյան»*) թղթի վրա կազմած՝ վաշտի հարվածայինների ցուցակը. Գորելով ազգանվան տակ՝ դեպի ներքև ձգվում է ազգանունների մի շարք — Զերկեսով, Ֆադեյև, Յուդին Նիկոլայև, Ակինշին և ուրիշները, վորոնց անունները վաշտի մեջ առայժմ հայտնի չեն: Դանդաղ ձգվում է դեպի ներքև այդ շարքը, ինչպես ծանր սնդիկ: Յուրաքանչյուր որ մի քանի անգամ նրան մոտենում են Յուդինն ու Ստավիցկին՝ առաջին ջոկատի հրամանատարը և վաշտի կոմբջիջի քարտուղարը: «Կոմյերիտական խմբակի հաշվառքի համար» մակագրությամբ կապույտ տետրակի մեջ Յուդինը խաչ էր դնում ցուցակում մտցրած ազգանունների դիմաց:

— Քիչ է,— հառաչում է նա,— տասնյոթից վեց հոգի,— և քարտուղարի հետ խոսելուց հետո շտապ վազում է իր բարեկամ՝ ուրախ Սաշա Զերկեսովի մոտ:

*) Գծագրության թուղթ: Ծան. թարգ.

Այնտեղ նրանք պլաններ են կազմում։

— Սպասիր,— համոզված չխկացնում է մատները Զերկեսովը։— Կտեսնես, վոր մի ամսից հետո գնդացրային դասակը կլինի հարվածային։ Զպետք է շտապել։ Յես կարող եյի,— վստահ հայտարարում է նա,— տանել իմ գիծը, և յերկու յերեք որից հետո դասակը կլինի հարվածային, բայց սխալ բան է դա,— պետք է, ընկեր Ֆադեյ Յուդին, պատրաստել տղերքին, ո՛չ, պետք է շատ լավ պատրաստել, թե չէ վոչինչ դուրս չի գա։ Իսկ կոմյերիտներին պետք է հուպ տալ, անպայման, պետք է։ Նրանք իրենց որինակով պետք է իրենց հետևից քաշ տան մնացածներին։ Այն էլ վո՛չ թե թղթի վրա, այլ գործով, ավելի շատ գործով։ Վաղը չէ՝ մյուս որը սկսում ենք հրաձգության վարժությունները։ Ու այժմ վախենում եմ, վոր առաջին տեղը չենք լինի, ամոթ է։

— Յես կարծում եմ,— հիացած գնդացրային դասակի հրաշալի հարդարած մահիճներով, ասաց Յուդինը,— հենց առաջին հոդվածում պետք է խնդիր դնել, թե յուրաքանչյուր կոմյերիտ պիտի լինի հարվածային։

— Գլխավորն այն է, վորպեսզի գործով, գործո՛վ յերևա այդ բանը,— կրկնում է նորից Զերկեսովը։

— Իսկ կարգ ու կանոնը քո դասակում արդեն հարվածային է,— գովում է Յուդինը։

Զերկեսովը հանդիստ նայում է մահիճներին, կախարաններին, հրացանների բուրգին։

— Ուրիշ կերպ չի կարող լինել։— Յեզրափակում է նա։

★

Յերբ փչում է ուժգին քամին, տեղից սրբված ու շատ անգամ շուռ տված ձյունը թռչում է չեչտակի և աշխատում է շուտ հենակետ գտնել գետնի

վրա։ Յեվ ընկած սպորտի ցանկապատերի այն կողմը՝ հրապարակում նրա առանձին ատոմները խառնում, կազմում են խշշան սրսուռ շերտ, վորպեսզի այլևս վո՛չ մի տեղ չթռչեն։

Յերբ տիրում է անդորրություն, վոր ավելի հաճախ գիշերներն է լինում, ապա ձյունի փաթիլները ճախրում են ինչպես լավ ոդաչուն նստվածքի ժամանակ։ Նրանք գետին են իջնում մտազբաղ ու դանդաղ, կարծես ուզում են ավելի յերկար մնալ յերկնքում, վորտեղ կարճամնա հյուր են յեղել։

Յերբ փչում է քամին, ավելի հաճախ և ավելի ուժեղ են դոփում կարմիր բանակայիններն իրենց վոտները, կցկտուր է հնչում հրամանը և ավելի աղիողորմ են վոռնում կապի ցրտահար շները, իսկ յերգեր համարյա չեն լսվում, նրանք թռչում գնում են քամու հետ։ Այդպիսի յեղանակներին անորինակ դանդաղ, «սարկական տեմպերով» են սողում վեր ու վար սառած սլաքները գնդի փչացած ժամացույցի վրա, իսկ յերբ մարդ նրանց նայում է, ավելի հաճախ, ապա թվում, է թե ժամանակը բոլորովին անշարժ է։ Փողհարի պղնձափողը հնչում է խռպոտ, և նա յուրաքանչյուր հիսուն ռոպեյից հետո ազդանշան տալով, թշերը փքեցնում է այնպես, վոր նրանք բոլորովին կապտում են։ Յեվ նայելով փողհարի վրա, մարդ սարսափում է, չլինի թե ցրտից ու զոռ տալուց տրաքվեն նրա կապտած թշերը։ Այդպիսի յեղանակներին զբաղմունքները թվում են ձանձրալի, իսկ փակաղակն ու վարժական հինգ փամփուշտը սառն են, ինչպես հյուսիսային բևեռը։ Մարդ ուզում է շուտ մտնել զորանոցը, վորտեղ այնպես տաք է և բոլորովին քամի չկա։

Յերբ խաղաղությունը և սնդիկը ձգտում են

դրավել Ռյումերի— Տորիչելլի ավելի մեծ դատարկություն, այն ժամանակ վարժությունների հրապարակում ուսման ժամանակ զարկերակը խփում է ավելի արագ: Ավելի համարձակ են ընկնում հրաձիգները ձյունի մեջ և ավելի յերկար ժամանակ են նշան բռնում հեռու դրված նշավակներին: Իսկ նշավակները վերջին ազդանշանը տալուց առաջ մաղի պես ծակծկվում են, կարծես ընկած են յեղել գնդացրային կրակի տակ: Այդպիսի ժամերին մախորկայի ծուխը բարձրանում է յերկինք համարյա ուղղաձիգ գծով և յերկար ժամանակ չի չքվում:

Այն օրերին, յերբ քամին ու ցուրտը լինում են առանձնապես ուժեղ, իշխանավորներն ստանում են դահուկներ: Առաջին ձյունաթափին, յերբ դասակները գնում էյին Սև գետակը, վորտեղ ձյունի շերտն առանձնապես հարթ ու փխրուն է և ընկնելը վտանգավոր է, պարզվեց, վոր կենտրոնական հարավային ռայոններից յեկած դեռընտիր կարմիր բանակայինները լավ չեն գնում դահուկներով: Տագնապ հնչեցրին, զիրխացի դահուկավորներն անհատական շեֆություն վերցրին հետ մնացողների վրա: Ցերեկորդները գնում էյին գետակը, դուրս էյին գալիս փողոց, վորի յերկայնքով տասնամյակների ընթացքում գետնի մեջ բուսան գնդի յեռահարկ հաղթալանջ զորանոցները: Փչացնում էյին դահուկները: Դահուկների բարձրացած շրշյունը աղմկում էր մարդկանց գլխի մեջ, դահուկավորներն ընկնում էյին փողոցով անցնող հետիոտների վոտների տակ, Ոխտայի կառապանների տակ: Բայց այդ ջանքերի, դուրս ընկած վոտների և մկանների յերկայնաձգումների գնով նրանք տիրապետեցին դահուկներին: Մնացին միայն անհատներ: Սակայն նրանք բացահայտապես

անհուսալի չեն, և դահուկային անցումների ժամանակ նրանցից ջոկատ էյին կազմում՝ պահակային ծառայություն կատարելու համար:

Ամուր կանգնելով դահուկների վրա, դասակները գնում էյին հեռավոր դաշտ, պատրաստվելով մոտ օրերս տեղի ունենալիք զոմարտակային դաշտային յելույթների համար դեպի ամառային ճամբարը:

Զերկեալը վաշտի հրամանատարից թույլտվություն ստացավ՝ դահուկային յուրաքանչյուր դասի ժամանակ վերցնել նաև գնդացիրներ:

— Մարզվեք, ընկերներ, մարզվեք,— խորհրդավորությամբ կրկնում էր դասակի հրամոդը՝ յելույթներից մեկի ժամանակ:— Առանց գնդացրի, ի՞նչ բան է դահուկներով արշավը: Միանգամայն դատարկ ու հեշտ բան: Ա՛յ, թե լավ տղա յես, դու «մաքսիմը» հետևիցդ քաշ տուր, հետն էլ ձգափողերով ջուր, հետո, մյուսներից հետ մի՛ մնա, ընկերոջդ էլ օգնիր: «Մաքսիմը» առաջին տեսակի հարվածային է և սիրում է, վոր իրեն վերաբերվեն հարվածայնորեն: Այդպես չէ՞, «առաջին համարներ»:

Դա դասակի հրամոդի խոսակցության սովորական յեղանակն էր: Նա սիրում էր դիմել գնդացրային հաշվարկի առաջին համարներին, նրանց համարելով գնդացրային կրակի հիմունքը:

— Ճիշտ ես խոսում, ընկեր հրամանատար,— պատասխանում էյին առաջին համարները:

Դասակը գնում էր խծաշարուկ, գնդացիր գնդացրի հետևից: Յուրաքանչյուր դադարքից հետո ջոկերը փոխում էյին իրենց տեղը, բեռնավորման համաչափության համար:

— Իսկ հարվածայնության համար մենք էլ համաձայն ենք,— հայտարարեց յերկրորդ ջոկի ա-

ռաջին համարը՝ Ծուլգան, կարճահասակ, չոր, ջլապինդ մի յերիտասարդ։— Կարծեմ, բոլոր կոմյերիտ. գնդացրավորդները գտնվում են սոցմրցության վահանի վրա գրված ցուցակի մեջ,— հերթը մերն է։ Մենք էլ կհարվածենք, մի՛ վախենար։

— Ի՞նչ վախենալու բան ունեմ, յես լավ գիտեմ ձեզ, դուք ուզենաք քարից յուղ կքամեք,— կատակեց Զերկեսովը։

— Վո՛չ, նա լուրջ է խոսում, դու հանաք մի՛ անիր, հրամանատար,— Ծուլգայի փոխարեն վիրավորվեց նրա հարևանն ու տեղակալը, յերկրորդ համարը։— Մի չաբաթ է, ինչ յես հարվածային եմ, միայն չեմ հասցնում, վոր գրվեմ, Ասենք, բանը հո դա չի, գրվելը չի։

— Կանգնի՛ր,— հնչեղ ձայնով հրամայում էր Զերկեսովը,— և դասակը ձիգ էր տված ու առաձիգ զսպանակի պես շարժվում էր առաջ կամ դառնում տուն, նայած թե վո՛ր ժամն էր ցույց տալիս դասակի հրամոդի ժամացույցը։

★

Վաշտը ուժեղ կերպով պատրաստվում էր հրաձգության նոր կուրսի առաջին վարժությունը մարտական փամփուշտներով կատարելու համար։

Այդ նոր վարժության մասին այն ժամանակ պտտվում եյին խորհրդավոր և իրար հակասող լուրեր։ Հրամանատարներից վոմանք նրա վրա նայում եյին վերից վար, համարելով շատ սովորական բան՝ հարյուր մետր տարածության վրա դիպցնել նշավակին չորս գնդակից յերեքը։ Հետո յեկան հասան առաջին խռովահույզ լուրերը՝ հարևան զորամասերում տեղի ունեցած կատարյալ անհաջողության մասին։

Լենինյան անկյունում քաղզբաղմունքների համար յեղած տախտակի վրա վաշտի հրամանատար Կոլեսովը քաշ արավ առաջին նշավակը, գրեց պայմանները և մի յերեկո ամբողջ վաշտի հետ զրուցեց, թե ո՛ւր պետք է նշան բռնել, ինչպե՛ս ոգտագործել հենակը և այդ հրաձգության ժամանակ գնդակն ի՛նչ հետագիծ կունենա։ Բոլոր հարցերին պատասխանելուց հետո հրամանատարն իրեն հայտարարեց հարվածային՝ հրաձգության տեսակետից։ Զբաղմունքները կազմակերպելու տեսակետից և դահուկով գնալու տեսակետից։ Իրենց հարվածային հայտարարեցին դասակի յերկու ջոկերը նույնպես հրաձգության ու կարգապահության կողմից։

Այդ որերին յերեկոյան առանձին խնամքով մաքրում եյին հրացանները, իսկ հրամանատար Ակինշինը համարյա չէր հեռանում հրաձգային դասարանից և հաճախ այնտեղ էր տանում իր ամբողջ ջոկը։

— Նու, ինչքա՞ն ենք տալու, ընկեր հրամանատար,— առաջուց հուզվում եյին կարմիր բանակայինները։— Իսկ յեթե հանկարծ հենց առաջին վարժության ժամանակ «նրանք» իրենց կրակով գերազանցեն մեզ,— այն ժամանակ թեկուզ գլուխ վերցրու, փախիր վաշտից, ամոթալի բան դուրս կգա։

— Իսկ դուք ավելի՛ հուզվեք,—բարկանում էր հրամանատարը— այդ դեպքում ագռավի աչքերը կհանեք։ Հազար անգամ ասել եմ ձեզ, հրաձգության ժամանակ հիմնականն ու գլխավորն այն է, վոր մարդ չհուզվի։ Առաջին տեղը կբռնի նա, ով ավելի լավ կպատրաստվի և հանգստություն կպահի։

— Եդ բանը մենք ամենքս էլ գիտենք,— հայտարարում եյին նրանք,— համա, ի՞նչ կարող ես

անել, որ հուզմունքը սրտից ո՛չ մի կերպ չի հեռանում:

—Նու, դո՞ւ վոնց ես զգում քեզ,—կամաց հարցնում է ջոկի հրամանատարը Գրոմովին: Վերջինս նրան հուզում է ամենքից ավելի: Նա բոլորովին անպետք արդյունք ցույց տվեց մանր կալիբրով հրացաններից կրակելիս և ո՛չ մի կերպ չի կարողանում միատեսակ նշան բռնել դադդյահի օգնությամբ:

Իսկ Կովա՞լը:— Նրա համար հանդիստ է Ակինշինը: Կովալը լավ է արձակում: Ակինշինը հասկանալ չի կարողանում նրան. Նա այսօր ամեն տեսակետից օրինակելի յե, շատ լավ հարդարած մահիճ, բացորոշություն, արագություն, իսկ վաղը՝ կոպիտ խոսքեր, դանդաղկոտություն, կեղտոտ հրացան, շարքի մեջ մտնելիս՝ ուշացում և այլն, և այլն:

— Ընկեր Կովալ, մի րոպե մնացեք այստեղ,— գլխով է անում նրան Ակինշինը, յերբ ամենքը ցրվում են:

Նա նայելով մի կետի, կանգնած է դասարանի մեջտեղը, ապա նստում է նստարանին և լուռ է:

— Վերջապես ասեք ինձ, թե բանն ի՞նչ է,— աշխատելով կամաց ու փափուկ խոսել, սկսում է Ակինշինը:— Ինչո՞ւ դուք, ընկեր Կովալ, համարյա թե ամեն օր խախտում եք կարգապահությունը: Ո՞վ և ի՞նչն է ստիպում ձեզ՝ անել այդ բանը:

Կովալը լուռ է և մի տեսակ անորոշ կերպով ժպտում է: Նրա դեմքը տափակ է, լայն, աչքերը կալմիկի աչքերի նման ու նեղացած մարդու պես՝ հայացքը մութ: Նա նայում է հատակին, աչքերը դարձնում ձգում է ավազով լեցուն արկղին, հետո դասալկան պիտույքներին ու հրացաններին:

— Ջանձրալի յե քո հրամանները կատարելը, ընկեր հրամանատար, ահա պատճառը:

— Վո՞նց թե ձանձրալի յե, չէ՞ որ յես ձեզ հրամայում եմ միայն ծառայության վերաբերյալ, ընկե՛ր Կովալ:

— Հենց ենպես, ձանձրալի յե,— համառորեն գլուխը շարժում է կարմիր բանակայինը:— Առանց հրամանի կարող եմ անել, իսկ հենց որ հրամայում են, ամեն հավես կորչում է: Առանց դրան էլ իմ ղահլեն գնացել է տերերի մոտ խեց լինելուց: Ետեղ էլ նույն բանն է. շարքի մեջ կանգնի՛ր, հրամայում են՝ հավսա՛ր: Գուցե, յես հեչ չեմ ուզում գլուխս թեքեմ դեպի աջ: Հետո՝ զգա՛ստ, կարգո՛վ համրիր, հանկարծ մեկը սխալվում, իսկ դու կամ հրամանատարներից մեկն ու մեկը— ամբողջ ձայնով— պատվերը չեղա՛ծ համարել, և նորի՛ց համրիր:

«Սրան մտի՛կ, ի՛նչ անարխիստ է»,— մտածում է Ակինշինը:

— Վո՛նց կլինի առանց հրամանի, առանց կարգապահության: Նու, այ ասենք թե դուք, ընկեր Կովալ, պետք է շարեք վաշտը, դուք կրտսեր հրամանատար եք. ի՞նչ կարող եք անել առանց հրամանի: Հո այդքան մարդկանց չե՞ք տանի ամբոխի նման:

— Ջղային եմ յես, հիվանդ, լավ կլիներ, յեթե ինձ ուղարկեյիք հանձնաժողովի:

— Ջե՞ որ դուք հանձնաժողովի յեղել եք, և նա ձեզ համարել է առողջ:

— Համարել է: Համա յես հիվանդ եմ:

— Ի՞նչ կա որ, է՛լի կարելի յե գնալ, յեթե իսկապես դուք հիվանդ եք: Միայն, ա՛յ ի՛նչ կասեմ յես. Կովալ: Յես ուզում եմ, որ դուք դառնաք լավ

կարմիր բանակային: Իսկ դուք սկսում եք խայտառակել ձեր ջոկն ու դասակը: Կարող եք լինել լավերից մեկը, բայց քարշ եք գալիս պոչից:

— Ջղային եմ յես,— անհուսալի պնդում է Կովալը և առաջինն է վեր կենում, վոր գնա:

— Կացե՛ք, ընկե՛ր Կովալ. դուք խորհրդային իշխանությունը լա՞վ իշխանություն եք համարում, թե՞ վատ: Դուք պատերազմի կողմնակի՞ց եք, թե՞ պատերազմի դեմ եք:

Ակինշինը նույնպես վեր է կենում և չեշտակի նայում է Կովալի իրարից հեռու աչքերին:

— Հայտնի բան է, վոր խորհրդային իշխանությունը մեր իշխանությունն է, իսկ գալով պատերազմին, կասեմ թող անիծված լինի նա, եդ պատերազմ ասածդ: Հորս անդամալույծ դարձրին դեռ գերմանական պատերազմում: Աջ թեվը ուսախառն նա թողեց այնտեղ՝ Գալիցիայում: Հետո, վերադառնալուց մի տարի անց՝ մեռավ:

— Մենք ամենքս էլ դեմ ենք պատերազմին, բուրժուական պատերազմին,— համոզեցուցիչ բղավում է Ակինշինը: Յեվ այդ պատճառով ամենքը, նաև դուք, ընկեր Կովալ, պետք է իմանաք լավ գրնդակ արձակել, պետք է կատարենք հեղափոխական կարգապահությունը, վորպեսզի, յեթե հարձակվելու լինեն բուրժուաները, նրանց քիթը լավ ջարդենք:

— Դա ճիշտ է,— համաձայնում է Կովալը,— միայն յես շատ ջղային եմ և ինձ համար շատ դըժվար է ամեն հրաման կատարելը ու մահճակալները սարք ու կարգով պահելը:

— Յես էլ եմ ջղային,— ծիծաղում է հրամանատարը,— յեկեք միասին բժշկվենք. տեսնենք՝ ո՛վ ումնից ավելի նշան կխփի հրաձգության վարժություններին: Համաձա՞յն եք:

— Ինձ համար ի՛նչ կա վոր, յես հրացանից կրակել շատ եմ սիրում:

Յերեկոյան, ստուգման ժամանակ Ակինշինը մի րոպե պահեց իր ջոկը և հայտարարեց, թե ինքն ու Կովալը մրցություն են սկսել իրար հետ. ո՛վ ավելի լավ նշան կխփի և կկատարի վարժությունները:

Ձեզ հետ, ընկեր հրամանատար, դժվար է մըրցելը. պետք է ամենից առաջ եղպիսի նշաններ ունենալ: Միանգամից միքանի ձեռքեր մեկնվեցին դեպի Ակինշինի կուրծքը:

— Ա՛յ, տեսնում եք, ընկեր Կովալը չվախեցավ և մրցման է մտել ինձ հետ: Դուք գիտեք, վոր մանր կալիբրով հրացանից նա կրակում է ամենքից լավ,— հիշեցնում է Ակինշինը:

Կովալն ինքնաբավական ժպտում է, աշխատելով յերկու ձեռքով ծածկել շրթունքները և սև բուսականությամբ ծածկված կզակը:

Առավոտյան, հրաձգության վարժությունների մասին վաշտի հրամանատարի զրույցից հետո՝ պարզվեց հետևյալ դեպքը. կորել էին կարմիր բանակային Գորելովի կոշիկները: Նրա միտն է, թե ինչպես դեռ յերեկոյան կոշիկները մաքրեց, յուղեց, լվացարանի մոտ դրված վաշտի արկղից վերցրած քսուքով, վորպեսզի առավոտյան դրա վրա ժամանակ չկորցնի, իսկ հանելուց հետո կոշիկները դրեց իրենց սովորական տեղը՝ վոտների մոտ և ծածկեց փաթաթաններով:

Իսկ առավոտյան, յերբ վեր կացավ ու ձեռքը պարզեց, վոր կոշիկները վերցնի, տեսավ միայն փաթաթանները, վորոնք կծիկի պես ընկած էին հատակին: Գորելովը չէր հավատում իր աչքերին, նայեց մահճակալի տակ— այնտեղ էլ կոշիկ չկար:

Նա յերկար ժամանակ անորոշնական կանգնել էր բոբիկ վոտներով հատակին և դիտում էր, թե ինչպես ընկերները հագնվում ու գնում են լվացվելու: Յետո հայտնեց յեղածի մասին ջոկի հրամանատար Պինկինին:

— Ընկեր հրամանատար, իմ կոշիկները կորել են:

— Նո՛ւ—ո՛ւ, ա՛յ, քեզ բա՛ն,— ձգեց նա. վո՛րտեղ եք չոր տվել դուք նրանց:

— Չոր չեմ տվել, գողացել են,— հանգիստ շարունակեց Գորելովը:—Թույլ կտա՞ք վոր յերկրորդ զույգը, նորերը հագնեմ:

— Գուցե, գտնվեն, իսկ առայժմ հագեք նորերը,— անտարբեր թույլ տվեց Պինկինը և գնաց լվացվելու:

«Նրա ջոկի մեջ կոշիկներ են կորել, իսկ նրա վեջը չէ,— զարմացած մտածում էր Գորելովը, պամբյուղից հանելով յերկրորդ զույգ կոշիկները:—Ե՛հ, վոտներս կծեծկեն, մինչև կլայնանան»: Նա հիշեց, թե ինչպե՛ս յերկու որ ձախ վոտով կաղում էր, մինչև կորած կոշիկները հարմարվեցին վոտներին: Նոր կոշիկները վայրենաբար ու անճոռնի կերպով ճռճռում եյին, ամեն քայլափոխում գրավելով ընկերների ուշադրությունը:

—Ե՛յ դու, հարվածային, ի՛նչ ես ճռճռացնում նոր կոշիկներդ, ցուցանա՞կ ես շինել քեզ համար,— կատակեց Ջերկեսովը, տեսնելով նրան իր դասակի տերիտորիայում, բայց Գորելովի յերեսին նկատելով չվարած արտահայտություն, իսկույն վերջ տվեց իր հանաքին: Հը՛, ի՛նչ է յեղել ձեզ, ընկեր Գորելով, մի տեսակ թթված եք, գուցե ձախ վոտից եք վեր կացել կամ գուցե Ակինչինն ու ջոկը՝ մրցակիցներդ հանգիստ չեն տալիս ձեզ:

— Ընկեր հրամանատար, կարծեմ... կոշիկներս գողացել են... նա դառն ծիծաղեց:

Ջերկեսովը կամաց շվվացրեց:

— Ահա թե վոնց է սկսվում: Վաշտի մեջ ելի բուն է դրել սրիկայի մեկը,— նա ավելի թունդ խոսքով հայհոյեց:

Նման դեպքերում Ջերկեսովը բորբոքվում էր ու հայհոյում էր անողոքաբար. Ամեն տեսակ պլաններ կազմում գողությունը բացելու համար և անսահման յերջանիկ էր զգում իրեն, յերբ աջողվում էր գտնել հանցավորներին: Այնպես էլ այժմ. չնայած Կոլեսովի և ավագ Մալովի ձեռք առած ամենայեռանդուն միջոցներին, կոշիկներն անհետ կորան, թեև նույնիսկ խուզարկություն կատարվեց:

Սակայն, դեպքը կրկնվեց. Յերկու որ հետո նույն յերրորդ դասակում գեղընտիր կարմիր բանակային Ժարինովի գրատը գողացան կախարանից: Գրատն էլ չգտան:

—Միևնույն ձեռքի գործն է,— խոսում եյին իրար մեջ կարմիր բանակայինները,—անողը միևնույն մարդն է:

— Յերեք կոշիկներ, այսոր գրատ,— այժմ հերթը զգեստավորությանն է. հետո յերևի բանը կհասնի անկողնի սպիտակեղենին և վոտի փաթաթաններին,— չարացած հեգնում էր Ջերկեսովը: Յեվ հասկանալի չէր, թե ո՛ւմ էր վերաբերում այդ հեգնանքը:— Մենք ամենքս մեղավոր ենք, չենք կարողանում ժողովրդական գույքը պահպանել այնպես, ինչպես հարկավոր է:

Նորից ամբողջ վաշտը հավաքվեց Լենանկյունը: Կոլեսովը հրամայեց Մալովին՝ ստուգել, արդյո՞ք ամենքը ներկա յեն: Նա ուշադրությամբ ու խիստ

հայացքով նայում էր իր վրա սևեռած, նույնպես ուշադիր, յուրաքանչյուր զույգ աչքերին:

— Ջո՞ն, որ նա էլ, գողն էլ նստած է այստեղ՝ մեր մեջ և նույնպես լսում է, և նույնպես հուզված է ներսում,— խիստ շեշտով թռավ հրամանատարի բերանից:

— Լսի՛ր, ընկեր: Ասենք, դու ի՞նչ ընկեր ես, դու մեր ընկերը չես: Լսի՛ր: Դու խայտառակեցիր վաշտի անունը, չէ՞:— Այո՛, խայտառակեցիր:

— Ընկերներ,— վրդովվում էր հրամանատարը.— հին բանակի մեջ գողությունը համարվում էր նախատինք և քիչ էր պատահում: Այնտեղ գողին պատժում եյին մտրակով և շան նման հալածում եյին շարքի միջով։ Իսկ մեզ մոտ, միաբան կուռ ընտանիքի մեջ նույնպես գտնվեց մեկը, որ սև բիծ է դնում ամբողջ վաշտի վրա, ամբողջ Կարմիր բանակի վրա...

Խոսում է Ցուդինը.— Գողացան Գորեյովի, վաշտի մեջ առաջին հարվածայնի, կոշիկները: Գուցե դա պատահական բան է, գուցե ո՛չ: Իմ կարծիքով, ընկերներ, դա պատահական բան է: Յես կարծում եմ, որ մենք նախատինքի այդ բիծը կսրբենք մեր վաշտի վրայից հարվածայնության ծավալումով, լավ հրաձգությամբ:

Խոսեցին եվ մի քանի կարմիր բանակայիններ: Հետո, ինչպես միշտ, յերբ հավաքվում էր վաշտը ու վերջանում էր պաշտոնական մասը, հրամանատարին շատ հարցեր եյին տալիս: Այստեղ կային և՛ փաթաթաններին վերաբերող գործեր ու արտոնություններ, և՛ այնպիսի գործեր, որ ուղարկել եյին կարմիր բանակայիններին մատիտով գրված գորշ, դժվար ընթեռնելի նամակներով: Գյուղում ծավալվում էր կոլտնտեսական լայն ալիքը, և հազարավոր վերստեր հեռու, ինչ որ տեղ ձեռնարկ-

ված եյին մեծ գործեր. յերբեմն տեղի ունեցած սխալներ պաշտպանություն եյին գտնում այնտեղ, իսկ հետո, այդ սխալների հետեվանքով, հաճախակի եյին դառնում գյուղից յեկած նամակները: Յեվ հաճախ վաշտի հրամանատար ու քաղղեկ Կոլեսովը համարյա ուժասպառության չափ, նստում էր գրասենյակում, կարմիր բանակայինների հետ միասին կարդալով նամակների ծուռ ու մուռ, դժվար ընթեռնելի տողերը: Խորհուրդներ էր տալիս, հինգերորդ վաշտի դրոշմակով նամակներ էր գրում գյուղխորհուրդների և շրջգործկոմների հասցեյով, պահանջում էր: Իսկ հետո այդ նույն հարցերը քարտուղարի հետ միասին դնում էր կուսբջիջի ժողովում, որ համարյա միշտ գումարվում էր վաշտի կոմյերիտների հետ: Յեվ մախորկայի թանձր ծխի մեջ այդ ժողովները տևում եյին մինչև ուշ գիշեր: Ժողովներից հետ սիրտն զգում էր թեթեվություն ու ազատություն, չնայած հոգնածությանը:

★

Առավոտվանից փչեց արևմտյան քամին, և տեղաց քուլա-քուլա ձյուն: Ձյունին արդեն վարժվել, սովորել եյին, բայց ամեն անգամ, յերբ նորից ձյուն էր գալիս, ծածկելով հին դահուկահետքերն ու դահուկածիրերը, ամեն բան դառնում էր մի տեսակ առանձնապես լավ և ուրախ: Փողոցներում զնգզնգում եյին կառապանների զանգուլակները:

Վաշտը հրաձգարան գնաց ո՛չ թե միանգամից, այլ դասակ առ դասակ, որպեսզի այնտեղ ժամերով չսպասի, մինչև կրակելու հերթն իրեն կհասնի: Դասակները դուրս եյին գալիս գնդի դարպասից, ծռվում եյին դեպի ձախ. առաջիններն սպասում եյին, մինչև վազելով կհասնի ձախ թևը— ձախ թևի բանակայինները միշտ ուշանում եյին— և յերբ հըն-

չում եր «գահույկների վրա՝ կանգնի՛ր» հրամանը, ամբողջ դասակը միևնույն րոպեին կանգնում եր գահույկների վրա: Ու թվում եր մի կողմից դիտողին, թե տասնյակ այդ մարդիկ հնձված, կտրված են վիթխարի մի մանգաղով, և ցցված են մնացել միայն բները:

Մի րոպեից նրանք ուղղվում եյին, դառնում եյին ծառեր, և նրանց միջև, ամրակազմ ու ջլապինդ, կանգնում եր հնդեղեգնի կամ հաստաբուկ փայտե ձեռնափայտերի բարձր անտառը: Սովորաբար գընում եյին զույգ-զույգ, և մի քանի րոպեից հետո գնացող դասակն արդեն ձգվում եր յերկար աղիքի պես՝ զանազան միջոցներ թողնելով նրա առանձին ողերի միջև:

Յեթե նախորդ օրը ձյուն եր գալիս և ծածկում եր հետքերը, այդ դեպքում նախապես առաջ եյին ուղարկում լավագույն դահուկավորներին: Դրանք ամենքն ել ջլապինդ ու ամուր տղերք եյին: Նրանք չեյին վախենում հրաձգությունից և որվա մեջ կարող եյին դահուկներով անցնել նույնիսկ հարյուր կիլոմետր: Ջարդելով ձյունի լայնատարած հարթությունը, նրանք լայն կիսաշրջանով փոխում եյին վոտը վոտի հետևից: Դահուկները թաղվում եյին փափուկ ձյունի մեջ, նրանց ծայրերն եյին միայն, նավերի քթի պես, խառնշտորում ձյունի սպիտակ փրփուրը, առաջ եյին գնում, իսկ հետևից մնում եր միայն լայն հետք՝ դահուկածիր: Յեվ դահուկածիրով արդեն հեշտությամբ, համարյա առանց ձեռնափայտերի ոգնության, շարժվում եյին կարմիր բանակայիններն ու հրամանատարները: Լխկլխկում եյին փոկով գոտուց քաշ արած սվինները՝ պատյանի մեջ: Սիրահոժար կպել եյին հրացանները բանակայինների թիկունքներին, և գնում եյին դասակներն իրար հետևից, դիմելով դեպի ձյան կույտերով պատած հրաձգարանը:

★

Հավասար, ամբողջապես ձյունապատ հարթավայր է հրաձգարանը: Զանազան տեղերում սև գդակների նման գետնի վրա պառկած են բլինդաժները. իսկ նրանց միջև առավոտվա և ձյունի պայծառ փայլի մեջ [illegible] են նշավակները: [illegible]րանք տասնյակ նշավակներ սպասում են, մինչև գնդակները հնչեղ ապտակի պես կդիպչեն իրենց սևացրած այտին: Կրակի գծի վրա, վորտեղից հիմա կսկսվի հրաձգությունը, կան սառած հողի սև կոշտեր—հենակներ: Իսկ հեռևում, յերկու հարյուր քայլի վրա, դեպի յերկինք է ձգվում փայտե վերնակ: Դեպի վերնակը տանում է վոտների տակ ճռռացող մի սանդուղք: Յեվ յուրաքանչյուր անգամ հրաձգությունն սկսվելուց առաջ մինչև ծնկները հասնող կիսամուշտակ և ծամված կանճալներ հագած մի մարդ բարձրանում է վերնակն ու այնտեղ տնկում է կարմիր դրոշ. դա նշան է վոր սկսվում է հրաձգությունը:

Առաջին դասակն յեկավ այն ժամանակ, յերբ ցինոգործները գնում եյին վերջին նշավակները: Դեկտեմբերյան առավոտվա ժամի ութն եր, և ձյունի հարթավայրն ինքն եր ընդառաջում յեկողին, ցրտով ու քամով կծելով ամեն ինչ, վոր պատած չեր սուր մահուդով:

— Կրտսե՛ր հրամկազմ, ինձ մո՛տ—կանչեց վաշտի հրամանատարը, յերբ դասակին, առանց հրացանների, վազեց դեպի ծխող ու կեղտոտ տեպլուշկան՝ սատանայու աժան՝ բաժակը յերեք կոպեկով թեյ:

— Տեսեք, ընկերներ,— հրամանատարը մատը պարզեց դեպի ձախ, վորտեղ հրացաններից բուրգ եր կազմում նրանց հետ յեկած մյուս դասակը:—Դա միամյակների առաջին ջոկատն է: Նրանք ել այսոր

կրակում են առաջին վարժությունը, և յես կարծում եմ...— նա մի փոքր դեմ առավ,— յես կարծում եմ, նրանք այստեղ կհարվածեն մեզ, վորովհետեվ ավելի զարգացած են, միջակ կրթության տեր են: Բայց յուրաքանչյուր մարտիկ պետք է հիշի, վոր մենք մրցում ենք նաև նրանց հետ: Նախազգուշացնում եմ—հրաձգարանում պետք է լինի կատարյալ կարգապահություն, թույլ չտալ վո՛չ մի աղմուկ, առանձին խնամքով նայել հրացանները կրակելուց հետո և պահանջել կարմիր բանակայիններից, վորպեսզի նրանք պարզորոշ զեկուցեն հետևանքների մասին: Յուրաքանչյուր ջոկից կարձակեն յերկուական մարդ: Փամփուշտներ ստանալ,—դիմեց այժմ նա իր ոգնականին,— և դուրս բերել առաջին փոխը:

Յերկու րոպեյից հրաձգարանի լայնության յերկայնությամբ ձգվեց առաջին փոխը· աջում՝ հինգերորդ վաշտը, ձախում՝ միամյակների հերթը:

— Տա՛լ փամփուշտներ,—լսվեց կցկտուր հրամանը:

Ջոկի հրամանատար Իվանովը, վոր կատարում եր դասակի հրամանատարի ոգնականի պարտականությունները, բաժանեց փամփուշտները՝ յուրաքանչյուրին չորս հատ: Ջոկերի հրամանատարները յերկար ու բարակ ցույց եյին տալիս մատներով, թե ո՛վ ուր պիտի արձակի:

—Ա՛յ, բլինդաժն այն է, վոր դիզի նման է, տեսնո՞ւմ եք,— ձեռքով ցույց է տալիս հրամանատարը:

— Այո՛, տեսնում եմ,— անվստահ պատասխանում է կարմիր բանակայինը· նա տեսնում է կիտված սև կույտը, ճիշտ է, մի քիչ նման է դեզի,

բայց նա համոզված չի՝ բլինդաժը դա՞ յե, թե՞ դա չի:

— Տեսնում եմ,— ավելի վստահ կրկնում է նա նորից:

— Նու, բլինդաժից դեպի ձախ սև նշավակներն են, և ձեր նշավակը աջից ամենավերջինն է: Հասկանալի՞ յե:

— Հասկանալի յե:

Այսպես վորոշում են բոլոր նշավակները:

Պինկինի ջոկից առաջին փոխի մեջ են իրարից անբաժան Կոստրոմցովը և Յելինը: Կոստրոմցովը հուզվում է, նա վստահ չէ, կարո՞ղ է արդյոք կատարել վարժությունը· այնինչ, նրա ընկերը լիովին սառնարյուն է և միայն ամեն կերպ աշխատում է տաք պահել աջ ձեռքը: Սկզբում նա աջ ձեռքը տրորում է ձախով, ապա կոխում է գրպանի մեջ և այնտեղ ջերմություն չգտնելով, տանում է այն ուղղակի շալվարի գրպանը:

—Ամենագլխավորն է, ձեռքդ չմրսեցնես,— կամաց շշնջում է նա Կոստրոմցովին.— հենց վոր ձեռքդ սառեց, ել նրա մեջ ամրություն չի մնա: Դա յես լավ գիտեմ, զուր չէ վոր վորսորդություն եմ արել,— հեղինակավոր տոնով և գերազանցության թեթև չեշտով բացատրում է նա իր միտքը:

— Չեմ կատարի, վո՛չ մի կերպ չեմ կատարի,— կրկնում է Կոստրոմցովը:— Բան դուրս չի գա, այնտեղ նշավակ չի յերեվում, տախտակ է միայն: Կիսատ մի բան են կպցրել և ասում են, վոր նշավակ է:

Նա ևս տաքացնում է ձեռքը: Նա չի ուզում առաջնությունը զիջել Յելինին, իսկ նշավակը թարսի պես թվում է այնպես փոքրիկ և այնքա՛ն հեռու:

— Հապա Ակինշինի հետ մրցությո՞ւնը, հի-

Վոդքի ընթացքում—6

չո՞ւմ ես մեր պայմանագիրը,—նորից աներեսաբար փսփսում է Յելինը և տասներորդ անգամ գլուխը դարձնում է դեպի ձախ, սպասելով հրամանի: Վերջապես հնչում է հրամանը՝ պարզորոշ ու հանդիսավոր, ինչպես ինքը՝ ձմեռը:

— Նշավակներին, պառկած, հենակից, չորս փամփուշտով, նշանոց յերկու, լցրո՛ւ:

Փոխը, ասես տարված քամու թափով, ընկնում է ձախ կողքի վրա, փորով շուռ է գալիս դեպի ձյունը: Ապա լսվում է միայն փակաղակների չոր ու վորոշակի չխկոցը, և վոտները, մերթ ծռած մի կողմի վրա, մերթ լայն բացած, կայունության համար վորոնում են հենակետեր, կոշիկների ծայրերով փորփրելով ամուր ձյունը:

— Կրա՛կ:

Թրխկացին, ճեղքելով սառցե լռությունը, առաջին ձիգերը, ապա նրանց ծածկեց, խլացրեց մարդու ականջների մեջ հնչող հաճախակի կրակի մրրիկը: Նա շարունակվեց կես րոպե: Յեվ նորից լռություն, վոր ընդհատվում է փակաղակների չխչխկոցով: Հրացանի փողերից դուրս են գալիս ծխի հազիվ նշմարելի քուլաներ և վայրկենապես չքանում են պաղ օդի մեջ:

Այդպես կրկնվեց չորս անգամ, բաժանած փամփուշտների թվի համեմատ: Գնդակներից մի քանիսը տեղ չհասնելով, պոկում եյին ձյունախառն հողը, կոշտ–կոշտ բարձրացնելով այն, իսկ իրենք թռչում եյին դեպի հեռու հորիզոնը: Մյուսները նպատակից բացահայտորեն դենն եյին անցնում, չմփում եյին ձյունի մեջ, վոր այլևս չբարձրանան և արագ հաղորդում եյին հողին հրացանի փողից ու վառոդից ստացած ջերմությունը: Վերջին հրազարկի հետ փողահարը նվագում է «սա–վարտ»:

— Դեպի նշավակնե՛րը,— լսվում է նորից անհամբեր հրամանը, և տասնյակ մարդիկ սրնթաց վազում են դեպի նշավակները, ընկնելով, իրար առաջ կտրելով և թաղվելով փխրուն ձյունի մեջ: Յուրաքանչյուր սև վահանի մոտ մի զույգ ուշադիր աչքեր. նրանք վորոնում են սկզբում սև մակերևույթի վրա, վոր փայլում եր նենգավոր պլպլոցով, հետո վերստուգիչ շրջանի մեջ, և յեթե ծակոտ չեն գտնում, շվարած ու շտապ դիտում են նշավակի ամբողջ թերթը: Այդպես վորոնում եր իր ծակոտները նաև Կոստրոմցովը, աչքերով յերկար ժամանակ ու համառորեն շոշափելով թուղթը:

— Ի՞նչ բան է դա, միայն յերկու, իսկ մնացածները բոլորովին չկան:

Նա նայում է նշավակի տակ, կարծես ուզում է այնտեղ գտնել անհետ կորած գնդակները, նայում է հարևանի նշավակը,—ծակոտներ չկան:

Յես քեզ ասում եյի, ձեռքդ ավելի ամրացրու,— ցավակցությամբ նայում ու ասում եր Յելինը: Բայց ընկերոջն արտահայտած ցավակցության հետ նրա դեմքին ծաղկեց ուրախություն, և յերբ Պինկինը մոտեցավ, հուշատետրը ձեռքին, ամեն կերպ աշխատելով հանգիստ յերևալ, բավականությամբ զեկուցում է.

— Յերկուսը սևի մեջ, ընկեր հրամանատար, մեկը վերստուգիչ շրջանի մեջ, իսկ չորրորդը ցած է գնացել,— նա ձեռքը պարզեց դեպի նշավակի ձախ անկյունը, վորտեղ լայնորեն պատռված թղթի մեջ յերևում եր կեղտոտ լայն ծակոտը:

— Իսկ իմոնցից յերկուսը բոլորովին չկա, մյուս յերկուսն էլ այնտեղ չեն, վորտեղ հարկավոր է,— աշխատելով չնայել հրամանատարին, զեկուցում է իր հերթին Կոստրոմցովը:

— Ձեր նշան բռնելու մեջ միօրինակություն չկա,— դաժան ու նեղացած տոնով վճռեց Պինկինը։— պետք է տանը մարզվել։

— Հա, Ակինշինի ջոկը բոլոր ժամանակ մարզվում էր, նրանք յերեվի մեզնից ավելի լավ կխփեն,— դատում էր Յելինը, դանդաղ քայլերով հեռանալով նշավակներից։— Գիտե՞ս, հերթից քանի մարդ կատարեց վարժությունը։— Նա դառնությամբ թափահարեց ձեռքը, կարծես մխիթարելով Կոստրոմցեվին։— Տասից յերեքը, յերեսուն տոկոս, իսկ պայմանագրով պահանջվում է յոթանասուն և հինգ։

Միամյակների յերրորդ փոխի հետևից դեպի նշավակները գնաց Յուգինը։ Նրանց մոտ գործը համեմատաբար շատ ավելի լավ էր։ Առաջին փոխերը տվին հնգական կատարում, իսկ յերրորդը՝ յոթ։ Նա մտքում հաշվեց. «հիսուն յոթ, իսկ մենք՝ յերեսուն հինգ և դժվար թե ավելի ստացվի»։ Միամյակները նույնպես, ինչպես նաև կարմիր բանակայինները, վազում եյին դեպի նշավակները, առաձիգ վոտներով փորփրելով ձյունը, նույնպես հուզվում եյին, յուրաքանչյուրն ուշադրությամբ շոշափելով իր նշավակը, և տարբերությունը միայն այն է, վոր սև կիսաշրջանները նրանց նշվակների վրա ավելի յեն ծակծկված գնդակներով, իսկ կրակի ժամանակ քիչ գնդակներ եյին ընկնում՝ դեռ նպատակին չհասած։ Յերևում էր վարժության համար ավելի լավ նախապատրաստությունը։

Յերրորդ դասակի հետ հրաձգարան յեկավ Կոլեսովը։ Նա գրատի փեշերով թափ էր տալիս ձյունը դահուկներից, յերբ զեկուցելու համար նրան մոտեցավ առաջին դասակի հրամանատարը։

— Ձեզ վստահած վաշտի առաջին դասակը վերջացրեց հրաձգության առաջին վարժությունը։

— Ինչքա՞ն է,— կարճ հարցրեց Կոլեսովը։

— Քսան ինն, ընկեր հրամանատար։

— Միայն այդքա՞ն։

— Չգիտեն միատեսակ նշան բռնել, ընկեր հրամանատար։

— Պետք է սովորեցնել։ Ե՛խ, ինչքան չա՛տ պետք է սովորեցնել։ Քսան ինն տոկո՞ս։ Չե՞ վոր դա չափազանց չնչին տոկոս է ... իսկ առաջին վաշտում վո՞նց է։

— Այնտեղ մոտ վաթսուն տոկոս։

«Առաջին վարժությունը տապալվեց,— անցնում է Կոլեսովի մտքով. Նա փորձով գիտե, վոր մյուս դասակները զգալի կերպով չեն կարող բարձրացնել կոր գիծը։— Գուցե կհասցնենք յերեսուն և հինգ։ Բանն ի՞նչ է։ Արդյոք պատճառն այն չե՞, վոր առաջին վարժությունը դժվար է։ Այդ դեպքում՝ հապա ինչպե՞ս դասակի համարյա մի յերրորդ մասը կատարեց։ Վո՛չ։ Իհարկե, ամեն բան կարգին է։ Հա՛,— հիշեց նա,— միամյակների վաշտը հո տալիս է վաթսուն տոկոս,— բանը պարզ է։ Պետք է այդ վարժության վրա աշխատել։

Նա ուշադրությամբ դիտում էր, թե ինչպես առաջին դասակը դահուկները վերցնելով, կանգնում էր նրանց վրա և հետո դանդաղ շուռ գալով, առանց յերգի գնաց դեպի Լենինգրադ, հետզհետե արագացնելով քայլերը։

Յերկրորդ և յերրորդ դասակը կրակում եյին միաժամանակ։ Քամին համարյա դադարեց, և կանգնած օդը, սահիկ թավալ-գլոր տալով, կտրատում էր ձյունի մեծ փաթիլներ։ Հետևյալ փոխերը դոփում եյին գետինը, տաքացնելով իրենց սառած վոտները։ Վաշտի մթերապահը արդեն հավաքել էր մի մեծ կույտ պարկուճներ և նրանցով

յեռանդագին լցնում էր թղթե դատարկ ծրարները, հետո դարսելով դրանք արկղի մեջ:

Հրաձգարան գալուց անմիջապես հետո, ջոկի հրամանատար Ակինչինը փորձեց իմանալ, թե ի՞նչ արդյունք է տվել Պինկինի ջոկը, բայց մարդ չկար, վորին հարցներ: Նույնիսկ Ցուդինը, վոր դեռ այդտեղ էր, նրա վրա նայեց դժկամակությամբ:

— Ինքդ էլ կրակիր, այն ժամանակ կասեմ Պինկինի մասին, իսկ հիմա չարժե:

Մի բան միայն պարզ էր, վոր դասակը տվել էր քսան ինը տոկոս: Ակինչինը զննեց հենակները, վազեց նշավակների մոտ՝ ստուգելու ծակոտները, հետո ստիպեց ջոկին՝ մի անգամ էլ անել այն, ինչը կրկնվել էր շատ տասնյակ անգամ· պառկել հենակի վրա, և նշան բռնելով վարժական նշավակին, չորս անգամ կրակել:

— Նու, ընկերներ, ես հանգիստ եմ ձեզ համար· կկատարենք,— ժպտում էր նա ցրտից կարմրած թշերով, դեմքով դարձած դեպի իր ջոկը:

— Ընկեր հրամանատար, ի՞նչ կլինի, թե վոր ես ամենքից լավ խփեմ,— դրդիչ տոնով ասաց Կովալը:

— Ի՞նչ կլինի,— Ակնիչինը մտքի մեջ ընկավ:— Ահա ի՛նչ, ընկերներ, դա վերաբերում է ամենքիդ· ով ամենքից լավ խփի, նրա համար առնում եմ մի տուփ «Սաֆո» պապիրոս ... Դա անձամբ ինձնից: Իսկ դասակի հրամանատարին կխնդրեմ, վոր հերթից դուրս արձակուրդ տա՝ քաղաք գնալու համար: Գալի՞ս է:

Կարմիր բանակայինների մեջ բարձրացավ ուրախ աղմուկ:

— Կարևորը «Սաֆոն» կամ արձակուրդը չէ,— կարևորը լավ հետեվանք տալն է...

Նրանք իրենք էլ դեռ լավ չգիտեյին, թե ինչ

է նշանակում՝ «լավ հետեվանք տալ», բայց քանի վոր հրամանատարն այդպես ասաց, ուրեմն պետք է անել:

Նորից ամեն բան կրկնվեց, ինչպես առաջ: Միայն ինքն՝ Ակինչինը շտապ և առանց նայելու՝ ընկնում էր ձյունի մեջ յուրաքանչյուր հրաձգի մոտ, նրանց հետ միասին տեղավորվում, հարմարվում էր հենակին, նայում էր առջևը, վորտեղ հարյուր մետրի վրա կանգնած եյին նրանք, հլու-հնազանդ, ձյունի մեջ ամուր տնկված, ցցերով ամրացրած նշավակները:

— Ժամանակը սահմանափակված չէ, ընկերներ, մի՛ շտապեք,— սվսվաց վերջին անգամ հրամանատարի ձայնը:

— Կրա՛կ:

Ակինչինը նայում էր Գրոմովի վրա: Նա անհարմար ընկավ ձյունի մեջ· ինչպես յերևում է, հենակը նրա համար ցածր է: Նա յերկար ժամանակ նշան էր բռնում ջղայնորեն, յերբեմն բարձրացնելով, յերբեմն հուպ տալով, սղմում էր հրահանը:

«Չի կատարի, յերեսս ցեխով կտա: Չպետք է թողնել, վոր կրակի»:

Նա նայում է դեպի ձախ· այնտեղ, յերեսով դարձած դեպի դաշտը, յերրորդ դասակի հրամանատար Որլովը դիտում է, թե վորտեղ են ընկնում գնդակները: Ակինչինը թեթև թռիչքով մոտենում է Գրոմովին, և յերբ նա, հոգնած յերկար նշան բռնելուց, սառած ու կծկված մատով, դատապարտվածի պես, սղմում է հրացանը, հրամանատարի ձեռքը վճռականապես դեն է տանում ու դեպի ներքև է հրում նրա ձեռքը:

— Այդպես չեն արձակում, ընկեր Գրոմով: Արդյոք, հենակը չի՞ խանգարում ձեզ:

— Խանգարում է, ընկե՛ր հրամանատար, շատ բարձր է...

— Հապա ինչո՞ւ չեք ուղղում, անպատճառ ուզում եք կրակե՞լ, կոմյերիտ։

— Իսկ յես կարծում էյի, քանի որ տրված է «կրակ» հրամանը, ուրեմն պետք է կրակել։

Նա ասում է էլի ինչ որ ուրիշ բան, բայց Ակինչինը, առանց նրան լսելու, սառած հողը կոտրում է հացի պես և ամենամեծ կտորը խրում է ձյունի մեջ։

— Նորից նշան բռնեք,— տխրաբար հրամայում է նա Գրոմովին և պառկում է նրա կողքին, չի վեր կենում։— Կոթը մի քիչ բարձրացրեք... Ցերկար նշան չբռնեք։ Սահուն բռնեք, մի ցնցեք։ Այդպե՛ս, լա՛վ...

Հրաձգարկը խլացրեց Ակնիչինին, և նա հենվելով արմունկների վրա, մարմնով հետ է ընկնում։

Գրոմովը չգիտե այդ րոպեներին ինքը վախենո՞ւմ է հրամանատարից, թե՞ միայն ճնշվում է, բայց զգում է, թե ինչպես յերրորդ հրաձգարկից հետո նրա կորդակի տակից, ինչպես խորունկ աղբյուրից, դուրս հոսեցին քրտինքի տաք ու խտուտիկ կաթիլներ։

Ակինչինը վո՛չ թե վազում, այլ հերթի հետևից գնում էր դեպի նշավակները։ Այնտեղ արդեն յերևցում է ծունկ չոքած կամ սոսկ կռացած ֆիգուրների շարքը։ Նա չգնաց Գրոմովի մոտ, այլ սկսեց նշանառք անել ձախ թևից։

Կարմիր բանակային Զուբարյով, չորսից չորս,— տաք թուքը շաղեց հրամանատարի վրա Զուբարյովը։

Ակինչինը կռացավ. նոր, քիչ առաջ փակցրած նշավակի վրա, սև վահանից ցած, բայց վերատա-

կիչ շրջանի սահմաններում, սևին էյին տալիս չորս ծակատներ, կազմելով մի քիչ ծուռ ռոմբ։

— Մի փոքր ցած է խփում,— ասաց Ակինչինը.— իսկ ի՛նչ լավ ֆիգուր է ստացվել, իսկական ռոմբ։ Այդպես էլ պետք է արձակեն կոմյերիտականները։

—Գուցե, ժամանակով հենց յես ինքս ռոմբ կրեմ,— սրախոսեց Զուբարյովը, խցելով ծակատները։

— Ցեվ կկրեք, ինչո՛ւ չպիտի կրեք, մանավանդ այդպես նշան խփելուց հետո,— համաձայնեց հրամանատարը։

Ցերբ հերթը հասավ Գրոմովին, նա կտրված ձայնով զեկուցեց։

— Կարմիր բանակային Գրոմով, չորսից յերեք...

— Տեսա՞ք, հո յես ասում էյի ձեզ, որ կկատարեք։ Պետք է միայն ուզենալ և աշխատել։

Գրոմովը վոչինչ չպատասխանեց, նա լցված էր շնորհակալության զգացումով դեպի իր հրամանատարը։

Ցերրորդ ջոկատն արձակեց մյուսներից ավելի լավ, և դա վաշտի տոկոսները հասցրեց յերեսունհնգի։ Առաջին վաշտում վաթսուն յերկու տոկոսի։ Ջոկերից միայն Ակինչինի ջոկը տվեց յոթանասունհինգ տոկոս։ Նրա ջոկում ութ մարդուց միայն յերկուսը չկատարեցին վարժությունը։

Վաշտի մեջ նկատվում էր հրաձգային ճեղքվածք։ Վաշտը սկսվեց, և կարմիր բանակայինները յերեկոյան առանձնապես ուշադիր ու խնամքով էյին մաքրում և սրբում հրացանները։

III «ԴԱՀՈՒԿՆԵՐԻ ՀԵՏՔԵՐՈՎ»

Ըստ Ռեոմյուրի տասնհինգ աստիճան զերոյից ցած է: Վաղ առավոտ է, ժամը հինգը: Լռություն: Եվ հանկարծ այդ լռությունն ու պարզ օդը ճաքճքվում են ազդանշանի համառ ու լարված հնչյուններով: «Տագնապը» գնում է զորանոցների կորպուսների միջով, մտնում է տաք հարկերը, որտեղ տիրում է նույն լռությունը, որտեղ քնած են առավոտյան ամուր քնով կարմիր բանակայինները: «Տագնապը» հաշվի չի առնում անձնական զգացմունքները և տրամադրությունները՝ նա հրամայաբար բարձրացնում է տասնյակ ու հարյուրավոր մարդկանց, նա ստիպում է շտապել, աճապարել:

Հալվեցին ազդանշանի վերջին հնչյունները: Վազում են րոպեները. մեկը. մյուսը... երրորդը...

Եթե մարդ նայելու լինի դրսից, վարից վեր, կորպուսների լուսավորված պատուհաններին, կտեսնի, որ այնտեղ վազվզում են սիլուետներ՝ մեծ ու փոքր: Երբեմն ուղղակի պատուհանի միջով կանգ առնում, ապա չքանում է նեղ մի շերտ՝ հրացանի ստվերը:

Մի քանի րոպեից սանդուղքների վրա լսվում է աղմուկ. բացվում են դռների երկու փեղկերը, այնտեղ բակ են թափվում դասակներն ու վաշտերը:

Կորպուսի երկայնությամբ շինված են դահուկների բուրգերը, վրաները հարյուրավոր դահուկներ: Յուրաքանչյուր զույգի վրա կարմիր գույնով գրված են համարներ, նույնը նաև երկար ձեռնափայտերի վրա: Դա նրա համար է, որպեսզի յուրաքանչյուրն արագ գտնի իր զույգը: Բուրգերի մոտ տիրում է իրարանցում և անկարգություն: Դահուկները ճռճռթում են, դուրս սողալով բուրգերից, բարակ հնչյունով ու աղմուկով զարնվում են սառած ձյունին ձեռնափայտերը: Իրարանցումը տևում է մի րոպե: Ապա բուրգերի մոտ ո՛չ մի մարդ չի երևում: Եվ հարյուրավոր դահուկների փոխարեն, որ ճնշում էին խոտորնակի պահանգները, մնացել են դատարկ բները. միայն երկու – երեք զույգ, որոնց տերերը երեկ գնացին տկարանոց, որբացած կանգնած են, ծիծաղելի չռված սոճենու պահանգներով: Բուրգերի մոտ ամուր տոփանված է ձյունը:

Յոթ րոպեից երկրորդ գումարտակը սև վիթխարի զանգվածի պես ձգվեց գնդի դարպասի մոտ: Նստած «Բատալիոն» կոչված իր անհանգիստ ձին, զորասյունի գլխից, որտեղ կանգնած էր հինգերորդ վաշտը, մինչև պոչը՝ զենքի պահեստի մոտ, մի քանի անգամ արշավեց գումարտակի հրամանատար Պանովը:

— Գու-մար-տակ, ա՛ջ-դա՛րձ,— հրամայում է գումարտակի հրամանատարը լռության մեջ:

Զորասյունը մի թեթև բարձրացնելով դահուկները, անսովորությունից խճճվելով կաճյակների մեջ, դառնում է դեպի աջ:

— Մեր գումարտակին խնդիր է տրված... դահուկային ասպատակով կանխել հակառակորդին... Հինգերորդ վաշտը գլխին... երթի ուղեկալը հինգերորդ վաշտից...

— Իսկ դու հո չես մոռացել «Իլյիչովկա»-ն*),— լսվում է Յուդինի վախեցած ու հարցական շշուկը առաջին վաշտում:

— Ինչպե՞ս չէ, վերցրել եմ և՛ թուղթ, և՛ մատիտներ,— նույնպես շշուկով պատասխանում է մեկը վերջին շարքերից:

Յուդինը բացի հրացանից ու հակագազից, ըսպիտակ խալաթի վրայից քաշ էր արել լայն յերիզով մի սև թղթապանակ: Դա վաշտի ամբողջ գրասենյակն էր յերթի համար:

— Ընկեր հրամանատարներ,— լսվում է նորից Պանովի հանգիստ ու իշխանավորական ձայնը,— մի անգամ եւս նայել, թե ինչպե՛ս է կապած, հարդարած հանդերձանքը վաշտերում: Տեսեք, որ ճանապարհին ո՛չ մի թխթխկոց չլսվի:

Գումհրամանատարը մեկեն դարձնում է ձիու գլուխը և քայլով գնում, հասնում է զորասյունի գլխին:

— Հինգերորդ վաշտի հրամանատար, ուղարկեցեք ուղեկալը. հինգ րոպեյից սկսում ենք շարժումը:

Կոլեսովը հրաման է տալիս. վաշտից զատվում են առաջին ու գնդացրային դասակները՝ յերթի ուղեկալը:

— Քայլով մա՛րշ,— խուլ հնչում են բառերը:

Կաճյակներով սրռացնելով, պատուհանների արձակած լույսի մեջ փայլելով իրենց սպիտակ խալաթներով, հինգերորդ վաշտի յերկու դասակը արագ հեռանում են դարպասից: Յեվ մի րոպեյից մարդկանց քայլերը հալվում, անհայտանում են ցուրտ առավոտվա պաղի ու լռության մեջ:

Քաղաքում ո՛չ մի միտք չունի դահուկների

*) Գնդերում հրատարակվող թերթ: Ծան. թարգ.

վրա կանգնելը: Դահուկները սահում են զանազան կողմեր, դահուկավորները հաճախ ընկնում են, և խախտվում է մարշի համաչափությունն ու գեղաշարությունը: Միայն «մաքսիմներն» են, որ սահում են ձեռնասահնակների վրա: Առջևից քայլում է յերրորդ դասակը:

Զերկեսովը նայում է խալաթավոր սիլուետներին: Հետևինները շարունակ դիմում են մանր, տասն քայլանոց վազեվազքի, առաջ անցնելով առջևից գնացողներից:

Վերև նայելիս յերևում է դահուկների մի ամբողջ անտառ: Նրանք իրար խառնվեցին ոդի մեջ, զույգը խաչարկվեց զույգի հետ, չի կարելի ջոկվել, ո՛ւմ դահուկը որտեղ է: Յուրաքանչյուր կարմիր բանակային կրում էր իր հրացանը: Հրացանների վրայից սվինները հանել էյին: Սվինները պատյանների մեջ դրած՝ քաշ էյին արել գոտիներից, այդպես ավելի լավ է, չի խանգարում դահուկային քայլվածքին:

Զերկեսովը նայում է հետ՝ իր դասակին: Գնում են ջոկերը, ձգված իծաշարուկ, գնդացիրը գնդացիրի հետևից: «Համարների» ուսերով ձգած են ձգափոկեր: Նրանք մեկ լարվում են, մեկ թուլանում, և նրանց շարժումի տակտով «մաքսիմները» մերթ առաջ են նետվում իբրև կենդանի մարդիկ, մերթ հնազանդ գնում են փոկե բուքսիրներով: Դասակի հրամանատարի ոգնականը շարքից դուրս է գալիս և մի քանի րոպե գնում է կողքից, նայելով գնդացրորդների յերեսին:

— Նու, վո՞նց է, համարներ, չո՞գ է,— դիմում է նա, ըստ իր սովորության, առաջին համարներին:

— Ը՛մ, այնքան չէ...— դարձնում է իր գլուխը դեպի հրամանատարը նշանառու Տույլգան: Ցրտից էլ գանգատավոր չենք:

— Սպասենք, յերբ դաշտ դուրս կգանք, այն ժամանակ կխոսենք այդ մասին, — սպառնում է Ջերկեսովը: — Այնտեղ անարատ ձյունի միջով անցնելիս՝ շալվարներդ ջուր կդառնա: Հարվածայիններ,— հենց այնպես է, ուրախ և գոռոզ արտասանում է նա:

— Հայտնի բան է, վոր հարվածայիններ ենք,— ծիծաղում է դասակի դիտող Ցադեյևը:— Տես ընկեր հրամանատար,— գլխով նշում է դահուկային առաջին դրույթը,— յերեկ Սիբինի հետ յերեկոյան մենք այնպես վերակազմեցինք այն, վոր հեչ վեջը չի, յեթե գնալու լինի նույն իսկ հինգ հարյուր կիլոմետր:

— Հայտնի բան է, վոր ամբողջ վաշտում դուք հռչակավոր ատաղձագործներ եք,— գովում է Ջերկեսովը:— Տեսնենք միայն, թե քաշույժի գործը ինչ դրության մեջ է գտնվում:

Սիբինը լուռ է, միայն ավելի ուժեղ է ձգում ձգափողը, և գնդացիրն ամբողջ ժամանակ ընկնում է նրա վոտների տակ:

— Իմ մասին չգիտեմ,— ծիծաղում է Ցադեյևը,— համա իմ սիրելի յեղբայր Սիբինն, անկասկած, կդիմանա: Դրուստ չէ՞, ընկեր Սիբին:

— Հավանորեն, դրուստ է, բայց ժամանակից առաջ ուրիշների համար մի յերաշխավորիր: Յես ինքս էլ կաշխատեմ ապացուցել հրամանատարին, վոր, ինչ էլ լինի, Սիբինը կդիմանա:

Յերկու դադարքից հետո ուղեկալը գնաց մեծ, ամբողջապես ձյունապատ գերեզմաններով: Գերեզմանները կարելի յե ճանաչել բարձր թումբերից և խառնիխուռն ցցված խաչերից:

— Տեսեք, տղերք, ինչքա՜ն շատ են գերեզմանները, յերևում է վոր մի գնդի չափ մարդ են թաղել այստեղ,— զարմանում է գերեզմանների շատությանն ու խտությանը առաջին ջոկի գնդացրորդը:

— Այո՛, դրանց տակտիկական զբաղմունքների տանել չես կարող. իսկ իր ժամանակին դրանք էլ դահուկներով գնացած կլինեն,— դատում է մյուսը,— ուղղելով ծռված դահուկները:

— Իսկ ինչու բոլոր խաչերը փայտից են, ինչպես գյուղում,— հարցնում է նորից առաջինը:

— Այստեղ թաղված են չքավորները, ուրիշ կերպ չի կարող լինել,— առաջվա պես դատում է մյուսը:

Ինչպես յերևում է, դահուկները վերջնականապես հաղթահարեցին նրան: Նա ամեն րոպե նրանց փոխում է մի ուսից մյուսը, փորձում է տանել ձեռքում մոմի պես ուղղաձիգ բռնած. բայց այդպես ավելի վատ է, և նրանք նորից հանգչում են նրա աջ ուսին:

— Ասում եմ, ինչպես յերևում է, այստեղ թաղված են չքավորները,— կրկնում է նա: Հարուստները մոտիկ են յեկեղեցուն ու պահվում են կենտրոններում, և նրանց հուշարձանները մաքուր յերկաթից են շինված: Կան գերեզմաններ, վոր հինգ հարյուր փութ մետաղ ունեն իրենց վրա:

— Ա՛յ քեզ ինդուստրացում,— խառնվում է խոսակցությանը Սիբինը,— իսկ մենք յերկաթի սով ենք քաշում: Նու, նրանց հուշարձանները կհանենք, հա՛: Ամեն մի ցանկապատից մի տափան դուրս կգա, ամեն մի ցանկապատից ատամնավոր մի անիվ կստացվի:

— Դա հետո կլինի, մի վորոշ ժամանակ անց,— պատասխանում է Ցադեյևը և ուշադիր կկոցում է աչքերը մթնշաղի մեջ, վորտեղ վոլորանի հետևն անցան յերրորդ դասակի վերջին սիլուետները:

Սիրինը ձախ ոտով թաղվում է մի փոսի մեջ. կաճյակների ճտերի բերնից սառը ձյուն է թափվում, դիպչում է տաք վարտիքին: Սիրինն զգում է, թե ինչպես ջուրը պաղ-պաղ իջնում է —հոսում է ոտի վրա, յեռանդով թափ է տալիս սպիտակ գուղձերը:

— Ե՛յ, Սիրին,—բռնում է նրան Ցաղեյեվը,— տես, չթաղվես, չերթաս մեռելների մոտ ու կորչես·

— Հանգիստ յեղիր, չեմ կորչի, իսկ խաչերն իսկապես պետք է հավաքել «ուտիլսիրյո»*)–ի համար:

— Ցեվ կհավաքենք ու կհանձնենք, մի՛ վախիր: Հո չի կարելի մի անգամից, հրամանի կարգով ջարդել բոլոր հուշարձանները: Գիտես թե ի՛նչ վայնասուն կբարձրացնեն հավատացողները: Ջարդելու համար, ընկեր, դեռ մի քիչ սպասիր: Կջարդենք:

Առջևում կանգ առան: Ցաղեյեվը սովոր հայացքով հետևում է, թե ի՛նչպես առաջին դասակը կանգնում է դահուկների վրա, թե ի՛նչպես մարդիկ կռանում են, փոկերն ամրացնելով ոտներին:

— Կա՛ց,— հրամայում է Ջերկեսովը,— կանգնի՛ր դահուկների վրա, խոսի՛ր կիսաշշուկով չարունակում է նա:— ո՛չ մի խոսք ու ձայն, ամեն բան հաղորդեցեք շշուկով:

Գերեզմանատան խաղաղությունից ու լռությունից հետո մարդկանց յերեսներին փչեց լուսաբացի քամին: Նա խիստ կերպով փչում եր աջից, սպիտակ խալաթները փքվում եյին ուսերի վրա, վորպես առագաստներ, բնավ չպաշտպանելով ցրտից: Մթության մեջ քամու բերած ձնե փոշին

*) Ոգտագործելի հումք:

կամաց խշխշում է ոտների տակ, սրբելով դահուկների հետքերը: Ձախից ու հետևում վառվում եյին մեծ քաղաքի գիշերային ճրագները, այնտեղ լույս եր, իսկ առջևում սևին եր տալիս գիշերվա խավարը:

— Մինչև կհանդիպենք հակառակորդին, յերեք ժամ կքաշի... Նա գտնվում եր տասնուհինգ կիլոմետրի վրա, Բուզրի գյուղում, բայց գիշերվա քեմ հեռացել է այնտեղից,— կամաց բացատրում է Ջերկեսովը:— Ընկերներ, մի անգամ էլ հիշեք վոր այդ ռազմերթը մեր քննութուն է՝ հարվածային դասակ դառնալու համար:

— Ի՛նչ կա վոր, ընկեր հրամանատար, մենք էլ այդ բանը գիտենք, կաշխատենք, իհարկե կաշխատենք,— հուզված և իրար ընդմիջելով շշնջում են գնդացրորդները:

— Գիտեմ, վոր կաշխատենք, բայց պետք է և վո՛չ միայն աշխատել անելու, այլ իսկապես անել,— շշնջում է Ջերկեսովը:

— Ա՛յ, թե ի՛նչ, ընկեր հրամանատար,—վճռականապես թափահարում է ձեռքերը Շույլգան, նույնիսկ բաց է թողնում մատների մեջ հուպ տված ձգափոկը,— այդպես խոսում ենք, բայց փամփուշտակիրներից մի քանիսն աշխատում են խուսափել գնդացրից: Իսկ դու քաշում ես, քաշում այնքան, վոր չապիկը կպչում է մեջքիդ: Դա լավ բան չի:

Պարզ է, վոր լավ բան չի, ընկեր Շույլգա:

Դասակի հրամոդը մի անգամ ևս հիշեցնում է ջոկերի հրամանատարներին, վորպեսզի գնդացիրների մարդիկ համաչափորեն փոխարինեն իրար: Ապա ձեռներն ամուր սեղմելով ձեռնափայտի վրա, Ջերկեսովը նետվում է առաջ, դեպի դասակի գլուխը և համաչափորեն օրորվելով, մթության մեջ գնում է առաջին դասակի յետևից: Ջոկերն իծաշա-

րուկ, առանց որևէ աղմուկի, ձգվում են, վերցնում են գնդացիրների ձգափոկերը և դահուկներով կտրելով փխրուն ձյունը, առաջ են շարժվում հրամանատարի յետևից:

★

Առաջին դասակը գնում է զուգաշար զորասյունով: Դա ամենից ավելի հարմար շարվածքն է դահուկային մարշի համար: Ամենալավ դահուկավորները գնում են առջևից, բացելով դահուկածիր. դահուկածիրով զգալիորեն ավելի հեշտությամբ սահում են դահուկները, և այդպես գնալը հեշտ է թվում, մարդ չի հոգնում:

Գերեզմանատնից սկսած՝ առաջավոր դետքի գնաց Ակինշինի ջոկը:

— Ինչպե՞ս եք առաջ շարժվելու— հարցրեց ջոկի հրամանատարին Կոլեսովը: Նա հենց զորանոցից սկսած՝ գնաց յերթի ուղեկալի հետ:

— Կողմնացույցով, ուղիղ դեպի հյուսիս, ընկեր հրամանատար:

Ակինշինը ցույց տվեց ձեռքի մեջ սղմած կողմնացույցը. մագնիսի սլաքը գորշ մթության մեջ թույլ շողում է ֆոսֆորե փայլով և ճոճվում է ամրացրած սռնակի վրա:

— Ուղիղ դեպի հյուսիս,— կրկնեց Կոլեսովը,— և ավելի սերտ կապ պահեք դասակի հրամանատարի հետ:

Խնդիրը կրկնելուց հետո Ակինշինն առաջ շարժվեց: Նա ինքը ֆիզիկապես առանձնապես ուժեղ չեր, բայց դահուկային մարշերի ժամանակ, յեթե նրա ջոկին տրվում եր հատուկ խնդիր, նա միշտ գնում եր առաջից, բացելով դահուկածիր:

— Մենք լավ դահուկներ ունենք,— նայելով

հրամանատարի վրա, ասաց Զուբարյովը,— յե՛ս ել վարպետ եմ այդ բանում...

— Ցես կխորհրդակցեմ ձեզ հետ, յեթե հարկավոր լինի,— չոր ասաց Ակինշինը:— Ընկեր Նիկոլայեվ, առաջ անցեք, դուք կբացեք աջ դահուկածիրը: Կովալը դիտող է:

Ջոկն արագ զատվեց դասակից, քիչ անց՝ նա այլևս չեր յերևում, սակայն յեթե մարդ ուշադիր ականջ է դնում, դեռ լսվում է ինչ-որ խաղաղ ու հանգստացուցիչ խշշոց, որ լսվում եր հետևից՝ դասակից:

Ժամանակ առ ժամանակ Ակինշինը դանդաղեցնում եր քայլը, ստուգելով կողմնացույցը, իսկ Նիկոլայեվը մի քանի քայլ առաջ եր անցնում և այդ դեպքում՝ նրանց հետ հավասարվելու համար՝ ստիպված եյին լրացուցիչ ջանքեր թափել: Շուտով նկատելի դարձավ անտառի սև զանգվածը: Նա մեկ թվում է չափազանց մերկ, ասես՝ մի քայլի վրա, մեկ ել հեռանում ու աղոտանում եր, ձուլվելով սառած ձյունի հետ:

— Դա ի՞նչ անտառ պիտի լինի,— գուշակում եր Ակինշինը:— Ցերևլի, կամ Կարմիր Ջրակոտակն է, կամ Միխայլովսկոյեն:

— Ձախ կողմում անտառ է, ընկեր հրամանատար,— լսվեց հետևից գնացող Կովալի խուլ շշուկը:

— Տեսնում եմ, յես ինքս ել տեսնում եմ, յեթե նկատեք մի բան, զեկուցեք իսկույն,— հրամայեց հրամատարը, առանց հետ դառնալու:

— Պառկի՛ր,—ձեռքով արավ Ակնիշինը:—Ջոկը պառկեց:— Զուբարյով ու Գրոմով դետք. արագ մոտեցեք անտառի ծայրին, ականջ դրեք և յետ դարձեք: Կովալ, գնացեք դասակի հրամատարի մոտ, զեկուցեք, որ հասանք անտառին, մեզ

վրա մի գնդակ են արձակել, պարզում եմ, թե բանն ի՛նչ է և առաջ եմ շարժվում: Կրկնեցեք:

Յերկու մարդ, յերբեմն յետ նայելով, գնացին դեպի անտառ: Իսկ մեկն, առանց հետ նայելու, հաճախ դրմփացնելով դահուկները, անհայտացավ այդտեղ, վորտեղ վոչինչ չեր յերեվում, բայց վորտեղ կար մի դասակ, վորտեղ գտնվում եր վաշտի հրամատար Կոլեսովը:

— Զուբարյով, յեթե անկեղծ խոսելու լինենք, ապա, դու չե՞ս վախենում,— փսփսաց Գրոմովը, յերբ նրանք զգույշ, աշխատելով աղմուկ չբարձրացնել, մոտեցան անտառին:

— Հրացանն ուսիցդ հանիր, հրացանը... Լցրո՛ւ,— չարագուշակ շշնջաց Զուբարյովը, իսկ ինքն արդեն շտապ և դողդոջուն մատներով վարժական փամփուշտներով լցրած պահունակը խրում եր փողատուփի մեջ:

— Տե՛ս, չկրակես, յես կասեմ, յեթե հարկավոր լինի:

Գրոմովի ձեռները դողում եյին, իսկ փակաղակը, կարծես սառած լիներ, յերկար ժամանակ չեր ուզում բացվել: Նրանք մի րոպե պառկեցին ձյունի մեջ, ասես՝ քամու հավաքած ձնեկույտ լինեյին:

— Յես մի քիչ առաջ խաղամ, իսկ դու պառկիր այստեղ և յեթե մի բան լինի, կրակիր,— շշնջաց Զուբարյովը: Նա մի փոքր բարձրացավ և առանց դահուկներից իջնելու, սահեց ուղղակի անտառ: Լարվածությունից Գրոմովի աչքերը մթնեցին, նա այլևս չեր նկատում ընկերոջ սիլուետը:

«Նա մենակ ի՛նչ կարող է անել այնտեղ»,— պտտվում եր նրա գլխում համառ միտքը: Նա գողունի նույնպես առաջ սողաց, տեղ տեղ նկատելով Զուբարյովի հետքերը:

Վորոտի նման խլացուցիչ մի ձիգ պայթեց Գրոմովի ականջի տակ, ապա շատ մոտիկ թրխկաց դահուկի փայտը, և Զուբարյովը թշշաց·

— Ինձ մո՛տ, Գրոմով:

Գրոմովը դահուկների մեջ խճճվելով, վազեց դեպի ձայնն ու պայքարի աղմուկը և տեսավ, վոր յերկու մարդ թավալ գլոր են տալիս ձյունի մեջ:

— Իրավունք չունես դիմադրելու, ընկեր, հո տեսնո՞ւմ ես, վոր մենք յերկու հոգի յենք,— խեղդվելով շշնջում եր Զուբարյովը, աշխատելով հակառակորդից խլել նրա հրացանը: Նա փորձեց բղավել:

—Զուր մի բղավիր, թե չե՝ ձյունով բերանդ կխցկենք,— հանդիսավոր և ուրախ շշնջում եր Գրոմովը: Նրա դողն անցավ, և նա արդեն տեղավորում եր իր աջ ուսին խլած հրացանը:

— Հրացանը տուր նրան, թող ինքը տանի, միայն փակաղակը հանիր ու դիր գրպանդ,— միևնույն է, առանց փակաղակի չի փախչի:

Յերբ Ակինշինը յերկրորդ հրազարկից հետո յերկու կարմիր բանակայինների հետ «վարգելով» մոտենում եր անտառին, այնտեղից շարժվում եյին յերեք սիլուետ:

— Ա՛յ, բռնեցինք մեկին,— կարճ զեկուցեց հրամանատարին Զուբարյովը:

Կովալը հեվալով, շտապ բերեց հակիրճ մի տոմս· «Շարունակել շարժումն առանց ուշանալու, ուղեկալը գալիս է ձեր յետևից»: Գերիին մի կարմիր բանակայինի ուղեկցությամբ ուղարկեցին ուղեկալը: Հարցուփորձից Ակինշինը գլխի յեր ընկնում, վոր հակառակորդը հետախույզներ եր ուղարկել՝ կասեցնելու մեր շարժումը: Հենց դրա

մասին էր ասում նաև դասակի հրամանատարի հրամանը՝ «շարունակել շարժումը»:

★

Առջևի այն հարվածայինների դահուկները,— վորոնք մարշի եյին գնացել՝ սոցպայմանագրերի խնդիրներն իրագործելու համար,— խրվում եյին, ինչպես շոգենավերը սպիտակ փրփուրի մեջ, և կորդակների տակից աներեսաբար դուրս եյին հոսում քրտինքի փոքրիկ կաթիլները:

Յերբ քամուց ձյունը դիզված դաշտում բացվեց հունվարյան ցուրտ որը, կարելի յեր սավառնակի թռիչքի բարձրությունից տեսնել, թե ինչպե՛ս ճարպկությամբ ու անկարգորեն ցրվեց դաշտերում այն, ինչ խտացած իր զանգվածով կոչվում է հրաձիգ գունդ: Տաս կիլոմետր հեռավորությամբ առաջ գնացին մանր ու մանրագույն նրա շոշափուկները՝ դետքերը, իսկ նրանց հետևից՝ ռազմերթի ուղեկալները, ապա պահապան գումարտակը և հետևից բազմամարդ ու զանազանակերպ մասսան՝ գլխավոր ուժերը: Իսկ ամենից հետո գումակն ու շարժական խոհանոցները, կայծեր և ծուխ նետելով դեպի պաղ յերկինքը: Ապա, յերբ հրամանատարի ժամացույցերը ցույց եյին տալիս հրամանով նախատեսված ժամանակը, այդ սրամիտ ու խոհականորեն բարդ սիստեմը կանգ էր առնում, սղմվում էր, կարծես վիթխարի մի մագնիս ձգում էր նրան, վորպեսզի հանգստանալուց հետո նորից կռվով և մանյովրով առաջ գնա դեպի ամառային հեռավոր ճամբարը՝ գիշերելու:

★

Առավոտյան ժամը տասին Կոլեսովը զեկուցագիր ստացավ հետախուզությունից, թե դեպի Բուգրի գյուղը, վոր պետք է վաշտը գրավեր ժամը տասներկուսի մոտ, ինչպես հրամայված էր, շարժ-

վում է մի վաշտի չափ զորասյուն: Թե հատկապես վորտե՛ղ է շարժվում, չէր ասված, բայց պարզ էր մի բան՝ պետք էր շտապել: Նա անհրաժեշտ կարգադրություններն արավ ուղեկալի պետին՝ առաջին դասակի հրամանատարին, և քայլելիս դահուկը դահուկի վրայից ձգելով, դարձավ ու արագ գնաց դեպի վաշտը, յերկու կապավորի՝ Ցուդինի ու Կովալի հետ:

Յերկրորդ և յերրորդ դասակները գնում եյին պատրաստի դահուկներով, ուստի, ավելի քիչ եյին հոգնել, բայց թվում էր, վոր վաշտերն ավելի սիրով մտածում եյին դադարքի ու կերակրի մասին, քան արագորեն առաջ գնալու անհրաժեշտության մասին: Կոլեսովը հասկացավ այդ բանը, նայելով առանձին կարմիր բանակայինների թույլ շարժումներին ու դեմքերին:

«Այո՛, հինգ ժամ է, ինչ գնում ենք, իսկ շատերը դեռ չեն ձգվել, ինչպես պետքն է, ուստի, զարմանալի չէ, վոր հոգնել են»,— մտածում է ինքն իրեն հրամանատարը: Նա հրամայեց վաշտին՝ զորասյուն կազմել, քառաշար դասակներով, և մի բոպեյից խորությամբ ձգված ութ շարքեր, առանց իջնելու դահուկներից, նայում եյին հրամանատարի աչքերին, ըստ սովորականին սպասելով, մինչև նա կխոսի:

— Կարելի յե ծխել,— սկսեց Կոլեսովը, ամուր հենվելով ձեռնափայտին, և տեսավ, վոր ամենքն էլ հետևեցին նրա օրինակին:—«Ուրեմն հոգնել են,»—մի անգամ էլ ասաց նա իր մտքում:

— Մեզ առաջարկված է ժամը տասներկուսի մոտ գրավել Բուգրի գյուղը,— նա մի ձեռնափայտը ցցեց այն ուղղությամբ, վորտեղ կապտին տալով առավոտյան արևի մեջ, յերևվում եյին ծառերն, խաղաթղթերից տնակներ հիշեցնող, փոք-

րիկ տներ։— Այդ խնդիրն իր ուժի մեջ մնում է նաև այժմ, այն տարբերությամբ միայն, որ խնդիրը պետք է վճռել ոչ թե ժամը տասներկուսին, այլ տասնումեկին։ Մինչև այնտեղ,—նա նորից ցցեց ձեռնափայտը,— ութ կիլոմետր է։ Այդ ութ կիլոմետրը պետք է անցնել մի ժամում։

Մեկը հետևի շարքերում խոր հառաչեց, մյուսները, նույնպես հետևի շարքերից, բարձրացան վոտի մատների ծայրին և հենվեցին ձեռնափայտերին, վորպեսզի ավելի լավ տեսնեն Բուդրի գյուղը։

— Այսպես, ընկերներ, ի՞նչ եք կարծում, կանցնե՞նք արդյոք։

— Լավ կլիներ, յեթե մի բան ուտեյինք, ընկեր հրամանատար, համարյա ամբողջ վառելիքը պրծել է,— խոսեց Ջլապինդ ու կարմրաթուշ մի կարմիր բանակային առաջին շարքում, առանց նայելու հրամանատարի վրա։

«Ուղիղ չի նայում աչքերիս, ուրեմն միտքը ծուռն է.— հիշեց Կոլեսովն իր հին նշանը։

— Նրա ամբողջ վառելիքը պրծել է, վորովհետև նա շուտ-շուտ է «դուրս գնում»,— ժպտալով ասաց Ջլապնդի հարևանը.—ամեն դադարքի ժամանակ «դուրս է գնում»։ Ընկեր, եղպես չի կարելի ծախսել վառելիքը, ո՞վ է «թադարիք» տեսնելու քեզ համար։

Կարմիր բանակայինները ծիծաղում են։

— Մի անգամ «դուրս գնա», և հերիք է,— շարունակում է նա,— ուրիշ կերպ, իհարկե, «ամբողջ վառելիքը կպրծնի»։

— Բանն այդ չէ, ընկերներ,— հանգիստ ծածկում է նրա խոսքերը Կոլեսովը։— Ավելի լավ է, այդ անեկդոտը պատմեցեք դադարքի ժամանակ,— այժմ դրա տեղը չէ։ Կարմիր բանակում չեն տար-

կում՝ առաջ գնա՞լ, թե՞ չգնալ, այլ հրամայում են և գիտակցաբար կատարում են,— մի փոքր փոխված ու հանկարծ կոպտացած ձայնով նորից խոսեց հրամանատարը։—Բայց Կարմիր բանակում միշտ ասում են կարմիր բանակայինին, թե նրանից ի՛նչ է պահանջվում և ինչի՛ համար է պահանջվում, յեթե նույնիսկ կարիք լինի գլուխը մահվան տալու։ Յեվ դրանում է մեր ուժը։

— Ճիշտ է, քանի վոր պետք է ժամը տասնումեկին գրավել, ուրեմն՝ կգրավենք,— մեկեն խոսեցին չորս կողմում, և ձայները փոխվեցին ընդհանուր խոսակցության։

Կոլեսովն շտապ վառեց ծխախոտը և առջևում կանգնած մի խումբ կարմիր բանակայիններին սկսեց պատմել գիշերս անցկացրած մարտական տագնապի մասին։ Նրա պատմվածքը հաճախ ընդհատվում եր ուրախ ծիծաղի համերաշխ պոռթկումով, և ճիշտ այնպես, ինչպես մի շաբաթ առաջ վարժությունների հրապարակում, այստեղ՝ դաշտի միջին դանդաղ բարձրանում ու խաղաղ օդի մեջ հալվում եր մախորկայի ծուխը։

★

Յուդինն արագացնելով քայլերը, շտապում եր հրամանատարի հրամանը բոլոր առաջ հասցնել ռազմերթի ուղեկալին։ Կարճ ժամանակում նա սովորեց շատ լավ քայլել դահուկներով, այդ պատճառով, առանձնապես կարևոր մոմենտներին Կոլեսովը նրան վերցնում եր իր հետ, վորպես հանձնակատար—կապավոր։ Յուդինը գոհ եր այսօրվա յերթից։ Ռազմերթի ուղեկալը լավ եր գործում և արդեն արժանացել եր գումհրամատարի գովասանքին. նա նշել եր, վոր կարմիր բանակայինները վարժվել են գործին ու գործում են արագ։ Գըն-

դացրային դասակը պետք է ամառային ճամբարում իրեն հայտարարեր հարվածային:

«Այնտեղ լավ տղերք կան, միաբան են, Զերկեսովը կարողանում է, ինչպես պետքն է՝ տանել աշխատանքները: Ամեն ինչ կախված է կոմյերիտներից»,— բարկացավ նա հանկարծ ինքն իրեն. կուսակցականները փաշտում հինգ հոգի յեն, իսկ կոմյերիտները... քանի՞ հոգի նրանք այժմ, վերջին ընդունելության հետ միասին... յերեսուներկու, թե յերեսուներեք հոգի,— բավական աղդու թիվ, իսկ առանձին ակտիվություն չի նկատվում: Յեվ հենց յերեկ պատասխանատու քարտուղարը հանդիմանում եր պատկազմին այն բանի համար, վոր կոմյերիտմիության դեմքը փաշտում բավարար կերպով չի դրսևորված:

«Շատ լավ աշխատում են Զերկեսովը, Ակինշինը, Ֆադեյեվը, Գորելովը, նաև Զուբարյովը, իսկ մնացածնե՞րը: Շույլգային ընդունեցնի, յերեվլի մի բանով ցույց կտա իրեն, կարծես լավ տղա յե: Իսկ ի՞նչ անել Իվանովի հետ:— Կանչել և մի անգամ էլ հանդիմանել»,— վճռեց նա ու նորից բարկացավ, արդեն մոտենալով մեծ փոսի մեջ պառկած առաջին և գնդացրային դասակներին:

Ցուդինը հանձնեց հրամանը: Կարդալով այն, դասակի հրամանատարը հրամայեց արագ շարժվել: Այդ փոսից Բուգրի գյուղը թվում եր շատ ավելի մոտիկ, թեև նույնպես կապտին եր տալիս անորոշ, ծածկված լողուն մառախուղով:

Վաշտը մոտենում եր Բուգրիին յերկու շարանով. առաջին շարանում գնդացրային ու առաջին դասակները, յերկրորդում՝ մնացածները: Դասակները գնում եյին ուղիղ իրար հետևից: Զերկեսովը պարզ տեսնում եր, թե ինչպես աջից և բավական յետևից ճնշում—զորում եր յերրորդ դասա-

կը: Դասակի հրամկոմը նայեց հեռադիտակով ու քեֆը յեկավ, տեսնելով թե ինչպես առաջ են մղվում յերրորդ դասակի դահուկավոր—ղիրխանցիները, սրբել տանելով ձյունը:

— Տանում են, է՛խ, այն էլ վո՛նց են տանում հարվածայինները,— թեթև նախանձով մրմնջաց նա և նույնիսկ կանգ առավ, վոր լավ տեսնի նրանց: Յերկրորդ դասակը բավական յետ մնաց և ավելի ու ավելի յեր ձգվում խորությամբ, բաժանվելով փոքրիկ խմբակների: Զորս կողմը, մարդ ուր վոր նայում եր, սպիտակին եր տալիս ձյունե հարթությունը, տեղ-տեղ կտրատվելով ձորերով ու մատղաշ անտառներով:

Զերկեսովը նայեց ժամացույցը. տասից յերեսուն րոպե անց:

«Արդյոք, կհասնե՞նք, թե՞ հակառակորդը մեզանից շուտ կգրավի գյուղը,— միալար հնչում եր նրա ուղեղում այդ հարցը:— Իսկ յեթե նրանցից ավելի շուտ չհասնենք, կռվով կվերցնենք, Բուգրի գյուղը մերը կլինի, ինչ էլ վոր լինի»:

— Հը՞, վո՞նց է, ընկեր Շույլգա. յես ձեզ չեյի՞ ասում, վոր շոգ կլինի, այդպես էլ յեղավ:

— Շոգ է, ընկեր հրամատար, շոգ է,— սիրով համաձայնվեց նա, խալաթի թևքով սրբելով յերեսի քրտինքը:

«Մաքսիմները» Մակույկների պես թաղվում եյին սորսորների ու փոսերի մեջ, ծածկելով «համարների» ուսերը ձգափոկերով: Կարծես թե նրանք սովորականից կրկնակի ծանր եյին: Առանձնապես հասառումվատ եր յերկրորդ ջոկի բանը. այնտեղ համարները մաշվեցին, ձեռաձողերից մեկը ճաքեց յուսարացի դեմ և արգելակում եր, կլանելով ձյունը:

— Տե՛ս, վո՞նց է դեմ առնում սատկածը,— չարանում եյին կարմիր բանակայինները, յերբ կա-

րեք էր լինում «մաքսիմը» բարձրացնել դեք բլուրի կամ ձյունակույտի վրա։

«Հիմա յես կոգնեմ նրանց, հոգնել են»,— վճռեց Զերկեսովը, բայց դեռ էլի շարունակում էր դիտել հրաձիգ դասակների շարժումը։ Հեռվում՝ աջից, մի քանի կիլոմետրի վրա նկատվեց սև շերտը. նա շարժվում էր հինգերորդ վաշտին զուգահեռ, հարավ-արևելքից։ Նորից օգնության հասավ հեռադիտակը, բայց բացի սպիտակ ու բազմաթիվ խալաթներից, չէր կարելի հասկանալ, թե ո՞վ է այնտեղ և ինչու չի շարժվում։

— Յերևի, հարևան գումարտակից մեկն ու մեկն է։ Ավելի լա՛վ, ավելի շուտ կգրավենք «Բուդրին»։

Նա հավասարվեց առաջին ջոկին և լուռ վերցրեց առաջին «համարից» ձգափոկը։ Նա սկզբում դժգոհ դեմք չինեց, փորձում էր ապացուցել, որ ինքը «խելի» չի հոգնել, բայց հետո ուրախ, լի կրծքով օդ շնչեց և թեթև, առանց բեռի, քայլեց ջոկի մնացած համարների յետևից։

Բուդրին աճում էր. մշուշի ու կապտության փոխարեն արդեն յերևում էին ձյունեկուտակ ցանկապատերը և կարմրին էին տալիս կղմինդրե տանիքները։

— Գնդացրային դասակ, առա՛ջ, հակառակորդի հետախույզները գրավում են Բուդրին...

Զերկեսովը շուռ է գալիս դեպի այն կողմը, վորտեղից լսվեց ձայնը և տեսնում է, թե ինչպես վոտներով ու ձեռնափայտերով մոլեգնաբար աշխատելով, ուղիղ դեպի ինքն է գալիս անաղարտ ձյունի միջով Յունդինը։

— Վաշտի հրամանատարը հրամայեց գնդացրային դասակով գնդակոծել հարավային յելքը՝ գյուղից դուրս բերող ճանապարհը։

— Կա՛, ընկեր կապավոր,— ժպտում է ամբողջ բերանով Զերկեսովը։— Հաղորդեցեք վաշտի հրամանատարին, մի րոպեյից [illegible] կրակենք։

— Յունդինի և Զեկրեսովի մեջ մնացել էր քսան մետր տարածություն, այնտեղից նա մեկեն շըրջադարձ է կատարում դահուկներով և աշխատելով ընկնել իր հին հետքերի վրա, հետ է գնում։

— Գնդացրային դասակ, հետևիր ինձ,— ուրախ ու հնչեղ լսվում է հրամանատարի հրամանը։

Ջոկերը ճեղքելով փխրուն ձյունը, վազում են դեպի աջ։ Յերեսուն վայրկյանից հետո նրանք կանգնում են առաջին ու յերկրորդ դասակների միջև։

— Ուղիղ Բուդրի... 0–50 զանգակատնից աջ... Ճանապարհը... Հակառակորդի խմբին... 20... Հե՛րթ... 25... Կրա՛կ։

Մի քանի վայրկյան լսվում է յերկու գնդացիրների բռնատեղերի ու փականքների հնչեղ չըխչըխկոցը։ Առաջին համարները մատներով կպչում են ծոծրակալի կոթին, բարձրացնում են պահպանակը, սղմում են ձգանի կամրջակը... Լռությունը խախտում է անդադար փամփուշտներով ավտոմատիկ կրակի չոր ճրճրթոցը։ Հարձակումը դառնում է ուրախալի բան։

Առաջին յերկու հերթից հետո գնդացրային դասակը մեկ-մեկ տեղափոխում է գնդացիրների դիրքը։ Շատ դժվար է քայլելը, պետք է վազել, բուքսիրով քաշելով ծանր գնդացիրները։

— Ընկեր հրամանատար, Շուլյգան շատ վատ ջարդեց աջ ձեռքի մատը։ Արյուն է գնում ուժեղ կերպով։

— Հապա ինչո՞ւ նա հետ չի գնում՝ վաշտի սանհրահանգչի մոտ։

— Յես ասացի իրեն, բայց չի ուզում...

— Ասել պետք չէ, այլ հրամայել է պետք: Ինձ մա՛տ, ընկեր Շուլյգա,— բղավում է Չերկեսովը:

Նշանառուն մոտենում է, դեմքին մեղավոր ժպիտ, աջ ձեռքը դրած դրատի գրպանում:

— Ցույց տվեք, տեսնեմ, ի՞նչ է պատահել ձեզ հետ:

— Դատարկ բան, մատս մի թեթև ջարդեցի,— ասում է նա չկամությամբ և դժկամակությամբ նայում է ջոկի հրամատարին:— «Մի՞թե արժեր դրա մասին խոսել»:

— Ցույց տվեք ձեր մատը:

Մատը փաթաթված է աղտոտ թաշկինակի մեջ: Տեղ-տեղ թաշկինակը կարմրել է արյունից: Չերկեսովն ուշադրությամբ նայեց մատը և լսեց Շուլգայի բացատրությունը:

— Գնդացրի հատոցի առատամը հանկարծ դիպավ տուփին, դրանից էլ մի քիչ բաժին հասավ մատիս:

— Մի քի՛չ: Ձեր մատը բոլորովին ջարդվել է:

Մատը բոլորովին սևացել էր և ծածկվել էր մութ-կապույտ արնեբծերով:

— Ձեզ ուղղակի պետք է պատժել: Հերոսությա՛նը մոտիկ: Այդպիսի բան կարելի չէ անել կռվի պայմաններում, թեև այնտեղ էլ մարդ պետք է իրեն պահի — պահպանի: Դա, ընկեր Շուլյգա, ո՛չ թե կոմյերիտական հարվածայնություն է, այլ հիմարություն:

Այսպես խոսում ու հայհոյում էր Սաշա Չերկեսովը, որն իր մեջ ուրախանում էր, տեսնելով թե ինչպես Շուլյգան լսելով նրան, նորից փաթաթում էր թաշկինակի մեջ իր այլանդակված մատը:

«Երանի, ամենքը դրա պես լինեյին: Այդպիսիները կռվի մեջ էլ չեն դավաճանի իրենց, կդիմանան,» — ուրախացավ նորից Չերկեսովը, իսկ

կարմիր բանակային Շուլյգան վիրավոր ձեռքը խրելով գրպանը, գնում էր դահուկներով, առանց յետ նայելու, և առանց ձեռնափայտերի, այնտեղ, որտեղ յերևում էր կարմիր խաչով սպիտակ սայլակառքը:

Չերկեսովը հեռադիտակով տեսավ, որ Բուգրի գյուղի ծայրում յերևացին սև փոքրիկ կետեր: Ապա այնտեղից լսվեց անդնդակ հրազարկերի չոր ճրթճրթոց ու լռեց:

— Կա՛: Գրավեցին: Այժմ ստիպված ենք կրակով վերցնել:

Նա նորից առաջ գնաց դիտողի հետ, իսկ նրա հետևից, իրար ծածկելով, ալիք-ալիք տեղափոխվում էին ջոկերը, շարունակելով կրակը:

★

Ժամը տասից քառասունհինգ րոպե անց, առաջին դասակը գրավեց Բուգրի գյուղից յերկու հարյուր մետր հեռավորության վրա գտնվող ձորակը: Հեռվից և աջ կողմից, ձգված խորությամբ, սպիտակ խալաթների տակ հազիվ նկատելի, նշմարվում էին Չերկեսովի գնդացիրները: Դրանցից ավելի աջ ու հետևից տեղից-տեղ փոխվելով վազում էր յերրորդ դասակը, իսկ նրա հետևից յերկրորդ շարանում դանդաղ շարժվում էր յերկրորդ դասակը:

— Սվինը հագցնե՛լ,—հնչեց հրամանը:

Կարմիր բանակայինները սվինները հանում էին կաշվե պատյաններից և դժվարությամբ հագցնում էին հրացանափողի ծայրին: Հրացանները ծածկված էին ցողով. դահուկների վրայից ընկնելուց հետո վոմանց հրացանների փողաբերանի մասը լցվել էր ձյունով:

— Ջոկերի հրամանատարներ, ինձ մո՛տ,— հնչեց հրամանատարի նոր հրամանը:

Ցուդինը զրուցում էր դասակի հրամանատարի հետ. նրա և Ակինշինի հետ միասին կոմյերիտները յոթ հոգի էին, բայց Ակինշինը գնաց դասակի հրամանատարի մոտ՝ գյուղը գրոհի տալու խնդիրն ստանալու համար:

— Հոգնե՞լ եք ամենքդ էլ:— Հոգնել եք,— հարցնում և պատասխանում էր ինքն իրեն Ցուդինը:— Ո՞վ պետք է ավելի տոկուն, դիմացկուն լինի, անկուսակցակա՞նը, թե՞ կոմյերիտը:— Կոմյերիտը: Իսկ ի՞նչ արավ հենց այս րոպեիս ընկեր Մայնկոն:

— Չկատարեց ջոկի հրամանատարի հրամանը,— չարությամբ քմծիծաղեց Զուբարյովը: Գերիի հետ գիշերային դեպքից հետո նա դեռ մի թեթև դժգոհ էր Ակինշինից և աշխատում էր նրան վերաբերվել չոր ու պաշտոնական տոնով:

— Ի՞նչպես եղավ այդ բանը, ընկեր Մայնկո:

Մայնկոն չկամությամբ նայեց ընկերներին:

— Հոգնել էի յես, ա՛յ թե ինչ, իսկ նա հրամայում է տեղից-տեղ վազելը կատարել խուկանի պես: Յես հո յերկաթից չե՞մ, վոր, լեզուս դուրս գցած վազեմ անվերջ:

— Իսկ նա իր բավականության համա՞ր էր քեզ հրամայում, թե՞ պետք էր այդ:

— Յես ի՞նչ գիտեմ, գուցե իր բավականության համար:— Նա աշխատում էր անտարբեր տեսք ընդունել և չէր նայում ընկերներին:

— Իսկ թե ի՞նչ կասեն մնացածները, անկուսակցականները, քեզ համար միևնո՞ւյն է,—

հետաքրքրվեց Գրոմովը և աշխատում էր բռնել Մայնկոյի հայացքը: Մնացածները կաճյակների ծայրերով խզբզում էին ձյունը և լուռ էին:

— Դժվար է ինձ համար, ա՛յ թե ինչ,— խոսեց նա և, աչքերը սաստիկ կկոցելով, նայեց վերջապես Գրոմովին:— Կոմյերիտմիության մեջ էլ դժվար է—ամբողջ ժամանակ պահանջվում է հարվածայնություն ու օրինակելիություն:

— Ասենք, թե այդպես է, հետո ի՞նչ. դրան վորպես պատասխան դու չես կատարում հրամանատարի հրամանը, հա՞: Այդպես չե՞: Այսպես ահա, ընկերներ,— վերջացրեց նա ուրախ ու ինքնվստահ, տեսնելով, թե ինչպես դասակի հրամանատարը ձեռքով անում է վերջին թափահարումները, ջոկերի հրամանատարները վազելով գնում են դեպի իրենց ջոկերը.— Մայնկոյի գործը հենց այսոր յերեկոյան մենք կքննենք ամարային ճամբարում, իսկ այժմ տես—գնում ենք գրոհի— կոմյերիտը մինչև իր վերջին քայլը պետք է լինի առջևում:

Նրանք ամենքը վազ տվին դեպի իրենց ջոկեր, վորոնելով-գտնելով իրենց դահուկները: Ջոկերի հրամատարները բացատրեցին ստացված խնդիրը:

Գրոհն սկսվեց, յերբ հետևից վաշտի հրամանատար Կոլեսովը բաց թողեց կարմիր հրթիռը: Դա պայմանական նշան էր ամբողջ վաշտի համար: Գնդացիրները գրավեցին վերջին կրակի բնագիծը և մերթ-մերթ արձակում էին կարճ հերթեր: Գրոհն սկսեց առաջին դասակը:

— Առա՛ջ, գրոհի՛ լսվեցին ու խլացրին սարսափելի և հրամայական բառերը, և դասակը, վորպես ձիգ տված ու բաց թողած զսպանակ, առաջ սլացավ դահուկներով:

Ցուդինը, Զուբարյովը և Ակինշինը վազում էին դասակի կենտրոնում: Դասակը մի տեսակ հալ-

վեց, դարձավ աննկատելի: Դա այսպես է թվում այն պատճառով, վոր մարդիկ չէին նկատում իրար. հետևում էին միայն իրենց վոտներին ու դահուկներին և ավելի շուտ-շուտ նայում էին այնտեղ, գյուղին, վորը պետք էր վերցնել:

— Ե՛յ, առա՛ջ, հարվածայիններ, առա՛ջ,— ասես վոչ իր ձայնով մռնչում էր Ակինչինը: Նա առաջ էր գնում այնպես, կարծես հարբած լիներ, մի փոքր ճոճվելով, և թվում էր, թե հիմա վայր կգլորվի: Յուդինին խանգարում էր գնալ և ծեծկում էր նրա փոքր հրացանը, վոր քաշ էր արած վզից: Բայց հրացանն ամեն րոպե հարկավոր է սվինամարտի համար: Զուբարյովը գնում էր ջոկի հրամանատարի կողքից քայլ անգամ յետ չմնալով նրանցից:

«Կարող է հանկարծ ընկնել»—մտածում էր նա:

Այդ յերեքն առաջ անցան, դառնալով գրոհավող դասակի մի տեսակ առաջավոր, տարորինակ դետքը: Նրանք գնում էին, մոռանալով, վոր գրոհի էին գնում, գնում էին վորպես մրցությունների ժամանակ, իսկ նրանց ֆինիշն էր Բուգրի գյուղը:

Առջևում նկատվեց ձյունեկույտերով պատած ցանկապատը: Ցանկապատից այն կողմը, փոքրիկ տնակի մոտ սևին էին տալիս մի խումբ «հակառակորդներ»:

Այդ յերեքն ուղղակի արշավում էին ցանկապատի վրա, ձյունակույտի, տնակի վրա: Յեվ դասակը լարելով իր վերջին ուժերը, հավասարվում էր առջևից գնացողների գծով, ձնեհյուսի նման գլորվում էր դեպի նույն կետը՝ տնակը:

Զուբարյովը հիշում էր միայն, թե ինչպես ինքը բղավեց «ուռա», թե ինչպես այդ «ուռան» աճեց յետևից յեկող տասնյակ մարդկանց ձայնակցությամբ. Նա հարևանցի կերպով տեսավ

հրամանատար Ակինչինին և Յուդինին, վորոնք գնում էին աջից. մեկը հրամայեց՝ «հրացանները հանել, վերցնել ձեռքը»: Յեվ այն ժամանակ, յերբ ինքը նույնպես ուզում էր հանել վզից հրացանը, մի բան տնակի կողմից թռխկաց, դիպավ դեմքին, կծու ադի պես մտավ կոկորդը, և ինքը դահուկների հետ միասին, ձյունի կույտերով պատած ցանկապատի բարձրությունից գլորվեց ինչ վոր անդունդ..

«Բուգրի գյուղը գրավեցին՝ ժամը տասնումեկին առաջին դասակը և տասնումեկից տաս րոպե անց՝ ամբողջ վաշտը շարունակում եմ հետապնդել հակառակորդին ձեր ցույց տված ուղղությամբ».— գրում էր Կոլեսովը դաշտային գրքույկի թերթի վրա գումհրամանատար Պանովին: Պարզորոշ գրեց իր ազգանունը, մտածեց և ներքևում, վորպես հետ գրություն, ավելացրեց.—«Ինձ վստահված վաշտում գնդացիրը վտանգավոր կերպով ջարդել է կարմիր բանակային Տույլգայի մատը. գյուղի վրա գրոհելիս՝ կլիպ մոտից արձակված ձիգը (անգնդակ) սաստիկ այրել է կարմիր բանակային Զուբարյովի դեմքն ու աչքերը: Խնդրում եմ՝ շտապով բժիշկ ուղարկեք Բուգրի, հարկավոր է շտապ օգնություն»:

Իսկ զեկուցագիրը գումհրամանատարին տարավ նորից Յուդինը, կոմյերիտմիության պատ-կազմակերպիչը:

Կռվով վերցրած է Բուգրի գյուղը: Իսկ ձյունապատ դաշտերի վրայով գնում-տարածվում է ավարտի ծանոթ ազդանշանը:

Յերկրորդ գումարտակը հինգերորդ վաշտի բացած դահուկածիրով ձգվում է դեպի գյուղ: Ուղղակի տներին խառնված անտառի վրա փոթորապտույտ սյունի նման կանգնած է շարժական

խոհանոցների ուրախ ծուխը և նրա հետ միասին նաև տաք կերակրի հոտը:

Խոհանոցների մոտ շարվել են յերկու պոչեր: Խոհանոցներից մեկի մոտ կանգնած է խոհարար Սեդյայեվը, վորը, ինչպես յերեվում է, յերբեք ցուրտ չի զգում: Նա յերբեք չի նայում այն մարդուն, վորին կերակուր է տալիս, լուռ է և յերբ միայն աղմուկը դառնում է անտանելի, վոր հաճախ է պատահում, Սիդյայեվն աչքերը հեռացնում է սուպով լի կաթսայից և հանդիստ ու ներողաբար ասում է.

—Այնպես են վրա պրծնում, ասես՝ յերեք օր է, վոր վոչինչ չեն կերել... Կհերիքի, մի՛ աղմկի՛ր կհերիքի, ամենքի համար է պատրաստված, ամենքիդ էլ կհասնի: . .

Յեվ նորից շերեփը թաղվում է կաթսայի մեջ՝ մինչև հատակը փորձված ջրասույզի պես փնտրում է ինչ վոր բան և լույս աշխարհ է գալիս նոր ավարով:

— Առանց ավագի չեմ տա, զուր մի՛ կանգնեք,— ասում է Սիդյայեվը մի խումբ կարմիր բանակայինների, վորոնք մոտեցել են շարքից անկախ.—յես ի՛նչ գիտեմ թե վո՛ր վաշտից եք:

— Ախր մենք պիտի գնանք Լեվանովսկի գյուղխորհուրդը,—հայտարարում է նրանցից մեկը:— Մենք նրանց շեֆն ենք՝ վեցերորդ վաշտը, պետք է ժողովի մասին պայմանավորվել...

— Ի՞նչ ես ագիտացիա կարդում գլխիս, ընկեր,— բարկանում է խոհարարը,— մի՛ խանգարիր, թող աշխատեմ, գնա զեկուցիր ավագին, թող գա այստեղ, տղայության դովրանն անցավ:

Ավագը գալիս է ամբողջ վաշտի հետ և, հենց այստեղ, ի մեծ բավականություն Սիդյայեվի, ամոթանք է տալիս ինքնագլուխ յեկողներին:

— Ե՛յ, ընկեր խոհարար, ինչու՞ կապավորներին սուպ բաց չես թողնում:—Մենք միշտ վերջին ենք ստանում, վորովհետև մենք քչվոր ենք, իսկ վաշտերը ամբոխի պես վրա յեն ընկնում,— բղավում են գումարտակի կապավորները

— Կաց, հրեն գալիս է որապահը,—հանգստացուցիչ նկատում է կապի ջոկի հրամանատարը:

Որապահը գալիս է, և խոհանոցների մոտ շուտով տիրում է լիովին կարգուկանոն:

Տաս-տասնուհինգ րոպեյից պոչերն անհայտանում են: Սիդյայեվը թեւքով սրբում է կաթիլները յերեսից, մտազբաղ նայում է դատարկված խոհանոցին: Վերջինս տանում է յերեսուն դույլ, իսկ այժմ այնտեղ մնացել է յերկու-յերեք դույլ: Դա ավելցուկն է:

Յեթե որագնացքը յերկար է յեղել, զբաղմունքները դժվար ու հոգնեցուցիչ են, ապա Սիդյայեվի մոտ են գալիս լրացուցիչ բաժին ստանալու, մանավանդ դեռընտիրները:

Հինգերորդ վաշտում ճաշի ժամանակ, մեկ-մեկ և խումբ-խումբ խոսում էյին այսօրվա զբաղմունքների մասին և գյուղի վրա գրոհելիս Զուբարյովի հետ պատահած դեպքի մասին: Ակինշինը կենտրոնացած և համառորեն լուռ էր, ճաշելով յերկուսով՝ կարմիր բանակային Նիկոլաևի հետ, վորին պատրաստում էր կոմյերիտմիության համար: Առաջ նա միշտ ճաշը վերցնում էր Զուբարյովի հետ. մի կաթսայիկով՝ սուպ յերկուսի համար և մյուսով՝ յերկրորդ տեսակը՝ նույնպես յերկուսի համար: Դա ընդհանուր կարգ էր, և այդպես «զույգերից» նույնիսկ կողմնակի մարդը միշտ կարող էր իմանալ, թե ո՛վ ում հետ ընկերություն է անում վաշտում:

Նիկոլայեվը փորձեց հրամանատարին խոսել տալ:

— Հիմա յե՞րբ ենք լինելու ճամբարում, ընկեր հրամանատար: Պետք է ասեմ, վոր մարդիկ հոգնել են:

Ակինչինը, կարծես ստուգելով կարմիր բանակայինի վերջին խոսքերը, աչքը ձգեց վաշտի մի փոքրիկ մասին, վորտեղ չտապ տեղավորվել եր իր վաշտը և ճաշում եր:

— Կարծում եմ ժամը յոթին մոտ կհասնենք,— վո՛չ սիրով պատասխանեց նա Նիկոլայեվի հարցին:—Լավ դահուկավորը այդ տարածությունը կանցնի յերկու ժամում, վո՛չ ավելի... Մի վերցրեք,—հանկարծ խոսեց նա խռպոտ ու նոր ձեվով, տեսնելով ,վոր Նիկոլայեվն աշխատում է լավ կտորները թողնել նրան:— Չեմ սիրում, յերբ մեկն ու մեկը անում է այն, ինչը հարկավոր չէ:

Նիկոլայեվն ունի առողջ, պեպենապատ ու կարմիր յերես, բայց նա կարողանում է ե՛լ ավելի կարմրել և կաթսայիկից վճռականապես հանում է մի կտոր տաք միս:

— Իսկ թե ի՛նչ է անելու Ջուբարյովը, գալու յե մեր հետեվի՞ց,— ասում է նա քաշվելով և աշխատում է ժպտալ հրամանատարին:

— Նրան արդեն տարան, այստեղից յերկաթուղին մոտիկ է, կպառկի գոսպիտալում... տարօրինա՛կ մարդիկ...— պատասխանում է նա, հայտնի չէ, թե ո՛ւմ մասին է մտածում:

Նիկոլայեվը կարծում է, վոր «տարօրինակ մարդիկ» խոսքերը վերաբերում են նրանց, ովքեր այսօր զբաղմունքների ժամանակ ներկայացնում եյին հակառակորդին, և ավելացնում է.

— Պահանոց պետք է դնել այդպիսի հրաձգության համար:

— Ա՛ռ ո՞ւմ պետք է պահանոց դնել,—չուռ է գալիս Ակինչինը:

— Նրան, ում խելքին փչեց՝ կից մոտիկից կրակել: Մարդը յերեք քայլի վրա յե, և կրակում են նրա վրա: Հո պատերազմ չե՞:

— Յեթե պետք է մեկին պատժել, ապա՝ նախ պետք է պատժել ջոկի հրամանատարին, և վո՛չ թե կարմիր բանակայինին: Սովորեցրու մարտիկին, վոր չի կարելի կից մոտիկից կրակել: Մախլա՛ս, մոտ բերեք չյավը, հետո կխոսենք:

Նիկոլայեվն ճաշի մնացորդն զգուշությամբ թափեց ձյունի մեջ և տաք կաթսայիկից հալված հին խոռոչում դրեց չյավը: Վերջինիս յերեսն արդեն սառել է, իսկ մեջտեղում, ինչպես յերկրի կեդեվի տակ, մնացել է դյուրալի տաքացնող ջերմություն:

— Դուք վո՞ր չյավն եք ավելի սիրում— սևահատ ձավարը, թե ցորենի,— մի յերկու գդալ ուտելուց հետո հարցնում է նորից Նիկոլայեվը:— Յես ավելի սիրում եմ սևահատը:

— Իսկ ինձ համար միևնույն է, վորը պատահի, այն ել կուտեմ,— նորից անկամորեն պատասխանում է Ակինչինը:— Այդպես ավելի լավ է: Թե չէ, կսիրես, իսկ նա քթիդ կտա, և կմնաս այդպես քթով:

— Ո՞վ է այդ «նա» —ն: Չյա՞վը,— չի հասկանում Նիկոլայեվը: Հետո նա գլխի յե ընկնում, վոր չարժեր հարցնել, վոր հրամանատարի տրամադրությունը վատ է, և հարցնում է ուրիշ բանի մասին:

— Թեյ խմելո՞ւ յենք, թե վոչ: Յես կբերեմ:

— Յերկուսս ել կերթանք և կաթսայիկները կլվանանք,— վեր է կենում Ակինչինը և գնում է խոհանոցը՝ թեյի, վորտեղ արդեն ձգվել եր նոր «պոչ», վորն ուրախ զրուցում և դեպի յերկինք եր բաց թողնում մախորկայի ծուխը:

— Յես ինքս յերկուսն ել կլվանայի, և դա

խաթրի բան է, վո՛չ թե ծառայություն է,— նեղացած չչնջում է Նիկոլայեվը, վերջացնելով չլավը։— «Ինչ էլ ասելու լինի, պարզ յերևում է, վոր նա սևահատ ձավարը չի սիրում, մինչև վերջ չկերավ»,— վճռում է Նիկոլայեվը։

Գնդացրային դասակում կա մի հրաշալի գարմոնիստ՝ Սելեզնյով, դա նա յե, վոր առաջին գիշերը չկարողացավ գտնել առանձնոցը։ Նա այնպես է նվագում, վոր լսելով նրան, մարդ մոռանում է թե վորտե՛ղ է գտնվում ինքը, մոռանում, վոր շուրջը ձյունապատ դաշտ է, իսկ Բուգրի գյուղի տները մտնելն արգելված է, սառնոքսի տիֆի պատճառով, վորի մասին հայտարարվել էր արշավից առաջ։ Նա այնպես է նվագում, վոր լավ ճաշից հետո կարգին ուժ ստացած կաճյակներով վոտքերն իրենք իրենց սկսում են դոփել ու կոտրել ձյունի կեղևը, դարձնելով այն փոշի։ Յեվ այժմ, նստած ջարդված ցանկապատի վրա, նա վոտը ձգած վոտին և ձեռները լայն բացելով, նվագում է «ուկրայինական» ինչ վոր յեղանակ, ինչպես ասում է ինքը։ «Ուկրայինական» յեղանակը մեկ հնչում է դանդաղ, ասես՝ նա դժվարանում է դուրս պրծնել Սելեզնյովի մատների տակից, մեկ դառնում է այնպես արագընթաց, վոր անհասկանալի յե նույնիսկ, թե ինչպ՛ես է կարողանում Սելեզնյովը մատները այդպես արագ շարժել այդ դառը ցրտին։

— Պարի յեղանակ ածիր, Սելեզնյով,— բղավում են գնդացրորդները։ Նրանք ինչպես միշտ, այս անգամ էլ ամենքից առաջ թեյը խմել, վերջացրել են։

— Զարմանալի բան է,— յերբեմն զեկուցում էր վաշտի հրամատարին ավագ Մայովը,— նրանց համար յես ինչ հերթ էլ վոր դնում եմ, միևնույնն է, նրանք ամենքից առաջ ճաշում և թեյ են խմում։

Դա գնդացրային դասակի վաստակած փառքն էր դեռ անցյալ տարվանից։ Նա առաջինն էր տեղավորվում գիշերոթոցում, չնայած, վոր ձիեր ու գնդացիրներ ուներ, և կարողանում էր ամենքից շուտ ճաշ ստանալ։

Սելեզնյովն սկսում է նվագել պարի յեղանակ։ Նա բոլորովին անտարբեր է դառնում շրջապատի վերաբերմամբ ու հանդիստ նայում է, թե ինչպես տասնյակ զույգ վոտներ շուռ են տալիս ձյունը, և ձյունեփոշին ոդի մեջ պտտվում ու նստում է կաճյակների վրա, գրատների փեշերի վրա, նույնիսկ գարմոշկայի կաշիների վրա։

Հանգստացող դասակների միջով անցնում է սրամիտ և ուշադիր կարմիր բանակային Վոլույեվը։ Նա այս արշավին նշանակված է վաշտի գըրքատար. նրա ուսից քաշ է արած «նռնակային» դեղին պայուսակը։ Վերջինս մինչև բերանը լցված է ամեն տեսակ գրականությամբ և յերեկոյան թերթերով. այսօրվա թերթերը կստացվեն միայն գիշերոթոցում, Լեվանովոում, այնտեղ, վորտեղ գըտնվում է ամառային ճամբարը։

Գրքատարի յերեվալը գնդացրային դասակում խանդավառում է յերաժշտությունն ու պարերը։

— Հերիք,— հանդիստ ու կատեգորիկ կերպով հանկարծ վճռեց Սելեզնյովը։— Ի՞նչ յեղավ մեր դասակի հրամանատարը,—ասում է նա բարձրաձայն։ Այս արշավից սկսած Չերկեսովին սկսեցին կանչել դասակի հրամանատար—հասարակային հրամատարը դեռ չկար։— Հիմա լավ կլիներ ուսումնասիրել լրագիրը։

Սելեզնյովը յերբեք չէր ասում՝ լրագիր կարդալ, այլ միշտ ասում էր ուսումնասիրել։

Չերկեսովը հասկանում է Սելեզնյովի մանյով-

րը և Վոլուեվից վերցնում է «Կարմիր Աստղ» ու «Պրավդա»:

— Ե՛կ դու, գարմոնիստ, իսկական մայեստրո,— արտասանում է նա յերգի տոնով.— Հիմա կուսումնասիրենք թե ինչ կարևոր բան կա լուսնի տակ:

Նա մի րոպե վորոնում է առաջին յերեսում, թե ի՛նչ կա ավելի կարևոր, հետո կարդում է.

— «Ֆրանսիական գեներալ Լերոնը նորից ճանապարհորդում է մերձբալթյան պետությունները: Յերեկ նա հասել է Վարշավա: Թերթերն աշխատում են ծածկել այդ փաստի նշանակությունը: Մինչդեռ մեզ համար պարզ է, վոր Լերոնի ճանապարհորդությունը կատարվում է ֆրանսիական գլխավոր շտաբի հատուկ առաջադրությամբ՝ այդ յերկրները Խորհրդային «Միության» դեմ նախապատրաստելու ուղղությամբ»: Հիշո՞ւմ եք, ընկերներ,— լրացնում է Ջերկեսովը,— մենք մի անգամ ևս կարդացել ենք Լերոնի այդպիսի ճանապարհորդության մասին:

— Լերոնի— բորենի,— հանգաբանում է Սելեզնյովը:

— Վո՛չ թե Լերոնի, այլ Լերոն, այնպես վոր բորենին այստեղ գործ չունի, դուր տեսո դու նրան ձեռք մի տուր, կարող է նեղանալ,— ծիծաղում է Ջերկեսովը:

Լեհաստանը խորամանկ է,— վոտը վոտին գնելով ասում է հին ծառայողներից մեկը,— իմ յեղբայրը քսան թվին արշավում էր Վարշավայի վրա, տուն դարձավ առանց վոտի,— ահա՛ թե ի՛նչ պըտուղ է Լեհաստանը:

— Իսկ յեղբայրդ վո՞րտեղ էր թողել իր վոտը:

— Հոսպիտալում խոսել եյին, և խոսել եյին մաքուր: Հրետանին անցել էր նրա վոտի վրայով:

— Լեհակա՞ն հրետանին էր անցել նրա վոտի վրայով:

— Դե՛, իհարկե լեհականը. յեղբայրս բուդյոնցիների հետ էր: Մի անգամ նրանք հալածում եյին մերոնց, իսկ անդզամի մեկը խփում, սպանում է յեղբորս ձին: Յեղբայրս ընկնում է, և անիվը նրա վոտը չըր՛խկ— ջարդում է: Հայտնի բան է, վոր վոտը թեև ամուր է, բայց թնդանոթի առաջ ի՛նչ կարող է անել, պարզ է, վոր չի դիմանա, պիտի ջարդվի:

— Ա՛յ, թե ինչ կասեմ, ընկեր Կոսնիխ, դու պիտի քեզ ու յեղբորդ համար կռվես, յեթե որինակ պատերազմ լինի:

— Ցանի կլինի՞,— անվստահորեն թափահարում է Կոսնիխը ձեռքը Ֆադեյեվի ուղղությամբ. Ֆադեյեվն էր առաջարկում կռվել իր և յեղբոր համար:— Նրանց սիրտը բարակ է, կորաքի, չեն ուզենա պատերազմել:

Ջերկեսովն առանց ընդհատելու Կոսնիխին, հանում է հուշատետրը, նայում է այն և, յերբ վերջացրեց նա, առարկում է.

— Իսկ դուք գիտե՞ք, արդյոք, վոր Լեհաստանն ունի չորս հարյուր հազարանոց բանակ, ընկեր Կոսնիխ:

— Հետո ի՛նչ, չէ՞ վոր մենք ավելի ունենք,— հեղինակավոր տոնով ասում է Կոսնիխը:

— Բանը հո դա չի,— նկատում է նորից Ֆադեյեվը:— Լեհաստանը հո մենակ չի, սիրելի ընկեր: Լերոնին ուղարկողն ո՞վ է— Ֆրանսիան,— պատասխանում է ինքը: Իսկ դա նշանակում է, վոր մենք գործ ունենք վո՛չ թե Լեհաստանի, այլ Ֆրանսիայի հետ:

— Թե՛ Ֆրանսիայում, թե՛ Լեհաստանում նրանք ամենքն էլ միևնույն ավազակներն են մը-

կրրտված, այդ պատճառով, պատերազմի վտանգը վո՛չ թե պակասում, այլ ավելանում է,— վճռում է Սիրինը: Նա նստել է մի կողմի վրա, ամենավերջին ծայրում, բայց ուշադրությամբ լսում է խոսակցությունը:

Չերկեսովը կարդում է ելի մի քանի հեռագիր, հետո նայելով ժամացույցը, վճռում է.

— Ներքին գործերի, կոլեկտիվացման մասին այսօր յերեկոյան, ընկեր Սելեզնյով «կուսումնասիրենք» թերթերը: Իսկ այժմ... Նա աչքերով վորոնում է ջոկերի հրամանատարին. նայել դահուկային դրույթները, յուրաքանչյուրը թող նայի իր դահուկը և պատրաստ լինի յելույթի համար:

Նա վեր է կենում և տեսնելով վաշտի որապահին, հարցնում է, թե վորտե՞ղ է գտնվում վաշտի հրամանատարը:

★

Դահուկների քթերը նորից կտրում են անաղարտ ձյունը: Աջից ձգվում է կապտին տվող անտառը, ձախից՝ յերկու մետր խորությամբ առուներով ակոսված հարթությունը: Ամառս այնտեղ աղմկում եյին ծանր մեքենաները, և կռացած աշխատում եյին հարյուրավոր մարդիկ թիերով ու պատգարակներով, արդյունահանելով չաղանակագույն տորֆ՝ մեծ քաղաքի համար. հենց հիմա էլ ճահճի մեջ տնկված է մետաղե ինչ վոր հսկա, հեռվից պարզ չի յերևվում, ասես՝ մինչմոլորակային տարածությունից վայր ընկած ողաքար լինի: Ամբողջ որը յերկինքն ամպամած եր, իսկ յերեկոյան դեմ տորֆատեղի վրա փայլեց արևը, և ավելի սաստկացավ ցուրտը: Լսվում եր դահուկների անհամաչափ խշխշոցը՝ մերթ յերկարատև, մերթ կարճատև: Յերբեմն այդ յերկու տեսակի խշխշոցները միանում եյին իրար և թվում եր, թե վոտնե-

րի տակի ձյունը վո՛չ թե մեռած նյութ է, այլ կենդանի յե և դժգոհ գրմռում է մարդկանց վրա, ինչպես պառաված սպիտակ շուն:

Կոլեսովը գնում է վաշտի առաջից: Նա զգում է, վոր սաստիկ հոգնել է, նրա գլխի աջ կողմն սկսում է ցավել, և աչքերի համար անհաճելի յե նայել արևի լույսի տակ շողշողացող ձյունին:

«Միգրեն... Ջղային հիվանդություն... Ասում են, վոր դրանով հիվանդանում են մեծ մասամբ կանայք...» մտածում է նա, իսկ վոտները սովորական կերպով, ասես՝ կատարելով դեռ ծննդյան րոպեյին ստացած հրամանը, բարձրանում են դահուկների հետ և սահում են առաջ: Կոլեսովը գոհ չե այսօրվա օրից, թեև դասարքի տեղում գումհրամատար Պանովը մնացած հրամանատարների ներկայությամբ ասաց, վոր վաշտը գործում եր հիանալի:

«Յերկու դժբախտ դեպք, ի՛նչ ուրախանալու բան կա այստեղ: Զուբարյովի հետ դեռ կարող է մի բան պատահել»— մտածեց նա, լսելով գումհրամատարի խոսքերը:

Զուբարյովին, ինչպես նաև իր վաշտի բոլոր կոմյերիտներին նա ճանաչում եր:

«Չե՞ վոր նա ինձանից հանձնարարություն եր խնդրում՝ կուսակցության մեջ մտնելու համար,— հիշեց նա,—իսկ հիմա յերևի մի ամիս կպառկի»:

Նա մի րոպե պատկերացրեց իրեն Զուբարյովի դեմքը, վորը նա հիշում եր վորպես ուրախ ու առնական դեմքերից մեկը: Հանկարծ այդ դեմքը սեվացավ, ուռեց և անճանաչելիության չափ դարձավ այլանդակ: Իսկ յերբ բժիշկը փաթաթում եր վիրակապը, Զուբարյովը ձգեց վոտները և կամաց, ատամների միջից սուլեց:

— Ցավո՞ւմ է,— կռանալով նրա վրա, հարցրեց Կոլեսովը, վոր ներկա յեր վիրակապությանը:

— Ու-հո՛ւ,— մռնչաց կոմյերիտը և այլևս վոչ մի խոսք չավելացրեց։

— Մի ամսով դատապարտված է,— յեզրափակեց բժիշկը։

«Իսկ յեթե պատերազմ սկսվի, այն ժամանակ յուրաքանչյուր որ Զուբարյովները և նրանից ավելի վատ վիճակ ունեցողները կլինեն հազարավորներ»,—մտածեց Կոլեսովը և նայելով շուրջը, աչքերով դանդաղ զննեց կարմիր բանակայինների դեմքերը։

Նա ինքը, վոր մասնակցել եր քաղաքացիական պատերազմին, ատում եր պատերազմը, ինչպես առհասարակ ընդունակ է մարդս ատելու, և վորպես կոմունիստ ընդունում եր, գիտեր ու հավատացած եր, թե ինքն ստիպված կլինի մասնակցելու վերջին պատերազմին, վորը ծավալվելու, դառնալու յե վեթխարի պրոլետարական հեղափոխություն։ Նա նույնիսկ խնդրեց, վոր իրեն ուղարկեն Արևելք, վորտեղ ՀԱԿԱԲ-ը սկսեց մարտական ուսուցման գործնական դասեր տալ չինացիներին,— բայց նրան հանգստացրին ու չթողին։

«Իսկ ինչո՞ւ Զուբարյովի այրված դեմքն այդպես ազդեց ինձ վրա»,— հարց եր տալիս նա իրեն և պատասխան չեր գտնում։—«Պարզ է, կակղել եմ, յետ եմ սովորել։ Պետք է մեզ ամենքիս ցնցել, վորպեսզի չմոռանանք ու հիշենք անցած որերը»,— վճռեց նա վերջնականապես և հրամայեց դադարք անել։

Յերբ վաշտը գնում է դահուկներով, դադարքների ժամանակ գալիս-մոտենում են պոչերը. մինչև հետինները կհասնեն, առաջինները կուշտ ծըխում են։ Այդ պատճառով, ստիպված եյին յերկարացնել դադարքները և յուրաքանչյուր դադարքից

հետո փոխել զորասյունի մեջ գնացող դասակների տեղերը։

Աշխատելով ցույց տալ, վոր ինքը չի հոգնել, դահուկներով մոտեցավ Կոլեսովին վաշտի ավագ Մալովը։

— Ընկեր հրամանատար, տղերքից հինգ հոգի չեն կարող այլևս շարունակել ճանապարհը,— զեկուցեց նա։— Նրանք հայտարարեցին, վոր «դադարքից հետո իրենք կամաց-կամաց կշարունակեն ճանապարհը»։— Նա ձեռքը հետ պարզեց, վորտեղ ամբողջ մի կիլոմետր յետ մնացած, իրար հետևից քարշ եյին գալիս մի քանի կարմիր բանակայիններ, դահուկները դրած ուսերին։

Դեռընտիրնե՞ր են,— հարցրեց Կոլեսովը։

Ավագը թվեց հետ մնացողների ազգանունները։ Կոլեսովը մի րոպե միտք արավ։

— Այստեղ կանչել Ֆադեյեվին, Ցուդինին և Սամոյլին,—կարգադրեց նա, և յերբ դրանք յեկան, դիմեց Ֆադեյեվին.

— Ընկեր Ֆադեյեվ, դուք այստեղ ճանապարհները լա՞վ գիտեք։

— Ինչպե՛ս չէ, հո առաջին անգամ չէ, դեռ անցած տարվանից գիտեմ, ընկեր հրամանատար։

— Լա՛վ։ Դուք կլինեք ավագ։ Ցերեկը ել մնացեք այստեղ և ճամբար կգաք հետ մնացածների հետ միասին։ Յեթե մի բան պատահի, ոգնեք նըրանց, տարեք նրանց դահուկներն ու հանդերձանքը։ Վաշտը չի կարող վոչ մի րոպե ուշանալ։

— Հասկանալի յե, ընկեր հրամատար։ Մեզ համար դա առաջին անգամը չէ.— հանգիստ ասաց Ֆադեյեվը։

— Գիտեմ։ Այդ պատճառով ել ձեզ եմ հանձնում այս գործը։

Վաշտը նորից քայլում եր դեպի առաջ: Ուղղակի գնում եյին դեպի ձյունի վրա նստած և կիսով չափ նրա մեջ թաղված արևը: Գնում եյին հենց այնպես, առանց մշակելու դասական փորձ թեմա, առանց հետախուզության, առանց դետքերի:

Իսկ հետևում մնացած յերեք կոմյերիտները թեթևվացրին հետմնացած հինգ կարմիր բանակայինների բեռը, բուքսիրի վերցրին նրանց ու առաջ շարժվեցին դանդաղ, կազմելով վաշտի յուրահատուկ թիկունքի ջոկատը:

*

Ցուդինն ուշադրությամբ զննեց հետ մնացածների դեմքերը. այստեղ կային դեռընտիր կարմիր բանակայիններ բոլոր դասակներից, բացառությամբ գնդացրային դասակի:

— Գնդացրորդները յետ չեն մնում,— ասաց Ֆադեյեվը:

— Ի՞նչ նեղություն եք քաշում դուք, մենք ինքներս ել մի կերպ կհասնեյինք,— դժգոհեց առաջին դասակի յետ մնացածներից մեկը. իսկ ինքը, ինչպես յերեվում եր, չեր կարողանում տեղից շարժվել: Նա բարձրահասակ եր ու անհեթեթ. նրան վաշտում կանչում եյին «Ցերիքոն»*) իր զարմանալի բարձր ձայնի պատճառով:

— Ի՞նչ ես ճնշվում, Մակեյեվ,— խոսեց Ցուդինը,— հրացանդ տուր ինձ, յես կտանեմ:

Ծիծաղելի յեր տեսնել, թե ինչպե՛ս բեռնաթափ եր լինում այդ բարձրահասակ ու թիկնեղ յերիտասարդը, իսկ Ցուդինը բարձում եր իր վրա

---

*) Համաձայն հին հրեական ավանդության, Ցերիքոնը հայտնի յեր իր շեփորանց հնչեղ փողով: Ծան. թարգ.

նրա հանդերձանքը և ինքն այնպես բարակ ու աննկատելի յեր...

Մոտիկ կանգնել ու նայում եր յերկրորդ դասակի մի ուրիշ կարմիր բանակային՝ Ռուդենկոն, միշտ ծիծաղեցնող և տկարանոցի բավական հաճախակի հյուր մի տղա:

—Տեղ չես հասցնի, ընկեր կոմյերիտ, ինքդ ել յետ կմնաս,— չհամբերեց ու ասաց նա, յերբ Ցուդինը զինավորվում եր յերկու հրացանով, իրեղենի յերկու տոպրակով ու թղթապանակով՝ վաշտի դրասենյակով:

— Դու քոնը տար, Ռուդենկո, ինձ օգնելու կարիք չի լինի: Նու, քո՞ բանը վոնց ե Ֆադեյեվ,— հետ դարձավ Ցուդինը և չկարողացավ ծիծաղը պահել. Ֆադեյեվը վերցրեց վո՛չ միայն հրացանը, այլև դահուկները: Նրանք ճոճվում եյին նրա թևերի տակ, և վրա հասած մթնշաղի մեջ նա նման եր, ասես՝ միջնադարյան քառաթև ջրաղացի, կամ մեծ ու գիշատիչ թռչունի, վորը պատրաստվում եր թռչել իր բռնած ավարի հետ:

— Վոչի՛նչ, գնալիս ցուրտ չի լինի,— թափահարեց իրեն ու վոտները դոփեց Ֆադեյեվը,— Ե՛յ, դուք հարվածայիններ, կարելի յե ասել, խայտառակում եք վաշտի անունը,— ընկերներ: Դա հավատալու բան չի,— յետ մնալ,— շարունակում եր զարմանալ և զայրանալ Ֆադեյեվը:

Գնացին: Մթնշաղն ավելի ու ավելի զգալի կերպով վրա յեր հասնում ամեն կողմից և ավելի յեր խտանում:

Քսան րոպե գնալուց հետո Ցուդինն զգաց, վոր ինքն ուժասպառ ե լինում:

«Յեվ ինչո՞ւ նա ինձ ուղարկեց,— մտածում եր նա վաշտի հրամանատարի մասին,—կգտնվեր մեկը,

ինձնից ավելի ուժեղ... Անենք ճարս ի՞նչ, կքայլեմ, մինչև վայր կգլորվեմ»:

Նա առաջ գցեց Ցադեյևին, վորի առաջ նա չէր քաշվում իր հոգնածությունից ու թուլությունից և գնաց նրան համընթաց, աշխատելով վոտը դնել ուժեղ ընկերոջ վոտների հետքերի տեղը:

Իսկ Ցադեյևը գնում եր՝ ծանրացած իր վրա բարձած բեռան տակ և վստահ իր ուժերի վրա:

— Դադարք անենք, Ցադեյի՛չ,— կամաց լսվեց Ցուդինի ձայնը:— Նստվել, ծխել,— հանաքով նա տվեց նման դեպքերում սովորական հրամանը:

Ծխեցին: Ինչ վոր մի տեղ, ո՛վ գիտե՝ հեռու, թե մոտիկ, մթության մեջ դժվար է վորոշել, վառվեց մենավոր մի պայծառ ճրագ:

— Ե՛յ ընկերներ, հենց այդպես է, վոր կա,— գլխի յեր ընկնում Ցադեյևը,— հենց այդպես է, վոր կա, ճրագը «Բարդու Պուրակ» խորհտնտեսության մեջ է: Ուրեմն, քիչ է մնացել, վոր տեղ հասնենք:

— Ինչքա՞ն է մնացել,— անվստահորեն հարցրեց Ռուդենկոն:

—Մոտ յերեք կիլոմետր, վո՛չ ավելի. առաջներս հիմա պիտի լինի թփուտներով մի մեծ ձոր, յերբ այդ ձորն անցնենք ու բարձրանանք բլուրը, կլինենք ճամբարում:

Ինչո՞ւ չեք ծխում, ընկեր Մակեյև,— հարցրեց Ցուդինը, վերջին անգամ ներս քաշելով ծուխը:

— Մախորկա չունեմ,— բացարատորեն խոստովանեց նա:—Առանձնապես չեմ էլ ուզում ծխել:

— Դահուկներն ախորժակդ փակեցի՞ն, հա՞,— մեկը փորձեց կատակել և մթության միջից մեկնեց Մակեյևին իր ծխախոտի «կրճոնը»:

— Ցես այլևս գնալ չեմ կարող, ընկերներ,— դժվարությամբ ասաց Մակեյևը, յերբ ծխելուց

հետո նորից կանգնեցին դահուկների վրա:— Մեկ փորձեմ,— աշխատելով ծիծաղել, ավելացրեց նա:— Վոտներս կարծես իմը չեն, այլ փայտե կաղապարներ են:

Կատարյալ մթության մեջ սկսեցին զառիվայրով իջնել ձորը, վորի մասին ասում եր Ցադեյևը: Առջևից ուժեղ կերպով աշխատելով չկորցնել հավասարակշռությունը, ընկերոջ դահուկներով, նա սահեց ներքև՝ մառախուղ սոսինների մեջ, և այնտեղ սպասում եր, մինչև կիջնեն մնացածները: Այստեղ խաղաղ եր, ինչպես ջրհորում: Մեկը սահելով յեկավ դիպավ Ցադեյևին և թունդ խոսքերով հայհոյեց, նորից կանգնելով դահուկների վրա, իսկ հետո վերևից լսվեց Ցուդինի ձայնը:

— Դու վորտե՞ղ ես, Ցադեյև:

— Այստեղ եմ, նո՛ւ, ի՞նչ է պատահել այդտեղ:

— Յեղբայր ջան, յետ բարձրացիր այստեղ:

Նա նորից բարձրացավ վերև ու տեսավ, վոր Մակեյևը պառկած է ձյունի մեջ, իսկ Ցուդինը նրա վրայից հանում եր վերջին հանդերձանքը:

Մի կերպ բաժանեցին հանդերձանքը, և նույնիսկ Ռուդենկոն ցանկություն հայտնեց տանել ավելորդ հրացանը. դրանից հետո Ցուդինն ու Ցադեյևը բռնեցին Մակեյևի թևից և տարան: Դժվար եր գնալը: Ձորն առատորեն լցված եր ձյունով, և Ցուդինն զգում եր, թե ինչպես ջրի պաղ կայլակները հոսում են իր վոտների վրայով, իսկ կաճյակներն ավելի ու ավելի յեն լցվում փխրուն ձյունով:

Այժմ կանգ եյին առնում շատ ավելի հաճախ, իսկ խորհտնտեսության կողմից ճրագներ դեռ չեյին յերևում:

— Լույսը յերևալի մոտեց, այլևս վոչինչ չի յե-

ռեվում,— աշխատում է վորևէ բան գտնել Սամոտայը, և հանկարծ պատահեց ինչ վոր ճեղքի:

— Յեկ, ուղեցույց, տես թե ինչ կա այստեղ,— դիմեց նա Փադեյեվին:

Նրանք դուրս յեկան մեծ խճուղին և տասնուհինգ րոպեյից հետո արդեն գտնվում եյին ճամբարում:

Մակեյեվին ուղղակի տարան տկարանոց, Հրաժեշտի րոպեյին Յուդինը սղմեց նրա մեծ ու թաց ձեռքը, իսկ նա լուռ եր և միայն շնորհակալությամբ ու քնքշությամբ փոխադարձաբար սղմում եր իրեն պարզած փոքրիկ ձեռքը:

Յերբ յերեք կոմյերիտներն յեկան վաշտը, այնտեղ տիրում եր ուրախ խոսակցական աղմուկ: Վաշտին տրվել եր յերեք հարկանի մի մեծ ամարանոց՝ վերանդաներով, պատշգամբներով և այլ հարմարություններով: Բայց ձմեռ ժամանակ այդ հարմարությունները առանձին արժեք չունեն , նրանցից միայն ավելի զգալի յե դառնում ցուրտը:

Կոլեսովը կարգադրել եր նախապես ուղարկել այնտեղ վերակարգ, և վաշտի գալուց առաջ ամարանոցը լավ վառել, տաքացրել եյին: Բայց շատ նեղվածք եր, յուրաքանչյուր դասակ ստացավ յերկու սենյակ: Գնդացրային դասակը միայն լավ տեղավորվեց, վորովհետև մարդկանց թիվը այնտեղ մեծ չեր:

Յուդինը գնաց իր դասակը: Կարմիր բանակայինները առանց կաճյակների նստել եյին տախտամածների յերկարությամբ և վոտները ճոճելով, պատմում եյին որվա իրենց տպավորությունները: Պատմելու բան շատ կար: Յուդինի վրա հարցերը տեղացին կարկուտի պես, ինչ պատահեց Մակեյեվին: Յերիքոնի վրա թեև ծիծա—

ղեցին, բայց դասակում նրան սիրում եյին ընկերականության ու լավ բնավորության պատճառով:

— Վոչինչ, կհանգստանա և կշարունակի ճանապարհը,— կատակեց Յուդինը և սկսեց ընթրել:

Փադեյեվը դժվարությամբ բացեց դուռը, վորի վրա մեկի հոգատար ձեռքը արդեն փակցրել եր մի թուղթ «գնդացրային դասակ» մակագրությամբ, և կանգ առավ· Նրա վրա ուշադրությամբ նայում եյին մոտ յերեք տասնյակ հետաքրքիր աչքեր : Ապա մի ձայն հրաման տվեց·

— Ճոճել Փադեյեվին, ճոճե՛լ:

Յեվ նախ քան նա ուշքի կգար, նրան մի քանի անգամ նետեցին դեպի վեր սոսկալի ուժով: Ու յերբ նա սկսեց հայհոյել, բան չհասկանալով, ամենքը միաբերան բղավում եյին·

— Մեր դասակը դարձավ հարվածային, իսկ դու մեր դասակում լավագույնն ես, ամենալավն ես

— Այդպիսի տղերքով հաղթանակն ապահովված է,— ծիծաղում և որորվում եր Զերկեսովը, նայելով ամենքի վրա:

IV ՎՈ՛Չ ՄԻ ԳՆԴԱԿ ՉՊԻՏԻ ՎՐԻՊԻ ՆՊԱՏԱԿԻՑ

Ճամբարի հրաձգարանը աչքով ընդգրկել չի կարելի, կես օրում մարդ նրա շուրջբոլորը պտտվել չի կարող նույնիսկ դահուկներով: Դեռ անցյալ տարի այստեղ գտնվում էր անանցանելի անտառ: Սոճիները, մեկը մյուսից ավելի բոյ քաշելով, բարձրացնում էին իրենց հսկա գլուխները և, ինչպես փորձված դիտողներ, նայում էին, թե ո՞վ արդյոք, հազվագյուտ հյուրի նման կգա—կանցնի անտառային այս խուլ ու խավար շավիղներով: Իսկ հետո, ձմեռը, վերջապես՝ անտառ յեկան մարդիկ,— շատ մարդիկ և ամենքն էլ միակերպ մարդիկ,— կարմիր աստղանի կորդակներով: Յեվ սկսեցին ընկնել հաղթված սոճիները, սրտաճմլիկ թըրմփոցով փռվել գետնին: Հետո նրանց ճյուղերը կտրատեցին, մաքրեցին և կրեցին տարան մեծ շտաբելներով: Այսպես յերկու—յերեք ամսվա ընթացքում յերևան յեկան յերկար ու լայն ուղատներ, տարբեր տարածությունների վրա, սունկերի պես աճեցին բլինդաժներ, վերնակներ, որոնք իրենց բարձրությամբ անցան այստեղ կանգնած սոճիդիտողներին: Կրակի գծի վրա շաղ տվին ավազ ու ափերն ամրացրին սոճիի ճիպոտներով: Իսկ ամենից վերջը, ամենաձախ անկյունի մոտ, որտեղից անցնում էր անվավոր յերթևեկության համար շինված և այժմ փակ ճանապարհը, բարձրացավ հմուտ ձեռքով հղկած մի կամար, կարմիր ներկով գրված է. «№— կայազորի հրաձգարան», իսկ դրանից ներքև,

փոքր տախտակի վրա լատինական տառերով գրված է մի տող և տակը ռուսերեն լեզվով հասկանալի ու պերճախոս թարգմանությունը. «Մի՛ գնար, կրակում են»:

Այսօր առավոտվանից կրակի գծից այն կողմը, յերեսուն քայլի վրա վառվում են խարույկներ, և հրաձգարանի թիկունքում անտառը ծածկված է ծխով: Խոնավ փոսերից ավելի շատ ծուխ է բարձրանում, քան կրակ, բայց և այնպես խարույկների առաջ անվերջ պարում են կարմիր բանակայինները, սպասելով կրակելու իրենց հերթին:

Այնտեղ, որտեղ հինգերորդ վաշտը հրացաններից բուրգեր կազմեց, հին սոճիի վրա թըրթռում է Ալեքսանդրյան թղթի մի թերթ՝ «Ինչպե՞ս ենք մենք այսօր կրակում» մակագրությամբ:

Առաջին փոխը կրակի գծի վրա չէ: Վաշտը նորից կրակում է առաջին վարժությունը: Յերկրորդ անգամ: Կոլեսովն ինքը հրաձգությունից առաջ նայեց հրացանները, յուրաքանչյուրին հրամայեց պառկել և ստուգել իր հենակը՝ ձյունով լցրած տոպրակը:

— Ընկերներ, դուք գիտեք, թե ինչո՞ւ մենք նորից կրակում ենք առաջին վարժությունը:— Կոլեսովը նայում է նրանց դեմքերին, որոնք ծածկված են բաց թողած կորդակներով:

— Գիտենք, ընկեր հրամանատար:

Կոլեսովը վերցնում է աջաթեվյանից հրացանը, մոտենում է հենակին:

— Ընկերնե՛ր, դժբախտությունն այն է, որ դուք չեք կարողանում միատեսակ նշան բռնել, ուստի, գնդակները ցրիվ են գալիս, հայտնի չէ, թե ու՛ր:

Նա պառկում է ձյունի մեջ, լայն բացում է

վոտները և խնամքով նշան բռնելով, ցույց է տալիս, թե ինչպե՛ս պետք է արձակել:

Աջից, ինչ-վոր տեղից լսվում է փողահարի նախազգուշացնող ազդանշանը: Փոխը դանդաղ մոտենում է, պառկում է, լցնում է հրացանը, սկսում է կրակել...

Կոլեսովը վազելով— անցնելով մյուսներին, սլանում է դեպի նշավակները, անցնում է նրանց մոտով, համարյա առանց կանգ առնելու, և արդեն բոլորովին դանդաղ վերադառնում է:

— Յոթից միայն յերկու,—ձեռքով թափահարում է նա, վորպես պատասխան Յուդինի հարցական հայացքի:

— Ընկեր հրամանատար, յես մի առաջարկ ունեմ,— հանկարծ կամաց ասում է Յուդինը.— ի՞նչ կասեք, յեթե այժմ փոխը կազմենք միայն կոմյերիտներից: Յեթե մենք էլ վատ կրակենք, այն ժամանակ պետք է հայտարարել հրաձգային արշավ: Այդպես չի՛ կարելի, պետք է մի բան անել:

— Պետք է անել: Իհարկե, պետք է անել: Ձեր տված միտքը հավանում եմ յես, ընկեր Յուդին: Տվեք ինձ վաշտի կոմյերիտների ցուցակը:

Կոլեսովը վերցնում է ցուցակը և կազմում փոխեր: Ստացվում է յերեք փոխ: Ցուցակների մեջ չմտան կրտսեր հրամանատարները: Կոլեսովը վճռեց նրանց չմտցնել ցուցակների մեջ:

Կոմյերիտական առաջին փոխը կանգնեց կրակի գծի վրա: Կարմիր բանակայինները իրար հրնդելով ու ծիծաղելով, կիպ մոտեցան կրակի գծին, սպասելով հրաձգության հետևանքներին:

— Հը՛, նրանք ի՛նչ են վոր, մյուսների պես չե՞ն. կարող է պատահել, վոր նրանք ավելի վատ կրակեն, քան անկուսակցականները,— լսվում են առանձին ձայներ:

— Կոմյերիտները պետք է կրակեն ավելի լավ, ընկերներ, այդ բանը դուք էլ պիտի հասկանաք,— կամաց պատասխանում է Յուդինը:— Ե՛լ ի՛նչ կոմյերիտներ ենք մենք, յեթե մեզանից ավելի չըպիտի պահանջվի: Իսկ յեթե մյուսներից ավելի վատ կրակենք,— այդ դեպքում՝ պետք է ավելի աշխատել, հարվածայնորեն աշխատել, ուրիշ վոչինչ:

Յերբ փոխը կրակեց, վերջացրեց, ամբողջ վաշտն ուզում եր վազել նշավակները: Կոլեսովն արգելեց այդ բանը, և նշավակների մոտ գնացին միայն նշան դցողներն ու հրամանատարական կազմը:

— Նու, վո՞նց է,— դեռ հեռվից հարցնում եյին կարմիր բանակայինները՝ փոխի տված հետևանքների մասին:

— Յոթից չորս,— չոր, առանց ժպտալու պատասխանեց Կոլեսովը:

Յերկրորդ փոխը տվեց յերեք, իսկ վերջինը միայն յերկու, ճիշտ է, վոր այդտեղ կրակում եր վեց մարդ, փոխանակ յոթի:

— Քառասուն հինգ տոկոս, քառասուն հինգ, քիչ է, բայց դա այնքան ցածր արդյունք չէ, միայն դժվար թե տա այդպիսի տոկոս,— ամբողջ վաշտը հաշվում եր Կոլեսովը հրաձգության արդյունքները բջիջի քարտուղար Յուդինի հետ:— Տեսնենք, թե ի՞նչ կտան մնացածները:

Փոխերն արագ հաջորդում եյին իրար, և ժամը տասներկուսի մոտ վաշտը վերջացրեց հրաձըգությունը: Կոլեսովը զեկուցում եր հրաձգության վերջնական արդյունքների մասին գումհրամատար Պանովին:

— Ընդհանուր առմամբ վաշտը տվեց քառասուն ինն տոկոս, ընկեր գումհրամատար: Յեթե

հաշվելու չլինենք միջակ ու կրտսեր հրամկազմը, ստացվում է ուղիղ տասը տոկոս պակաս՝ յերեսուն ինն:

Իսկ այդ ժամանակ Ցուդինը ալեքսանդրյան թղթի թերթի վրա պարզորոշ գրում էր թվերը:

— Առաջին դասակը 53 տոկոս:

— Յերկրորդ դասակը 31 տոկոս:

— Յերրորդ դասակը 38 տոկոս:

— Գնդացրայինը— 60 տոկոս:

Այդ թվում՝

— Կոմյերիտները 45 տոկոս:

— Մնացած կարմիր բանակայինները 41 տոկոս:

— Կրտսեր հրամանատարներ 60 տոկոս, միջակներ՝ 75:

Իսկ ներքևում այս բոլոր թվերի տակ նա, մի րոպե մտածելուց հետո, լոզունգի ձևով գրեց:

— Կոմյերիտնե՛ր, դեպի հրաձգային արշա՛վ: Ձե՛ռք բերենք հրաձգության գերազանց արդյունքներ:

— Տես, է՛, ի՛նչ հնարեց—հրաձգային արշավ,— բարձրաձայն կարդաց վերջին խոսքերը Սիրինը:— Վոչի՛նչ, վատ չի մտածված: Այդպե՛ս միայն կարելի յե գործը շուռ տալ դեպի լավը:

Յերբ վաշտը շարժվեց յետ գնալու համար, Կոլեսովը հուշատետրը ձեռքին՝ մի անգամ էլ կարդաց հրաձգության արդյունքները, թեև նրանց մասին ամենքն էլ արդեն լավ գիտեյին, և համառաբար չեշտելով բառերը, խոսեց այնպես, վոր լավ լսվում էր նրա ասածը ամենաձախ թևում.

— Ընկերներ, ելի վատ կրակեցիք: Յեթե հաշվելու չլինենք հրամանատարական կազմը, դուք տվիք միայն յերեսուն ինն տոկոս: Դա նշանակում է, վոր տասը մարդուց չորսը կատարում են վարժու-

թյան պահանջները, իսկ վեցը՝ վո՛չ, նույնիսկ այդքան էլ դուրս չի գալիս...

Առաջին շարքում կանգնածներն աշխատում եյին չնայել հրամանատարի վրա, ասես՝ վատով-դըլխով մեղավոր եյին պատահածի համար: Կոլեսովն ուզեց մեղմացնել իր խոսքերը:

— Ընկերնե՛ր, մեղավորը մենք ենք, հրամանատարներս, և վո՛չ թե դուք: Չկարողացանք սովորեցնել ձեզ,— ասում էր նա մի տեսակ կծու դառնությամբ:— Ահա՛, որինակ՝ Ակինշինը: Նա իր ջոկով տվեց յոթանասուն հինգ տոկոս: Ել չեմ ասում այն մասին, վոր այնտեղ մի քանիսի հրացանները դեռ պետք է կարգի գցել... Միայն գնդացրային դասակը տվեց բավարար հետևանք... Գնդացրայիններ, առա՛ջ,— հրամայեց նա, և գնդացրային դասակն առաջ յեկավ:

Առաջին դասակին հրաձգության առաջին վարժությունը լավ կատարելու համար շնորհակալություն եմ հայտնում ի դեմս ծառայության, հրամանատարը ձեռքը տարավ դեպի կողակի դիմապահակը և դիպչելով նրան, հանկարծ մնաց անշարժ:

— Ծառայում ենք աշխատավոր ժողովրդին,— միաբերան պատասխանեցին գնդացրորդները:

— Թույլ տվեք ինձ ասել, ընկեր հրամանատար,—խնդրեց Զերկեսովը.

Կոլեսովը ձեռքով արավ.— խոսեք:

Զերկեսովը յերեք քայլ արավ մի կողմի վրա այնպես, վորպեսզի տեսնել կարողանա ամբողջ վաշտը և հաճախ նայելով՝ մեկ յուրայինների, մեկ յերկրորդ դասակի կարմիր բանակայինների վրա, թեթև հուզվելով խոսեց.

— Մենք ավելի լավ կատարեցինք հրաձգության վարժությունը վո՛չ թե պատահականորեն,

այլ այն պատճառով, որ ավելի շատ եյինք պատրաստվում հրաձգության համար: Մենք նույնիսկ մեր դրամով գնում եյինք մանր կալիբրանոց փամփուշտներ ու կրակում եյինք: Բայց բանը դրանում չե (նա կարծես վախենում եր, չլինի թե վիրավորական բան ասի մյուս դասակների համար): Հայտնի յե, ա՛յ, վաշտի հրամանատարը կարդաց, որ յերկրորդ դասակը ե՛լ ավելի վատ ե նշան խփում, քան մյուսները, հետ ե մնում մյուսներից և պարզապես իջեցնում ե վաշտի տոկոսները: Այսպես ահա սոցիալիստական մրցության կարգով խոստանում ենք օգնել յերկրորդ դասակին, որպեսզի նա մոտիկ օրերս առաջադիմության քայլեր անի:

Գնդացրային դասակը սրտանց ծափահարեց, յերբ Ջերկեսովը վերջացրեց:

— Ինչպե՛ս ուրեմն, ընկերներ յերկրորդ դասակ,— խոսեց Կոլեսովը,— ուզո՞ւմ եք գնդացրային դասակի օգնությունը, թե՞ ինքներդ կարող եք յոլա գնալ: Իմ կարծիքով՝ նրանք լավ են անում, որ ուզում են օգնել ձեզ:

Յերկրորդ դասակի միջից լսվեց կոմյերիտ Սամոտոյի հյութալի ձայնը:

— Տղերքը լուռ են, պարզ ե, ամաչում ենք, որ քաշ ենք գալիս պոչից, իսկ օգնության դեմ ո՞վ կառարկի, դրուստ չե՞մ ասում, ընկերներ:

— Թող առայժմ օգնեն,— ասաց ին միաժամանակ մի քանի հոգի.— իսկ հետո մենք ցույց կտանք, որ յերկրորդ դասակն ել կարող ե օգնել:

— Մենք հո մատով չե՞նք շինված,— բղավեց մեկը թավ ու դրգռիչ ձայնով:

— Մատով չե՛ք շինված: Իսկ ինքդ այսօր փրլուզ դուրս յեկար,— նրա յերեսով տվեց մեկ ուրիշը:

— Լավ, լավ, հերիք ե, ընկերներ,— խոսեց

ներից Կոլեսովը,— հիմա իրար վիրավորելու ժամանակ չի: Ուրեմն ընդունվա՞ծ ե գնդացրային դասակի առաջարկը:

— Համաձայն ենք,— գոռաց այժմ արդեն վստահ և առանց քաշվելու յերկրորդ դասակը:

— Քայ-լո՛վ մա՛րշ,— ձգվեց հրամանը՝ յերկար ու չոր, ինչպես լավ դահուկ, և ծխացող խարույկների մոտ մրսած վաշտը՝ գնաց արագ ու աշխույժ՝ դաշտի և մառախուղ անտառի միջով, առանց ճանապարհի, դեպի ամառային ճամբարը, որը գտնվում եր հրաձգարանից ութ կիլոմետր հեռավորության վրա:

Առջևից առավոտյան հին դահուկածիրերով ամբողջ ժամանակ առաջ եր սլանում հարվածային գնդացրային դասակը, գնդացնելով դահուկների հետքը:

*

Ցերեկոյան գնդացրային դասակի չենքում տեղի ուներ կոմյերիտական դոնբաց ժողով: Սենյակը չեր կարողանում տեղավորել իր մեջ բոլոր ներկա յեղածներին, և նրանց մի . մասը նստել եր հարևան փոքրիկ սենյակում՝ տախտերի վրա, որտեղ լսվում եր ժողովում խոսողի ձայնը, բացի դրանից, որտեղ կարելի չեր ծխել: Կոմյերիտների մի մասն ուղղակի նստած եր հատակին, ծղոտների վրա, ծալապատիկ: Սենյակում խեղդող եր, թեև բաց օդանցքից պաղ օդն ազատ ու թափով ներս եր մտնում սենյակը: Ցուդինը «գործերը» դնելով ուղղակի ծնկների վրա— ավելի տեղ շահելու նպատակով՝ սեղանը դուրս տարան, և բացեց ժողովը, աշխատելով իր բղավոցով խլացնել խոսողների աղմուկն ու ձայները:

— Օրակարգի մեջ յերեք հարց կա,— կարդաց

Գորելովը (նրան ընտրեցին նախագահ),— ընդունելություն, հրաժգային արշավի մասին և կոնֆլիկտային գործ...

Որակարգն ընդունեցին առանց փոփոխությունների:

— Առաջին հարցի առթիվ խոսքը պատկանում է ընկեր Յուդինին:

Յուդինն իր կապույտ տետրակից հանեց մի կտոր թուղթ և, համարյա առանց նայելու վրան, կարդաց.

— «Հինգերորդ վաշտի կոմյերիտական խմբին: Խնդրեմ, ինձ ընդունեք կոմյերիտմիության մեջ, ուզում եմ սովորել կռվել հեղափոխության համար, ինչպես պետքն է, նմանապես օրինակելի լինել մարտական պատրաստության մեջ: Կարմիր բանակային Իվան Սելեզնյով: Հանձնարարում են»:

— Հապա՛, Սելեզնյով, պատմիր, միայն թե կարճ...Նստիր, նստիր տեղդ,—ձեռքով արավ Գորելովը, տեսնելով, թե ինչպես Սելեզնյովն ուզում է անցնել մեջտեղ:

— Յես կարճ կկարեմ,— սկսեց սելեզնյովը և նստեց իր հին տեղը: — Ծնվել եմ Կուրսկի նահանգի Կարպուշի գյուղում: Հայրս ուներ հինգ ողա, և յես, հասկանալի պատճառներով գնացի բատրակություն անելու: Այնտեղ ել կրթություն ստացա,— նա ծիծաղում է, ակնարկելով իր անգրագիտությունը:— Հետո կամովին մտա Կարմիր բանակ: Այստեղ ավելի լավ է: Ահա բոլորը, ել բան չունեմ ասելու:

— Ընկեր Սելեզնյովին հարց տվողներ կա՞ն:

— Վաշտում պատիժ չա՞տ ես ստացել,— հարեց մեկը դրան յետևից:

— Մեկն ստացել եմ— նկատողություն այն բանի համար, վոր «փոքր գործ» եյի արել...Ե՛հ,

ամենքդ ել գիտեք այդ պատմությունը,— ծիծաղեց նա ու լռեց:

— Նու, իսկ վո՞նց են քո գործերը անգրագետների դպրոցում,— հարցրեց Գորելովը:

— Վոչի՛նչ, արդեն սկսում եմ կարդալ, չուտով ինքս «կուսումնասիրեմ» լրագրերը,— վո՛չ առանց հպարտության պատասխանեց Սելեզնյովը:

— Իսկ ի՞նչ կասես կոլտնտեսությունների առթիվ. ի՞նչ ես կարծում, արդյոք կուսակցությունը ճի՞շտ քաղաքականություն է վարում գյուղում,— հարցրեց դրան յետևից ելի նույն ձայնը:

— Ո՞վ է այդտեղից հարց տվողը,— չհամբերեց Գորելովը:

— Ակինշինն է: Մի՞թե ձայնից չես ճանաչում, նախագահ,— ծիծաղեցին դրանը մոտիկ նստած Ֆադեյեվը և Սամոտոյը:

Սելեզնյովը մի քիչ միտք արավ.

— Քաղաքականությունը ճիշտ քաղաքականություն է, բայց մի քիչ գլուխները կորցնում են: Յերեկ չէ՝ մյուս որը յես նամակ ստացա յեղբորիցս, գրում է, թե գյուղական ժողովում վճռեցին ամբողջ գյուղով մտնել կոլխոզ, իսկ ժողովում այդքան մարդ չի յեղել: Դա բանի նման բան չի:

— Ճիշտ է ասում Սելեզնյովը,— հաստատեցին նրա ասածը նաև ուրիշները,— մեզ ել են եդպես գրում:

— Իսկ քաղաքականությունը ճիշտ է, և առհասարակ պետք է չուտով բռնել կուլակի պոչից և գետնով տալ,— յեզրափակեց Սելեզնյովը:

Նրան ընդունեցին միաձայն:

Քվեարկությունից հետո նա կանգնեց, ուզում եր ելի մի բան ասել, հետո նորից ծանր ու հանդըստայած, թևը լայն թափահարելով, ասես ուզում

էր յերեսը խաչակնքել, սրբեց ճակատից քրտինքի խոշոր կաթիլները:

Սելեզնյովից հետո ընդունեցին ևս յերեքին. Նիկոլայեվին, Վոլկովին և Կոստրոմցովին: Կենսագրությունները կրկնվում էին, փոխվում էին միայն տեղերը, վորտեղ ծնվել ու մեծացել էին գյուղացի այդ տղաները: Այդ յերիտասարդությունն աճում էր արդեն բուռն հեղափոխական եպոխայում, բայց նրանց ծննդավայրը հեռու և խուլ տեղեր էին, բանվորական կենտրոններից կտրված յերբեմն հազարավոր կիլոմետրներով, ինչի մասին պատմեց Վոյկովը հեռավոր Իժմայից, ուստի, կյանքը շարունակվում էր այնտեղ որորվել, ինչպես լճացած ջուրը՝ յեղեգնուտում:

Յերրորդ հարցի առթիվ զեկուցեց նույնպես Յուդինը: Նա հինգ րոպեյում պատմեց ամբողջ գործը կոմյերիտներին:

— Այսօրվա հրաձգությունը ցույց տվեց, վոր մենք միայն չորս տոկոս ավելի տվինք անկուսակցականներից: Դա բանի նման չէ, ընկերներ, վորովհետև վաղը մենք կարող ենք այնքան տոկոս էլ պակաս տալ նրանցից, յեթե չաշխատենք ձեռք բերելու ավելի լավ արդյունքներ: Այդ պատճառով մենք,— յեզրափակեց Յուդինը,— առաջարկում ենք կուսակցական բջիջի և վաշտի հրամանատարության օգնությամբ կատարել հրաձգային արշավ:

— Անհասկանալի յե. ինչպե՞ս թե հրաձգային արշավ,— խոսեցին ամենքն էլ միաբերան:

Խոսք առավ Զերկեսովը:

— Ընկերներ, այստեղ՝ ճամբարում մենք կըմնանք մոտ տասն օր: Հրաձգությունից կանցնենք

մի քանի վարժություն: Կարծեմ՝ յերեք վարժություն:

— Այո՛, յերեք վարժություն,— հաստատեց Կոլեսովը: Նա հենց նոր յեկավ ժողովի և Ակինշինի հետ նստեց վերջին տախտի վրա:

— Նու, այսպես,— շարունակեց Զերկեսովը,— մենք պետք է,— նա ամուր թափահարեց ձախ ձեռքը, կարծես ուզում էր մեկին հարվածել,— մենք պետք է դեպի վեր քշենք տոկոսների կոր գիծը:

— Այնպես, ինչպես անում են հարվածային բանվորները գործարաններում,— բացատրեց նախագահ Գորելովը:

— Այո՛, գործարանների լավագույն հարվածայինների օրինակով, ճիշտ ասացիր դու, Գորելով. պետքե աշխատել, վոր յուրաքանչյուր կոմյերիտ վարժությունները կատարի առանց յերկրորդ անգամ նույն վարժությունը կրկնելու:— Զերկեսովը լռեց մի քանի վայրկյան:— Յես կարծում եմ, ընկեր Կոլեսովը մեզ խորհուրդներ կտա, թե ինչպես ավելի լավ է վարել արշավը,— վճռեց նա,— այդ պատճառով, առայժմ վոչինչ չեմ առաջարկում:

— Այո՛, յես մի յերկու առաջարկություն ունեմ, դրա համար էլ հենց յեկա այստեղ,— ծիծաղեց Կոլեսովը:— կարելի՞ յե, ընկեր նախագահ:

— Խնդրեմ:

Կոլեսովը բացեց հին, մաշված գրատի կոճակները, և կարմիր բանակայինները գրատի տակ տեսան հրամանատարի նույնպես հին, կարկատաններով հարուստ զգեստավորությունը:

«Մի տես, է՛,— մտածեց Ակինշինը, մատներով աննկատելի կերպով շոշափելով մաշված ֆրենչի փեշը,— արշավի համար ի՞նչ է հագել: Յե-

բեր նա իսկի չի էլ տաքացնում: Մեկ հարցնող լինի, թե ի՛նչ է շինում կինը: Իր համար հանգիստ նստել է տաք տեղում, իսկ այստեղ...— Նա հանկարծ նորից մտաբերեց Զուրաբյովին, և նրա սիրտը ցավեց այդ անհեթեթ դեպքի համար:— Իսկ ինչպիսի լավ տղա, լավ ընկեր է»,— հառաչեց նա և սկսեց ուշադրությամբ լսել հրամանատարի ասածները:

— Մենք ունենք փամփուշտների պաշար,— հանգիստ խոսում էր Կոլեսովը.— վաղը չէ՝ մյուս օրը հանգստյան օր է, պետք է ճշտեն նորմայի չհասած հրացանները: Իհարկե վաշտում յեղած մյուս բոլոր հրացանները նույնպես: Պետք է թույլերին կցել ուժեղների հետ: Յուրաքանչյուր հարվածային— կոմյերիտ շատ լավ հրաձիգ է: Իսկ հետո, յերբ մենք ձեռք կբերենք վճռական հաղթանակ,— յես դրանում վստահ եմ,— յեզրափակեց Կոլեսովը,— յուրաքանչյուր կոմյերիտ կսկսի ոգնել իր անկուսակցական ընկերոջը: Մենք հաղթանակ ձեռք կբերենք հրաձգային փրոնտում:

Կոմյերիտները սրտանց ծափահարում եյին Կոլեսովին, խոսում եյին, շատերը հենց այստեղ պարտավորվեցին, վոր կդառնան սնայպեր*):

Թե՛ Ցուդինը, թե՛ Գորելովը, վորոնք նստել եյին իրար մոտ, նախագահության մեջ, հասկացան, վոր արդեն բեկում կատարվեց, վոր այստեղ ստացվեց յերկար ժամանակ հերիք անող լից:

— Առանձնապես պետք է աշխատեն յերկրորդ դասակի կոմյերիտները,— կամաց ձայնով ասաց Ցուդինը:

—Այժմ արդեն չի կարելի այդպես մտածել,— առարկեց Գորելովը:— Այժմ խոսքը վերաբերվում է ամենքին: Թե՛ կոմյերիտ գնդացրորդները, վո-

*) Հարյուր տոկոսով նշան խփող հրաձիգ:

րոնք այսօր վարժությունը կատարեցին հարյուր տոկոսով, թե՛ յես ու դու, թե՛ մեզանից յուրաքանչյուրը նույնպես պատասխանատու յենք բոլորի հրաձգության համար:

— Այո՛, դու ճիշտ ես ասում,— համաձայնվեց Ցուդինը:

Կոնֆլիկտային գործի առթիվ կոմյերիտ Մայնկոյին հանդիմանություն արին, նախազգուշացումով, ջոկի հրամանատարի հրամանը չկատարելու պատճառով:

Կոլեսովը նրան պատժեց հինգ օր կալանքով, և վաղը Մայնկոն պետք է գնար քաղաք, նստելու պահանոցում:

★

Մի օր հետո գնդի ճամբարային տիրի շենքի մեջ առավոտվանից թրըխկ-չրխկում եյին հրազարկերը՝ մերթ հատ-հատ, մերթ խմբերով: Տիրի յերկայնությամբ վրածածկի համար դիզված գերաններին փակցրել եյին առանձին վարժության միևնույն նշավակները՝ պտղուն կիսաշրջաններով: Նրանցով կատարվում է փորձնական հրաձգություն: Հրաձգությունը ղեկավարում է Ակինշինը: Նա ուշադրությամբ նայում է յուրաքանչյուր հրացան և ցուցմունքներ է տալիս հենց այստեղ ներկա գտնվող զինագործին:

— Հատիկը յերկու կետ շարժել դեպի ձախ... Մի կետ դեպի աջ... փոխել հատիկը, դնել ավելի բարձր հատիկ — հրացանը բարձր է խփում:

Այս աննշան տեղաշարժումներից, ուղղումներից, պլյուս սառույց աչք, անհողդողդ ձեռք ու փորձ— ստացվում է ճիշտ ու դիպուկ հրաձգություն: Ակինշինն իր ժամանակին այս բոլորը փորձել է իր վրա: Նա ժպտում է լայն ու մեղմ ժպի-

տով, հիշելով անցած տարին, ճամբարները և վայելչակազմ նուրբ աղջիկ—շեֆին:

«Այստեղ գործը վատ չի գնում»—գոհունակությամբ մտածում եր Ակինշինը, բաց թողնելով տիրից տասներեքերրորդ կոմյերիտին, հրաշալի փորձած հրացանով և լավ կատարած վարժությամբ:

Տիրում չկան՝ ո՛չ Յուդինը, ո՛չ Գորելովը. նրանք դեռ յերեկ յերեկոյան դահուկներով գնացին յենթաշեֆային Պորոշկինո գյուղը և կվերադառնան միայն յերեկոյան դեմ:

«Կարևոր գործ է նույնպես՝ պատմել գյուղացուն ինչ որ հարկավոր է և սրտանց զրուցել նրա հետ,»— մտածում է Ակինշինը, դիտելով թե ինչպես զինագործը տեղաշարժում է գործիքով հատիկը, կկոցելով աջ աչքը՝ «ճշտության համար»:

— Եդ ինչո՞ւ գլխներից փչեց՝ կրակել հենց այստեղ, չե՞ որ այստեղ հանգստի որ է,— բարկանում է նա:

— Մենք կոմյերիտների հետ հայտարարել ենք հրաձգային արշավ, այնպես որ հանգստյան որերը մենք հաշվի չենք առնում,— հայտարարում է Ակինշինը:

— Դուք արշավում եք, իսկ իմ հանգստի օրն է կորչում,—վրդովվում է նա, ընդունելով յերկրորդ հրացանը:

Մի՛ քրթմնջար,—ընկեր, վաղը կհանգստանաս, ասենք՝ յերեկ ել շատ չես աշխատել: Բուրժույները հո չեն հարցնի, արդյո՞ք, քո հանգստի օրն է, թե վոչ,—այդ պատճառով նրանք իրենց սրբատոներն ունեն, մենք մերը,— հասկացա՞ր:

— Ինչպես չհասկացա, ընկեր հրամանատար, հասկացա. բուրժույների համար, այսինքն, նրանց

հախից ավելի լավ գալու համար կարելի յե զոհաբերել հանգիստը: Դա ճիշտ է, որ նրանք ունեն իրենց սրբատոները,— համաձայնվեց նա վերջնականապես:

Կրակի գծի վրա ոգնելով Ակինշինին, կարգադրություններ է անում Ֆադեյևը: Նա նույնպես շատ լավ նշան է խփում, իսկ որը գլխավորն է՝ Ակինշինից ո՛չ պակաս գիտե սովորեցնել ուրիշներին:

— Նու, տես, թե մատդ ո՛նց դրիր հրացանի վրա: Այդպես յերեք տարում ել չես սովորի կարգին կրակել,— ասում է նա մեկին և պառկում է նրա կողքին: յերկուսն ել նայում են առաջ՝ նշավակին:

— Լա՞վ ես տեսնում նշավակը:

— Տեսնում եմ:

— ձախ ձեռքդ մի քիչ բարձրացրու հենակի վրա, հրացանի կոթը մի կեղտոտիր, ընկեր,— ըսպառնալից շշնջում է նա, տեսնելով, թե ինչպես հրացանը սողում է դեղնագույն կավի միջով:

Վերջապես հրաձիգն ընդունեց ցանկալի դիրքը:

— Նու, այժմ կրակիր: Հիշիր միայն, թե ի՛նչ հատիկ ես վերցրել,— անում է նա վերջին նախազգուշացումը:

Կրակոցից հետո Ֆադեյևը համբերությամբ կրկնում է նորից բոլորն սկզբից:

Ձախ ձեռքդ մի քիչ ավելի բարձրացրու հենակի վրա: Արա այնպես, ինչպես քիչ առաջ արիր:

Նա ուղղում է հրաձգի վոտները ձյունի մեջ փորված հին փոսիկների համաձայն և նորից արտասանում է.

— Նու, կրակիր, հիշիր միայն...

Բոլոր հրազարկերից հետո նրանք գնում են

նշավակների մոտ, և այն կոմյերիտը, վորը մոտ որերս կրակում էր այնպես վոր նրա գնդակները չէր կարելի ծածկել գրատի փեշերով, այսոր հիացմունքով գտնում էր իր չորս գնդակն էլ ստուգիչ շրջանի մեջ:

— Քրթմնջում եյիր, թե «հրացանս վատ է»,— չի համբերում և հեգնանքով նկատողություն է անում Ֆադեյևը:— Հրացանդ, յեղբայր պատվական, խփում է Ագրայիլի պես: Նու, այժմ գնա ու մաքրիր նրան, այնպես, ինչպես արժանի յե նա,— արձակում է Ֆադեյևը իր հաջողությամբ ուրախացած հրաձգին ու սկսում է պարապել մյուսի հետ: Յեվ նորից լսվում է նրա այդպես հանգիստ ու մի փոքր հեգնական ձայնը:

Ճաշից առաջ տիր մտավ Կոլեսովը: Ինքն էլ ըսկսեց մի քիչ պարապել յերկու-յերեք կոմյերիտի հետ կրակի գծի վրա և Ակինչինից լսելով այսորվա հրաձգության արդյունքների մասին, հեռացավ, ասելով, վոր գլուխը ցավում է:

— Նրա տեսքն իսկապես լավ չէ,— ասաց Ֆադեյևը, նայելով հրամանատարի հետևից:

— Նա պետք է հանգստանա, շատ է հոգնել, ինքը չի ուզում այդ բանը խոստովանել և ասել դրա մասին: Մի հարցնող լինի, թե վո՞րտեղ են նրա կրնոջ աչքերը, մի՞թե չի տեսնում նա,— պատասխանեց Ակինչինը, ինչպես մտածում էր նա յերեկ չէ մյուս որը կոմյերիտական ժողովում: Նա մի յերկու անգամ տեսել էր վաշտի հրամանատարի կնոջը՝ բարձրահասակ, գեղեցիկ կին, և հենց առաջին անգամից, հայտնի չէ, ինչո՛ւ, սիրեց նրան:— Ցերևի մարդու մասին հե՛չ չի մտածում նա, այդ հպարտ կինը,— ժճռեց Ակինչինը, թեև դրա համար նա վո՛չ մին հիմք չուներ:

Մթնշաղն ընկնելուց առաջ յեկան հրացան-

ներով՝ յենթաշեֆային գյուղ գնացածները: Յեվ մեկեն լցրին տիրը ծիծաղով ու ջահել կյանքով:

Չերկեսովը ուրախ ծիծաղում էր, պատմելով, թե ինչպես իրենք ժողովից դուրս ձգեցին Պորոշկինոյի կուլակներին:

— Հավաքվեցին, հասկանում ես, դպրոցում,— բռնեց նա Ֆադեյևի թևքի ծայրից:— Նախագահը բացեց ժողովը, իսկ յես մտցնում եմ հերթից դուրս առաջարկություն— յեթե ժողովում կուլակներ կան, թող հեռանան: Վո՛չ վոք տեղից չշարժվեց: Իսկ մեզ ստույգ հայտնել են, վոր չորս հոգի նստած են այստեղ: Նախագահն էլ, մեր պարզամիտ նախագահն էլ լուռ է, վոչինչ չի ասում:

Չերկեսովը մաքրում է քիթը, մինչ ճթճթում են հերթական փոխի հրազրակերը, ապա շարունակում է:

— Այն ժամանակ յես մոտեցա սեղանին, իսկ նախագահը յերկու քայլ քաշվեց մի կողմի վրա, մոտեցա և ասում եմ.— «Այստեղ կուլակներ կան, վեր կացեք»:— Նստել են սրիկաները և տեղերից չեն շարժվում: Յես մի անգամ էլ եմ կրկնում, լուռ են: Այն ժամանակ յես մոտենում եմ մեկին, վոր փաթաթվել է դոխայի*) մեջ, մտածում եմ, դժվար թե չքավորն այդպես հագնվի:

— Դու, ասում եմ, քաղաքացի, ո՞վ ես, ի՞նչ մարդ ես:

— Յես բնավ կուլակ չեմ, ինձ սխալմամբ կուլակ են գրել, իմ ցանկության հակառակ,— պատասխանում է նա, իսկ աչքերը դես ու դեն են վազում:

— Քաղաքացի՛,— ասում եմ յես,— դուրս յեկ փողոց:

*) Դոխա—բավական թանկարժեք մորթի, վորից մուշտակ են կարում: Ծան. թարգ.

Այստեղ ծիծաղ բարձրացավ: Հետո վեր կացավ մի ջահել տղա և մյուսներին նշեց: Նստել են վերջին նստարանի վրա և գդակները քաշել–իջեցրել են աչքերին:

— Նու, ի՞նչպես են այնտեղ կոլեկտիվացման գործերը,— հարցրեց Ակինչինը:

— Գյուղը ցաք ու ցրիվ է... հետամնաց... Ա՛յ, այնտեղ պետք է տրակտոր ուղարկել և ցույց տալ կոլեկտիվ աշխատանք, այլապես՝ մեկեն այնտեղ վոչինչ դուրս չի գա:

— Այո՛, ամառս հենց վոր գնանք ճամբար, այնտեղ պետք է շատ աշխատել, և այն ժամանակ, ի հարկե, ամեն բան կլինի, ամեն բան կարգի կընկնի,— հայտնեց իր կարծիքը Ցուգինը:

★

Յուրաքանչյուր որ վաշտը գնում է կայազորի հրաձգարանը տարբեր ճանապարհներով՝ հարթավայրերի և մառղաշ անտառի միջով: Յերբեմն հորիզոնի վրա յերևվում են տասնյակ ուրիշ դահկավորներ: Դրանք յերկրորդ գումարտակի մյուս վաշտերն են, վոր նույնպես կատարում են իրենց մարտական պլանը:

Հրաձգություն է տարվում հրացաններից, գնդացիրներից: Հրաձգարանում զգացվում է վառոդի և վառվող խարույկներից բարձրացող խոնավ սոճիի ծխի հոտ: Վեցերորդ օրն է, ինչ շարունակվում է կոմյերիտական հրաձգային արշավը: Առաջին կռիվները վերջացել են հաղթությամբ, բայց արշավի նախաձեռնողները դաժան են և դեռ վո՛չ մի անգամ թույլ չեն տվել դադարք տնել:

Յուրաքանչյուր վարժության հետ կատարման սյունակները բարձրանում են դեպի վեր՝

թե՛ ամբողջ վաշտի, թե՛ մանավանդ կոմյերիտների կողմից, յերկրորդ վարժությունը նրանք կարեցին վաթսունհինգ տոկոսով, յերրորդը՝ վաթսուննութ: Ձմեռային այդ առաջին արշավի ընթացքում պետք եր անցնել մի վարժություն ես՝ չորրորդը, և դրան առանձնապես պատրաստվում եր կոմյերիտմիությունը:

Այն վերջին օրվա առավոտը խաղաղ եր, բոլորովին քամի չկար: Յերբեմն միայն յերկնքից թափվում եյին ձյունի բարակ փաթիլներ: Վաշտը նախաճաշեց, և կարմիր բանակայինները, տաքացած շենքի նեղվածությունից, դուրս եյին գալիս փողոց, ծխում եյին ու հարևան փոքրիկ սարայից վերցնում եյին իրենց դահուկները: Յերկուհոգի հենց այստեղ՝ բակում սղոցում եյին թղթենին՝ վառելափայտի համար, և սղոցը համաչափորեն ու ռիթմիկ խզխզում եր, բուք, չորված ատամների միջից դուրս թափվելով վարդագույն թեփը:

Այսօր առավոտյան առաջին դասակում գումարվեց ժողով: Կարմիր բանակայինները, վոր դեռ չեյին նախաճաշել, տեսնելով դասակի հրամանատարին, շրջապատեցին նրան և խառնիխուռն հայտարարեցին.

— Այնպես վոր, ընկեր հրամանատար, ժամանակ է՝ մեր դասակն էլ հայտարարել հարվածային:

— Իսկ ի՞նչ է պատահել,— զարմացավ նա:

— Ի՞նչ կարիք կա սպասելու, յերեկ մենք գնդացրային դասակից վատ նշան չխփեցինք: Ա՛յ, Ակինչինը իր ջոկով տվեց հարյուր տոկոս:

— Թող նրանք չպարծենան, վոր միայն իրենք են հարվածային, մենք էլ կհարվածենք:

Դասակի հրամանատարը բացեց ժողովը, և ամենքը միաձայն պահանջեցին.

— Հայտարարել...

— Մրցման հրավիրել գնդացրորդներին, տեսնենք՝ ո՛վ ավելի լավ կկրակի։

— Քվեարկում եմ,— ասաց, առանց երկար մտածելու, դասակի հրամանատարը։

Հարվածային դասակի համար քվեարկեցին միաձայն։

Երբ Կոլեսովն ինքը հավասարեցրեց վաշտը և ուզում էր հրաման տալ՝ «դահուկն ուսիդ ա՛ռ»,— առաջին դասակի հրամանատարը թույլտվություն խնդրեց՝ ասել մի երկու խոսք.

— Առաջին դասակը,— սկսեց նա պարզ լսելի չուտասելուկի պես,— արդեն ձեռք բերված արդյունքների հիման վրա և է՛լ ավելի մեծ արդյունքների հասնելու համար, հայտարարում է իրեն հարվածային ու գնդացրորդներին հրավիրում է սոցմրցության՝ այսօրվա հրաձգության առթիվ։

— Ինչքա՞ն,— չհամբերեց ու հարցրեց Չերկեսովը։

— Յոթանասուն,— ծիծաղեց դասակի հրամանատարը։

— Ընդունում ենք,— դղրդացրին գնդացրորդներն այնպես, վոր գոհունակությամբ ծիծաղեց ինքը՝ վաշտի հրամանատար Կոլեսովը։

«Հաստատ քայլերով գնում ենք դեպի հարվածային վաշտը»,— ակամա մտածեց նա։

Վաշտը շարժվեց սկզբում վոտով, իսկ հետո, անցնելով մոտ երկու հարյուր քայլ և դուրս գալով ձյունապատ դաշտը, կանգնեց դահուկների վրա։ Նորից փայլեց աջից ու ձախից ծանոթ անտառը, և այնպես թեթև, համարյա անքաշ էյին թվում ուսերից քաշած ընկեր-հրացանները։

★

Բակում, վորտեղ ամբողջ օրը խզխզում է սղոցը, վառելափայտ պատրաստելով անհեթեթ ու բարձր ամարանոցի համար,— կարմիր բանակայինները նրան մկրտեցին «Կոլեսովի անվան ամարանոց»,— ճաշից հետո Յուդինը փակցրեց ալեքսանդրյան թղթի նոր թերթ, այսօրվա հրաձգության հետևանքների մասին։ Այնտեղ գրված էր.

— Առաջին դասակ— 71 տոկոս.

— Երկրորդ դասակ— 63 տոկոս.

— Երրորդ դասակ— 65 տոկոս.

— Գնդացրային դասակ— 82 տոկոս։

Կոմյերիտները տվին 90 տոկոս։

Իսկ ներքևում, Յուդինի հավասար ձեռագրով գրված է մի տող, վորպես լոզունգ.

— Բոլոր կոմյերիտները հարվածային են, բոլոր կոմյերիտները հիանալի հրաձիգ են։

Իսկ սղոցը խզխզում էր անվրդով հանդիստ, և Զադեյևի ձեռքով այսոր սրված նրա ատամների տակից դուրս էյին թափվում վարդագույն փմփլիկ թեփեր։

V. ԿՈՄՅԵՐԻՏՆԵՐԸ ՓԱԿՈՒՄ ԵՆ ՃԵՂՔՎԱԾՔԸ

Միխաիլ Իվանովիչ Կալինինի պատկերով ժամացույցը ցույց է տալիս ութից քառորդ պակաս: Զորանոցի յերկրորդ հարկը վողողված է արևի լույսով, վորը ներս է մտնում բակի կողմից, յերեք մաքուր լվացած մեծ պատուհաններից: Փայտե հատակը համարյա փայլում է, այնպես լավ լվացին այդ հատակը յերկ կարմիր բանակայինների ձեռները: Ուր նայում ես՝ մաքրություն է տիրում և տաք ջրում խոնավացած փայտի հոտ է գալիս. ամեն բան մաքուր է այնպես, վոր բծախնդրության առիթ չի տա դնդի ամենախիստ ու պահանջկոտ որապահին:

Արևի մեծ նապաստակները վազվզում են պատերի վրայով, առաջնորդների դիմանկարների և լուսանկարների վրայով, ընկնում են քնած կարմիր բանակայինների դեմքերին, յերկար ժամանակ մնալով նրանց վրա, ստիպում են նրանց շուռ գալ մյուս կողքի վրա և ինչ վոր մրթմրթալ քնի մեջ:

Վաշտում որապահ է առաջին դասակի ջոկի հրամանատար Ակինչինը: Նա հենց նոր վերադարձավ բակից, ուր գնացել եր «ստուգելու յեղանակը», ինչպես հայտնեց նա որավորակին: Ակինչինի ստուգած «յեղանակը» բոլորովին գարնանային եր: Վարժությունների հրապարակում անանցանելի ցեխ եր հալված ձյունից, միայն սպորտի պիտույքների մոտ հարյուրավոր վոտների կոխկրտած չոր տեղեր կան և դեպի տիրը տանող բարակ շավիղներ են յերևում, նույնպես վոտներով լավ տրորված: Ձյունը չքացել է, կարծես՝ ձմեռը զուր եր աշխատում այդքան առատ ձյուն շաղել, ուր կարող եր միայն շաղել:

Անցնելով սպորտի դատարկ շենքում դրված դահուկների բուրգերի մոտով՝ Ակինչինը մի բոպե կանգ առավ ու մի տեսակ ափսոսանքով, նույնիսկ թախիծով նայեց իր դահուկներին, յերկար ու նեղ, նայեց իրենց դասակի դահուկներին: Նրանցից գալիս եր կուպրի հոտ և քսելու յուղերի բուրմունք:

Կանգնած են սաճի պահանգների մեջ հարմար
Նոր ձմեռների, նոր վոտների համար,

արտասանեց նա ինքն իրեն, մի տեղ կարդացած կամ հենց իր հնարած վոտանավորը:

Ակինչինն այս ձմեռվա ընթացքում շատ սիրեց դահուկները: Նրանք ամրապնդեցին նրա մեծ բարեկամությունը կարմիր բանակային Զուբարյովի հետ: Որապահը մտավ վաշտը և մի անգամ էլ շրջեց բոլոր շենքերը՝ կարմիր բանակայիններին վերկացնելուց առաջ:

— Տե՛ս, ինչ լավ քնել են,— ուրախացավ նա, և նա մեղքանում ու չեր ուզում զարթեցնել ընկերներին:

— Ցելի՛ր,— բղավեց նա ամուր, հրամանատարական տոնով, շեշտելով «ի» տառը և կրկնեց այդ կանչը մի անգամ ևս, անցնելով շենքերի յերկրորդ բաժանմունքը:

Վերմակների տակից նայեցին քնկոտ դեմքերը, իսկ հետո սկսեցին հագնվել կարմիր բանակայինները՝ վոմանք դանդաղ, մյուսներն արագ ու հապճեպ. մահիճները նման եյին փորփրած, շուռ տված վորջերի, բայց անկողինը կարելի յե սարքել միայն զբոսանքից հետո: Այս տասնուհինգ–քսան

բոպեյի ընթացքում հավաքարարուհիների բացած պատուհանների միջով դուրս կերթա մարդկային մարմնի գոլորշիացումը և ջերմությունը:

Արդյոք արև՞ն է պատճառը, թե՞ այսօրվա հանգստի օրը, բայց մի բան աներկբա է. վաշտում տիրում է ուրախ ու բազմաձայն ղժվժոց, որ փողոց է ժայթքում, խառնվելով տրամվայի տասնուվեցերորդ մարշրուտի աղմուկի հետ:

— Կանգնի՛ր ստուգման,— բղավում է ամբոխի մեջ աննկատելի Ակինշինը, և մասսան յետ քաշվելով մահճակալներից, փոքրիկ սեղաններից ու հրացանների բուրգերից, ուղղելով մարզաշապիկների վերջին ծալքերը, կանգնում է շարքի մեջ: Այժմ շատ ավելի դժվար է դեռընտիր կարմիր բանակայիններին ու հին ծառայողներին իրարից տարբերելը,— ամենքն էլ այժմ միատեսակ են: Յեթե նայելու լինի հրամատարի փորձված աչքը, նա կարող է միայն տարբերել նրանց վոտների դըրույթից, գլուխը շուռ տալուց և գոտին մի ծակով ավելի ձգելուց, իսկ կողմնակի մարդը չի կարող:

Մի կամ յերկու րոպե շարքի բոլոր ծայրերից լսվում է.

—Յես... Յես... Յես...— պատասխանում է յուրաքանչյուրը, լսելով իր ազգանունը, վոր կարդում է դասակի հրամանատարի ոգնականը:

— Կովա՛լ, Կովա՛լ— կանչում է դասակի հրամոգն ավելի բարձրաձայն: Վոչ վոք չի արձագանգում: Ապա շարքից լսվում է Գրոմովի ցածր ձայնը.

— Կովալը վաշտում չեր գիշերել, նա յերեկ արձակուրդ գնաց մինչև ժամը քսան ու յերեքը և չվերադարձավ:

Արձակուրդից Կովալի չվերադառնալու մասին իրազեկ արին ավագին, իսկ նա լրատարին իսկույն

ուղարկեց հրամատարի մոտ: Կոլեսովը խստիվ հրամայել եր այդպիսի դեպքերի մասին անմիջապես տեղեկացնել իրեն:

Ստուգումից հետո ավագ Մալովը կարդաց գնդին տրված հրամանը. կարդում եյին սովորաբար այն կետերը, վորոնք վերաբերում եյին գնդի կյանքին, նշանակումներին և որվա ընթացքում տեղի ունեցած մեծ ու փոքր դեպքերին:

— Պարագրաֆ յերրորդ,— դանդաղ կարդում եր Մալովը.— Նկատվում են դեպքեր, յերբ գնդի զորական պաշտոնյաները, կարմիր բանակայինները ման են գալիս վո՛չ տարազով ու այլանդակ հագնված, և դարպասի մոտ կանգնած ժամապահները անարգել դուրս են թողնում դռնից, առանց հարձակման նշանների, վորի պատճառով ավելանում են ինքնագլուխ բացակայությունները: Ստորաբաժանումների հրամանատարին ու որական վերակարգի անձերին առաջարկվում է ուշադրություն դարձնել նման դեպքերի անթույլատրելիության վրա, վորոնք խախտում են կարգապահությունը:

— Պարագրաֆ հինգերորդ,—կարդում է Ավագը:—Հինգերորդ վաշտի կարմիր բանակային հին ծառայող Փադեյեվ Իվանը, վորպես լիովին համապատասխանող, նշանակվում է ս. թ. ապրիլի մեկից նույն վաշտի ջոկի հրամանատար: Տեղեկանք՝ հինգերորդ վաշտի հրամանատարի զեկուցագիրը: Հիմք՝ դիվիզիայի տրված հրաման №...

— Պարագրաֆ յոթերորդ.— Հինգերորդ վաշտի կարմիր բանակային Դեմինսկի Նիկոլային ինքնագլուխ բացակայության ու քաղաքում հարբած դեբոշ անելու համար բանտարկում եմ տասնուհինգ որով, ուղարկելով կայազորի պահանոցը:

— Պարագրաֆ ութերորդ.—իրենց պարտավորությունները հրաշալի կատարելու համար՝

ապրիլի յերեքից-չորսը՝ խոհանոցի օրապահ միամյակային Վասիլյեվին և նրա օգնական Սոկոլսկի Իվանին շնորհակալություն եմ հայտնում: Տեղեկանք՝ գնդի օրապահի զեկուցագիրը:

Հետո գալիս էյին կարդալու համար անհետաքրքրական պարագրաֆները և հրամանի ստորագրությունները:

Հրամանը կարդալուց հետո վաշտը գնաց առավոտյան զբոսանքի: Սանդուղքների վրա կարմիր բանակայինները պատմում էյին իրենց տպավորությունները:

— Վերջիվերջո Դեմինսկին դատի տակ կընկնի,— կիսաշշինջով ասում էր կարմիր բանակային Յելինը իր հարևանին և իր ընկեր Կոստրոմցովին:

— Յեթե չուղղվի, ի հարկե կընկնի,— համաձայնում էր նա:— Ա՛յ, Ֆադեյեվի համար ուրախ եմ: Տե՛ս, առանց գնդի դպրոցի դարձավ գնդի հրամանատար:

— Այո՜, նա զարմանալի յե, յերանի այդպիսի հրամանատարներ շատ լինեն,— հառաչանքով պատասխանեց Յելինը, և այդ հառաչի մեջ զգացվում էր հանդիմանություն իր անիրավ պետի՝ ջոկի հրամանատար Պինկինի հասցեյին:

Նախաճաշից հետո տեղի ունի կարմիր բանակայինների արձակուրդը քաղաք: Ինքն Ակինշինը շարում է արձակվողներին — նրանք քսան հոգի յեն, նայում է նրանց հագուստը և տալիս է արձակման տոմսեր:

— Գնդին տված հրամանը ստուգման ժամանակ լսեցի՞ք,— հարցնում է նա, յերբ ամեն բան արդեն արված էր:

— Լսեցինք,— պատասխանում են նրան, ամենքը միաձայն:

— Յես դրանից ավելի այլևս վոչինչ չեմ ասի

ձեզ, բայց գիտեք, վոր յուրաքանչյուրը, ով կուշանա կամ կերթա Դեմինսկու ուղիով, նա անարգանքի բիծ է դնում ամբողջ կարմիր բանակի վրա, ըստ էյության օգնում է հակահեղափոխությանը... Այո՛, այո՛, մի՛ ծիծաղեք, ընկեր Ժելտով, դա այդպես է: Կովալը ժամանակին չեկավ, իսկ այստեղ, դուցե տագնապ է, դուցե վաշտին տալիս են վորևէ մեծ խնդիր, և Կովալը դառնում է դասալիք:

Նա վերջին մի հայացք է ձգում կոշիկների վրա, գոտիների վրա և խումբը դարձնում է դեպի աջ: Ներքևում՝ բակում օրապահը բաց է թողնում կարմիր բանակայիններին, և նրանք արագ ցրվում են զանազան կողմեր:

Վաշտի Լենինյան անկյունում բավական մարդ կա: Յուդինը հավաքել է կոմյերիտներին, թեև գնդի բյուրոն արգելել է ժողովները հանգստյան օրերին:

— Մենք ժողով չունենք, այլ զրույց,— հայտարարում է նա յուրաքանչյուրին: Իսկ արձակուրդ կերթանք ամենքս միասին՝ ճաշից հետո:

Նրանք հավաքվել են այն անկյունում, վորտեղ քաշ է արված աշխարհիս քաղ-տնտեսական քարտեզը: Յուդինն աննկատելի հաշվում է քսան ութ հոգի:

— Յոթ հոգի բացակայում են,— շշնջում է նա սեղանի վրայից գրելավին,— կարծեմ, կարելի յե սկսել, պատքարտուղարը խոստացավ գալ կես ժամից հետո, յերևի, Կոլեսովը նույնպես կգա մինչ այդ:

Առաջին հարցը՝ ընդունելությունը սովորականի պես անցնում է արագ. ընդունում են լավ ուսումնասիրած, փորձած տղաներին: Այդ տեսակետից կարմիր զորանոցում, վորտեղ ամբողջ մաս–

սան մասին զբաղվում է միևնույն գործով, քընում է կողք-կողքի,—հեշտ է ուսումնասիրել մարդուն, և բացառիկ դեպքերում են սխալներ լինում: Այսօր կոմյերիտմիության մեջ ընդունեցին ևս չորս կոլտնտեսականի: Քաղաքական տեսակետից նրանք մի փոքր թույլ են, բայց շատ լավ գիտեն, թե ինչո՛ւ յեն մտնում կոմյերիտմիության մեջ: Իր կենսագրությունն է պատմում կոլտնտեսական Զակոպանովը:

— Ընկերներ, յես անգրագետ եյի և կյանքիս մեծ մասն աշխատել եմ տերերի մոտ, վորովհետև տանն ապրելու վոչ մի հնարավորություն չըկար:

Նա համրում է իր մատները: Նրա համառ ճակատի վրա յերեվացին կնճիռներ և չեն ուզում չքվել, մինչև նա ձեռքով չի շփում ճակատը:

— Ե՛հ, յերկար խոսելու բան չունեմ.— թափահարում է ձեռքը Զակոպանովը,— ա՛յ, դուք հարցնում եք քաղաքականությունից, իսկ գրագիտությունն եյ այստեղ միայն, Կարմիր բանակում սովորեցի: Տերերի մոտ ժամանակ չկար միջազգային դրության մասին մտածելու, հասկանալու: Հենց կտեսնես, տերը մի աչքի տակով այնպես կընայի վրադ, վոր ուզում ես շուտով գնալ—հեռանալ, ճաշից հետո հազիվ կարողանալով բերանդ սրբել շորիդ թևով: Դառը բաներ՝ ինչքա՛ն ասես, իսկ լավը... ճնճղուկի սրտի չափ լավ բան հազիվ եմ տեսել իմ կյանքում:

Ամենքը ծիծաղում են:

— Մտի՛կ, ե՛, ինչպիսի չափ հնարեց,— հետաքրքրվում է Չերկեսովը:— Դա ի՞նչ չափ է, ճնճղուկի սիրտ ասածդ,— հարց է տալիս նա Զակոպանովին:

— Թող ոյինբազությունդ Սաշա,— քաշում է

նրա թևից Գորելովը: — Գիտե՞ս ի՛նչ — դա գյուղական հեքիաթ է:

— Նո՛ւ, իբրև թե դու շատ բան ես հասկանում գյուղական հեքիաթներից, վո՛նց չէ,— ծիծաղում է Չերկեսովը, վորպես պատասխան: — Պրոլետարներ բոլոր յերկրների, միացե՛ք, — ընկերաբար ամուր խփում է նա Գորելովի ծնկին:

— Այսպես ուրեմն, քվեարկենք:

— Քվեարկենք, ընկեր Յուդին :

Քսանութ ձեռներ բարձրանում են վեր, և կոլտնտեսական Զակոպանովը դառնում է Լենինյան կոմյերիտմիության անդամ: Նա հպարտությամբ նայում է շուրջը, նստում է և յերկար ժամանակ տեղ չի կարողանում գտնել իր վոտների ու ձեռների համար, մլուլ է տալիս տեղումը և հառաչում է:

Լենինյան անկյուն է գալիս կուսակցական բըջջի քարտուղարը՝ Կոլեսովի հետ: Նրանք նստում են հեռավոր անկյունում և ուշադիր լսում են:

— Իսկ յերկրորդ հարցը, ընկերներ, կարգապահությունն է և մեր կոմյերիտական դեմքը, — շարունակում է Յուդինը: Նա հանում է թղթի մի փոքրիկ թերթ և կարդում է

— «Հունվարին կոմյերիտները կատարել են յոթ դանդաղություն, փետրվարին՝ ինն, մարտին՝ տասնուհինգ: Հունվարին կային կոմյերիտ հարվածայիններ տասնուչորս, փետրվարին՝ քըսան յերեք, իսկ առ մեկն ապրիլի՝ յերեսուն հինգ, այսինքն՝ հարյուր տոկոս»: Այսպես, բանն ինչո՞ւմն է, ընկեր, բանն ինչո՞ւմն է: յես կարծում եմ, վոր մենք այժմ պետք է լուրջ խոսենք դրա մասին:

Խոսք է առնում կուսակցական բջջի պատքարտուղար Ստավիցկին:

— Յերբ վաշտում յերևան յեկավ ճեղքվածք

հրաձգության մեջ,— սկսեց նա կամաց ու դանդաղ,— կոմյերիտները հաստատակամորեն ձեռք զարկեցին այդ գործին, և վաշտի հրամանատարը կարող է ձեզ ասել, որ հրաձգության կողմից վաշտն այսօր բռնում է յերկրորդ տեղը գնդում: Բայց... — ավելի բարձր խոսեց պատքարտուղարը,— վաշտը յերկրորդ տեղն է գրավում նաև օրինախախտումների, գողությունների և ուրիշ գարշելի բաների տեսակետից:

Լենինյան անկյունում թագավորեց ծանր ու լարված լռություն... Ստավիցկին լռեց մոտ կես րոպե, հայացքով զննելով դիմացը նստող կոմյերիտների դեմքերը, ապա շարունակեց.

— Յերկրում լարված աշխատանք է տարվում պլանները կատարելու համար, ծավալվում է լայն հոսանքով կոլտնտեսական շարժումը, իսկ մենք... — Նա տարակուսանքով ու դառնությամբ բացեց ձեռները,— մենք չենք կարող հարվածային վաշտ դառնալ այն պատճառով, որ մեզանում նույնիսկ կոմյերիտները տասնուհինգ օրինախախտում են կատարել մարտ ամսին:

— Այո՛, մենք իրավունք չունենք մեզ հայտարարելու հարվածային վաշտ,— չոր հաստատեց պատքարտուղարի խոսքերը Կոլեսովը:

— Դու ասում ես, որ վաշտում կոմյերիտների թիվը նոր ընդունվածների հետ յերեսուն և ի՞նն է,— հարցրեց պատքարտուղարը Ցուդինից,— դա շատ է: Իսկ կոմյերիտական դեմքը վաշտում դեռ առանձնապես չի դրսևորվել: Այնպես արեք, որպեսզի մարտական ուսուցման ամեն մի փոքր բանում վառվի, յեռա կոմյերիտական բռնվածքը: Կոմյերիտը չպիտի արժանանա ո՛չ մի պատժի, ո՛չ մի — կրկնեց նա ելի մի անգամ:— Անկուսակցականների հետ էլ պետք է աշխատել կոմյերիտավարորեն: Կոմյերիտ չէ նա, ով լռում է և իր քաղաքական գիտելիքները չի հաղորդում անկուսակցական կարմիր բանակայիններին.. Յես վերջացրի, ընկերներ,— ասաց նա, նստելով:

— Թույլ տուր ինձ, Ցուդին, ինքնաքննադատության մասին ասել:

— Խոսիր, Ֆադեյև, խոսիր:

— Իմ ինքնաքննադատությունն այսպես է,— Ֆադեյևը քիթը մաքրեց և նայեց վաշտի հրամանատարին:— Պետք է ավելի պահանջկոտ լինել, ահա, թե ինչ: Կոմյերիտները յերեսունինն հոգի յեն, բայց նրանք միաժամանակ կարմիր բանակայիններ են, ինչպես և մնացած անկուսակցականները: Ինչո՞ւ կոմյերիտը շարքում խոսում է, խախտելով «զգաստ» հրամանը, ինչո՞ւ յերբեմն նրա հրացանը կեղտոտ է լինում և մահիճը ո՛չ միշտ կանոնավոր հարդարված: Որովհետև օրական վերակարգը իր պարտականությունը կատարում է ո՛չ միշտ բարոբոշակի, որովհետև մենք յերբեմն խախտում ենք ճիշտ ժամանակն ու տեղը, մանր-մունր բաներն աչքաթող ենք անում, նրա վրա նայում ենք մատների արանքով: Մենք պետք է ընդհանուր ջանքերով ըստեղծենք աշխատանքի այնպիսի պայմաններ, որպեսզի անկարելի լինի զանցառությունը, որպեսզի դա անհնարին լինի, ինչպես անհնարին է առողջ դատողության տեր մարդու համար նետվել այս յերկրորդ հարկից փողոց, թեև այնտեղ շողշողում է ապրիլ ամիսը, ժպտում է արևը:

Ֆադեյևը մեկեն լռեց, կարծես նրան ընդհատեցին, և ձեռքը դժկամակորեն թափահարեց:

Նրանից հետո արտահայտվեցին ուրիշ շատերը, Կոլեսովը նշեց, որ յերբեք այդպիսի ակտիվ ժողով չի յեղել:

—... Ընկեր Ֆադեյևը հիմնականում ճիշտ

է,— ասաց Կոլեսովը իր ելույթի վերջում:— Յեվ դրանից, ամեն բանում բարձրացրած պահանջկոտությունից մենք կծավալենք մեր հետագա աշխատանքը, վորպեսզի վաշտը ճամբար դուրս գալու ժամանակին իսկապես կարողանա դառնալ հարվածային:

★

Կոլեսովը շրջում էր վաշտի շենքերը: Արձակուրդ չգնացած կարմիր բանակայինները զբաղվում եյին ամենատարբեր գործերով. հրաձգային դասարանում հրացաններ եյին մաքրում, ծխում եյին լվացարանում, վորը միաժամանակ նաև ծխելասենյակ էր, մահճների վրա նստած՝ զրուցում եյին, նամակներ եյին գրում: Յերեկ վաշտում ստացվել էր վաթսուն յերկու նամակ, վորի մասին հրամանատարին հաղորդեց Յուդինը, և այսօր կարմիր բանակայինները Կոլեսովին կանգնեցնում եյին տանից ստացված մի շարք հարցերով:

Նա մոտեցավ մի խմբի, վորն աշխուժորեն զրուցում էր: Հրամանատարի գալուց հետո կարմիր բանակայինները լռեցին:

— Ինչո՞ւ լռեցիք, ընկերներ, շարունակեք. կուզե՞ք միասին քննենք այն, ինչի մասին խոսում եյիք դուք:

Նա ազատ— համարձակ նստեց մահճակալների վոտների կողմը դրված տաբուրետի վրա և պատրաստվեց լսելու:

— Այ, նա ասում է,— խոսեց վերջապես մեկը և գլխով նշեց դեռատի կարմիր բանակայինին, վոր նստած էր տաբուրետի մոտ,— նամակ է ստացել տանից Մալյուգան, և շատ անհասկանալի յէ գրված նամակում:

— Հապա, մեկ էլ կարդացեք, ընկեր Մալյուգա:

— Ել ի՞նչ կարդամ, կարդացել եմ,— դժկամակությամբ ասաց նա, անվստահորեն նայելով հրամանատարին:

— Նո՛ւ, կարդա,— ձայնեցին մեկեն մյուսները,— թող հրամանատարը լսի:

Մալյուգան ձեռքը տարավ գրպանը, հանեց պորտմանեյի պես մի բան, իսկ նրա միջից էլ ծրարով նամակ, գրված մատիտով՝ ծուռ ու խոշոր տառերով:

— Նո՛ւ, ահա թե ի՞նչ են գրում,— կամաց ասաց Մալյուգան, աչքերն ուղղելով ծուռ տողերին: Բարևները չեմ կարդա, կսկսեմ ա՛յ ինչից,— «Յեվ դարձյալ հայտնում ենք քեզ թանկագին վորդի Ալեքսեյ Պետրովիչ, վոր մեզ ամենքիս տանում են կոլխոզ: Քո յեղբայր Իվան Պետրովիչն ուզում էր գնալ, համա յես ու մայրդ հակառակ ենք: Խնդրում ենք, յեթե կարող ես յեկ ինքդ, գուցե ուշքի գան»:

— Մնացածը հետաքրքիր չէ,— վճռեց Մալյուգան,— ամենագլխավորը սա յէ:

Նա լռեց և զգուշությամբ, կարծես վախենալով, չլինի թե պատռի, դնում էր գորշ թերթը ծրարի մեջ:

— Դա սխալ բան են անում, ընկեր հրամանատար,— ասաց կարմիր բանակայիններից մեկը:

— Իհարկե սխալ բան է, ընկերներ: Քաղպարապմունքների ժամանակ մենք ձեզ հետ միասին արդեն խոսել ենք այդ գործերի առթիվ,— կամաց ասաց Կոլեսովը:

— Ահա թե ինչ է դուրս գալիս,— Մալյուգան նամակը ցնցեց օդի մեջ,— դուրս է գալիս, վոր այնտեղ Ստալինը և ամբողջ կուսակցությունը մի

է,— ասաց Կոլեսովը իր ելույթի վերջում:— Եվ դրանից, ամեն բանում բարձրացրած պահանջկոտությունից մենք կծավալենք մեր հետագա աշխատանքը, որպեսզի վաշտը ճամբար դուրս գալու մոմենտին իսկապես կարողանա դառնալ հարվածային:

★

Կոլեսովը շրջում էր վաշտի շենքերը: Արձակուրդ չգնացած կարմիր բանակայինները զբաղվում էին ամենատարբեր գործերով. հրաձգային դասարանում հրացաններ էին մաքրում, ծխում էին ընթերցարանում, որը միաժամանակ նաև ծխելասենյակ էր, մահիճների վրա նստած զրուցում էին, նամակներ էին գրում: Երեկ վաշտում ստացվել էր վաթսուն յերկու նամակ, որի մասին հրամանատարին հաղորդեց Յուդինը, և այստեղ կարմիր բանակայինները Կոլեսովին կանգնեցնում էին տանից ստացված մի շարք հարցերով:

Նա մոտեցավ մի խմբի, որն աշխուժորեն զրուցում էր: Հրամանատարի գալուց հետո կարմիր բանակայինները լռեցին:

— Ինչո՞ւ լռեցիք, ընկերներ, շարունակեք. կուզե՞ք միասին քննենք այն, ինչի մասին խոսում էիք դուք:

Նա ազատ— համարձակ նստեց մահճակալների վաների կողմը դրված տաբուրետի վրա և պատրաստվեց լսելու:

— Ա՛յ, նա ասում է,— խոսեց վերջապես մեկը և գլխով նշեց դեռատի կարմիր բանակայինին, որ նստած էր տաբուրետի մոտ,— նամակ է ստացել տանից Մալյուգան, և շատ անհասկանալի յեն գրված նամակում:

— Հապա, մեկ էլ կարդացեք, ընկեր Մալյուգա:

— Եվ ի՛նչ կարդամ, կարդացել եմ,— դժկամությամբ ասաց նա, անվստահորեն նայելով հրամանատարին:

— Նո՛ւ, կարդա,— ձայնեցին մեկեն մյուսները,— թող հրամանատարը լսի:

Մալյուգան ձեռքը տարավ գրպանը, հանեց պորտմանեյի պես մի բան, իսկ նրա միջից էլ ծրարով նամակ, գրված մատիտով՝ ծուռ ու խոշոր տառերով:

— Նո՛ւ, ահա թե ի՛նչ են գրում,— կամաց ասաց Մալյուգան, աչքերն ուղղելով ծուռ տողերին: Բարևները չեմ կարդա, կսկսեմ ա՛յ ինչից,— «Եվ դարձյալ հայտնում ենք քեզ թանկագին որդի Ալեքսեյ Պետրովիչ, որ մեզ ամենքիս տանում են կոլխոզ: Քո յեղբայրը Իվան Պետրովիչն ուզում էր գնալ, համա յես ու մայրդ հակառակ ենք: Խնդրում ենք, յեթե կարող ես յեկ ինքդ, գուցե ուշքի գան»:

— Մնացածը հետաքրքիր չէ,— վճռեց Մալյուգան,— ամենագլխավորը սա յե:

Նա լռեց և զգուշությամբ, կարծես վախենալով, չլինի թե պատռի, դնում էր դորշ թերթը ծրարի մեջ:

— Դա սխալ բան են անում, ընկեր հրամանատար,— ասաց կարմիր բանակայիններից մեկը:

— Իհարկե սխալ բան է, ընկերներ: Քաղպարապմունքների ժամանակ մենք ձեզ հետ միասին արդեն խոսել ենք այդ գործերի առթիվ,— կամաց ասաց Կոլեսովը:

— Ահա թե ի՛նչ է դուրս գալիս,— Մալյուգան նամակը ցնցեց օդի մեջ,— դուրս է գալիս, որ այնտեղ Ստալինը և ամբողջ կուսակցությունը մի

բան են գրում ու ասում, իսկ գյուղում մեկը կա, որ ուրիշ բան է անում։— Դու աշխատում ես, աշխատում,— գիտեք, որ յես հիմա լավ հարվածայիններից մեկն եմ ,— իսկ այնտեղ՝ գյուղում հորը նեղություն են տալիս։ Ձայնից զրկել են։ Ո՞վ է իրավունք տվել նախագահին, որ նա միջակին ձայնից զրկի։ Գուցե ինձ էլ կզրկեն։

— Ո՛չ ոք այդպիսի իրավունք չի տվել և յերբեք չի տա, ընկեր Մալյուգա։— Կոլեսովը տաբուրետից բարձրացավ ու կանգնեց իր ամբողջ հասակով։— Կուսակցությունը խփում է նրանց թաթին, ովքեր գյուղացուն չեն համոզում մտնել կոլխոզ, ովքեր միջակին չեն սովորեցնում, որ կոլխոզը միջակի ու չքավորի համար լավագույն սոցիալիստական ճանապարհն է, այլ հրամայում են՝ ինչպես մենք հրամայում ենք շարային ուսուցման ժամանակ, «Դեպի կոլխոզ քայլով մարշ»։ Կուսակցությունը խփում է այդպիսիների թաթին և, յեթե հարկավոր է, դուրս է նետում կուսակցությունից։

— Պետք է շտապեցնել այդ գործը,— հանդարտացած նստում է իր տեղը Մալյուգան, տեսնելով, թե ինչպե՛ս հուզվում է հրմանատարը։

— Պետք է շտապեցնել,— կրկնում են մյուսները։

— Մենք միասին կզբաղվենք ձեր նամակով և գյուղխորհրդին կգրենք շատ մի գրություն. իսկ դուք լավ տղա յեք, և կարիք չկա վրդովվելու,— ասում է Կոլեսովը, Մալյուգայի հետ միասին գընալով դեպի վաշտի գրասենյակը։

— Լա՛վն է մեր հրամանատարը,— վճռեցին մնացածները։— Պարզ մարդ է բոլորովին մերն է։

— Նա կարծեմ գյուղացի յե,— նկատեց նրանցից մեկը։

Ավրիլյան գիշերը վերջանալու վրա յե։ Գնդի ժամացույցի սլաքը ցույց է տալիս յերկուսից կես անց։ Վարժությունների հրապարակում սյան վրա քաշ է արած միակ ելեկտրական լապտերը և աղոտ լուսավորում է զորանոցների կորպուսները։ Այդ տեսակ լապտերներ, բայց ավելի մեծ քանակությամբ, քաշ են արված յուրաքանչյուր պոստի վրա, որտեղ լուռ քայլում են կարմիր բանակային—ժամապահները։

Պահականոցում նույնպես տիրում եր լռություն։ Այնտեղ դրված եր մի բուրգ, վրան մոտ մի դյուժին հրացաններ, մի մեծ չայնիկ, որի միջին յեփած ջուրը պաղել է և որի կանթի վրա գրված է «Գողացված է №–հրաձգային գընդից»։ Կիսատ—պռատ գործում է պատի ժամացույցը, որը փչացել է դեռ անցած ամսին։

Պահակապետի սեղանի վրա դրված պոստացուցակում այսոր գրված է. «Պահակը հինգերորդ հրաձգային գնդից է»։

Պահակապետ Իվանովը իր փոխարեն թողել է մի շարքայինի և ինքը քնած է, թեթև ու ախորժակով խռմփացնում է հերթական փոխի մոտ դրված տախտի վրա։ Գիշերվա ժամը մեկին փոխված մնացած պահակայինները նստած են, ով որտեղ պատահել է և նիրհում են. նրանք քնելու իրավունք չունեն։ Նրանք կարող են քնել ժամի յերեքից մինչև հինգը՝ պոստն ստանձնելուց առաջ Պահակային Սելեզնյովը սաստիկ քնել է ուզում։ Անհաղթահարելի քունը կախ է ընկել նրա արտևանունքներից, կոպերից, ճնշում է նրանց, լցնում համակում է մարմինը ծանր, անպարտելի արճիճով։ Սելեզնյովը նախանձի զգացումով նայում է առաջին փոխի պահակային Զուբարյովին, որ քնած է յերկու քայլի վրա, դիտում է, թե ինչ-

պես նա քաղցր ժպտում է քնի մեջ, իսկ նրա այտերը թվում են բոլորովին մութ՝ այրվածքի դեռ չանհայտացած հետքերի պատճառով:

— Քնի՛ր, ընկեր, քսան րոպեյից դու կերթաս պոստը, իսկ յես կքնեմ,— յերազում է Սելեզնյովը և դիտում է նստած ընկերներին:

Ժամը յերեքից տաս րոպե պակաս պահադիր Կլիմովը հերթական առաջին փոխը տանում է դեպի պոստերը: Քնից հետո մարդ ցուրտ է զգում և ուզում է տաքանալ: Զուբարյովի այտոսկրները թեթև դողում են, և նա ավելի ամուր է սղմում հրացանը իր կողքին, վորպեսզի տաքանա: Պահադիրի հետ նրանք մոտենում են ամենահեռավոր՝ համար յերեք պոստին՝ հրանյութերի պահեստի մոտ:

— Պոստ, զգա՛ստ,— կամաց հրամայում է պահադիրը:

— Բացել փամփուշտի պայուսակը,— և՛լ ավելի կամաց հրամայում է նա Զուբարյովին, և հետո՝ ժամապահ, ի պոստ:

— Պոստ համար յերեք,— սովորաբար, շուտ արտասանելով սկսեց հին ժամապահը,— հանձնվում է յերկու կողպեք՝ կնիքներով: Վոչ վոքի մոտ չթողնել պահեստին առանց պահակապետի կամ պահադիրի:

Զուբարյովն արագ նայեց կողպեքների կնիքները և տեղում հետ դառնալով, նայեց պահադիրի յերեսին.

— Պոստն ընդունեցի:

Փոխը հեռացավ, կոշիկները բարձրաձայն չրմփացնելով թանձր ցեխի մեջ: Տիրեց կատարյալ լռություն: Զուբարյովը հրացանը դրած թևի տակ ու փամփուշտների պայուսակի վրա, գնաց պահեստի պատի յերկայնությամբ: Նրա թիկունքի

կողմից սևին եր տալիս և յերբեմն խուլ ճզվում եր Սև գետակը: Զուբարյովը դեռ դողում եր ցրտից, յերբ թեթև խշշոց լսեց գետակի ափին: Խշշոցը կամաց-կամաց ուժեղանում եր. մի բան գլորվեց ու թրմփաց գետի մեջ:

«Քար է»,— մտածեց Զուբարյովը,— նա հանկարծ զգաց, վոր շատ տաք է, համարյա շոգ է: Մոտենալով անկյունին, ժամապահը կանգնեց ըստվերում և, լարելով ուշադրությունը, նայում եր դատարկ մթության մեջ:

Ափից բարձրացան յերկու հոգի և գողունի շարժվեցին դեպի Զուբարյովը:

«Ինչո՞ւ յեն նրանք գալիս, ինչո՞ւ»,— մտածում եր նա, հրացանը թևի տակով մի քիչ առաջ տալով:

— Կա՛ց:

Վորպես պատասխան ժամապահի կանչի, ֆիգուրներից մեկը կռանալով ու թափահարելով ձեռքը, պարզ չեր՝ առա՞ջ, թե՞ հետ նետեց ինչ-վոր առարկա: Անհայտ առարկան խուլ հնչյունով դիպավ պատին, և Զուբարյովը առանց մտածելու ձախ ձեռքով բռնեց այն ու զգաց մետաղի պաղություն:

— Շո՛ւտ նետել գետը:

Նա ամբողջ ուժով այդ առարկան նետեց դեպի ձախ, սևին տվող գետը, ապա փականակը բացեց և առանց նշան բռնելու կրակեց այն ֆիգուրի վրա, վորը, թվում եր, թե ավելի մոտիկ է: Սղմելով հրահանը, նա ակամա հիշեց Բուգրի գույրի դրահը և «հակառակորդի» շլացուցիչ հրազարկը, վոր դիպավ իր դեմքին:

Պահակակետում լսեցին հրազարկի արձագանքը, նա կրկնվեց ելի յերեք անգամ: Պահակապետ Իվանովը, յերկու պահակայինի հետ, կո-

պես նա քաղցր ժպտում է քնի մեջ, իսկ նրա այ-տերը թվում են բոլորովին մութ՝ այրվածքի դեռ չանհայտացած հետքերի պատճառով:

— Քնի՛ր, ընկեր, քանի րոպեյից դու կերթաս պոստը, իսկ յես կքնեմ,—յերազում է Սելեզնյովը և դիտում է նստած ընկերներին:

Ժամը յերեքից տաս րոպե պակաս պահադիր Կլիմովը հերթական առաջին փոխը տանում է դե-պի պոստերը: Քնից հետո մարդ ցուրտ է զգում և ուզում է տաքանալ: Զուբարյովի ատամները թեթև դողում են, և նա ավելի ամուր է սղմում հրացանը իր կողքին, վորպեսզի տաքանա: Պահա-դիրի հետ նրանք մոտենում են ամենահեռավոր՝ համար յերեք պոստին՝ հրանյութերի պահեստի մոտ:

— Պոստ, զգա՛ստ,—կամաց հրամայում է պահադիրը:

— Բացել փամփուշտի պայուսակը,— ե՛լ ա-վելի կամաց հրամայում է նա Զուբարյովին, և հետո՝ ժամապահ, ի պոստ:

— Պոստ համար յերեք,— սովորաբար, շուտ-ասելուկով ասեց հին ժամապահը,— հանձնվում է յերկու կողպեք՝ կնիքներով: Վոչ վոքի մոտ չթող-նել պահեստին առանց պահակապետի կամ պա-հադիրի:

Զուբարյովն արագ նայեց կողպեքների կնիք-ները և տեղում հետ դառնալով, նետեց պահադի-րի յերեսին.

— Պոստն ընդունեցի:

Փոխը հեռացավ, կոշիկները բարձրաձայն չըմ-փացնելով թանձր ցեխի մեջ: Տիրեց կատարյալ լռություն: Զուբարյովը հրացանը դրած թևի տակ ու փամփուշտների պայուսակի վրա, գնաց պա-հեստի պատի յերկայնությամբ: Նրա թիկունքի

կողմից սևին եր տալիս և յերբեմն խուլ ճպլում եր Սև գետակը: Զուբարյովը դեռ դողում եր ցրտից, յերբ թեթև խշշոց լսեց գետակի ափին: Խշշոցը կամաց-կամաց ուժեղանում եր. մի բան գլորվեց ու թրմփաց գետի մեջ:

«Քար է»,—մտածեց Զուբարյովը,— նա հան-կարծ զգաց, վոր շատ տաք է, համարյա շոգ է: Մոտենալով անկյունին, ժամապահը կանգնեց բա-վերում և, լարելով լսողությունը, նայում եր դատարկ մթության մեջ:

Ափից բարձրացան յերկու հոգի և դողունի շարժվեցին դեպի Զուբարյովը:

«Ինչո՞ւ յեն նրանք գալիս, ինչո՞ւ»,— մտա-ծում եր նա, հրացանը թևի տակով մի քիչ առաջ տալով:

— Կա՛ց:

Վորպես պատասխան ժամապահի կանչի, Ֆիգուրներից մեկը կռանալով ու թափահարելով ձեռքը, պարզ չեր՝ առա՞ջ, թե՞ հետ նետեց ինչ-վոր առարկա: Անհայտ առարկան խուլ հնչյունով դի-պավ պատին, և Զուբարյովը առանց մտածելու ձախ ձեռքով բռնեց այն ու զգաց մետաղի պաղու-թյուն:

— Շո՛ւտ նետել գետը:

Նա ամբողջ ուժով այդ առարկան նետեց դեպի ձախ, սևին տվող գետը, ապա փակա-ղակը բացեց և առանց նշան բռնելու կրակեց այն Ֆիգուրի վրա, վորը, թվում եր, թե ավելի մո-տիկ է: Սղմելով հրահանը, նա ակամա հիշեց Բուգրի գույղի գրոհը և «հակառակորդի» շլացու-ցիչ հրազարկը, վոր դիպավ իր դեմքին:

Պահակաչենքում լսեցին հրազարկի արձա-գանքը, նա կրկնվեց ելի յերեք անգամ: Պահակա-պետ Իվանովը, յերկու պահակայինի հետ, կոխ-

կըրտելով ցեխը՝ մոտ վազեց համար յերեք պոստին, վորտեղից լսվեց հրաձգությունը: Ժամապահ Զուբարյովը կռացած ու առաջ թեքված, հենվել եր պատի դրցակի վրա և փամփուշտների հերթական պահունակով լցնում եր հրացանը:

Համար յերրորդ պոստի վրա կատարված հարձակման մասին շատ եյին խոսում գնդում, բայց ստույգ տեղեկություններ վո՛չ վոք չուներ: Հայտնի յեր միայն մի բան, վոր հարձակվողներից մեկին, տեղն ու տեղն սպանված յերկու գնդակով, և մյուսին, ձեռքից վիրավորված վերցրին ուղարկեցին դիվիզիա: Գիտեյին նույնպես, վոր հարձակվողների մոտ գտնվել ե 1914 թվի տիպարի յերեք նռնակ: Ուրիշ վոչինչ հայտնի չեր:

Իսկ գնդին տրված ապրիլի 17-ի հրամանի մեջ յերկրորդ պարագրաֆն ասում եր.

«Ապրիլի 17-ի գիշերը համար յերեք պոստի վրա կատարված գիշերային հարձակման ժամանակ ժամապահ կարմիր բանակային Զուբարյովը դրսևորեց բարձր համարձակություն, կարգապահություն ու հեղափոխական նախաձեռնություն: Հետաքննությունը պարզեց, վոր չարամիտները փորձում եյին վոչնչացնել ժամապահին նռնակով, վորը հետևյալ որը դուրս ե հանվել գետից, ուր նետել եր այն Զուբարյովը: Պահակակազմը գործել ե յեռանդագին ու ճիշտ:

Կարմիր բանակային Զուբարյովին տրվում ե միամսյա արձակուրդ, և նրա նկարը հանվում ե գնդի բաց դրոշի մոտ: Պահակապետ Իվանովին և հինգերորդ վաշտի ամբողջ պահակազմին հայտարարվում ե շնորհակալություն:

Կոմյերիտները որինախախտումների սյունակը ազմում, իջեցնում եյին որ ավուր, շաբաթ առ շաբաթ, տանելով իրենց յետևից նաև մնացածներին:

Հաղթանակը ձեռք ե բերվում դժվարությամբ: Ցել ճամբար դուրսը գալուց յերկու շաբաթ առաջ գնդի բազմատիրաժ թերթի բացեց իր յերրորդ եջը՝ խոշոր տառերով տպված ազդով, վորտեղ ասված եր.

«Վողջույն հինգերորդ վաշտի հարվածայիններին»:

Հինգերորդ վաշտը դարձավ հարվածային:

VI. ՇՈՒՐՋԱՆԱԿԻ ՅԵՐԹՈՒՂԻ

Հարյուրավոր տարիների յերթևեկությունից մաշված ճանապարհը ծռվում է մեկ դեպի աջ, մեկ դեպի ձախ: Վո՛չ մի բլուր, վո՛չ մի բարձրություն նա մեկդի չի թողնում, այլ թռչում, բարձրանում է նրանց կատարը և իջնում է ներքև:

Սովորական յեղանակով չի՛ կարելի չափել այդպիսի ճանապարհի յերկարությունը: Այդ բանը կհաջողվի անել, յեթե մարդ նրա վրա բաց թողնի վիթխարի կուրվիմետր*), և այդ դեպքում կստացվեյին հսկայական դիստանցիաներ:

Այսոր այդ ճանապարհը չափում են հարյուրավոր վոտներ, հագած մեծ ու կոպիտ կոշիկներ: Յեվ, վոր զարմանալին է, այդ վոտները կարողանում են դադարքների ժամանակ պարել վաշտի գարմոշկայի հնչյունների տակ, և պարի ընթացքում այդ կոշիկներից թափվում է չոր փոշի: Իսկ յերեկոյան դեմ այդ վոտները լցվում են անպարտելի արճիճով և անսահման ցանկությամբ՝ վո՛չ մի շարժում չանել ու հանգստանալ:

Ճանապարհի ձախ կողմից կապտին ու սևին է տալիս անտառը: Տեղ-տեղ անտառը յետ է քաշվում, և այն ժամանակ մարդուս աչքերը հանդիպում են լճերի ջրերի անշարժ հեկտարներին:

*) Կուրվիմետրը մի գործիք է, վոր ճիշտ հաշվում է տարածությունը քարտի ու պլանի վրա

Այդ ճանապարհով, անտառային լճակների մոտով, շարժվում է մի զորասյուն: Տեսնելու համար, թե ո՛վ է գնացողը, պետք է բոլորովին մոտենալ, հեռվից նկատվում է միայն բարձր փոշի: Լսվում են միլիոնավոր տարբեր հնչյուններ: Գնում ու գնում է այդ ճանապարհով հրաձգային գունդը: Արդեն յերրորդ որն է, վոր արեվելքին մոտիկ ինչ վոր տեղ, գիշերային տագնապից հետո, մնաց ճամբարը: Յերեք որ շարունակվող մարշն ու մանյովրը ձգվեցին, դարձան հարյուրավոր կիլոմետր, ցայտուն գծով ընդմիջեցին ուսուցման գործը: Յեվ թվում է կարմիր բանակայիններին, վոր իրենք գնում են, շարժման մեջ են վո՛չ թե յերեք որ, այլ ամբողջ մի դեկադ:

★

Հինգերորդ վաշտը գնում է գումարտակի առջից: Կոլեսովը բոլորովին ճաքճքված խրոմե կոշիկներով ամբողջ ժամանակ մեկ հետ էր մնում, մեկ գալիս հասնում էր գնդացրային վաշտի վերջին սայլակներին: Գնդացիրը ծածկված է չայլկով, և նրա տակից համառաբար ու մելամաղձիկ լսվում է ինչ վոր բարբարոսական, ականջը ծակող յերաժշտություն: Հրամանատարի աջ կողքից կախված է հնգամյա կենցաղային ստաժ ունեցող դաշտային պայուսակը, «Այդպիսի կյանքից» պայուսակի կաշին քերծվել է, նա չեչոտացել է և նման է ձիու տապրակի: Նույն կողքից քաշ է արած հրամանատարական «նագանը», իսկ ձախ կողքից՝ հակագազ և ջրամանը չայլկի մեջ: Ուրիշ վոչինչ չկա: Կոլեսովը քայլում է վստահ, ասես՝ հաշվում է իր քայլերը, և մեկ-մեկ հանկարծ հետ է նայում, ապա յերկու քայլ անում է

VI. ՇՈՒՐՋԱՆԱԿԻ ՅԵՐԹՈՒՂԻ

Հարյուրավոր տարիների յերթևեկությունից մաշված ճանապարհը ծռվում է մեկ դեպի աջ, մեկ դեպի ձախ: Վո՛չ մի բլուր, վո՛չ մի բարձրություն նա մեկդի չի թողնում, այլ թռչում, բարձրանում է նրանց կատարը և իջնում է ներքև:

Սովորական յեղանակով չի՛ կարելի չափել այդպիսի ճանապարհի յերկարությունը: Այդ բանը կհաջողվի անել, յեթե մարդ նրա վրա բաց թողնի վիթխարի կուրվիմետր*), և այդ դեպքում կստացվեյին հսկայական դիստանցիաներ:

Այսօր այդ ճանապարհը չափում են հարյուրավոր վոտներ, հագած մեծ ու կոպիտ կոշիկներ: Յեվ, վոր զարմանալին է, այդ վոտները կարողանում են դադարքների ժամանակ պարել վաշտի գարմոշկայի հնչյունների տակ, և պարի ընթացքում այդ կոշիկներից թափվում է չոր փոշի: Իսկ յերեկոյան դեմ այդ վոտները լցվում են անպարտելի արճիճով և անսահման ցանկությամբ՝ վո՛չ մի շարժում չանել ու հանգստանալ:

Ճանապարհի ձախ կողմից կապտին ու սևին է տալիս անտառը: Տեղ-տեղ անտառը յետ է քաշվում, և այն ժամանակ մարդուս աչքերը հանդիպում են լճերի ջրերի անշարժ հեկտարներին:

*) Կուրվիմետրը մի գործիք է, վոր ճիշտ հաշվում է տարածությունը քարտի ու պլանի վրա

Այդ ճանապարհով, անտառային լճակների մոտով, շարժվում է մի զորասյուն: Տեսնելու համար, թե ո՛վ է գնացողը, պետք է բոլորովին մոտենալ, հեռվից նկատվում է միայն բարձր փոշի: Լսվում են միլիոնավոր տարբեր հնչյուններ: Գնում ու գնում է այդ ճանապարհով հրաձգային գունդը: Արդեն յերրորդ որն է, վոր արեվելքին մոտիկ ինչ վոր տեղ, գիշերային տագնապից հետո, մնաց ճամբարը: Յերեք որ շարունակվող մարշն ու մանյովրը ձգվեցին, դարձան հարյուրավոր կիլոմետր, ցայտուն գծով ընդմիջեցին ուսուցման գործը: Յեվ թվում է կարմիր բանակայիններին, վոր իրենք գնում են, շարժման մեջ են վո՛չ թե յերեք որ, այլ ամբողջ մի դեկադ:

★

Հինգերորդ վաշտը գնում է գումարտակի առջից: Կոլեսովը բոլորովին ճաքճքված խրոմե կոշիկներով ամբողջ ժամանակ մեկ հետ եր մնում, մեկ գալիս հասնում եր գնդացրային վաշտի վերջին սայլակառքին: Գնդացիրը ծածկված է շապիկով, և նրա տակից համառաբար ու մելամաղձիկ լսվում է ինչ վոր բարբարոսական, ականջը ծակող յերաժշտություն: Հրամանատարի աջ կողքից կախված է հնգամյա կենցաղային ստաժ ունեցող դաշտային պայուսակը, «Այդպիսի կյանքից» պայուսակի կաշին քերծվել է, նա չեչոտացել է և նման է ձիու տոպրակի: Նույն կողքից քաշ է արած հրամանատարական «նագանը», իսկ ձախ կողքից՝ հանկադադ է ջրամանը շապիկի մեջ: Ուրիշ վոչինչ չկա: Կոլեսովը քայլում է վստահ, ասես՝ հաշվում է իր քայլերը, և մեկ-մեկ հանկարծ հետ է նայում, ապա յերկու քայլ անում է

դեպի ձախ և կիսադարձ շարժում կատարելով, հետազոտական հայացքով նայում է կարմիր բանակայինների քայքայված շարքերին:

— Հը՛, հոգնե՞լ եք, ընկերներ, հոգնե՛լ,— պարզ չէ՝ արդյոք հարցնում, թե դրականապես ասում է նա և ժպտում է քաջալերիչ ժպիտով: Շարքերի միջից հրամանատարի վրա յեն նայում կարմիր բանակայինները, վորոնցից վոմանք նույնպես ժպտում են ու պատասխանում:

— Իհարկե, ընկեր հրամանատար, մարդ այդպիսի ճանապարհով գնա և չհոգնի՛...

— Ե՛հ, ընկեր հրամանատար, կվարժվենք՝ բուրժուաների հետ կռիվը հեշտ կլինի,— լսվում է անխոնջ մի ձայն, և Սելեզնյովը յեռանդուն թափ է տալիս իր յերեսին նստած փոշին:

— Դրա համար էլ հենց այդպիսի մարշեր ենք կատարում, ընկերներ,— հաստատում է նրա ասածը հրամանատարը. Հո մեր բավականության համար չէ, վոր շուրջանակի յերթուղիներ ու մանյովրներ ենք կատարում: Իհարկե՝ այդ գիտությունը մի քիչ դժվարությամբ է ձեռք բերվում:

Կոլեսովը պայուսակից հանում է քարտը, համեմատում է այն բնական վայրի հետ, ապա նորից քննական հայացքով դիտում է ճանապարհը: Վերջինս այդ րոպեյին մեկեն ծռվեց դեպի ձախ և անսպասելի կերպով ուղղակի բարձրացավ ավազոտ բլուրը: Կոլեսովը ծիծաղում է:

— Քարտով դուրս է գալիս, վոր անցել ենք քսան մեկ կիլոմետր, իսկ յեթե իրապես վերցնենք, կստացվի յերեսուն:

Վաշտը գնում է: Սելեզնյովը մլուլ է տալիս և հանում է յուրաքանչյուր կարմիր բանակայնին ծանոթ վաշտային գարմոշկան շապկի միջից: Նրանք այդ գարմոշկան գիտեն իր սքանչելի ձայնից և այն բանից, վոր գարնանը, յերբ ակումբից ստացված հինը մաշվեց, քրքրվեց, ու Սելեզնյովը խնամքով հետազոտելուց հետո վճռականապես հայտարարեց, թե պետք է նետել աղբանոցը,— վաշտը հանգստի որերից մեկում՝ հարվածային շաբաթորյակում դատարկելով քսան վագոն ցորեն՝ ստացված դրամով գնեց գարմոշկա: Ֆադեյեվը գարմոշկայի համար պատրաստեց դրվագներով նախշած մի այնպիսի արկղ, վոր վաշտում, ամենքի բերանը զարմանքից բաց մնաց: Այդ որից սկսած գարմոշկան գոյություն ուներ Սելեզնյովի անսահման իշխանության տակ և վաշտի հետ միասին մասնակցում էր նրա բոլոր յերթերին ու մարշերին: Ճիշտ է, հենց առաջին յելույթը ցույց տվեց Ֆադեյեվի դրվագների անկատարելագործությունը. նրանք քրքրեցին Սելեզնյովի ձախ կողը, և նա հանգիստ խղճով վոչնչացրեց այդ զարդարանքները:

Սելեզնյովը հանում է թաշկինակը և խնամքով սրբում է իր քրտնած ձեռները:

— Համա թաշկինակ ունես, հա՛,— ժպտում է Չերկեսովը,— թաշկինակ չի, այլ վոտի փաթաթան, յեղբա՛ր պատվական:

— Իսկ ինչո՞վ է փաթաթանը թաշկինակից վատ, ընկե՛ր հրամանատար,— Սելեզնյովը դնում հարմարեցնում է գարմոշկան իր աջ ուսին,— իմ գիտենալով փաթաթանը թաշկինակից ավելի կարևոր է, վորովհետև նա պաշտպանում է մարդուս վոտները,— յեզրափակում է նա և հանում է իր գործիքից առաջին հնչյունները:

Դասակները գնում են իրարից տասնուհինգ քայլ հեռավորությամբ: Կարմիր բանակայինները բացել են իրենց ոձիքները՝ «ոդի համար»: Նվագի սկզբից վոտները բարձրանում են ավելի թեթև,

հարմարվում են Սելեզնյովի նվագի յեղանակների տակտին։

«Մենք ամենքս յելել ենք ժողովրդից, աշխատավոր ընտանիքի վորդիք»,— յերգում է գարմոշկան վարպետի փորձված մատների տակ, և ուրախ ու հեշտ է դառնում քայլելը ծանոթ յերաժշտությամբ։

Սելեզնյովն սկսում է նվագել ուրախ յեղանակներ։ Ժայթքում է Բուդյոննիի համառ. մարշը։

Ведь с нами Ворошилов, первый красный офицер...
Сумеем кровь пролить за СССР...

Սկսում են յերգել առաջին շարքերը։ Իսկ Սելեզնյովը, կարծես ուզենալով ցույց տալ իր լիովին իշխանությունը, հանկարծ կտրում է նըվագը, վերցնում է մի քանի անցողիկ ակորդներ, և թրթռուն հնչեցնում է « яблочка »-ն *)

— Ե՛խ, մայրիկ ջան, ա՛խ, փեսա յեմ ուզում,— բղավում է Սելեզնյովի հետևից մեկի ուժեղ ձայնը։

Ֆադեյևն ուշադրությամբ ուսումնասիրում է շրջակայքը, հաճախ հարցեր է տալիս հրամանատարներին, թեև ինքը առաջին անգամ չէ, վոր գնում է այս տեղերով։

— Ռազմերթի ժամանակ ամեն րոպե ուսումնասիրեք տեղանքը ռազմական տեսակետից,— սովորեցնում է Ֆադեյևն իր ջոկի կարմիր բանակայիններին։— Ո՛վ գիտե, գուցե ստիպված կըլինենք պատերազմել այստեղից։

— Այո՛, այստեղից սահմանը մոտիկ է, վոր թքես, թուքդ կհասնի սահմանին,— համաձայնվում է Ջերկեսովը։

---

*) Ռուսական ժողովրդական աշխույժ յերգ։ Ծան. թարգ.

— Ֆիննը վրա չի՛ տա, կվախենա,— քննադատաբար նկատում է գնդացրորդներից մեկը։

— Յեվ ստացվեց այն, ինչ այն ժամանակ Լեհաստանի հետ Բուդրի գյուղում,— բարկացավ Ֆադեյևը,— բանը հո Ֆինլանդիան չի, այլ այն է, վոր նա կապիտալիստական է և նրա թիկունքին կանգնած են անգլիական ու ֆրանսիական բուրժույները։

Նա նորից ուշադրությամբ դիտում է ճանապարհին մոտեցած լճի մակերևույթը։

— Ե՜հ, ի՜նչ կլողանայի,— լսվում է Սիրինի տենչալից բացականչությունը։

— Թո՛ղ տենչերդ, տենչացող,— հրում է նըրան Ֆադայևը,— հո գիտես, վոր այդ բանը հիմա հնարավոր չէ։

Սիրինը համառաբար դեմքը շուռ է տալիս դեպի ջուրը և բարձրաձայն ներս է քաշում խոնավ ոդը։

— Դադարք, դադարք,— բերնեբերան անցնում է զորասյունի միջով։

— Կանգ ա՛ռ,— հրամայում է Կոլեսովը,— դո՛ւրս յեկ ճանապարհից, նստի՛ր։

Ապա տեսնելով, թե ինչպե՛ս վոմանք գնում են դեպի լիճը, հրամայում է.

— Ընկե՛ր հրամանատարները, դեպի լիճը վոչ վոքի չթողնեք. կարող է մեկն ու մեկը ջուր խըմել և տասնուհինգ րոպեյից «փորացավով» կըպառկի սանկողակառքի մեջ։

Կոլեսովը նստում է փոշուց գորշացած խոտերի վրա և սկսում է հանել կոշիկները։ Նա վերցնում է ձախ վոտի կոշիկը, վոր ավելի յե ճաքճըքվել, և խփելով կրունկին, թափ է տալիս միջի թանձր փոշու հոսանքը։

— Տես, է՛,— հրճվում է գրքատար Վոլկու-

յեվը հոգանքով.— Ինչպես յերևում է, ընկեր հրամանատար, ձեր կոշիկները փոշի կուլ տալ շատ են սիրում:

— Ավելի լավ է բաժանենք գրականությունը, գրականությունը,— ծիծաղում է Կոլեսովը, նույն օպերացիան կատարելով նաև աջ կոշիկի վերաբերմամբ:

— Յես կբաժանեմ, բայց ձեր անունը կընկնի լրագրի մեջ: Ինքս կգրեմ,— սպառնում է Վոկույեվը, ցնցելով իր գրքերի պայուսակը:

— Իսկ յես կհրամայեմ, վոր չտպեն, և դուք վոչինչ անել չեք կարող,— սպառնալիքի տոնով պատասխանում է Կոլեսովը, վառելով ծխախոտը:

Վոկույեվը հետ է դառնում, նայում է հրամանատարին, հասկանում է, վոր նա կատակում է:

Հապա փորձեք չտպել, ընկեր հրամանատար: Հապա ինչի՞ համար է ինքնաքննադատությունը: Ձեզ կհրավիրեն բջիջը և ձեր գլխին աղուն կաղան:

— Մտի՛կ, է՛, ի՛նչ գրագետ է դարձել,— ժպտում է Կոլեսովը հեռացող կարմիր բանակայինի հետևից:— Արի ու խոսիր նրանց հետ: Կեցցե՛ն կոմյերիտները, աճում են ու աճում, արդեն աճել են:

Նա փաթաթում է վոտի փաթաթանները և հաճույքով ձգվելով, մեկնվում է խոտերի վրա, առանց մտքերի նայելով յերկնքի հեռու կապուտակին:

Հինգ-հինգ խաչմերուկ դրած հրացանները չեն փայլում արևի տակ: Սվինները ծածկվել են փոշու թանձր շերտերով, իսկ փոշին խառնվելով հրացանների հալված յուղի հետ, պինդ նստել է

տաք պողպատին: Դասակները պառկեցին փոքրիկ խմբերով: Համարյա ամենքն էլ հանգստանում են, վաշտի հրամանատարի նման նայելով անհատանելի և խեղդող կապուտակին: Հենց այստեղ էլ, գլուխները կախած, փշրտացնում են քեղիների մեջ գնդացրային ձիերը: Յերկանիվ սայլակների վրա դրած գնդացիրները ծածկված են շալիկներով և թվում է, թե նույնպես հանգստանում են՝ վեր ցցած պատայանները: Դաշտարքի վրա դանդաղ նըստում է փոշե ծածկույթը:

Յուդինը պառկած է Գորելովի կողքին՝ խոտերի վրա: Պապիրոս ծխելով, մոտենում են նրանց Չերկեսովը և Ֆադեյեվը: Նրանք չեն կարող յերկար ժամանակ իրար չտեսնել, իրար չմոտենալ և չխոսել:

— Պառկի՛ր,— հանաքով հրամայում է Գորելովը, և տուր ծխենք:

— Հը՛, հալից ընկե՞լ եք, առաջնորդներ,— ծիծաղում է Սաշա Չերկեսովը:— Իսկ կոմյերիտական մասսան թողել եք առանց հսկողության հա՞:

— Ա՛յ, ահա մասսան, տեսնո՞ւմ ես, վոտները վեր ցցած,— ձեռքով նշում է Յուդինը.— յերկու րոպեյից նորից առաջ կքայլենք:

Զորքն էլ լուռ են ու ծխում են:

— Յերկու ժամից հետո տեղ կհասնենք,— վըճռում է Ֆադեյեվը, նայելով արևին:

— Պառկա՛ծ եք, ընկերներ,— հնչում է պառկողների գլխավերևում վաշտի հրամանատարի ծաղրական ձայնը.— արդեն անցել ենք յերեսուն կիլոմետր, և առայժմ միայն մեկն է գնում սանկողակառքի մեջ. ճիշտ է, վոր թեկնածուներ էլ կան: Յերեսուն կիլոմետր, դեռ ութ էլ կա մինչև գիշերոթոց:

— Յերեկուն ուժ,— գումարեց յերկու թիվն իրար հետ Յուդինը.— աննշան գումար չի:

— Լավ գումար է՝ թե՛ վաշտի համար, թե՛ ամբողջ գնդի համար,— դանդաղ ավելացրեց Ֆադեյեվը:— Այդ փոքրա ճանապարհներին մենք այդպե՛ս ենք կատարում տասնուվեցերորդ կուսակցական համագումարի կամքը:

— Կատարո՛ւմ ենք, ճիշտ է, դեռ պոչեր շատ կան,— նկատում է Կոլեսովը:— Սակայն յեռանդն էլ բավական շատ է:— Նա ուժեղ շարժում է նկատում առջևում և հրամայում է խիստ ու բարձր.

— Հի՛նգերորդ, կանգնի՛ր:

★

Կաղնենու, Լաստենու և Թղթենու խիտ թփուտը մոտենում է մեծ լճին: Գնում ես այդ թփուտի միջով ու թվում է, թե վերջ չունի, և հանկարծ հրացանների բարակ փողերի ու տերևների արանքից ինչ֊որ տեղ փայլում է յերեկոյան արևով վողողված լճի մակերևույթը: Թփուտի մեջ աղմկում է քամին, ալիքները գլորվում են դեպի ափը, խըլում են նրանից սրուուն ավազանոցի նորանոր կըտորներ: Յերեկոյան խավարի մեջ չի յերևում մյուս ափը, և լիճը թվում է ծովի պես մեծ:

Հալվեց, չքացավ շարժական խոհանոցների վերջին ծուխը, և նրա հետ խաղաղվեց ճամբարի անհանգիստ աղմուկը: Մարգագետնի անհավասար զառիվայրի վրա խփել են կանաչ նեղ վրաններ՝ յուրաքանչյուրը վեց մարդու համար: Խավարն ու քունը սողալով մտնում են ճամբար: Նրա տարբեր ծայրերում միայն մեկ կանգ առնելով, մեկ շրջելով արթուն է գիշերային պարեկների առաջին փոխը:

Ջերկեսովը նիրհել սկսելով, ականջ է դնում վերջին վրանից լսվող խոսակցությանը:

— Ըհը՛, այսօր անցանք քառասուն կիլոմետրը,— լսվում է կարմիր բանակային Սիրինի ցածր ձայնը:

— Անցա՛նք: Իհարկե, կանցնես, յերբ կհրամայեն: Հիսուն էլ կանցնես,—նույնպես հանգիստ պատասխանում է նրան մի ուրիշը, և Ջերկեսովը ճանաչում է կարմիր բանակային Նաումովին:

— Խելքի տոպրակ, պետք էր գնալ, պլանով պետք էր հասնել լճին,— նորից սկսում է Սիրինը:

Վրանի մեջ լսվում է հազի ձայն: Անտեսանելի մեկը չրթեցնում է լուցկին և վառում է ծխախոտը: Ծխախոտը բռնկում է, և Ջերկեսովը մի վայրկյան տեսնում է Ֆադեյեվի քիթն ու կզակը, ապա լսվում է նրա հոգնած, կարծես վո՛չ իր ձայնը:

— Ասում եք՝ հրամայում են, հա՞ ընկեր Նաումով: Այդ ո՞վ է հրամայողը, հրամանատարները, հա՞:

— Հայտնի բան է, թե ով: Հրամանատարները, ուրիշ էլ ո՞վ:— Նաումովը փաթաթում է ծխախոտը և ձգվում դեպի Ֆադեյեվը, վոր վառի:

— Մի՞թե հրամանատարներն իրենք էլ մեզ հետ հավասար չե՞ն գնում,— արտասանում է մի անգամ ևս Սիրինը՝ քնկոտ ձայնով:

— Բանը հո այն չի, վոր նրանք գնում են վոտով կամ ձիով,— ձգվելով ու նորից հազալով առարկում է Ֆադեյեվը:— Գումհրամանատար Պանովը, ա՛յ, ամբողջ յերթուղին կատարեց ձիով, վորովհետև գումարտակը ջոկ չէ, պետք է լինել նրա և՛ գլխի մասում, և՛ տուտի մասում: Հետո, մեկ էլ տեսար՝ գնդի հրամանատարը կանչեց իր մոտ: Հո վոտով վազ չե՛ս տա: Բանն այդ չի,— նորից կրկնում է Ֆադեյեվը:

— Գիտեմ, թե հետո դու ի՛նչ ես ասելու,— ընդհատում է Նասումովը բարձրաձայն և ներս է քաշում ծուխը, վորից վրանի թեքվածքի վրա ցատկլտում են նրա ու Ցաղեյեվի անհեթեթ ստվերները։— Պետք է, կասես, հարվածայնություն, կարգապահություն։ Իսկ իմ վոտների մեջ, թանկագին ընկեր հրամանատար, վոսկրացավ է սկսվում, և յեթե յես այդպես քայլելու լինեմ, կսատկեմ, առանց տեսնելու այդ սոցիալիզմ ասածդ։

— Սպասեք, ընկեր Նասումով,— Ցաղեյեվի ձայնը հնչում է բոլորովին կամաց ու խուլ, և Ջերկեսովը հազիվ է լսում այն.— գուցե յես ու դու, և մեզ հետ նաև վոմանք, վոր այստեղ քնած են ճամբարում, չենք տեսնի սոցիալիզմը։ Դա ճիշտ է։ Ասենք թե վաղը պատերազմ է սկսվում։ Կարող են մեզ սպանել կռվի հենց առաջին որերին։

— Կարող են սպանել,— անվճռականորեն համաձայնվում է Նասումովը։

— Բայց դա չի նշանակում, վոր մենք չպիտի գնանք կապիտալիստների դեմ սկսված պատերազմը։

Նասումովը ծխում է առանց շտապելու։

— Ահա մենք այստեղ քնում ենք մերկ հողի վրա,— նա վորպես ապացույց իր ասածի՝ կոշկով մի քանի անգամ խփում է գետնին,— ու կարող ենք մրսել։ Յես էլ, կարող է պատահել, վոր վոսկրացավ կամ թոքերի բորբոքում ստանամ, իսկ այնտեղ,—նրա ձեռքը, սև թևի նման, կիսում է վրանը,— այնտեղ քնած են ուրիշները տաք անկողիններում։ Յեվ յերբեք,— նա շեշտեց «յերբեք» բառը,— մի որում չեն անցնի քառասուն կիլոմետր, այն էլ հրացանով։

Նասումովի խոսքերի մեջ լսվում էր տարակուսանք և դառնություն։

Ջերկեսովը հանկարծ ուզեց գնալ այնտեղ՝ նրանց վրանը և ասել Նասումովին մի մեծ ու կարեվոր բան։ Նա հենվեց իր արմունկի վրա և լսեց լռությունը։

— Իսկ նրա՞նք, ընկե՛ր Նասումով,—շարունակում էր Ցաղեյեվը,—հազարավոր այն յերիտասարդները, վորոնք սպանվեցին քաղաքացիական պատերազմում, վորոնց տանջեցին մախնովականները, հանելով նրանց աչքերը, աստղեր փորելով նրանց մեջքին։ Գնդակահարված կոմունիստներն ու կարմիր բանակայիննե՞րը,—նրանք այդպես չեյին դատում, ինչպես դուք։ Նրանք տուժեցին վո՛չ թե վոսկրացավով, նրանք հեղափոխությանը տվին իրենց ամենաթանկ բանը՝ կյանքը։

Ցաղեյեվի ձայնը մի փոքր դողում էր և դարձավ խիստ։

— Ինչ էլ վոր լինի, անհասկանալի բաներ շատ են լինում,—անվստահ ու կամաց ասաց Նասումովը։

— Այդպես էլ կասեյիր, վոր «անհասկանալի» յե»,— բարկացած վրա բերեց Սիրինն անկյունից։ Նա նույնպես չէր կարողանում քնել և ամբողջ ժամանակ շուռ էր գալիս մի կողքից մյուսին։

— Ա՛յ, մենք պառկած ենք այստեղ,— կարճ լռությունից հետո ասաց Ցաղեյեվը համոզված,— իսկ Մոսկվայում այժմ վերջանում է բոլշեվիկյան կուսակցության պատմական համագումարը, վորը մեզ՝ կարմիր բանակայիններին տալիս է մարտական խնդիրներ՝ ամրացնել մեծ խորհրդային յերկրի պաշտպանությունը։ Մենք մարշ ենք կատարում, իսկ Դոնբասում հարվածային բանվորները պայքարում են քարածխի յուրաքանչյուր տոննի համար։ Մենք քնում ենք, իսկ

Դնեպրոստրոյում վառվում են հազարավոր ճրագներ և գիշերային փոխը շինում է մեծ կառուցվածքը։ Իսկ ինչ-որ խուլ գյուղում, գիշերվա մթության մեջ, յերկաթե ձողը ձեռքին, կատաղի թշնամանքը սրտում, թաքնված սպասում է կուլակը կոլխոզի նախագահին, վորը, գուցե, դեմոբիլիզացիայի յենթարկված կարմիր բանակայիններից մեկն է... Ահա թե ինչո՛ւ համար արժե, ընկեր Նաումով, և պետք է, վոր մենք որական քայլենք քառասուն կիլոմետր, վառվենք ամեն մի պարապմունքի ժամանակ վորպես լավագույն հարվածայիններ։ Յեվ վո՛չ թե այն պատճառով միայն, վոր մեզ հրամայում են հրամանատարները։

— Մարդ յերբ մտածում է, քո ասածը դրուստ է դուրս գալիս,— համաձայնվում է Նաումովը.— բայց վոտով եդքան տարածություն չափելուց հետո, ինչպես այսոր, ուզես-չուզես խոսում ես...

Ֆադեյեվն ելի մի բան ասաց, բայց հոգնածությունը հաղթահարեց, և դասակի հրամոդ Չերկեսովը ամուր քնեց։

★

Շուրջանակի յերթուղու մեջ անցան ութ որ ու գիշեր, արբեցած վառ արևի տապով, յերբեմն անձրևով, մեծ անցումներով, «կռիվներով» և առանց յերազների ամուր քնով դաշտային գիշերոթցներում, վորոնք նշանակալից եյին շարժական խոհանոցների ծխով և կերակրի անուշ հոտով։

Հեռու չեր ճամբարը, յերբ վրա հասավ իններորդ որը, «հակառակորդի» ամրացրած գոտու վճռական գրոհի որը։

Դեպի ճամբարը տանող մատույցների մի կետում «հակառակորդը» փակել եր գնդի ճանապարհը։ Յեվ գունդը գնում եր մարտական կարգով, առաջուց ուղարկելով հետախուզություն ու պահպանություն։ Իսկ գլխավոր ուժերը շարժվում եյին ինքնավստահ և անդիմադարձելի, ինչպես հեղափոխությունը։

★

Առավոտյան ժամը յոթին կենդանացավ Մենտասարյան կանաչ հարթավայրը։ Մենտասարից տանող ճանապարհի փոշոտ շերտով «կարմիր զորքերը» մեծ ու փոքր խմբերով մաս-մաս լցնում, տեղափոխվում եյին դեպի հարթավայրը։ Շաղից թրջվում են կոշիկներն ու ծնկները, տեղ-տեղ պատահում եյին Բոշխով ծածկված առուներ, ջրով լեցուն, բայց մարդկանց խմբերն արագ արագ եյին գնում մերթ բարձրանալով ամբողջ հասակով, մերթ կռանալով ու բոլորովին կորչելով Բոշխի խիտ մացառների մեջ։

Հինգերորդ վաշտը հարձակվում է ձախ թևի կողմից. յերկրորդ շարանում Կոլեսովը մասնատեց վաշտը դասակ առ դասակ և ինքը հեռադիտակով հետևում է, թե ինչպես առջևից գնում է բացապատված չորրորդ վաշտը։

— Քանի րոպեյից հետո նրանք գրոհի կդիմեն,— մի փոքր յետ դառնալով զեկուցում է առջևից գնացող վաշտային դիտողը՝ կարմիր բանակային Նիկոլայեվը։

— Այո՛, մի քանի րոպեյից հետո,— համաձայնվում է Կոլեսովը։— Պետք է կանգնեցնել վաշտը,— վճռում է նա, աչքով չափելով տարածությունը։

— Ընկեր Նիկոլայև, տվեք «տեղում» ազդանշանը:

—Նիկոլայևը ուղղակի նստում է թաց խոտերի վրա, գոտուց հանում է խողովակի ձևով փաթաթած դրոշակները՝ կարմիր ու սպիտակ, և աշխատելով աննկատելի մնալ, թափահարում է նրանցով իր գլխի վրա, Կոլեսովը տեսնում է, թե ինչպես իրար հետևից դասակները չքվում են մացառների մեջ. դիտողներն են միայն վոր նկատում են, հնարավորության չափով՝ կռացած ուռենու խիտ թփերի յետևում:

— Ինչո՞ւ մենք կանգ առանք. ի՞նչ եք կարծում, ընկեր Կովալ,— քննում է Ակինշինն իր ջոկը, վոր պառկել եր առվի մոտ: Զուբարյովը միայն թռավ առուն և պառկած է մյուս ափին, աչքերով հետևելով մերթ դասակի հրամանատարին, վորին հետևյալ հրաման է ստացել ինքը, մերթ Ակինշինին:

Կովալը խորասուզված փորում է քիթը և ուշադրությամբ նայում է առաջ—

— Շատ կարելի չե, ընկեր հրամանատար, «հակառակորդը» դեռ լավ պատրաստ չե,- խորամանկ ժպտով ասում է նա,— դա այդպես է փաստորեն, իսկ տակտիկորեն, չատ կարելի չե, վոր նրա հրային միջոցները չատ են և նա մեզ համառ կերպով կանգնեցնում է, չի թողնում առաջ գնանք:

Կարծես Կովալի ասածը հաստատելու համար, առջևից վորոտաց «կապույտ» հակառակորդի հրացանային ու գնդացրային կրակի անող փոթորիկը, չոր դռռացին նրա թնդանոթային հրոդարկերը:

Նրանց պատասխանեցին «կարմիր» մարտկոցները Մենասարի գյուղից:

Նիկոլայևի դրոշակների նոր թափահարությամբ, ալիք առ ալիք անցնելով առաջին դաշտի միջով, գնացին գնդացրորդները, ծանր դոռալով իրենց կոշիկները: Չերկեսովը տեսնելով Ակինշինին, սովորականի պես՝ մեղմ ժպտաց նրան:

— Պառկեք, հարվածայիններ, իսկ մենք կըթաղցնենք ձեզ գնդացիրներով, վորպեսզի ապահով լինեք:

— Նու, մենք պարտքի տակ չենք մնա, մանավանդ յեթե բանը հասնի դրոհի,— պատասխանում է Ակինշինը և հպարտությամբ նայում է իր ջոկին:

Ոդի մեջ աննկատելի դռնչում է սավառնակի մոտորը, ապա նա անցնում է ցածրից, չեղակի ծռվելով աջ թևի վրա, վորից հանկարծ մարդկանց աչքերի առաջ փայլեց մեծ ու պայծառ կարմիր աստղը:

— Մերն է, կործանիչ է,— թեթևացած չունչ են քաշում կարմիր բանակայինները, գլուխները պտտելով պողպատե թռչնի թռիչքի ընթացքի համեմատ:

— Մերն է, վոր կա,— կարծես՝ ինքն իրեն մտաբերում է Զուբարյովը,— իսկ յեթե հակառակորդինը լինի, նրա տուտի վրա անպայման կլինի կապույտ գիծ:

— Տեսեք, ընկերներ, գնդացրային դասակն արդեն սկսեց գործել,—ձեռքով է անում Ակինշինը:

Առջևում, մացառուտները ծածկելով ծխով, սկսեցին իրագործել իրենց հրային խնդիրը Չերկեսովի յերկու գնդացիրը: Չորրորդ վաշտի կողմից, հեռու արձագանքի պես, լսվեց կարճ «ուռա» և լռեց:

Վաշտի հրամանատար Կոլեսովը մոտ վազեց, պառկեց Ակինշինի կողքին, իսկ կես րոպեից հետո այստեղ եկին նաև բոլոր դասակների հրամանատարները: Կոլեսովն շտապում էր և խոսում էր հուզված ու կցկտուր:

— Չորրորդ վաշտը յերկու անգամ գրոհեց, բայց անաջող... Գումհրամատարի հրամանն է՝ շրջասու շարժումով հարվածել «կապույտների» աջ թևը... Զարգացնել գրոհը խորությամբ, հակառակորդի թիկունքում:

Նա յեռանդագին թափահարում էր ձեռքը, ցույց տալով, թե վո՛րտեղ պետք է լինի հակառակորդի պաշտպանության թևն ու թիկունքը, և շտապում էր շուտ վերջացնել խնդրի դրույթը:

— Մեզ է տրված առաջին գնդային մարտկոցը: Հավանական է, որ հակառակորդն ունի տանկեր ու զրահապատ ավտոմոբիլներ... Յուրաքանչյուր կարմիր բանակայնի ճիշտ բացատրել խնդիրը, կապել այն մեր շուրջանակի յերթուղիի հետ՝ կուսակցական համագումարի օրերին... Առջևից յերրորդ դասակը, առաջինը յերրորդի հետևից, յերկրորդը ձախից: Գնդացրային դասակ, ընկե՛ր Զերկեսով, առա՛ջ:

Հրամանատարները վազելով գնացին իրենց դասակները:

— Ամենագլխավորն արագությունն է,— բղավեց նրանց հետևից Կոլեսովը:

Վաշտը փոստյուններով արագ առաջ խաղաց: Յերբ աջ գնացող յերկրորդ դասակը հոծացավ չորրորդ վաշտի հետ, Կոլեսովը հրամայեց՝ վերցնել ավելի ձախ, մտնել Բոշխի մթին տվող գոտու մեջ: Գնդացիրները տանում եյին ձեռքով: Զերեկեսովը առաջին ջոկի հետ գնում էր թանձր թփուտների միջով, նա հանկարծ ընկավ խոր մի

առու՝ մեջը հոսած կանգուն ջուր: Դասակի հրամոգը թունդ խոսքերով հայհոյեց, բայց առջևում կանոնավոր հաջորդականությամբ յերևում եյին ելի մի քանի այդպիսի առուներ:

— Յերևի, ժամանակով այստեղից տորֆ են հանել, իսկ հիմա մեր գլխին աղուն կաղան,— ժպտաց նա ինքն իրեն և մարդ ուղարկեց՝ զեկուցելու վաշտի հրամանատարին:

— Համարյա անհնարին է՝ առաջ շարժվել,— զեկուցում էր Կոլեսովին նշանատու Տույլգան, և նրա ձայնի մեջ լսվում էր թագնված տագնապ:

— Ինչ է նշանակում՝ «համարյա».— հարցրեց Կոլեսովը.— կամ կարելի յե, կամ չի կարելի, իսկ միջին «համարյա» չի կարող լինել,— այդպես էլ ասեք հրամանատար Զերկեսովին.

Տույլգան շուռ յեկավ, ուզում էր գնալ:

— Ասեք Զերկեսովին՝ առա՛ջ շարժվել. յեթե օգնության կարիք լինի, կուղարկեմ յերրորդ դասակից,

Տույլգան գնաց:

Նորից գնդացրային առաջին ջոկի հրամանատու դարձավ Ֆադեյևը: Նա Տույլգայից լսեց վաշտի հրամանատարի հրամանը:

— Ընկերներ, պետք է առաջ գնալ, առուների միջով. կարմիր բանակային—հարվածայինը չի կարող կանգ առնել ինչ որ հոսած առուների առաջ:

Նա կտրեց ուռենու մի վոստ և նրանով փորձեց ջրի խորությունը:

— Վոչի՛նչ, մինչև գոտին է, ավելի չի լինի, հանգիստ ասաց նա և «մաքսիմի» «մարմինը» ձգելով ուսերին, զգույշ ու արագ մտավ բորբոսնած ջուրը: Սկզբում ջուրը հասավ մինչև գոտին,

Վաշտի հրամանատար Կոլեսովը մոտ վազեց, պառկեց Ակինշինի կողքին, իսկ կես րոպեյից հետո այստեղ եյին նաև բոլոր դասակների հրամանատարները: Կոլեսովն շտապում եր և խոսում եր հուզված ու կցկտուր:

— Չորրորդ վաշտը յերկու անգամ գրոհեց, բայց անաջող... Գումհրամատարի հրամանն է՝ շրջառու շարժումով հարվածել «կապույտների» աջ թևը... Զարգացնել գրոհը խորությամբ, հակառակորդի թիկունքում:

Նա յեռանդագին թափահարում եր ձեռքը, ցույց տալով, թե վո՛րտեղ պետք է լինի հակառակորդի պաշտպանության թևն ու թիկունքը, և շտապում եր շուտ վերջացնել խնդրի դրույթը:

— Մեզ է տրված առաջին գնդային մարտկոցը: Հավանական է, վոր հակառակորդն ունի տանկեր ու զրահապատ ավտոմոբիլներ... Յուրաքանչյուր կարմիր բանակայնի ճիշտ բացատրել խնդիրը, կապել այն մեր շուրջանակի յերթուղիի հետ՝ կուսակցական համագումարի որերին... Առջևից յերրորդ դասակը, առաջինը յերրորդի հետևից, յերկրորդը ձախից: Գնդացրային դասակ, ընկե՛ր Զերկեսով, առա՛ջ:

Հրամանատարները վազելով գնացին իրենց դասակները:

— Ամենագլխավորն արագությունն է,—բղավեց նրանց հետևից Կոլեսովը:

Վաշտը փոսոյուններով արագ առաջ խաղաց: Յերբ աջ գնացող յերկրորդ դասակը հոծացավ չորրորդ վաշտի հետ, Կոլեսովը հրամայեց՝ վերցնել ավելի ձախ, մտնել Բոշկի մթին տվող գոտու մեջ: Գնդացիրները տանում եյին ձեռքով: Զերեկեսովը առաջին ջոկի հետ գնում եր թանձր թփուտների միջով, նա հանկարծ ընկավ խորը մի

առու՝ մեջը հոտած կանգուն ջուր: Դասակի հրամողը թունդ խոսքերով հայհոյեց, բայց առջևում կանոնավոր հաջորդականությամբ յերևում եյին ելի մի քանի այդպիսի առուներ:

— Ցերևվի, ժամանակով այստեղից տորֆ են հանել, իսկ հիմա մեր գլխին աղուն կաղան,— ժպտաց նա ինքն իրեն և մարդ ուղարկեց՝ զեկու- ցնելու վաշտի հրամանատարին:

— Համարյա անհնարին է՝ առաջ շարժվել,— զեկուցում եր Կոլեսովին նշանառու Ծույլգան, և նրա ձայնի մեջ լսվում եր թաքնված տագնապ:

— Ինչ է նշանակում՝ «համարյա».—հարցրեց Կոլեսովը.— կամ կարելի յե, կամ չի կարելի, իսկ միջին «համարյա» չի կարող լինել,— այդպես եյ ասեք հրամանատար Զերկեսովին.

Ծույլգան չուռ յեկավ, ուզում եր գնալ:

— Ասեք Զերկեսովին՝ առա՛ջ շարժվել. յեթե ոգնության կարիք լինի, կուղարկեմ յերրորդ դասակից,

Ծույլգան գնաց:

Նորից գնդացրային առաջին ջոկի հրամանատու դարձավ Ֆադեյեվը: Նա Ծույլգայից լուռ լսեց վաշտի հրամանատարի հրամանը:

— Ընկերներ, պետք է առաջ գնալ, առուների միջով. կարմիր բանակային—հարվածայինը չի կարող կանգ առնել ինչ վոր հոտած առուների առաջ:

Նա կտրեց ուռենու մի վոստ և նրանով փորձեց ջրի խորությունը:

— Վոչի՛նչ, մինչև գոտին է, ավելի չի լինի, հանգիստ ասաց նա և «մաքսիմի» «մարմինը» ձգելով ուսերին, զգույշ ու արագ մտավ բորբոսնած ջուրը: Սկզբում ջուրը հասավ մինչև գոտին,

Իսկ մեջտեղում՝ մինչև ուսերը. Ցաղեյևը նման էր մեծ ջրասույզի, վոր լողեր տալիս ջրում՝ ձեռքերում գնդացրի մարմինը։

Հրամանատարի հետևից, նույնպես հանդիստ ու դատապարտված՝ ջուրը մտավ, ձիու պես փռնչալով, նշանառու Շույլգան։

— Հրացանը թրջեցի՞ր, հրացա՛նը,— բղավում էին նրան ափից, իսկ նա, ճեղքելով կանաչ տիղմը, լողում, թե գնում էր լայն ջրանցքի միջով։

Ջոկի մարդիկ մեկ-մեկ, իրար հանձնելով հրացանները, անցան ջրանցքից։

Յերրորդ դասակի հետ՝ Ցաղեյևի բացած հունին մոտեցավ Կոլեսովը։ Նա արագ կշռադատեց դրությունը. յերկու հարյուր մետր տարածությունից այն կողմը հարթավայրը բարձրանում էր, գնում էր դեպի սարը, իսկ այդ յերկու հարյուր մետրը ճահճուտ էր և ծածկված էր յերեք-չորս մետր լայնությամբ ջրանցքներով։ Առջևից, իրար խռնված ու ավելի հարմար տեղեր վորոնելով, գնում էր գնդացրային դասակը. լըսվում էին՝ Զերկեսովի գրգռված, ինքնավստահ ձայնը և Ցաղայևի հանդիստ, ծաղրական ձայնը։ Կարմիր բանակայինները պահված ուռենու թփուտներում, սպասում էին, թե ինչ կանի վաշտի հրամանատարը։

— Ընկեր Գորելով, ինձ մոտ,— բարձրաձայն կանչեց Կոլեսովը և, յերբ նա մոտեցավ, շարունակեց նույնպես վորոշակի.

— Մնացեք այստեղ և ասեք առաջին ու յերկրորդ դասակներին՝ վո՛չ մի չրջանցում չկատարել, չարժվել յերրորդ դասակի հետևից։

Կոլեսովը շուռ յեկավ դեպի հետ։

— Ընկերներ, վո՛չ մի թրջված հրացան, ով չի կարող տանել հրացանը, թող հանձնի ավելի ուժեղին. ընկերներ, այստեղ ահա,— հրամանա-

տարը ձեռքով նշեց ջրանցքը,— այստեղ պետք է յերևա նեղ դրությունից իրար հանելու կարմիր բանակայինի պատրաստականությունը։ Դասակի ընկեր հրամանատար, հրամայեցեք՝ հանել փամփուշտամանները և պահել ձեռներում։

Կոլեսովը հանեց նագանը, բարձրացրեց դրոշի պես աջ ձեռքում և ձգելով՝ «հետևիր ինձ» կարճ հրամանը, առանց հետ նայելու մտավ ջուրը։

Յերբ առաջին դասակը մոտեցավ ճահճուտին, և Գորելովը հաղորդեց դասակի հրամանատարին Կոլեսովի հրամանը, այդտեղ կանգնած մի այդպիսի հրամանատար, թևին միջնորդի սպիտակ փաթեթ ասաց.

— Առջևում տարածվող հարթավայրի վրա պայթում են թունավոր նյութերով արկեր։

Թունավոր նյութերի նշանահարումը լավ ծանոթ էր յուրաքանչյուր կարմիր բանակայինի—նրանով ցույց էր տրվում, վոր յերևման են գալիս թունավորող նյութեր։ Դասակի հրամանատարը առաջին ակրալիրությամբ չնայեց միջնորդի վրա և տեսնելով, վոր նա հանաք չի անում, հրամայեց.

— Հագնել հակագազերը։

Դասակը դժկամակությամբ կատարեց հրամանը և առաջ անցավ։

Հակագազի կեղտոտ ապակիների միջից Զուբարյովը դիտում էր, թե ինչպես իր ընկերները մտան ջրանցքը։ Նա զգում էր, թե ինչպես կեղտոտ ջուրը լուծելով զորարշավի ժամանակ մարմնի վրա նստած փոշին, առաջացնում է սոսկալի քոր, իսկ յերկու ձեռքերն էլ զբաղված են հրացանով

ու փամփուշտամանով և չի կարելի նրանցով քորել մարմինը:

— Ըն–կեր–ներ, խեղդվում եմ,—բղավեց մեկը Զուբարյովի հետևում: Նա հենց նայեց ու տեսավ ջրի յերեսին միայն ընկերոջ գլուխը դիմակի մեջ և կողքին լող տվող նրա դդակը, իսկ ձեռները հրացանը չեյին բարձրացնում գլխից վերև, ու հրացանը թաղվում եր տիղմով պատած թանձր ջրի մեջ:

— Մի՛ թրջիր հրացանը,—վո՛չ իր ձայնով բղավեց Զուբարյովը: Բայց նրա ձայնը դիպավ միայն ռետինե դիմակին և չթողեց ցանկալի տպավորությունը: Զուբարյովը հրելով, ակոսելով ջուրը, դիմեց դեպի խեղդվողը, կրկնելով.

— Դիմակը հանիր, դիմա՛կը:

Նա, առանց յերկար մտածելու, ափ նետեց իր փամփուշտամանը և ամբողջ ուժով ձգեց ընկերոջ գլխից ռետինը: Դիմակը պատռվեց մի տեսակ թաց հնչյունով, և Զուբարյովն իր դիմաց տեսավ կարմիր բանակային Գրոմովի դժգույն դեմքը:

«Յեվ սա կոմյերիտ է, սա պետք է որինակ լինի ուրիշների համար»,— մտածեց Զուբարյովը ու թեվանցուկ բռնեց նրան, իսկ մյուս կողմից արդեն մոտենում և տարակուսանքով նայում եր ջոկի հրամանատար Ակինշինը:

— Յես վոչինչ, յերևում է, վոր դիմակը փոքր է,— չփոթված ասաց Գրոմովը, խորն ու անհավասար ներս քաշելով ոդը:

— Լավ կանեյիր, յեթե առաջուց հրացանդ տայիր մեկ ուրիշին, թե չէ՝ թրջված՝ նա բանի պետք չի, բացի դրանից, քեզ համար էլ թեթև, հեշտ կլիներ,— խիստ ու հոգատար տոնով ասաց Զուբարյովը:

Նա վերցրեց ընկերոջ հրացանը, և նրա միջից

բարակ կայլակով թափվեց պղտոր ջուրը: Նրանք դուրս յեկան մյուս ափը:

— Հիմա վո՞նց ենք անելու, ընկեր Գրոմով, կարո՞ղ ես գնալ:

— Կարող եմ, բայց առանց դիմակի, դիմակով չեմ կարող:

Ակինշինը վերցրեց կարմիր բանակայինի հրացանը: Իսկ Զուբարյովն ամբողջ ժամանակ թևից բռնած ուներ նրան և աշխատում եր այդ բանն անել այնպես, վոր մյուսները չտեսնեն:

Տասնուհինգ րոպեյից առաջին դասակն անցավ ճահճուտից և հանեց դիմակները:

★

Չերկեսովը դես ու դեն եր ընկնում, կրակի կետեր հաստատելով գնդացիրների համար: Ուղիղ դիմացը, յերկու հարյուր քայլի վրա, յերևում եր «կապույտների» պաշտպանության աջ թևը: Նրանք այս կողմի՝ ճահճի վրա վո՛չ մի ուշադրություն չեյին դարձնում. ըստ յերևույթին, հույս դրած ճահճուտի ու ջրանցքների վրա, նրանք չեյին ապահովել իրենց թևը:

Ե՛խ, հիմա «զորս դա պատվիրեցեր» կարկուտ շաղ կտանք նրանց գլխին,—ձեռները հրճվանքով շփում եր Շույլգան և ուրախ նայում եր ջոկի հրամանատարին:

Վաշտը, թրջված ու ցեխոտված, հաղթահարեց վերջին ջրանցքը: Արդեն վազում եր Կոլեսովը, աշխատելով գնալիս թափ տալ իր վրայից ջուրը. նրա կողքից վազում եր Նիկոլայեվը և ուղղում եր ազդանշանի իր թրջված դրոշիկները: Իսկ հարթավայրով, ծխի մեջ ու խառնափնթոր առաջ եյին խաղում «կապույտների» պաշտպանության ռայոնի վրա զորաշարանները:

— Գնդացրային դասակ, հակառակորդի կրակի կետի՛ն,— ամբողջ ձայնով բղավեց Կոլեսովը ինքնաբերաբար:

— Վե՛ց... ավտոմատորեն... կրա՛կ,— վորպես արձագանք կրկնեց Ձերկեսովը, և յերկու գնդացիրներ,—վորոնց խնամել-պահպանել եյին հարվածայինների ձեռներն ու մատները, ճթճթացին թեթև ու հաճախակի, առանց դադարի, ասես՝ մրցելով իրար հետ: Նշանառուների խոնավ ու չորացող հանդերձանքից բարձրանում եր բարակ շոգի: Վաշտն առանց մի հրազարկի առաձգական զսպանակի պես, առաջ նետվեց՝ գրոհի:

Կես ժամից հետո գումհրամանատար Պանովը գրում եր գնդի հրամատարին: «Շնորհիվ հինգերորդ վաշտի գերազանց գործողությունների,— վորը հակառակորդի թևը շրջանցնելու նպատակով՝ մոտ յերկու հարյուր մետր տարածություն անցավ մարդկանց բերանին հասնող ջրի միջից,— պաշտպանության առաջին գիծը փշրված է, զարգացնում եմ աջողությունը խորությամբ»:

★

Հրամկազմը գնաց քննելու զորաշարժի վերջին որվա գործողությունները: Կարմիր բանակայինները և կրտսեր հրամանատարները ծխելով, պատմում եյին իրենց տպավորությունները հենց նոր վերջացած ուսուցման մասին: Հինգերորդ վաշտը, Ձերկեսովի արտահայտությամբ «չորանում եր»: Արևը համառորեն ու վճռականապես պատում, հեռացնում եր ջուրը կեղտոտ և թաց հանդերձանքից:

— Տեսեք, է՜,—ծիծաղում եյին չորրորդ վաշտի կարմիր բանակայինները,—հինգերորդ վաշտի բախտը բերեց. զորաշարժի վերջում լվացք սարքե-

ցին: Մինչև կհասնենք ճամբար, կչորանան, և ամեն բան կարգին է:

— Լվացքի բան չկա այստեղ, ընկերներ, այդպես յեղավ հանգամանքների հետևանքով,—բարկացած ու հանգիստ պատասխանում եր ուրիշների փոխարեն Զուբարյովը:—Իսկ յեթե կրկնելու կարիք լինի, կկրկնենք,—ապահով յեղեք:

Ճամբար գնալու ճանապարհին Կոլեսովը դասակների հրամանատարներին կանչեց զորասյունի գլուխը և յերկար խոսում եր նրանց հետ: Իսկ վաշտը գնում եր, չորանալով ճանապարհին, և նրա շարքերից հնչում եր յերիտասարդ յերգը.

Վոչ վոք չի խլի մեզնից մեր ուղին անցած,
Հարվածայիններ, միշտ առա՜ջ, առաջ սրընթաց:

Ճամբարը լցվեց աղմուկով ու իրարանցումով: Գնդի որկեստրը մուտքի կամարի մոտ նվագում եր Բուդյոննիի մարշը:

Վաշտը քարցավ, հենց վոր լսվեց «ցգաստ» հրամանը: Ցեվ Կոլեսովը հինգ քայլ հետ քաշվելով և սիրով ու հպարտությամբ նայելով կարմիր բանակայինների փոշոտ յերեսներին, ասաց կամաց, բայց այնպես, վոր յուրաքանչյուրը լսի.

— Ընկերներ, յես պարծենում եմ, վոր հինգերորդ հարվածային վաշտի հրամանատարն եմ: Մենք այսոր ամբողջ վաշտով ցույց տվինք այն կեղտոտ ջրանցքներում, վոր յերբ պահանջվի, մենք խորհրդային յերկրի համար, համաշխարհային հեղափոխության համար կկռվենք դևերի պես և անձնվեր քաջությունը կմիացնենք հեղափոխական գիտակցության հետ:

Կոլեսովը ներս քաշեց մեծ քանակությամբ ոդ և արտաշնչեց ամբողջ կրծքով:

— Հարվածային աշխատանքի և գերազանց որինակի համար ի դիմաց ծառայության շնոր-

հակալություն եմ հայտնում վաշտի մարտիկներին ու հրամանատարներին:

Ցեվ վորպես պատասխան Կոլեսովին, խլացնելով ճամբարի աղմուկն ու նվագախմբի բուգյոննյան մարշը, տասնյակ կոկորդներից դուրս թռավ ուրախ և ուժեղ կանչը.

— Ծառայում ենք—աշխատավոր—ժողովրդին:

VII ՄԵՆՔ ՄԻՇՏ ՊԱՏՐԱՍՏ ԵՆՔ

Վաշտում անհամբեր սպասում են ամենօրյա փոստին՝ թերթերին: Նույնիսկ հեռավոր գյուղերից ստացված նամակները կարդացվում են շտապ, առանց առանձին ուշադրության: Նրանց մոտ, ովքեր մյուսներից շուտ են վերցրել թերթերը, հավաքվում են խմբերով, հետաքրքրությամբ նայում են թերթերի վերնագրերին, վորտեղահա յերրորդ որն է, ինչ կրկնվում են միևնույն խոսքերը. «Արդյունաբերական կուսակցության դավաճանությունը» և հաճախ յերևում է Ռայմոնդ Պուանկարեյի սև սիլուետը:

— Վորպես պատասխան նոր ինտերվենցիա կազմակերպելու փորձի՝ մենք պետք է ուժեղացնենք մեր յերկրի պաշտպանունակությունը»,— կարդում է Գորելովը ջոկին թերթի մեջ տպված վերնագիրը:

— Մենք պետք է,— կամաց կրկնում է Սելեզնյովը,—մենք պետք է... Իսկ ի՞նչ է նշանակում գա: Դա վոչ միայն ցանկություն է, այլև մարտական պատրաստության պրակտիկ գործեր:

Նա նայում է ընկերներին, մտածում ու բռնում Գորելովի մարդաշապկի թևից:

— Ես այսոր վաշտի ժողովում վորոշակի առաջարկ կանեմ, մտածեց նա, իսկ առայժմ վոչինչ չեմ ասի:

— Հը՛, գաղտնի՞ք է,—ծիծաղում է Գորելո-

վը, իսկ Սելեզնյովն արդեն գնում է դեպի դասակի բուրգը և հրացանն աղմուկով տանում է դեպի հրաձգային դասարանը:

Մոտենում է մթնաշաղը, բայց հայտնի չէ, թե ինչո՞ւ այսօր, ինչպես նաև յերեկ, լավ չեն պահում մեռյալ ժամը:

Սելեզնյովը մաքրեց հրացանը և յուղ քսելուց հետո ուշադրությամբ ու զգուշությամբ նայեց փողը. Պտուտավոր փողանցքի մակերևույթը փայլում էր համաչափ փայլով, և յուղը, առանց վայլը խախտելու, բարակ շերտով նստած է փողանցքի ակոսների ու առերի վրա: Հրաձգային դասարան մտան Յուդինը և Չրկեսովը:

— Իսկ յես ուզում եյի վորոնել քեզ, կոմյերիտական պատկազմակերպիչ:

Սելեզնյովն արագ շուռ տվեց փականակի հրահանը:

— Կարևոր գործ կա,—պատասխանեց նա Յուդինի հարցական հայացքին:

Նրանք յերկրով նստեցին յուղոտած նստարանին, և Սելեզնյովը շոյելով հրացանի ադուստի պսպղուն մակերևույթը, խոսեց նորից.

— Մենք պետք է ուժեղացնենք յերկրի պաշտպանունակությունը, վորպես պատասխան Ռամզին–Պուանկարեյին,—այսպես է ասված այսօր թերթում:

— Ճիշտ է ասած,—վրա բերեց Յուդինը:

— Մենք պետք է մի ամսվա ընթացքում, այսինքն՝ դեկտեմբերին՝ առաջին ատրճանի ընթացքում տանք հազար առաջարկ մարտական պատրաստության առթիվ,— այդպես է ասված շրջանային «Կարմիր աստղի» մեջ,—շարունակում է Սելեզնյովը:

— Ճիշտ է ասած և կտանք,— ժպտալով խոսեց Չերկեսովը:

— Յեվ ահա յես առաջարկում եմ,—Սելեզնյովը հրացանի կոթը խփեց հատակին,—այսօր վաշտի ժողովում պետք է կոմյերիտմիությունը հանդես գա և ասի. «Տալիս ենք, յուրաքանչյուր կոմյերիտ տալիս է մարտական ուսուցումը լավացնելու յերկու առաջարկ, և ամբողջ վաշտը հրավիրում ենք մասնակցելու այդ գործին»:

Չերկեսովը հաշվեց.— Այդպիսով կստացվի մոտ յերկու հարյուր առաջարկ: Դա լավ միտք է, ընկեր Սելեզնյով: Հարկավոր է հենց այժմ, Յուդին, խոսել դրա մասին տղաների հետ:

— Լավ բան է մտածել Կուզմա Սելեզնյովը,—համաձայնվեց Յուդինը:— Մինչև ժողովը յերկու ժամ կա, կարծեմ, կարող եք այդ բանն անել,—վճռեց նա:—Պետք է կանչել Գորելովին ու Զուբարյովին՝ տեմպերն ուժեղացնելու համար:

Կոլեսովը լենանկյուն յեկավ, հետը բերելով մի ամբողջ փաթեթ թղթեր ու աղյուսակներ: Յեվ, ինչպես մի տարի առաջ, նրա գալուստն ընդունեցին՝

— Հրամանատարը գալիս է, կամա՛ց, մի աղմկեք, գալիս է հրամանատարը,—բացականչություններով:

Նա մոտեցավ սեղանին և խկույն բացեց ժողովը:

— Խնդրեմ, նշեք ժողովի պրեզիդիում,— կամաց ակսեց Կոլեսովը:

— Կոլեսով... Զուբարյով... Սելեզնյով... Զուբարյով...

— Սելեզնյովին,—մի անգամ էլ կրկնեց Չերկեսովը, և շփոթված ու ժպտերես Սելեզնյովը ըն-

կավ պրեզիդիումի մեջ, և ստիպված յեղավ նախագահել:

Նա վերցրեց Կոլեսովից թերթիկը և այնտեղ գրված յերեք տողը յերկար ժամանակ ուսումնասիրելուց հետո կարդաց:

— Առաջին հարցն է՝ հաղորդագրություն Արդյունաբերական կուսակցության դատավարության ընթացքի մասին, յերկրորդ՝ ուսուցման առաջին աստիճանի պլանն ու խնդիրները և յերրորդ՝ զանազան խնդիրներ: Առաջին հարցի առթիվ խոսքը տրվում է վաշտի ընկեր հրամանատարին:

Կոլեսովը համառոտ պատմեց Գերագույն դատարանի աշխատանքների ընթացքի մասին և առանձնապես կանգ առավ Արդյունաբերական կուսակցության ու Ֆրանսիական գլխավոր շտաբի հետ ունեցած կապի և ռազմական վտանգի մասին, վոր սպառնում է նոր պատերազմով:

— Ընկերներ, դա զեկուցում չի, այլ ուղղակի հաղորդագրություն է, և յես առաջարկում եմ, —վերջացրեց նա մի քանի հարցից հետո,—նոր բանաձև չհանել, մենք բանաձև ընդունեցինք յերեք որ առաջ՝ համաքաղաքային ցույցի սկզբին...

— Ճիշտ է,— լսվեցին միաժամանակ միքանի կարմիր բանակայինների ձայներ:

— Յերկրորդ հարցի առթիվ խոսքը պատկանում է վաշտի ընկեր հրամանատարին,—մի քիչ տեղից բարձրանալով՝ շարունակում եր նախագահել Սելեզնյովը: Ամենքը լռեցին, ուշադրությամբ ականջ դնելով:

Կոլեսովը յերկու ձեռքով հաստատ կռթնած սեղանին, սկսեց նկարագրել առաջին աստիճանի պլանն ու խնդիրները: Նա յերբեմն բարձրացնում եր աղյուսակները, վորտեղ նկարված եյին տարբեր գույնի սյունիկներ ու շրջաններ, մանրամաս-

նորեն կանգ եր առնում հրաձգության յուրաքանչյուր վարժության վրա, ուսուցման առաջիկա ամսի յուրաքանչյուր որվա վրա:

— Ընկերներ, իսկ գլխավորը տեմպերն են, այն ուսուցման վորակն է, վորի մասին յես ասում եմ ձեզ: Մեր վաշտը հարվածային է, բայց ահա յերեկ չէ՝ մյուս որը մեզ մոտ յեկան նորից յերիտասարդներ,—նա ձեռքը լայն բացելով նշեց իր շուրջը, վորտեղ նստել եյին դեռընտիր կարմիր բանակայինները՝ հազար ինն հարյուր ութերորդ տարվա նորակոչիկները:— Վաշտը հարվածային է, իսկ յերիտասարդությունը, մանավանդ գյուղից յեկած յերիտասարդությունը, հարվածային չէ, բայց պետք է դառնա հարվածային: Վաշտից գործարաններ գնացին շատ գերազանց ընկերներ, գնացին գյուղ՝ պայքարելու կոլտնտեսությունների համար, սոցիալիզմ կառուցելու համար: Գնաց Ֆադեյեվը, գնաց Ակինշինը, Սիրինը և ուրիշները: Իսկ նրանց փոխարինելու համար մենք պատրաստեցինք յերիտասարդներից գերազանց հարվածային մարտիկներ:

— Բոլշևիկների կուսակցությունը, մեր լենինյան կուսակցությունը,—շարունակեց Կոլեսովը,— տանում է մեր յերկիրը մեծ հաղթանակների ուղիով: Սոցիալիզմի ցնորքից փոխվում, դառնում է այսորվա իրականություն: Նա յերևում է յուրաքանչյուր տրակտորի և դազգյահի մեջ, յուրաքանչյուր նոր կոլտնտեսության մեջ:

—...Վորպես պատասխան վնասարարներին, մենք պետք է մեր մարտական ուսուցումը կազմակերպենք սոցիալիզմի պաշտպանության համար: Ինչպե՞ս: Պետք է պայքարենք տեմպերի համար, պետք է, բանվորական լավագույն հարվածային բրիգադների որինակով, առաջ քաշենք հանդիպա-

կան պլաններ: Պետք է լայնությամբ ու խորությամբ զարգացնենք ռացիոնալացումը: Շրջանային «Կարմիր աստղը» թերթը հրապարակ է քաշել այսպիսի լոզունգ. «դեկտեմբեր ամսում տալ մարտական պատրաստության հազար առաջարկները ու գյուտեր»: Մենք պետք է մեր զորամասերի ամբողջ մասսայով ծածկենք այդ նորման, կրկնապատկենք, յեռապատկենք այն: Իսկ հանդիպական պլանով պետք է աշխատենք յուրացնել առաջին աստիճանը ժամկետից առաջ:

Վաշտի հրամանատարի զեկույցը յերկարեց: Հրամանատարը խոսում եր արդեն մի ժամից ավելի, բայց առաջվա պես ուշադիր ու ագահությամբ լսում եյին թե՛ ջահելները, թե՛ հին ծառայողները, լսում եյին խոսքեր, վորոնք վերաբերում եյին մարտական պլանի համար առաջիկայում մղվող պայքարին:

Իսկ հետո, բարձրահասակ ու թիկնեղ, սեղանից նորից բարձրացավ ժողովի նախագահը, նա և վաշտի մասնտրո ու Լենինյան Կոմյերիտմիության անդամ, Կույզմա Սելեզնյովը: Յեվ նրա անպաճույճ ճառի բառերը թափվում են նստողների վրա վորպես հարձակողական գործողության ձեռնառնակները:

— Մենք ի հարկե, համաձայն ենք՝ առաջ քաշելու հանդիպական պլան և ժամկետից առաջ կատարելու առաջին աստիճանը: Մենք այդ բանն ասում ենք: Իսկ խոսքերի հետևից պետք է հաստատապես քայլի գործը: Ավելի շատ գործ, գո՛րծ, ընկերներ:

Նա մատիտով կամաց թխթխկացրեց սեղանին, իբրև իշխանություն ունեցող մարդ, և շարունակեց.

— Իսկ մեր գործերը ահա թե ինչ են. վաշտի

կոմերիտները պարտավորվում են առաջին կուսաորվա ընթացքում մտցնել յերկու լուրջ առաջարկություն կամ գյուտ՝ մարտական պատրաստության վերաբերյալ և հրամանատարի միջոցով աշխատել,—նա կիսադարձ շուռ յեկավ դեպի այստեղ նստած Կոլեսովը,— վորպեսզի այդ առաջարկները շուտափույթ կերպով իրագործվեն:

Կարմիր բանակայինները յեռքցացին աթոռների վրա, փափսացին:

— Յեվ ելի հրավիրում ենք,—Սելեզնյովը գլուխը շարժեց գրգռիչ ու վճռական,—հրավիրում ենք ամբողջ վաշտին՝ հետևել մեր որինակին: Այդպիսով մենք կխփենք ամեն տեսակ կապիտալիստի և վնասարարի ռեխին, այդպիսով կհաստատենք, վոր վաշտը մնում է հարվածային վաշտ:

Նա լռեց:

— Հա, պետք է կարգապահությունը բարձր պահել: Ուրիշ ել ի՞նչ, ընկերներ:

Սելեզնյովը մեկեն նստեց իր տեղը:

Կանգնեց Զուբարյովը՝ ժողովի քարտուղարը:

— Հը՜, ի՞նչ կասեք, ընկերներ, ո՞վ է խոսք ուզում:

Վոչ վոք խոսք չեր ուզում, միայն տասնյակ կոկորդներ բղավում եյին.

— Յուրաքանչյուրս կտա յերկու առաջարկ:

— Ավելի կտանք:

— Քվեարկիր քո առաջարկը, նախագահ:

Յեվ վորպես պատասխան նախագահի ձայնի՝ «Ո՞վ է կողմնակից այդ առաջարկին»,— տասնյակ ձեռներ ձգվեցին վերև ու սառեցին անշարժ և համառորեն:

— Միաձայն,— հառաչով ասաց Սելեզնյովը, և ձեռներն առանց շտապելու ցած ընկան:

Առաջին աստիճանի մասին արված զեկուցի առթիվ հանած բանաձևում ասված էր.

Խորհրդային միության՝ դեմ պատերազմի հարաճուն սպառնալիքի հանդեպ մենք, հինգերորդ վաշտի կարմիր բանակայիններս ու հրամանատարներս, սոցմրցության ու հարվածայնության հիման վրա, պարտավորվում ենք առաջին աստիճանի ծրագիրը յուրացնել ժամկետից տաս որ առաջ: Հարվածային տեմպերով կտիրապետենք մարտական գիտելիքներին՝ պաշտպանելու համար սոցիալիզմը, ապահովելու համար հաղթական շինարարությունը և իրագործելու հնգամյակը չորս տարում, կոմունիստական կուսակցության ղեկավարությամբ:

Յեվ նորից անպարտելի ու համառ, վերև բարձրացան տասնայակ ձեռքեր:

«Ջանազան» հարցերի առթիվ խոսք խնդրեց պատկազմակերպիչ Ցուդինը:

— Ընկերներ, յերեկ յես նամակ ստացա Ֆադեյեվից՝ Կիչկասից: Նա իր նամակով դիմում է ամբողջ վաշտին և մասնավորապես՝ հազար ինն հարյուր ութ թվի դեռընտիր կարմիր բանակայիններին:

— Ո՞վ է Ֆադեյեվը,— հարցրին միաբերան մի քանի դեռընտիրներ:

— Դա մեր վաշտի լավագույն հարվածայիններից մեկն էր, կարմիր բանակային էր, հետո դարձավ ջոկի հրամանատար, իսկ այժմ գնացել է աշխատելու Դնեպրոստրոյում, նա ինքը Կիչկասից է,—կարճառոտ բացատրեց Ցունդինը:

— Նու, կարդա, Ցուդին, կարդա,— շտապեցնում էյին կարմիր բանակային գնդացրորդները:

Ցուդինն սկսեց կարդալ Ֆադեյեվի խոշորատառ և վստահ տողերը.

«Ի՛մ թանկագին ընկերներ

Այժմ մեզանում ծավալվեց տաք կռիվ հարվածային յեռամսյակի ծրագիրն իրագործելու համար: Բոլոր լավագույն, բոլոր գիտակից տարրերը գտնվում են առաջին շարքերում: Ընկեր դեռընտիր կարմիր բանակայիններ, յես յերկու տարի անցկացրի զորանոցում, ազնվաբար կատարելով մարտիկի պարտավորությունները, իսկ հետո՝ կրտսեր հրամանատարի: Յեվ թող իմ փոքրիկ որինակը ցույց տա ձեզ, թե ինչպես պետք է պայքարել բարձր մարտական ուսուցման համար: Մեզ՝ թե՛ ինձ, թե՛ վաշտի ընկեր-կոմյերիտներին դեպի որինակելիություն էր մղում բարձր գիտակցությունը, մեր արածի վերաբերմամբ մեր ունեցած կատարյալ վստահությունը: Ընկերներ, արդյոք հասկանո՞ւմ եք, թե բանն ի՛նչ է: Պետք է ամեն մանր-մունր բանի մեջ, մահիճը լավ հարդարելու մեջ, հրահանը շուռ տալու մեջ յեվ լրագրային յուրաքանչյուր տողի մեջ հասականալ ու տեսնել այն մեծ գործը, վորի համար մենք պայքարում ենք, այսինքն՝ սոցիալիզմի գործը: Յես հիշում եմ, մի անգամ, յերբ յես նույնպես դեռընտիր կարմիր բանակային էյի, ձմեռ ժամանակ դաշտ դուրս յեկած միջոցին, մենք ջոկի հետ գնում էյինք հետախուզության, ձորում գտանք ձյունի մեջ թաղված մի կարմիր բանակայինի այն տարի սոսկալի ցուրտ ձմեռ էր: Նա մեռած էր, նա ցրր-

տից ապիտակել, չորացել յեվ փետացել եր: Վո՛չ փաստաթուղթ, վո՛չ էլ կարմիր բանակայինի գրքույկ, նրա ձախ թեվքի ծալվածքի մեջ միայն մենք գտանք թղթի մի փոքրիկ կտոր: Դա սովորական ստացագիր եր այն առթիվ, վոր ինչվոր հրամանատար ստացել ե իրեն ուղարկված զեկուցագիրը: Կարմիր բանակայինը կատարեց իրեն տրված խնդիրը, բայց չըվերադարձավ: Հետո պարզվեց, վոր մեռել եր անշարժ պահպանության վերաբերյալ գիշերային զբաղմունքների ժամանակ: Ցես յերկար նայում եյի այդ ընկերոջ խիստ ու հանգիստ դեմքին յեվ այն րոպեյին հասկացա, վոր նույնիսկ այն ժամանակ, յերբ մեր յերկիրը դադար ունի ու պատերազմ չկա, այնուամենայնիվ հեղափոխությունը պահանջում ե հերոսական լարվածություն, յերբեմն նույնիսկ զոհեր:

Այստեղ, Դնեպրոստրոյում, Սվիրի կոչված գետի վրա, քառասուն աստիճան ցրտի մեջ, Թուրքսիբում, վորտեղ ջուր չկա և մարդուս ուժասպառ անող տոթ ե, յուրաքանչյուր նոր կազմակերպվող կոլխոզում գնում ե, յեռում ե վճռական պայքար: Այդպիսի տոկունություն, այդպիսի հարվածայնություն ցույց տվեք նայեվ դուք, ընկերներ, ջոկի մեջ, դասակի մեջ, վաշտի մեջ: Դուք, ի հարկե գիտեք, վնասարարների մասին, պարոն Ռայմոնգ Պուանկարեյի վարձկան գործակատարների մասին: Գիտեք նույնպես, վոր նրանք իրենց թաթըն ուզում եյին պարզել, նույնիսկ պարզեցին դեպի մեր Կարմիր բանակը: Սրիկաները գիտեն, թե վորտեղ ե թաղված շան գլուխը: Ինչո՞վ պատասխանենք նրանց: Ընկերներ, յերկաթե կարգապահությամբ, հարվածայնությունը լայնությամբ ու խորությամբ ծավալելով: Կոմյերիտմիությո՛ւն, հինգերորդ վաշտի կուսակցական բջիջի ղեկավարությամբ սկսիր, դեպի վեր քշիր քո նվաճումների կոր գիծը, ինչպես այստեղ մենք, կառուցման վայրում կոմյերիտներս, պայքարում ենք ամեն մի գրնդերիթի համար, այն ցեմենտի յուրաքանչյուր տակառի համար, վորով ցեմենտում ենք մեծ կառուցվածքը:

Ցեվս հատուկ վողջույն լավ հրամանատար մեր Կոլեսովին, Սաշա Չերկեսովին յեվ մնացած ամենքին: Իսկ դու, Յուդին, գրիր, մի՛ մոռանար վաշտի հին կոմյերիտին: Կոմյերիտական վողջույնով՝ Իվան Ֆադեյեվ»:

Յուդինն առանց նստելու, նամակը կանոնավոր ծալեց ու հարցրեց:

— Ընկերներ, դուցե մեկն ու մեկդ ասելու բան ունի: Թե՞ ամեն ինչ հասկանալի յե:

Վերջին շարքում վոտի կանգնեց բարձրահասակ մի կարմիր բանակային, մուգ կանաչ, բոլորովին նոր մարզաշապիկով:

— Մենք, ջահելներս, կապացուցենք ընկեր Ֆադեյեվին և նույնպես այդ...—նա շփոթվում, բառերը խառնում եր իրար,—...Նրանց, վորոնք խորհրդային յերկիրը, մեր յերկիրը ուզում եյին ծախել... կապացուցենք, վոր հրացանը և ամեն տեսակ տեխնիկան հուսալի ձեռքում են գտնվում: Իսկ այժմ այդ ընկեր Ֆադեյեվին պետք ե նամակ ուղարկել այսօրվա ժողովի մասին, առաջարկների և մյուս բաների մասին:

— Ճիշտ ե ասում Գալկինը, ուղարկել նրան մեր բանաձևերը,— աղմկեցին մյուսները,— իսկ

մենք դրանց, այդ առաջարկները կկատարենք կյանքի մեջ հարվածայնորեն:

— Ի՞նչ կասեք, ընկերներ, քվերարկե՞նք:

Քվեարկում եմ:

Յեվ յերրորդ անգամ տասնյակ ձեռքեր վեր ձգվեցին՝ ենտուզիազմի համար, հեղափոխական կարգապահության համար և կարմիր բանակային հարվածային ատրյաների լարված հերոսականության համար:

ՀՀ Ազգային գրադարան
NL0398133

3717
891.71Б
Ч-62